Էդիկ Բաղդասարյան

# Հետաքննական լրագրություն. Հայկական փորձը

Երևան
«Հետաքննող լրագրողներ» ՀԿ
2009

ՀՏԴ 070
ԳՄԴ 76.1
Բ 242

Գիրքը հրապարակում է «Հետաքննող լրագրողներ» հ/կ-ն Եվրոպական Միության «Ժողովրդավարության եւ մարդու իրավունքների եվրոպական նախաձեռնության» դրամաշնորհի շրջանակներում:

Գրքի բովանդակության համար պատասխանատվություն կրում է միայն «Հետաքննող լրագրողներ» հ/կ-ն, եւ այն որեւէ ձեւով չի արտահայտում Եվրոպական Միության տեսակետները:

**Բաղդասարյան Էդիկ**

Բ 242 Հետաքննական լրագրություն. հայկական փորձը.- Եր.: «Հետաքննող լրագրողներ» հ/կ, 2009.-178 էջ:

Լրագրող Էդիկ Բաղդասարյանի այս գիրքը հետաքննական լրագրության նրա իննամյա գործունեության ամփոփումն է: 2001 թ. իր եւ ընկերների համատեղ ջանքերով հիմնադրված Հետք ինտերնետային թերթի օրինակով հեղինակը ներկայացրել է Հայաստանում լրագրողական հետաքննությամբ զբաղվելու հնարավորությունները, առավելություններն ու դժվարությունները, գործնական խորհուրդներ տվել հետաքննության բոլոր փուլերի վերաբերյալ՝ թեմայի ընտրությունից մինչեւ հոդվածի պատրաստումը:
Նախատեսված է ժուռնալիստիկայի ֆակուլտետի ուսանողների, լրագրողների, ինչպես նաեւ ընթերցող լայն հասարակայնության համար:

ԳՄԴ 76.1

ISBN 978-99941-2-230-1
© «Հետաքննող լրագրողներ» ՀԿ, 2009թ.

# ՆԱԽԱԲԱՆ

Այս գիրքը մի քայլ է հետաքննական լրագրության դասագիրք ստեղծելու ճանապարհին: Այդպիսի դասագրքի անհրաժեշտությունն, իհարկե, կա, բայց իմ խորին համոզմամբ՝ այսօր ավելի կարեւոր է առանձին լրագրողների, լրատվամիջոցների փորձը ներկայացնելով խոսել այն բոլոր խնդիրների մասին, որոնց հաղիպում ենք, որոնք տեսանելի են դառնում ընդհանրապես լրագրությամբ եւ մասնավորապես հետաքննական լրագրությամբ զբաղվելիս: Այս գիրքը հենց նման մի փորձ է, այստեղ չկան վերջնական ճշմարտություններ եւ քարացած կանոններ: Սա պարզապես «Հետաքննող լրագրողներ» կազմակերպության եւ «Հետք» թերթի լրագրողների ութ տարվա աշխատանքի ամփոփումն է, այստեղ պատմություններ են տարբեր հետաքննությունների ընթացքում հանդիպած խոչընդոտների, լրագրողների օգտագործած հնարքների, այդ հետաքննությունների արդյունքների մասին: Հուսով եմ, որ այն օգտակար կլինի հատկապես ուսանողների եւ սկսնակ լրագրողների համար: Գրքում հպանցիկ ենք անդրադարձել հետաքննական լրագրության ծագմանը, առանձին դպրոցների պատմությանը, քանի որ այդ մասին բավականին շատ գրականություն կա տարբեր լեզուներով, եւ այն այսօր նաեւ համացանցի միջոցով է հասանելի: Այդ իսկ պատճառով կարեւոր ենք համարել հենց հայաստանյան խնդիրների մասին խոսելը:

Հայաստանում հետաքննական լրագրությունը սկսեց ձեւավորվել Հայաստանի անկախացումից հետո: Տարբեր լրատվամիջոցներում այսօր կարելի է տեսնել «Լրագրողական հետաքննություն» խորագրով նյութեր:Դրանց մեծ մասն, իհարկե, հետաքննություններ չեն, եւ դա այդ մեթոդին կամ ժանրին ծանոթ չլինելու, այն չընկալելու հետեւանք է: Այդուհանդերձ, հաջողված հետաքննական նյութեր կարելի է հանդիպել «Հայկական ժամանակ», «Առավոտ», «Ազգ», «Հայոց աշխարհ», «Իրավունք հետաքննություն», «168 ժամ» թերթերում: Հազվադեպ նման նյութեր հեռարձակում են նաեւ հեռուստաընկերությունները:

Հետաքննական նյութերը երբեմն մեծ արձագանք են ունենում, բայց շատ հաճախ մնում են աննկատ, անարձագանք: Համոզված եմ՝ մոտ է այն ժամանակը, երբ թերթերն ու հեռուստաընկերությունները մշտապես կունենան «Լրագրողական հետաքննություն» խորագիրը կամ հեռուստաշարքը: Հետաքննական լրագրության զարգացման

հիմնական խոչընդոտն, ըստ խմբագիրների հետ ունեցած մեր զրույցների, ֆինանսական միջոցների բացակայությունն է: Ոչ մի խմբագիր չի ցանկանում հատուկ հետաքննող լրագրողի հաստիք պահել: Լրագրող, ով կունենա որոշակի փորձ, որակավորում եւ ում նյութի վրա աշխատելու համար անհրաժեշտ ժամանակ եւ միջոցներ կտրամադրվեն: Հայաստանյան հեռուստաընկերությունները ոչ միայն չեն ուզում այդ միջոցները տրամադրել, այլեւ չեն ուզում եթեր հեռարձակել իրենց համար «վտանգ» ներկայացնող այդ հաղորդումները:

Միաժամանակ անժխտելի է, որ խմբագիրներն ուզում են տպագրել հետաքննական հոդվածներ: Սակայն չեն ուզում դրա համար միջոցներ ծախսել՝  համարելով ավելորդ ճոխություն: Խմբագիրների մի մասի հետ համաձայն եմ՝ դժվար է պահել մեկ լրագրող, ով ամսական ընդամենը երկու-երեք հոդված պետք է գրի: Բայց այսօր կան թերթեր, հեռուստաընկերություններ, որոնք ֆինանսական այդ հնարավորությունն ունեն, սակայն չեն անում:

2004 թ.-ին երկշաբաթյա այցով Երեւանում գտնվող Լրագրողների միջազգային կենտրոնի փորձագետ Լուսինդա Ֆլիսոնը, հանդիպելով թերթերի եւ հեռուստաընկերությունների խմբագիրներին, լրագրողներին, զանազան պաշտոնյաների, հայ լրագրողների մասին գրում է. «Իրենց աշխատանքը կատարելու համար նրանք անընդհատ հանդիպում են անհաղթահարելի արգելքների մի հասարակությունում, որտեղ կառավարությունը, ոստիկանությունը եւ իրավական համակարգը սուզված են կաշառակերության մեջ: Խորհրդային Միության անկումից տասներեք տարի հետո էլ հիմնական քաղաքացիական իրավունքներն անտեսվում են»[1]: Ամերիկացի լրագրողի այս տպավորությունը չափազանցված չէ, այն իրական գնահատականն է այն միջավայրի, որում աշխատում են հայ լրագրողները:

Հայաստանում հետաքննական լրագրությունը չի կարեւորվում, որովհետեւ արդյունքը տեսանելի չի լինում: Ի՞նչը պիտի ոգեւորի թերթին, հատկապես լրագրողին, որպեսզի նա զբաղվի նման լրագրությամբ: Այս հարցը ունի միայն մեկ պատասխան՝ արդյունքը: Եթե որեւէ արդյունք չունես, ուրեմն անիմաստ է դառնում նաեւ արածդ: Իսկ արդյունք չկա, որովհետեւ իշխանություններին հասարակական կարծիքը չի անհանգստացնում: Ընդհանրապես, լրատվամիջոցների ազդեցությունը հասարակական կյանքի վրա հասցված է նվազագույնի: Վերջին տասնհինգ տարիներին մեր երկրում այդպես էլ չստեղծ-

1 On The Right Track. Investigative Reporting in Armenia. 2004, p.5, International Center for Journalists, Washington, D.C.

վեցին ազատ եւ արդար ընտրություններ անցկացնելու պայմաններ, հասարակությանը չտրվեց իր կամքն ազատ արտահայտելու հնարավորությունը: Իբրեւ հետեւանք՝ հասարակությունը չի մասնակցում ոչ մի գործընթացի, նրան պարզապես չեն թողնում մասնակից դառնալ: Դատական համակարգում տարիներ շարունակ ընթացող բարեփոխումները որեւէ արդյունքի չեն բերել: Անկախ դատական համակարգը չի կայացել եւ կայացման նշույլներ անգամ ցույց չի տալիս: Ահա այս պայմաններում էլ գոյատեւում են լրատվամիջոցները. շատերը ներգրավվում են քաղաքական գործընթացներում՝ դառնալով դրանց ակտիվ մասնակիցը:

Նախկինում հետաքննող լրագրող աշխատած Լուսինդա Ֆլիսոնը Հայաստանում ուսումնասիրել է լրատվական դաշտը, խմբագրություններում ծանոթացել լրագրողների աշխատանքային պայմաններին, ականատես եղել նյութերի պատրաստման ընթացքին, տեղեկացել այս կամ այն խնդրի մասին եւ հետագայում գրել. «Սակայն, չնայած կառավարության եւ հանցագործ աշխարհի կաշառակեր մթնոլորտի ճնշող եւ պատժիչ միջոցներին, հայ լրագրողները ցուցաբերում են իրենց մշտական մարտունակությունը եւ հրացնում դիպուկ հոդվածներ եւ հաղորդումներ: Ճիշտ է, գուցե այդ թողարկումներն այնքան էլ կատարյալ չեն, ինչպես իրենք կուզենային, բայց կարեւորն այն է, որ դրանք գոնե լույս են տեսնում: Հայ լրագրողները ստիպված են համակերպվելու «հարձակման եւ նահանջի» վտանգավոր խաղի պայմաններին: Ռիսկերը մեծ են: Հետեւանքները՝ տեսանելի, արագ եւ լուրջ»[2]:

Ահա այս միջավայրում եք իրականացնելու ձեր մասնագիտական գործունեությունը: Եվ եթե ունեք գրելու ձիրք եւ հետաքննություն կատարելու համարձակություն, համբերությամբ ընթերցեք եւ մտապահեք այս գրքում զետեղված խորհուրդները: Ես դրանք անվանել եմ խորհուրդներ, որովհետեւ լրագրությունն ընդհանրապես, իսկ հետաքննությունը մասնավորապես քարացած աշխատանք չէ: Յուրաքանչյուր լրագրողական հետաքննություն ունի իր յուրահատուկ մեթոդը եւ առանձնահատկությունները: Եւ յուրաքանչյուր հետաքննող լրագրող կարող է իր աշխատանքի փորձի մասին պատմել: Ինչպես արդեն նշել ենք, այս գրքում հիմնականում լինելու են «Հետաքննող լրագրողներ» կազմակերպության անդամների կատարած հետաքննությունների մասին պատմություններ: Իսկ դրանց մեջ, հնարավոր է,

2 On The Right Track. Investigative Reporting in Armenia. 2004, p.6, International Center for Journalists, Washington, D.C

շապերի համար ուսանելի նյութ լինի: Կան որոշ գիտելիքներ, հմտություններ, որոնց անպայման պետք է տիրապետի հետաքննություն կատարող լրագրողը:

Եվրոպացիները, ամերիկացիները թերահավատորեն են նայում մեզ, բայց Հայաստանում կան փայլուն լրագրողներ, ովքեր ոչնչով չեն զիջում նրանց: Դժբախտաբար, մեզ դեռեւս չի հաջողվում վերացնել այդ անջրպետը: Բայց հուսով եմ՝ մի օր մենք դրան կհասնենք մեր կատարած հետաքննություններով: Եկեք աշխատենք եւ կհասնենք արդյունքի:

2000 թվականին մի խումբ լրագրողներ համախմբվելով՝ ստեղծեցինք «Հետաքննող լրագրողներ» կազմակերպությունը, որն իր առաջ խնդիր դրեց Հայաստանում զարգացնել հետաքննական լրագրությունը: Կազմակերպությունը մեկ տարի հետո հիմնեց «Հետք» ինտերնետային թերթը, որտեղ էլ տպագրվում են հետաքննական նյութերը:

«Ես պարտավոր եմ հաղորդել այն ամենը, ինչ պատմում են, բայց այդ ամենին հավատալ, իհարկե, ես պարտավոր չեմ»:

**Հերոդոտես, Մ.թ.ա. 5-րդ դար**

# ՀԵՏԱՔՆՆԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ. ՀԱՅԱՑՔ ՆԵՐՍԻՑ

Մ.թ.ա. 5-րդ դարի հույն պատմագիր Հերոդոտեսը՝ պատմագրության հիմնադիրը, իր «Պատմություն ինը գրքից» աշխատության մեջ բազմիցս հիշատակել է, թե ինչպես է գրել իր պատմությունը: Նա բազմաթիվ աղբյուրներից է օգտվել՝ դրանց հավելելով իր տեսածները: Աղբյուրների հետ աշխատելու առաջին դասական օրինակը հենց նա է գրավոր հասցրել մեզ: Իսկ ո՞վ կարող է պնդել, որ Հերոդոտեսի «Պատմությունը...» լրագրություն չէ, հետաքննություն չէ. «Ես պարտավոր եմ հաղորդել այն ամենը, ինչ պատմում են, բայց այդ ամենին հավատալ, իհարկե, ես պարտավոր չեմ: Այդ սկզբունքին ես կհետեւեմ իմ ամբողջ պատմության մեջ»[3],- գրում է նա:

Միեւնույն իրադարձությունների մասին Հերոդոտեսը ներկայացնում է նաեւ իր հայթայթած տեղեկությունները, որոնք երբեմն իրարամերժ են. «Այս պատմությունն ամենահավանականն է, բայց քանի որ կա նաեւ պակաս հավանական պատմությունը, այդ եւս պետք է ասվի»[4]: Ինչպես տեսնում եք, իր համար հավանական տարբերակը գրելով՝ նա նաեւ նշում է ոչ հավանական տարբերակների մասին:

Միաժամանակ, «Պատմության...» մեջ Հերոդոտեսը գրում է, թե ինչպես է հայթայթել տեղեկությունները, որտեղից են դրանք իրեն հասել, այսինքն՝ նշել է աղբյուրները: Իսկ աղբյուրները լրագրության հիմքն են: «Մինչեւ այստեղ այն, ինչ պատմեցի, իմ սեփական եզրակացություններն են՝ հիմնված անձամբ իմ տեսածի եւ հավաքած տեղեկությունների վրա: Այսուհետեւ կպատմեմ այն, ինչ լսել եմ Եգիպտոսի պատմությունից՝ ավելացնելով նաեւ իմ տեսածները»[5], իսկ մի ուրիշ տեղում գրում է. «Իմ հետազոտությունները ես ավելի ծավալեցի՝ ինքս իբրեւ ականատես գնալով մինչեւ Ելեփանտինե քաղաքը, իսկ այնտեղից հետո արդեն հարցնելով ու լսելով»[6]:

3 Հերոդոտես, Պատմություն ինը գրքից, Երեւան, 1986 թ., էջ 432:
4 Նույն տեղում, էջ 162:
5 Նույն տեղում, էջ 123-124:
6 Նույն տեղում, էջ 98:

Աղբյուրների բազմազանության եւ տեղեկությունների ձեռքբերման մասին Հերոդոտեսից արված այս մեջբերումները կարող են լրագրողներին տրվող առաջին խորհուրդները դառնալ: Որովհետեւ լրագրությունը, մասնավորապես հետաքննական լրագրությունը, կարծում եմ, նույնպես պատմագրություն է, իսկ լրագրողները՝ պատմություն կերտողներ:

Մեզ հասած պատմությունները միշտ չէ, որ ճշգրիտ են եղել: Այդ իսկ պատճառով այսօր պատմաբանները, գիտնականները գլուխ են կոտրում պատմական տարբեր դրվագների շուրջ՝ փորձելով վեր հանել իրականությունը: Իհարկե, դա դժվար է: Իսկ ո՞րն է եղել նման դեպքերի պատճառը. իհարկե, հեղինակի սուբյեկտիվիզմը: Յուրաքանչյուր հեղինակ փորձել է իր ձեւով ներկայացնել, հաճախ մեկնաբանել այս կամ այն իրադարձությունը: Եթե նրանք եղել են թագավորական արքունիքներում, գրել են արքաներին հաճո պատմություններ: Ճիշտ այնպես, ինչպես այսօր: Տասը տարի առաջվա հերոսն այսօր դարձել է դավաճան, երեկվա դավաճան քաղաքական գործիչն այսօր պետական բարձրաստիճան պաշտոնյա է: Այնպես որ, նույն խնդրի առջեւ կանգնած ենք նաեւ քսանմեկերորդ դարում: Մի՞թե այսօր էլ պատմություն կերտողների մի հսկա բանակ՝ լրագրողները, չեն աղավաղում դեպքերն ու իրադարձությունները, չեն փորձում օրվա իշխանություններին հաճո ձեւով ներկայացնել դրանք: Հավատացեք, խնդիրները նույնն են եղել դարեր առաջ, նույնն են հիմա, նույնն են լինելու նաեւ վաղը: Եւ մի՞թե դա չէ պատճառը, որ լրատվամիջոցներն ընդունում են էթիկայի կանոններ, որպեսզի չխախտեն դրանք՝ լինեն անաչառ, օբյեկտիվ, ազնիվ, անշահախնդիր: Այս բառերի շարանը կարելի է համալրել: Եթե լրագրողներն ընդունում են նման կանոններ, նշանակում է՝ կա լրագրողների մի հսկա զանգված, որը դրանք խախտում է ամեն օր: Մենք այսօր ականատես ենք նաեւ նման լրագրության:

Հայ պատմիչ Առաքել Դավրիժեցու «Պատմություն» գիրքը ժամանակագրական մի ճշգրիտ վավերագրություն է: Մ. Խորենացին ասում է՝ չիք պատմություն առանց ժամանակագրության: Իսկ Ա.Դավրիժեցին գրում է. «Նաեւ հարկավոր է գիտենալ, որ ըստ անհրաժեշտության այստեղ պետք է թվականը [ժամանակը] դրվի իբրեւ հիմք, ապա նաեւ նրան հենվի պատմությունը իբրեւ շինվածք...»[7]: Ա. Դավրիժեցու աղբյուրները եղել են առաջին հերթին ականատեսները՝ մարդիկ: Նա զրուցել է մարդկանց հետ եւ գրի առել նրանց ասածները: Իսկ այդ մարդիկ մասնակից են եղել նկարագրվող իրադարձություններին:Դավրի-

7 Առաքել Դավրիժեցի, «Պատմություն», Երեւան, 1988, էջ 17:

ժեցին շրջել է տարբեր երկրներով, եղել է բազում բնակավայրերում, հանդիպել այդ պատմություններին քաջատեղյակ մարդկանց, ականատեսների, զրուցել ու գրի առել նրանց ասածները: Հեղինակը սրանով չի բավարարվել: Նա պատմական նույն իրադարձությունը ստուգել է նաեւ այլ աղբյուրներից, մասնավորապես՝ ուսումնասիրել գրավոր հիշատակությունները: Եւ այս ամենը նա արել է միայն մի բանի համար՝ հասնելու ճշմարտությանը: Պատմիչների գործերը նրա համար ծառայել են որպես փաստաթղթեր՝ հավաստի փաստաթղթեր, այդ իսկ պատճառով երբեմն նրանց գրածները շարադրել է այնպես, ինչպես կան: Իսկ ահա թե ինչ է գրում Ա. Դավրիժեցին վերոհիշյալ մտքից երկու նախադասություն հետո. «Բայց մենք ծանր աշխատանքով հետազոտեցինք, որը գտանք, նշանակեցինք պատմության հետ նաեւ թվականը, իսկ որը չգտանք, պատմեցինք առանց թվականի: Իսկ դու այս այսպես ընդունիր առանց մեղադրելու եւ քո աղոթքներում հիշատակիր սրա աշխատասիրողներին»[8]:

Ի՞նչ է սա. հետաքննություն չէ՞, արդյոք: Դժվար է ասել՝ ոչ, դժվար է նաեւ ասել՝ այո: Ես պատմիչներին այստեղ հիշատակում եմ միայն մի բանի համար. ասելու, որ հետաքննական լրագրության տարրեր կարելի է տեսնել հարյուրամյակներ առաջ պատմություն գրողների գործերում:

Այսօր էլ դժվար է տալ լրագրողական հետաքննության սահմանումը: Դա հետազոտություն չէ՞, ուսումնասիրություն չէ՞, պատմություն չէ՞:

Պուշկինի «Պուգաչովյան ապստամբության պատմությունը», Լեւ Տոլստոյի «Հաջի Մուրադը», Ղեւոնդ Ալիշանի գործերը, Լեոյի «Խոջայական կապիտալը», իմ կարծիքով, լրագրողական հետաքննության օրինակներ են: Ինչու՞ եմ սկսել պատմիչներից ու հասել գրողներին: Ես հենց պատմիչների գործերում եմ տեսնում հետաքննական լրագրության տարրերը: Ի վերջո, այսօր բոլոր հայտնի հետաքննողներն իրենց հետաքննությունները կատարելուց հետո, անդրադառնալով դրանց տարիներ անց, նույն հետաքննությունները դարձնում են գրքեր կամ ինչ-որ պատմությունների վավերագրեր: Մի խոսքով, հետաքննական նյութը վավերագրություն է, եւ լավագույն վավերագրողները, ինչպես ցույց է տալիս փորձը, դառնում են հետաքննող լրագրողները:

Լրագրության մեջ, իհարկե, կարեւոր է տաղանդը, ավելի ճիշտ՝ գրելու ձիրքը: Մեր մասնագիտության մեջ կարեւոր տեղ ունեն մասնա-

8 Ա. Դավրիժեցի, «Պատմություն», Երեւան, 1988, էջ 17:

գիտական գաղտնիքները: Դրանց մասին կարող են պատմել նրանք, ովքեր աշխատել են թերթերում, գործակալություններում, հեռուստառադիոընկերություններում: Ամեն մի հոդվածի պատրաստում մի պատմություն է: Ամեն մի հետաքննություն առանձնահատուկ պատմություն է, որը երբեք չի կրկնվում:

«Ի՞նչ է լրագրողական հետաքննությունը» հարցի պատասխանն առ այսօր վերջնականորեն գտնված չէ՝ առանձին ժա՞նր, թե՞ պարզապես մեթոդ: Լրագրության տարբեր տեսաբաններ եւ լրագրողներ փորձել են սահմանումներ տալ: ԱՄՆ-ում հրատարակվող «Նյուսդեյ» թերթի խմբագրի նախկին տեղակալ Ռոբերտ Գրինն ասում է.

«Հետաքննությունը ժուռնալիստական մի կարեւոր թեմայով նյութ է, որը, որպես կանոն, արվում է սեփական նախաձեռնությամբ եւ աշխատանքով, կարեւոր թեմայով, որը առանձին մարդիկ կամ կազմակերպություններ կուզենային գաղտնի պահել: Հետաքննության երեք կարեւոր տարրերն են՝ լրագրողը կատարում է հետաքննություն, որը ուրիշ ոչ մեկը չի կատարել, թեման բավական կարեւոր է ընթերցողի կամ հեռուստադիտողի համար, եւ ուրիշները փորձում են հետաքննության մեջ արծարծված փաստերը թաքցնել հասարակությունից»[9] :

«Բոստոն Գլոբ» թերթի հետաքննող լրագրող, Պուլիցերյան եռակի մրցանակակիր Սթիվ Քյուրքչյանը սովորական լրագրողի եւ հետաքննող լրագրողի տարբերության մասին «Հետքին» տված հարցազրույցում ասել է. «Ժամանակն է կարեւոր: Սովորական լրագրողն աշխատում է վաղվա կամ վաղը չէ մյուս օրվա համար: Հետաքննող լրագրողը՝ շատ ավելի երկար ժամանակի: Նա բացատրում է, թե ինչու է ինչ-որ բան տեղի ունենում: Ոչ թե արձանագրում է, որ այսինչ բանը տեղի է ունեցել, այլ բացատրում է, թե ինչու է այդպես եղել»[10]:

Ոմանք պնդում են, որ լրագրողական հետաքննությունը որպես ժանր գոյություն չունի, եւ ցանկացած նորմալ հոդված լրագրողական հետաքննություն է: Բայց եթե հոդվածում լրագրողը ոչինչ չի բացահայտում, չի փորձում պարզել այն, ինչ չի ասվել պաշտոնյաների ելույթներում կամ թաքցվել է պաշտոնական փաստաթղթերի անորոշ

9 Джон Уллмен, Журналистские расследования: современные методы и техника, ct. 6, National Press Institute, 1999.
10 «Վայելեք ճակատամարտը»,- ասում է Պուլիցերյան եռակի մրցանակակիր Սթիվ Քյուրքչյանը, www.hetq.am, 22 հուլիս, 2002 թ.

ձեւակերպումներում, չի կարող ասել, որ լրագրողական հետաքննություն է կատարել: Ասածս հասկանալի դարձնելու համար փորձեմ այն բացատրել օրինակով. թերթը հրապարակում է հոդված այն մասին, որ կառավարությունն օտարերկրյա մի ընկերության մասնավորեցրել է հայկական կապի ձեռնարկությունը: Ընկերությունը պարտավորվել է ներդնել ենթադրենք 100 մլն դոլար: Սովորական լրագրողը ներկայացնում է նախարարի եւ փվյալ ընկերության ներկայացուցչի կարծիքները. ուրիշ ոչինչ: Հետաքննող լրագրողը պետք է պարզի, թե ինչպե՞ս է կայացել այդ մրցույթը, ինչու՞ է հաղթել հենց այդ ընկերությունը, արդյո՞ք սեփականատեր դարձած ընկերությունում մասնաբաժին ունեն կառավարության բարձրաստիճան պաշտոնյաները եւ այլն: Շատ կարեւոր է պարզել, թե այդ ընկերությունն այլ երկրներում ինչպե՞ս է աշխատել եւ ի՞նչ համբավ ունի: Բավական է հիշել 1998 թ. «ԱրմենՏելի» վաճառքի պատմությունը: Այն Հայաստանի ամենամութ գործարքներից մեկն է, եւ առայսօր բացահայտված չեն այդ պատմության կոռուպցիոն մանրամասները: Մի քանի պաշտոնյաներ միլիոնավոր դոլարներ ստացան այդ գործարքից, նրանց մի մասը կարճ ժամանակ անց լքեց Հայաստանը եւ մեծ կարողություններով հայտնվեց տարբեր երկրներում:

Ահա հետաքննության մի օրինակ, որը կատարել է «Հետաքննող լրագրողներ» կազմակերպության «Հետք» թերթի լրագրողներից մեկը:

2004 թ. ՀՀ կառավարությունն իր որոշմամբ հայ-իտալական համատեղ մի ձեռնարկության վարձակալության էր տվել տասնյակ հազար հա հողատարածք՝ հիմնականում անտառային հատված, Հայաստանի գեղատեսիլ վայրերից մեկում: Անտառի այդ հատվածում նախատեսվում էր բազմացնել կենդանիներ եւ կազմակերպել որս, ինչպես նաեւ՝ զարգացնել էկոտուրիզմը: Առաջին հայացքից գեղեցիկ ծրագիր էր: Սակայն «Հետքի» լրագրողը որոշեց գնալ կառավարության որոշման հետքերով: Նախ դիմեց ՀՀ արդարադատության նախարարության պետռեգիստրի գործակալություն՝ պարզելու, թե ե՞րբ է գրանցվել հայ-իտալական ձեռնարկությունը, եւ ովքե՞ր են հիմնադիրները: Մեզ հայտնեցին հիմնադիրների տվյալները՝ մեկ իտալացի եւ մեկ հայ: Իտալացու մասին որոշ տեղեկություններ կարողացանք հայթայթել ինտերնետից՝ նա բիզնեսմեն է: Հայկական կողմի ներկայացուցիչը, ինչպես պարզվեց, Ազգային ժողովի պատգամավոր է: Կարծես թե ամեն ինչ օրինական էր: Առաջին հայացքից որեւէ արտառոց բան չէինք գտնում՝ բացի նրանից, որ ՀՀ օրենսդրությամբ Ազգային

ժողովի պատգամավորն իրավունք չունի բիզնեսով զբաղելու: Սակայն սկսեցինք հետաքրքրվել, թե ի՞նչ կենդանիներ կան այդ փարածքում: Լրագրողը նամակ գրեց իտալացի հիմնադրին` նշելով, թե ինքը որսորդ է եվրոպական մի երկրից եւ ուզում է որս կապարել Հայաստանում: Իտալացին ուղարկեց այն կենդանիների նկարները, որոնք Հայաստանում հնարավոր է որսալ: Դրանք լուսանկարներ էին մուֆլոնի կտրած գլխով, որսած քարայծով: Իտալացի բիզնեսմենի պատասխան-նամակում «եվրոպացի որսորդին» առաջարկվել էր նաեւ կովկասյան արջ: Լրագրողը պարզեց, որ այդ կենդանիները գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում: Ավելին, մուֆլոնը գրանցված է նաեւ միջազգային Կարմիր գրքում եւ համարվում է անհետացող կենդանի, որի որսը թույլատրվում է բացառապես գիտահետազոտական նպատակներով: Իսկ հայ-իտալական ընկերությունը մուֆլոնի որս է առաջարկում 6.000 եվրո վճարի դիմաց:

«Հետքը» տպագրեց հոդվածը իտալացու ուղարկած լուսանկարներով: Անակնկալի եկած ԱԺ պատգամավորը «պարզաբանումներ» պահանջեց լրագրողից, որովհետեւ միջազգային տարբեր կառույցներ նամակներ էին հղել իտալացի հիմնադրին` կոչ անելով դադարեցնել Կարմիր գրքում գրանցված կենդանիների որսը Հայաստանում: ԱԺ պատգամավորն ասում էր, որ իտալացին որոշել է դատի տալ «Հետքին»` հեղինակային իրավունքը խախտելու եւ իր լուսանկարներն օգտագործելու համար:

Բայց, իհարկե, դա չարեցին, որովհետեւ նրանք որեւէ արդյունքի չէին կարող հասնել: Տարիներ անց` 2008 թ.-ին, «Հետքի» մեկ այլ լրագրող նորից անդրադարձավ այս խնդրին եւ պարզեց, որ որեւէ բան չի փոխվել: Կարմիր գրքում գրանցված մուֆլոնով այսօր էլ հրապուրում են որսորդներին եւ որս կազմակերպում` խախտելով բազմաթիվ օրենքներ: Այս հետաքննության պատմությունը դեռ չի ավարտվել:

Հետաքննությամբ լրագրողը բացահայտում է, թե ովքեր են չարաշահումներ թույլ տվել, ինչպես են պաշտոնյաները օրենքները խախտել կամ շրջանցել` անտեսելով հասարակական շահը: Հետեւաբար, լրագրողական հետաքննությունը տալիս է կոնկրետ անուններ, որոնք չէին ցանկանա հայտնի դառնալ: Պատրա՞ստ եք դուք կատարել այս վտանգավոր գործը, պատրա՞ստ եք նշել, թե ովքեր են կանգնած այս կամ այն վատ գործարքի ետեւում: Եթե այո, ուրեմն սկսեք աշխատել:

Դուք բազմաթիվ արգելքներ պետք է հաղթահարեք: Սկսած խմբագրին համոզելուց, որ ձեր ընտրած թեման արժե հետաքննել, մինչեւ այն, որ հնարավոր է ամիսներ շարունակ ուսումնասիրեք որեւէ

նյութ, բայց այդպես էլ արդյունքի չհասնեք: Երբեմն՝ հենց ձեր մեղքով, երբեմն էլ փարբեր պափճառներ կամ խոչընդոփներ կարող են լինել: Բայց պեփք չէ հուսահափվել:

Հաճախ պափահում է՝ գրելու ձիրք ունես, բայց չես կարող դառնալ լավ լրագրող, որովհեփեւ այդպես էլ չկարողացար փիրապեփել լրագրողական արվեսփին, նյութի մեջ «մեխը» գփնելու արվեսփին, չունեցար լրագրողի համար այնքան կարեւոր հոփառությունը: Միաժամանակ, կա նաեւ այլ խնդիր՝ երբ դու աշխափում ես թիմով՝ հեռուսփափեսությունում, եւ թիմի այլ մարդկանց պափճառով քեզ մոփ ոչինչ չի սփացվում. օպերափորի վափ աշխափանք, վափ մոնփաժը, ձայնը փչացնում են քո գրած լավ փեքսփը կամ սցենարը:

Մենք գրում ենք ամեն ինչի մասին, յուրաքանչյուր ոք մեզ համար կարող է դառնալ «հումք»՝ ժուռնալիսփական հումք: Այս բառը մի անգամ իմ դեմքին շպրփեց մի փախսփական՝ խոսելով իմ գործընկերների մասին, ովքեր խաբել էին նրան: Նա այդպես էլ ասաց՝ մենք ձեզ համար հոդված գրելու ամենաէժան հումքն ենք: Ես սարսափեցի այն մփքից, որ մարդկանց կարող ենք օգփագործել որպես հումք, օգփագործել ու դեն շպրփել: Եթե հումքը լավն է, ուրեմն հավանականությունը մեծ է լավ հոդված կամ հաղորդում ունենալու: Անշուշփ, այս ամենի մեջ մեծ ճշմարփություն կա: Հիշում եմ՝ պափերազմի փարիներին Սփեփանակերփի մափույցներում՝ Կրկժան կոչվող թաղամասում, ռազմական գործողությունների ժամանակ նկարահանում էր կափարում գերմանական մի հեռուսփաընկերության լրագրողը՝ օպերափորի հեփ: Այդ ժամանակ գլխից վիրավորվել էր մի հայ աշխարհազորային, եւ ես փեսա, թե ինչպես լրագրողը գոռաց-կանչեց օպերափորին՝ նկարելու մեռնող վիրավորին: Օպերափորը, որ այդ պահին կրակոցներ էր նկարահանում, մոփեցավ եւ սկսեց նկարահանել մեռնողին: Երկար նկարելուց հեփո նա շրջվեց դեպի լրագրողը եւ բութ մափը վերեւ բարձրացրեց, այսինքն՝ ամեն ինչ լավ է, լավ կադրեր ունեցանք: Նրանց իսկապես չէր էլ հեփաքրքրում այդ վիրավորի կամ հենց ղարաբաղցիների ճակափագիրը: Նրանք իրենց գործն էին անում: Ես այդ ժամանակ առաջին անգամ հասկացա, որ լրագրողներն իրենց նյութերի համար լավ հումք են փնփրում, եւ որքան լավն է հումքը, այնքան լավը կլինի նյութը, ինչքան շափ է արյունը, մահը, այնքան փպավորիչ կլինի նյութը: Դժբախփաբար, սա իրականություն է: Մեր իրականության մեջ այդպես է հիմնականում: Թերթերին, հեռուսփակայաններին գրեթե չի անհանգսփացնում մարդու ճակափագիրը նրան «օգփագործելուց» հեփո: Այնպես որ, այսօր էլ այնքան

էլ չենք գիտակցում, թե ինչ «հարված» ենք հասցնում մարդուն շատ հաճախ մեր նյութերում, չենք գիտակցում, թե ինչ հզոր զենք է ժուռնալիստիկան: Այստեղ ուզում եմ հիշել Վիլյամ Սարոյանի միտքը. «Ոչ մեկը չպետք է մի պահ կասկածի, որ ես իր հետ չեմ: Այսօր ո՛չ եկեղեցում, ո՛չ էլ գրողների ճաշկերույթին չկար մեկը, որի հետ համաձայն լինեի, բայց միաժամանակ ես չեմ կարող փարօրինակ լինել եւ դուրս գալ մարդկությունից: Նրանք բոլորը իմ ընտանիքի անդամներն են, այդ խենթերը, եւ ես սիրում եմ նրանց»[11]:

Ընդհանրապես Հայաստանում լրագրության ներկայիս վիճակի հիմնական պատճառը լրագրողական դպրոցի բացակայությունն է: Նման պայմաններում լրագրողական դպրոց է դառնում յուրաքանչյուր թերթ, հեռուստաընկերություն: Յուրաքանչյուր լրագրող գրում է այնպես, ինչպես իր խմբագիրն է պահանջում: Նույնիսկ լրագրողական նորմալ կրթություն ստացած ժուռնալիստին մեկ ամիսը բավական է, որպեսզի նա մոռանա ամեն ինչ եւ գրի այնպես, ինչպես ընդունված է տվյալ լրատվամիջոցում:

Այս գիրքը նաեւ մտորումներ է լրագրության մասին, այդ իսկ պատճառով հայցում եմ ընթերցողի ներողամտությունը իմ դատողություններով նրան ծանրաբեռնելու համար:

Իմ ամենակարեւոր խորհուրդը նրանց, ովքեր պատրաստվում են դառնալ լրագրող եւ իրենց նվիրել հասարակությանը ծառայելու գործին՝ **երբեք մի՛ դարձեք գործիք եւ թույլ մի՛ տվեք, որ ձեզ օգտագործեն**: Շատերը կարող են ձեզ տեղեկություններ «առաջարկել»՝ այս կամ այն պաշտոնյային վարկաբեկելու նպատակով: Մի՛ կատարեք պատվիրված հետաքննություններ: Բավական է մի անգամ դա անեք, կկրկնեք երկրորդ, երրորդ անգամ ու կզրկվեք ձեր գործընկերների եւ հատկապես ընթերցողների վստահությունն ու հարգանքը նվաճելու հնարավորությունից:

Լրագրողական հետաքննության ճանապարհն, իսկապես, երկար է ու դժվար, բայց այլ կերպ հնարավոր չէ հասնել ճշմարտության: Վ. Սարոյանը մի առիթով ասել է. «Մենք կարող ենք շատ բան ասել շատ բաների մասին: Ճշմարտության հատիկ չի կարող չլինել ամեն բա-

11 Վիլյամ Սարոյան, Պատմվածքներ, հարցազրույցներ, էսսեներ, հուշեր, Երեւան, 1999, էջ 134:

նի մեջ, ինչ մենք ուզում ենք ասել»[12]: Ուրեմն, պետք է փորձել գտնել այդ հատիկը: Դուք պետք է լինեք համառ եւ երբեք չհուսահատվեք: Եթե նահանջեք, ոչնչի չեք հասնի: Հավատացած եղեք՝ համառության դեպքում ներքին ձայնը ձեզ կհուշի՝ որ ուղղությամբ գնալ:

Լրագրողական հետաքննությունը հասարակական հնչեղություն ունեցող մի խնդրի խորը, բազմակողմանի ուսումնասիրություն է: Սա գուցե ամենաահակիրճ սահմանումն է: Մեր հասարակությունում գրեթե ամեն ինչ թաքնված է հազարավոր փականքների ետեւում՝ սկսած պաշտոնական տեղեկատվությունից մինչեւ համատիրության գործունեությունը: Փաստորեն, լրագրողը բացահայտում է հասարակության համար խիստ կարեւոր ինչ-որ գաղտնիք կամ գաղտնիքներ:

«Լրագրողական հետաքննության՝ որպես ժանրի հիմնական առանձնահատկությունն այն է, որ հեղինակը չի սահմանափակվում խնդիրը բարձրացնելով եւ այն ինքնուրույն հետազոտելով: Հետաքննող լրագրողը, որպես կանոն, բարձրացված հարցերի լուծման համար առաջարկում է ինչ-որ տարբերակներ, որոնց նա եզրահանգել է իր կատարած ուսումնասիրության արդյունքում: Այլ դեպքում նա կարող է դա բաց տեքստով չասել, բայց հավաքված փաստերը եւ մեկնաբանությունները ընթերցողին կամ հեռուստադիտողին կստիպեն գալ այդ եզրահանգումներին»,- գրում է Յուլիա Շումը [13] :

Ռուսաստանում 1998 թ. հայտնի հրապարակախոս, «Բանդիտական Պետերբուրգ» եւ «Քրեական Պետերբուրգ» հայտնի գրքերի հեղինակ, նախկինում զինվորական թարգմանիչ Անդրեյ Կոնստանտինովը հիմնեց «Լրագրողական հետաքննության գործակալությունը»: Ա. Կոնստանտինովն ավարտել է Լենինգրադի պետական համալսարանի Արեւելքի ֆակուլտետը, աշխատել է Եմենում, Լիբիայում, այնուհետեւ ազատվել է Պաշտպանության նախարարությունում իր զբաղեցրած աշխատանքից եւ սկսել զբաղվել լրագրությամբ: Նա դարձավ «Ваш тайный советник» թերթի գլխավոր խմբագիրը: Այսօր նա հայտնի գրող է, կինոսցենարիստ, նրա գրքերի տպաքանակն անցնում է տասը միլիոնից:

12 Վիլյամ Սարոյան, Պատմվածքներ, հարցազրույցներ, էսսեներ, հուշեր, Երեւան, 1999, էջ 132:

13 Шум Ю.А., Журналистское расследование - от теории к практике, М.: “Галерия”, 2002. - с. 164.

Տարբեր կարծիքներ կան այս գործակալության վերաբերյալ: Ես ինքս ունեմ կանխակալ վերաբերմունք, քանի որ նրանք բացահայտ ընդունում են հետաքննությունների պատվերներ: Մարդիկ գալիս են գործակալություն, վճարում են եւ պատվիրում այս կամ այն թեմայի, մարդու, գործի մասին հետաքննություն կատարել: Սա արդեն իսկ խախտում է անաչառ հետաքննության սկզբունքը: Իրենք էլ՝ ռուս լրագրողները, միանշանակ չեն վերաբերվում այս գործակալության գործունեությանը: Ոմանց դուր չեն գալիս նրանց աշխատանքի մեթոդները, մյուսներն առաջադրում են վճարովի հետաքննություն կատարելու հարցը, երրորդները՝ էթիկայի խնդիրները եւ այլն:

Անդրեյ Կոնստանտինովը «Ի՞նչ ենք հասկանում լրագրողական հետաքննություն ասելով» հարցին այսպես է պատասխանում. «Ցանկացած հարցի բազմակողմանի ուսումնասիրություն: Ահա եւ ամբողջը: Բայց մեզ մոտ, որպես կանոն, այդ աշխատանքն ինչ-որ ձեւով բարդացված է: Ռուսական տարբերակում դա ինչ-որ մի գաղտնիքի բացահայտում է: Ինձ թվում է՝ արեւմուտքի կենսաձեւը բերում է նրան, որ հետաքննողներն ավելի շատ հետազոտողներ են, քան հետաքննողներ: Մեզ մոտ հակառակն է: Այլ խնդիր է, որ մեզ մոտ հաճախ հետաքննություն են անվանում մի բան, որ կապ չունի հետաքննության հետ: Իսկական հետաքննողները քիչ են: Դա կապված է մամուլի քաղաքականացված լինելու, կոմպրոմատների պատերազմի հետ: Եթե ինչ-որ մեկը տալիս է ձայնագրությունով երիզներ, եւ դուք վերծանելով այն՝ տպագրում եք ձեր մեկնաբանություններով, դեռեւս չի նշանակում, թե դա լրագրողական հետաքննություն է»:

Լրագրողների միջազգային կենտրոնը, որը վերջին տարիներին զանազան կրթական ծրագրեր է իրականացնում աշխարհի տարբեր երկրներում, հետաքննական լրագրության համար նախատեսած նյութերում այսպես է սահմանում լրագրողական հետաքննությունը.

Հետաքննական լրագրությունը.

- Անդադար հետազոտություն է եւ տեղեկությունների հավաքում:
- Խորը, համակողմանի եւ երկարաժամկետ ուսումնասիրություն է եւ հրապարակում:
- Խնդրի համառ եւ վճռական «փորփրում» է:
- Փաստաթղթերի ուսումնասիրություն է, հանրային փաստաթղթերի օգտագործում՝ հետեւելով, թե ուր են տանում դրանց հետքերը:
- Համակողմանի հարցազրույցներ:

- Հանցագործությունները բացահայտելու գործիքներ եւ միջոցներ:
- Վերջին ատյանի դատարան է:
- Այնպիսի նյութերի հրապարակում է, որոնք չեն լուսաբանել մյուս ԶԼՄ-ները:
- Բազմազան տեղեկատվությունը մեկ ամբողջության մեջ հավաքելն է:
- Բացահայտում է այն ամենը, ինչը մյուսներն ուզում են գաղտնի պահել:
- Հիմնավոր, բացահայտող հրապարակումներ, որոնք նշանակալիորեն օգնում են հանրային քննարկումներին:
- Հսկող շան իշխանություն է, որը կենտրոնանում է իշխանություն ունեցող անհատների եւ կազմակերպությունների պատասխանատվության խնդրի վրա[14]:

Սթիվ Քյուրքչյանը լրագրողական հետաքննությունը համեմատում է գլուխկոտրուկ լուծելու հետ. «Սեղանի վրա լցված են բազում տեղեկություններ, եւ լրագրողի խնդիրն է՝ համադրել այդ փաստերը, կողք-կողքի դնել, ճիշտ դասավորել: Հաճախ ոչ բոլոր մասերն են առկա, ինչ-որ բաներ բացակայում են: Եթե, ասենք, 20 մասից բաղկացած գլուխկոտրուկի 17 մասն ունեք եւ դասավորել եք ճիշտ հաջորդականությամբ, արդեն հստակ գիտեք, թե որ երեք մասերն են պակասում: Նաեւ, որպես լրագրող արդեն գիտեք՝ որտեղ փնտրել այդ պակասող մասերը: Եթե դրանք չեք գտնում, պետք է ազնիվ լինել ընթերցողի հետ եւ ասել, թե ինչու չունեք այդ փաստերը, ինչու չեք կարող բացատրել այդ պակասող հատվածը: Սա շատ-շատ կարեւոր է՝ ազնիվ լինել ընթերցողի հետ:

> Դուք կարող եք ազնիվ, անկեղծ չլինել ձեր խմբագրի հետ, իհարկե, դուք ընդհանրապես չպետք է ազնիվ լինեք ձեր հրատարակչի հետ: Դրա կարիքը չունեք: Բայց պարտավոր եք ազնիվ լինել ընթերցողի հետ: Երբ նյութ եք գրում, պետք է մտածեք, որ գրում եք ձեր տատիկի կամ սիրելի հորեղբոր տղայի, բարեկամի համար: Դուք չպետք է ստեք, նրանց համար պատմություն հորինեք:

14 Աղբյուրը՝ Հետաքննական լրագրության աշխատանքային նյութեր. գործիքներ եւ միջոցներ, Դեյվիդ Ե. Կապլան, «Հետաքննող լրագրողներ եւ խմբագիրներ», 2003 թ.:

Կարեւոր է նրանց ասել միայն այն ամենն, ինչում համոզված եք, եւ այնքանը, ինչքան գիտեք: Քանի որ ընթերցողի վստահությունն եք կերտում, ամբողջ կյանքի ընթացքում դուք փորձում եք ձեռք բերել այդ վստահությունը եւ դա անում եք ձեր ամբողջ կյանքի համար: Այդ գործընթացը շարունակական է: Այսինքն՝ երբ նրանք տեսնում են ձեր ազգանունը թերթում, ասում են՝ ես վստահում եմ այս լրագրողին»:

Ինչո՞վ ենք մենք տարբերվում արեւմտյան լրատվամիջոցների հետաքննող լրագրողներից: Նշեմ մի քանի տարբերություն. նախ՝ տեխնոլոգիաները, պայմանները, միջավայրը, օրենքները եւ ամենակարեւորը՝ վճարը: Հայաստանում լրագրողները հետաքննությունները կատարում են հազար գործի արանքում: Ոչ մի լրատվամիջոց հետաքննություն չի պատվիրում: Արեւմուտքի լրատվամիջոցները հետաքննական թիմեր են պահում, բարձր աշխատավարձով լրագրողներ են նրանք: Այնտեղ կան զանազան հիմնադրամներ, որոնք ֆինանսավորում են հետաքննական ծրագրեր: Վերջին տարիներին անընդհատ խոսվում է լրագրողական հետաքննության մասին: Եթե հաշվի առնենք, որ այդ լրագրողներին Արեւմուտքում հաճախ անվանում են «աղբի մեջ քուջուջ անողներ», աղբը փորփրողներ, իսկ մեր շրջապատում համատարած աղբ է, ապա նշանակում է՝ նման լրագրողները մեզ մոտ մեծ անելիք ունեն: Լրագրողական հետաքննությունն արեւմտյան թերթերում ու հեռուստաընկերություններում մշտական տեղ ունեն, բոլոր լուրջ թերթերն ունեն հետաքննող լրագրողների հաստիքներ եւ թիմեր: Փորձագետների կարծիքով՝ հենց այդ նյութերն են լրատվամիջոցների վարկանիշը բարձրացնում:

Հայաստանում ստեղծվել է մի իրավիճակ, երբ թերթերը ցանկացած հոդված համարում են լրագրողական հետաքննություն: Այդ իսկ պատճառով կարծում եմ պետք է խոսել դրանց մասին, որպեսզի կարողանանք տարբերակել, ընդունել չափանիշներ, որոնցով կարող ենք ոչ միայն պատկերացում կազմել լրագրողական հետաքննության մասին, այլեւ գնահատել այն: Ի՞նչ է պետք իմանալ հետաքննություն կատարելու համար: Ո՞րն է հետաքննության նպատակը: Այս գրքում փորձ է արվում տալ այս հարցերի պատասխանները, ինչպես նաեւ արտասահմանյան մեր գործընկերների ընդհանրացումները լրագրողական հետաքննության մասին: Հետաքննական լրագրության մասին հատկապես ամերիկյան դպրոցը բազմաթիվ գրքեր է ներկայացրել լրագրողներին, եւ դրանց հեղինակները գործող լրագրողներ են եղել: Նրանք այսօր դասավանդում են տարբեր ուսումնական հաստատություններում, անցկացնում դասընթացներ գործող լրագրողների, ուսանողների համար: Սակայն մենք տարբեր հասարակություններում

ենք, եւ ամենագլխավորը՝ տարբեր իրավիճակներում ենք աշխատում: Մեր աշխատանքն էականորեն տարբերվում է: Այս հրապարակությունը, հուսով եմ, կլինի Հայաստանում հետաքննական լրագրության առանձնահատկությունների մասին ուսումնասիրությունների սկիզբը:

Հետաքննող լրագրողներին հաճախ անվանում են նաեւ «ավգյան ախոռները» մաքրողներ: Լրագրության տեսաբանները բոլոր դեպքերում այս ուղղությունը համարում են ամերիկյան լրագրության ծնունդ: Եւ դրա հիմնադիրներից մեկը համարվում է լրագրող Սեմյուել Կլեմենսը (1835-1910): Նա Մարկ Տվեն կեղծանունով Territorial enterprise թերթում գրում էր հոդվածներ՝ բացահայտելով ծախու չինովնիկներին, պատգամավորներին, դատավորներին: Տվենը նաեւ իր գրքերում է օգտագործել հետաքննության հնարքներ: Նյութերի հայթայթման ընթացքում նա հաճախ մասնագիտությունն է փոխել: XIX դարի 20-40-ական թթ. Ամերիկայում արդյունաբերական հեղափոխությունը ստեղծել էր նպաստավոր պայմաններ, եւ շատերն իրենց առաջ նպատակ էին դրել արագ հարստանալ: Ստեղծվում էին խոշոր կորպորացիաներ եւ տրեստներ: Արդյունաբերությունը մեծ թափով վերելք էր ապրում, մարդիկ տեսնում էին շատ արագ փող աշխատելու հնարավորություն, կոռուպցիոն գործարքների մեջ էին մտնում զանազան պաշտոնյաների հետ, համատարած չարաշահումներ էին: Իսկ այս ամենի դեմ պայքարողների առաջին շարքերում, բնականաբար, հայտնվեցին լրագրողները: Հենց այս շրջանում Նահանգներում ստեղծվեցին մի շարք ամսագրեր, դրանց մեջ առանձնանում էր 1887 թվականին Բենջամին Ֆլաուերի հիմնադրած «Արենա» (Arena) ամսագիրը: Կրթված եւ հավատացյալ Ֆլաուերը ուզում էր եւ կարողանում էր ամսագրում հետաքննական հոդվածների միջոցով ներկայացնել ամերիկյան իրականությունը: Դա ծայրահեղ աղքատությունն էր եւ աննկարագրելի հարստությունը այն մարդկանց, ովքեր այն ձեռք են բերել կաշառքների, անօրինական գործարքների միջոցով: Եւ Ֆլաուերը համոզված էր, որ ներկայացնելով կեղտը՝ կբացի մարդկանց աչքերը, նրանք կուղղվեն, եւ կփոխվի ամեն ինչ: Նա մտածում էր Ամերիկայի բարոյական վերածննդի մասին: «Արենան» անդրադառնում էր մենաշնորհին, կոռուպցիային, հասարակական կյանքի զանազան արատավոր կողմերին:

«Արենա»-ում 1898 թ. հրապարակված մի հոդվածում խոսվում էր, որ Ամերիկայի ժողովրդին կառավարում է ոչ թե հանրապետական կառավարությունը, այլ՝ կոռուպցիայի մեջ թաղված 19 սենատորներ, որոնց հեղինակն անվանում է «անտեսանելի կայսրություն»: Մինչ այդ ներկայացվում էին նաեւ այդ սենատորների զանազան գործարքները:

Բացահայտող հոդվածներ գրող լրագրողների հիմնական ամսագրերից մեկը դարձավ Մաքքլերսը (The McClure's): Այն հրապարակում էր Սեմյուել Մաքքլյուրը: Նա կարողացավ ամսագրի շուրջը համախմբել Ամերիկայի լավագույն լրագրողներին: Նրանք կարողանում էին ջրի երես հանել ամերիկյան հասարակության արատները: Հրապարակում էին կոռուպցիայի, շանտաժի, նավթային, քարածխի, պղնձի թագավորների անդրկուլիսյան խարդախություններին վերաբերող սկանդալային փաստեր: Այդ եւ դրան հաջորդած տարիները հետաքննական լրագրության լավագույն տարիներն էին:

Նման հոդվածներ գրող լրագրողներին անվանում էին «մաքրեյքըրներ» (muckraker): Այս տերմինն օգտագործել է ԱՄՆ նախագահ Թեոդոր Ռուզվելտը 1906 թվականին: Պետապարատի հասցեին հնչող քննադատություններին անդրադառնալով՝ նա բացահայտող հոդվածներ գրող լրագրողներին արհամարհանքով անվանեց «մաքրեյքըրներ», ինչը նշանակում է «աղբ փորփրող», «կեղտ քչչող»: Ըստ նախագահի՝ սրանք այն լրագրողներն էին, ովքեր նախընտրում էին ոտքերով խառնել կեղտը՝ չցանկանալով տեսնել կապույտ երկինքը: Լրագրողներին դուր եկավ իրենց տրված նման որակումը: Այսպես ձեւավորվեց նաեւ «մաքրեյքըրների շարժումը»: Սակայն բացահայտող հոդվածների բումը երկար չտեւեց, եւ այդպիսի լրագրությունը սկսեց վայրէջք ապրել:

Ամերիկյան հետաքննական լրագրության հաջորդ փուլը սկսվեց անցած դարի 70-ական թթ-ին: Իսկ գագաթնակետը դարձավ Ուոթերգեյթյան պատմությունը: Այսօր հետաքննական լրագրությունը ԱՄՆ-ում դարձյալ վերելք է ապրում, եւ Պուլիցերյան հեղինակավոր մրցանակը տրվում է հենց հետաքննող լրագրությանը:

## Մարդկանց լսելու ունակությունը

«Ես պարբերաբար խախտում եմ երկրորդ կողմին լսելու պայմանը: Բայց դրա հիմքերը ես ունեմ, գիտե՞ք ես ինչից եմ վախենում, որ մարդիկ, ում մասին գրում եմ, դուրս կգան խմբագրի վրա, եւ այդ նյութը չի հրապարակվի»,- ասում է Հայաստանում ամենահայտնի օրաթերթերից մեկի հայտնի լրագրողը, երբ հարցնում եմ՝ ինչու՞ երկրորդ կողմին չես լսել ու ներկայացրել նրա կարծիքը հոդվածում: Երբեմն նաեւ իսկապես այդ պատճառով լրագրողները շատ արագ են գրում հոդվածը, որ այդ մարդիկ գոնե չփորձեն կանխել նյութի հրապարակումը:

Հասարակությունը լրագրողի վրա է դնում արդարադատություն իրականացնելու բեռը, եւ նրա փեղեկացնելու գործառույթը վերածվում է արդարադատություն իրականացնողի գործառույթի: Երբ երկրում չի գործում արդարադատություն իրականացնող դատական համակարգը, մամուլը դառնում է մուրճ:

Լրագրողների հաջողությունը նրանում է, որ մենք լսում ենք մարդկանց, որովհետեւ ուրիշ ոչ ոք չի լսում նրանց, պաշտոնյաները սովորություն չունեն մարդկանց պատմությունները լսել, սովորական մարդիկ նրանց համար սփորին խավ են: Այսինքն՝ մենք շփվում ենք «ամենասփորին» շերտի հետ, որտեղ իրական մարդիկ են ու իրական կյանքեր:

Տարիներ առաջ սկսեցի ուսումնասիրել հոգեբուժարանների խնդիրները: Ինձ զանգեց հիվանդանոցի բժիշկներից մեկն ու ասաց, որ իրենց հաստատության էլէներգիան ու ջուրը պարտքի պատճառով անջատել են: Հեռուստատեսային ռեպորտաժից հետո միանգամից այդ հարցերը լուծվեցին: Մտերմացա շատ հիվանդների հետ, նրանց պատմություններն իմացա: Հինգ տարի հետո նկարեցի «Մերժվածները» վերնագրով վավերագրական ֆիլմ: Բոլոր հիվանդների համար մեր խումբը, իսկապես, դարձել էր հարազատ: Այս ֆիլմը, սակայն, հիշատակում եմ այլ բանի համար. դեռ այդքան ծանոթ չէի հիվանդներին, իմ երկրորդ այցելության ժամանակ հոգեբուժարանի երկրորդ հարկում կանգնած խոսում էի բժիշկների հետ, մոտեցավ հիվանդներից մեկը եւ, ինձ նայելով, հարցրեց. «Էն օրը, որ ներքեւից գոռում էի, դու՞ էիր վերեւից լսում ինձ»: Ասացի՝այո, ի՞նչ է պատահել: «Հեչ, ուզում էի իմանալ՝ ով էր ինձ լսում»: Այդ հիվանդը փնտրում էր իրեն լսողին: Իրականում մարդիկ միշտ փնտրում են մեկին, ով կլսի, ում կարող են պատմել իրենց պատմությունը եւ, համոզված եմ, լրագրողը այդ մեկն է, ում մարդիկ կարող են եւ պետք է պատմեն այդ պատմությունը:

Եթե հարցնեն՝ ի՞նչ է պետք մեր նման երկրում լրագրությամբ զբաղվելու համար, կպատասխանեմ՝ համարձակություն եւ ազնվություն: Բայց նույն հարցին կարելի է տալ միանգամայն հակառակ պատասխան. մեր երկրի նման երկրներում լրագրությամբ զբաղվելու համար դու կարող ես չլինել ո՛չ համարձակ եւ ո՛չ էլ ազնիվ: Այս դեպքում ծագում է հաջորդ հարցը. ինչպիսի՞ լրագրությամբ պետք է զբաղվել մեր երկրի նման երկրներում: Հարցի պատասխանը, ավելին՝ բանաձեւը կգտնեք՝ միացնելով ցանկացած հեռուստաալիք: Դուք պետք է

աշխատեք կառավարության հսկողության տակ, կառավարության համար: Կառավարությունն էլ ձեզ բաժին կհանի իր տնօրինության տակ գտնվող բարիքներից:

Մի բան հստակ է՝ հնարավոր չէ 100 տոկոսանոց ճշմարտության բացահայտում: Ինչքան էլ համակողմանի ներկայացնես նյութը, միեւնույն է՝ միշտ մի կողմի նժարն ավելի ծանր է լինում:

> Լրագրությունը թռիչքի նման է, ճանապարհին կարող ես նոր բարձունքների հասնել, բայց կարող ես նաեւ գետնին կպած թռչել կամ սողալով շարժվել: Եթե ուզում ես ինչ-որ բան փոխել քո լրագրությամբ, ապա պետք է կարողանաս բարձր թռչել: Դու պետք է պատրաստ լինես անգամ ինչ-որ զոհողությունների:

Դարպասիր չէ սենսացիոն բաներ գրել: Հիշում եմ մի պատմություն, որի մի դրվագը ցնցել էր բարձրաստիճան մի պաշտոնյայի: «Հետքի» լուսանկարիչ Օննիկ Գրիգորյանի հետ մեկ ամիս ուսումնասիրում էինք անօթեւան մարդկանց վիճակը Երեւանում ձմռան ամիսներին: Պարզվեց, որ հինգ տարիների ընթացքում յուրաքանչյուր ձմեռ փողոցում ցրտահարվում էր մոտ հիսուն մարդ, տասնյակները դառնում էին անդամալույծ: Մեր աշխատանքի ընթացքում ստիպված էինք հիվանդանոց տեղափոխել ցրտահարված մարդկանց: Անօթեւաններով որեւէ կազմակերպություն չէր զբաղվում: Նույնիսկ շտապ օգնության մեքենաները, երբ կանչ էինք հայտնում, իմանալով անօթեւան են՝ չէին գալիս: 2005-ի հունվարին՝ Ծննդյան տոներին, փողոցից հիվանդանոց տարանք ցրտահարված մի ծերունի: Նրա մականունը «Բաշ» էր (թուրքերեն բառ է, նշանակում է «գլուխ»): Նա փոքր ժամանակ խելացի երեխա է եղել, եւ Արեւմտյան Հայաստանից գաղթած նրա հայրն ասել է՝ բաշ է որդիս: Ցրտահարվել էին նրա վերջույթները, ոչինչ չէր զգում: Նրան կարողացանք լողացնել տալ: Հիվանդանոցում լոգարան չկար, եւ նրան լողացրին կաթսայատանը, ինչի համար բուժանձնակազմի աշխատողին վճարեցինք հինգ հազար դրամ: Բաշին պառկեցրել էին մահճակալին, սակայն նա ընկել էր այնտեղից: Բժիշկները չգիտեին՝ ինչ անել, մի պահ նրան կապկպել էին մահճակալին, սակայն սկսել էր գոռգոռալ: Հետո քանդել են կապերը, եւ նա նորից պառկել է գետնին: Երբ Բաշին այցելեցի հաջորդ օրը, բժիշկները սկսեցին բողոքել: Ես ասացի՝ կխոսեմ նրա հետ, որովհետեւ նա

չէր էլ ուզում լսել բժիշկներին: Գետնին մի անկյունում պառկած էր նա, երբ մտա: Հարցրի. «Բաշ, ինչու՞ չես մահճակալին պառկում»: Թեթեւ ժպիտով պատասխանեց՝ չեմ կարողանում: Ես զարմացած էի՝ ինչու՞ չի կարողանում: «12 տարի գետնին եմ պառկել, չեմ կարողանում այդտեղ մնալ, վախենում եմ, վախենում եմ գլորվեմ»,- ասաց նա: Ահա այս պատմությունը շատ էր հուզել պաշտոնյային:

Լրագրողները կարող են փոխել մարդկանց կյանքը, նրանց հոդվածներից հետո կարող են պաշտոնանկ արվել նախարարներ կամ այլ պաշտոնյաներ: Հրապարակված փաստերի առթիվ կարող են ստեղծել հանձնաժողովներ: Եւ միշտ նպատակը մեկն է՝ փոխել այն, ինչ սխալ է: Երբեմն լրագրողը դառնում է մարդկանց վերջին հույսը, արդարադատության վերջին ատյանը: Դատավորին այնքան չի հավատում սովորական մարդը, որքան լրագրողին: Սա, իհարկե, պատվաբեր է մի կողմից, մյուս կողմից՝ պատասխանատվություն, մեծ, դաժան պատասխանատվություն: Լրագրողները գնում են սխալների ետեւից եւ ցուցումներ տալիս դրանք ուղղելու: Նրանք հսկում են, որպեսզի սխալների, ապօրինությունների, անօրինական գործողությունների մասին տեղեկացնեն հասարակությանը, որպեսզի վերջինիս աջակցությամբ դրանք կանխեն կամ վերացնեն, փոխեն իրավիճակը: Բայց սա, կարծես թե, շատ իդեալական նկարագրություն է, իրականում մեզ շատ քիչ է հաջողվում նման հաջողության հասնել: Եվ դա հայաստանյան եւ ընդհանրապես մամուլի դերի նվազման արդյունք է: Այսօր լրագրության թիվ մեկ խնդիրը, կարծում եմ, սա է: Մամուլը կորցնում է ազդեցությունը:

Ինչի՞ մասին գրել. այս հարցով հաճախ են դիմում ինձ՝ մի թեմա ասա, գրեմ: Հարցնում է եւ՛ ուսանողը, եւ՛ աշխատանքային փորձառություն ունեցող լրագրողը:

Մեր երկրի նման երկրներում, առհասարակ բոլոր երկրներում, լրագրողները թեմայի պակաս չունեն եւ չեն էլ կարող ունենալ: Դուրս եկեք փողոց, ամենուր թեմաներ են, նստիր համակարգչի դիմաց եւ ինտերնետում կգտնես բազմաթիվ թեմաներ:

Իրականում այդքան էլ դժվար չէ լրագրող լինելը: Միայն մի բան կա, որ պետք է հաշվի առնել. լրագրությունը շահութաբեր աշխատանք չէ, դրանով չես կարող հարստանալ: Դու քո ամբողջ վաստակը պետք է ծախսես մեքենայիդ վառելիքի, վերանորոգման, գործուղումների, աղբյուրների հետ հանդիպումների վրա եւ ինքդ էլ չհասկանաս, թե ինչպես լրագրությունը խժռեց քո ամբողջ կյանքը: Բայց երբեք չես զղջա, որ ընտրել ես այդ մասնագիտությունը:

# ԹԵՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է նշանակում ճիշտ ընտրություն: Թեման պետք է արժանի լինի հետաքննության: Հասարակական կարեւորությունը. ահա «արժանի թեմայի» հիմնական չափորոշիչը: Լրագրողը պետք է հետաքննությունը սկսելուց առաջ պարզի՝ արդյոք ընտրված թեման կամ արծարծվելիք խնդիրը հետաքրքի՞ր է, հուզո՞ւմ է ընթերցողներին: Շատե՞րը կուզենան կարդալ այդ հոդվածը կամ դիտել այդ հաղորդումը:

«Որտեղի՞ց գտնել թեմա». սա ամենից հաճախ տրվող հարցերից է, որին ես միշտ ունեմ մեկ պատասխան՝ ամենուր:

Հետաքննության թեմաներն ամենուր են՝ թերթերում, լրատվական թողարկումներում, ինտերնետում, փողոցում, ինքնաթիռում, ծանոթների ու հարեւանների պատմածներում, պետական փաստաթղթերում՝ կառավարության, քաղաքապետի որոշումներում, հիմնարկի ղեկավարի հրամանում, թերթերի «Հայտարարություններ» բաժնում, փողոցային գովազդներում, պատերին փակցված հայտարարություններում, ավտոբուսի մեջ լսած խոսակցության մեջ, պաշտոնյաների աստլիսներում, դպրոցների վճիռներում...

Այս շարքը կարելի է անվերջ շարունակել: Խնդիրն այն է, որ լրագրողը հոտառությամբ պետք է զգա, թե այդքան նյութի մեջ որտե՞ղ կա բացահայտելու բան:

Երկու տարի առաջ ես սկսեցի ուսումնասիրել Հայաստան ներկրվող ապրանքատեսակները, դրանց ծավալները, ներկրող ընկերությունները. նպատակս այս ոլորտի ստվերի մասին գրելն էր: Ամենակոռումպացված մարմինը Մաքսային կոմիտեն էր, եւ իմ հաշվարկներով՝ ներկրվող ապրանքների մոտ 60 տոկոսը չէր գրանցվում մաքսատներում: Դա արձանագրել էի մի քանի ապրանքների օրինակով: Իմ ունեցած տվյալները վերաբերում էին մինչեւ 2008 թ. ներկրված ապրանքներին: Զուգահեռաբար ուսումնասիրում էինք նաեւ օրենքները, օրենսդրական փոփոխությունները: Երբ աչքի անցկացրի «ժամանակավոր ներմուծում վերամշակման համար» ռեժիմի դրույթը, մտքովս անցավ պարզել, թե ի՞նչ են ներմուծում Հայաստան, վերամշակում եւ արտահանում: Առաջին բանը, որ մտածել էի, ադամանդի վերամշակումն էր եւ հենց դրանով էլ ուզում էի զբաղվել: Բայց հետո պարզեցի, որ Հայաստան այդ ռեժիմով ներմուծվել է բանան, մոլիբդենի հանքաքար եւ խտանյութ, սուրճ եւ այլն: Այս ապրանքների շարքը փարակու-

սանք առաջացրեց, մանավանդ երբ պարզեցի, որ ներկրված բանանն արտահանվել է Հայաստանից, եւ գիտե՞ք ուր՝ Բահամյան կղզիներ[15]: Իսկ ներկրվող մոլիբդենի պատմությունը դեռ չի ավարտվել, բայց կարծում եմ, որ հետաքրքիր փաստեր կիրապարակենք, դրանց մի մասն արդեն ճշտված է: Պարզապես դրսի ընկերություններից տեղեկություններ ստանալը մի քիչ դժվար է, բայց, իհարկե, ավելի հեշտ է, քան Հայաստանում այդ տեղեկությունները ձեռք բերելը:

«Բոստոն Գլոբ» թերթի հետաքննող լրագրող Սթիվ Քյուրքչյանը պատմեց, թե ինչպես է իրենց թերթի մի աղմկահարույց հետաքննության թեման ընտրել: Նա պատմում է, որ մի անգամ հարցազրույցի գնալուց առաջ բավարար ժամանակ ուներ եւ մտել էր սրճարան՝ սուրճ խմելու. «Ես նստած էի մենակ, ինձնից քիչ հեռու գտնվող սեղանի մոտ նստած էին երկու ոստիկան եւ զրուցում էին ու սուրճ խմում: Այդ պահին ռացիան սկսեց խշշալ, եւ լսվեց հերթապահի ձայնը, որ հանցագործություն է տեղի ունեցել ինչ-որ հասցեում, մոտակայքում գտնվող ոստիկաններին խնդրում էր արձագանքել: Ոստիկանները ուշադրություն չդարձրին կանչին: Ես լսել էի հասցեն եւ գիտեի, որ այդ սրճարանից այնքան էլ հեռու չէր այդ վայրը ու զարմացա, որ ոստիկանները չեն արձագանքում: Նրանք հանգիստ զրուցում էին եւ խմում սուրճը: Ռացիան նորից միացավ, ոստիկանը վերցրեց այն եւ, ձայնը իջեցնելով, դրեց տեղն ու շարունակեցին զրուցել: Մտքովս անցավ պարզել, թե ոստիկանությունն ընդհանրապես ինչպես է արձագանքում կանչերին»: Լրագրողներին սկզբում չի հաջողվում թույլտվություն ստանալ ոստիկանությունում ծանոթանալու այդ փաստաթղթերին: Երկար բանակցություններից հետո լրագրողների թիմին հաջողվում է ստանալ կանչերը արձանագրող փաստաթղթերին: Նրանք սկսել են ուսումնասիրել կանչերը, հեռավորությունները, հաշվարկել են ոստիկանությունից այնտեղ հասնելու համար պահանջվող ժամանակը: Լրագրողներն ուսումնասիրել են հարյուրավոր փաստաթղթեր, զրուցել կանչերի հեղինակների հետ: Իմացել են, թե ոստիկանների ուշ տեղ հասնելու պատճառով ինչ է տեղի ունեցել: Արձանագրել են, որ ոստիկանները կանչից հետո չափազանց ուշ են տեղ հասնում, քան կարող են հասնել: Նրանք այլ ուշագրավ փաստեր էլ են պարզել, որ, օրինակ, հարուստների թաղամասերից կանչերին ոստիկանները շատ ավելի արագ էին արձագանքում, քան մյուս թաղամասերի կանչերին: Այս հետաքննությունը մեծ հնչեղություն ստացավ, հրաժարական տվեցին ոստիկանության բարձրաստիճան պաշտոնյաներ, եւ դրա-

---

15 Էդիկ Բաղդասարյան, Բանան արտահանող Հայաստանը, 21 հուլիսի, 2008 թ., www.hetq.am:

նից հետո իրավիճակը փոխվեց, ոստիկանության արձագանքները մի քանի անգամ արագացան: Ինչու՞ պատմեցի սա, որովհետեւ նմանատիպ մի դեպք եղավ անցած տարի Հայաստանում, երբ ոստիկանության հարեւանությամբ տեղի էր ունեցել սպանություն, ծեծելով սպանել էին մի երիտասարդի, իսկ ոստիկանությունը ուշացել էր: Խոսքն ԱԺ պատգամավոր Լեւոն Սարգսյանի (Ալրաղացի Լյով) եւ նրա թիկնապահների կողմից «Աղնակլասնիկ» սրճարանում կատարված սպանության մասին է: Ինչու՞ են ուշացել ոստիկանները. սա, իսկապես, հետաքննության արժանի թեմա է: Բայց Հայաստանում այն գրեթե անիրագործելի է, ոչ մի լրագրողի հնարավորություն չի տրվի փորփրել ոստիկանության թղթերը, արձանագրությունները: Չնայած հասարակությունն իրավունք ունի իմանալու, թե ինչով է զբաղված հարկատուների հաշվին գոյատեւող այդ մարմինը:

Սկզբի համար պետք չէ փորձել հետաքննել գլոբալ ինչ-որ խնդիր, սկսեք ավելի փոքր թվացող, տեղական որեւէ խնդրից: Առանց երկմտելու կարող եք վերցնել Հայաստանի ցանկացած համայնքի բյուջեն եւ ուսումնասիրել. անհնար է որեւէ հետաքրքիր բան այնտեղ չգտնել: Մեր մարզային թղթակիցներից մեկը սկսել է ուսումնասիրել համայնքային մանկապարտեզների սննդի ձեռքբերման պայմանները եւ պարզել է, որ բոլոր մանկապարտեզների սննդամթերքը ձեռք է բերվում նույն խանութից, որը պատկանում է քաղաքապետին եւ նրա երկու մտերիմ ընկերներին[16]: Այնպես որ, պարզապես պետք է որոշել կատարել այդ ուսումնասիրությունը, եթե ձեր խմբագիրը թույլ է տալիս: Ինչու՞ եմ ասում` թույլ է տալիս, նախ` որ դա պահանջում է մի քիչ ավելի ժամանակ ծախսել, եւ դա քո օրվա հոդվածին զուգահեռ դժվար կլինի անել: Երկրորդ` խմբագրին թեման կարող է հետաքրքիր չթվալ: Աշխատանքը սկսելուց առաջ կարեւոր է իմանալ, որ ձեր կատարած հետաքննությունը հրապարակվելու է կամ եթեր է հեռարձակվելու:

«Հետաքննող լրագրողներ» կազմակերպությունը մեկ տարի չէր կարողանում եթեր տալ իր պատրաստած հետաքննական ֆիլմերից մեկը: Դա բանակում կատարված մի սպանության հետաքննություն էր: Ֆիլմում տրվում էին հրամանատարական կազմի, Զինվորական դատախազության պաշտոնյաների անուններ, որոնք անմիջական կապ ունեին դեպքի հետ: Տասնչորս տարվա ազատազրկման էր դատապարտվել մի զինվոր, որի մեղքն ապացուցված չէր: 2002 թ. «Ինտերնյուս-Հայաստան» կազմակերպության «Լավագույն հետաքննա-

16 Բյուջեն հաստատվեց, հովազի արձանը նվիրվեց, Լարիսա Փարեմուզյան, փետրվարի 11, 2008 թ., www.hetq.am:

կան ֆիլմ» անվանակարգում այդ ֆիլմն արժանացավ առաջին կարգի մրցանակի: Եւ երբ մրցանակը ստանալիս ֆիլմի հեղինակը հայտնեց, որ այն չի ցուցադրվել, միջոցառմանը ներկա հեռուստաընկերություն-ների ղեկավարներից մեկը խոստացավ ցուցադրել: Ֆիլմն իսկապես ցուցադրվեց, բայց ցերեկվա ժամը տասներկուսին, երբ հեռուստալսա-րանը շատ փոքր է:

Ահա ձեզ մի քանի այլ թեմաներ, որոնք դուք կարող եք առաջար-կել ձեր խմբագիրներին՝ ինչքանո՞վ է մեր խմած ջուրը, օգտագոր-ծած սնունդն անվտանգ, ինչպե՞ս է պատահում, որ բարձրաստիճան պաշտոնյաները կամ նրանց հարազատները շահել են այս կամ այն մրցույթում, կամ ինչպե՞ս են նրանք չափազանց էժան գներով ձեռք բե-րել խոշոր ձեռնարկություններ եւ այլն:

Բնականաբար, մինչեւ հետաքննությունը սկսելը պետք է որեւէ հիմք ունենալ, որ ինչ-որ բան այնպես չէ, որ ինչ-որ մեկը չարաշահում է թույլ տվել: Դա կարող է լինել ինչ-որ մեկի ակնարկն ինչ-որ բանի մասին, սեփական դիտարկումը, կամ մրցույթի արդյունքների մասին թերթում հանդիպած լուրը:

«Թեմայի ընտրությունը հետաքննական լրագրության հիմքն է, եթե թեման հետաքրքիր չէ մարդկանց, ոչ մի արդյունք չի տա, պար-զապես կմնա թղթի վրա: Ընտրած թեման պետք է համապատասխա-նի հետեւյալ չափանիշներին.

- պետք է լինի արդիական, կարեւոր եւ խնդրահարույց,
- պետք է գնահատել, թե այդ թեման որքանո՞վ կհետաքրքրի որոշակի խավերին,
- պետք է հաշվի առնել, թե որտե՞ղ է հրապարակվելու հոդվածը՝ կենտրոնակա՞ն, թե՞ մարզային մամուլում: Եթե թեման վերաբերում է մայրաքաղաքին, ապա հավանականությունը փոքր է, որ այն հե-տաքրքիր կլինի մարզերում: Այդ դեպքում ավելի ճիշտ կլինի այլ թե-մայի վրա աշխատել,
- պետք է հաշվել, թե որքա՞ն ժամանակ կպահանջվի հետաքն-նությունը պատշաճ ձեւով կատարելու համար, եւ գնահատել, թե արդյոք այդ ժամանակահատվածից հետո թեման դեռ կհետաքրքրի՞ մարդկանց»[17]:

---

17 Լրագրողներից լրագրողներին /Ձեռնարկ լրագրողների համար/, Բրիտանական խորհուրդ, Երեւան, 2007, էջ 52:

Ուզում եմ պատմել մի դեպքի մասին: Մի անծանոթ, իմանալով, որ ես գրասենյակում չեմ (հետո պարզել էի, որ նրա գալուց առաջ մեկը զանգահարել էր գրասենյակի հեռախոսահամարով եւ հարցրել իմ՝ տեղում լինելու մասին), եկել եւ խնդրել է ինձ փոխանցել մի նամակ: Այնտեղ բավականին փաստեր կային նախարարներից մեկի բիզնեսների մասին: Հստակ էր, որ տեղեկատվություն տվող մարդն այդ նախարարությունից է, ներկա կամ նախկին աշխատակից: Դա զգացվում էր այդ ոլորտին առնչվող զանազան ընկերությունների անունների ճշգրիտ ու մանրամասն մատնանշումից, նախարարությունում օգտագործվող տերմինների, բաժինների, պաշտոնների անունների ճշգրտությունից: Նամակում բազմաթիվ փաստերից մեկն անմիջապես ուշադրությունս գրավեց, որ նախարարը պաշտոնը ստանձնելուց հետո մեծ հողակտոր է ձեռք բերել Սեւանի ափին՝ «Սեւան ազգային պարկ»-ի տարածքում: Դա ապօրինի է, քանի որ հողակտորի վրա կառուցված շինությունն օրենքով ջրի մակարդակի սահմանված թույլատրելի նիշից ցածր է: Ես հանձնարարեցի մեր լրագրողներից մեկին՝ գնալ այս տեղեկատվության հետքերով եւ փորձել պարզել դրա հավաստիությունը: Ի դեպ, նամակում եղած տեղեկատվությունից սա միակն էր, որ անորոշ էր, տեղանքը հստակ նշված չէր: Լրագրողը գրեթե մեկ ամիս չարչարվեց, բայց ոչինչ չկարողացավ պարզել եւ ասաց, որ տեղեկատվությունը չի հաստատվում: Ես մտածեցի, որ հնարավոր է՝ այն սխալ է: Բայց մեկ այլ աղբյուրից հենց այդ ժամանակ նորից նման տեղեկություն ստացա եւ արդեն համոզված էի, որ երկու միանգամայն տարբեր աղբյուրներից անհնար է սխալ տեղեկություն ստանալ, քանի որ երկրորդ աղբյուրն իմ վստահելիներից էր: Ես լրագրողին շատ չոր տոնով ասացի, որ նա լավ չի փնտրել: Գործընկերներս կշտամբեցին ինձ տոնիս համար: Բայց այդ կոպտությունն անսպասելի լավ արդյունք տվեց: Ի՞նչ արեց լրագրողը. գնաց Սեւանի ափին գտնվող այդ բնակավայր, նստեց տաքսի եւ ասաց՝ ինձ տարեք նախարար Ա.Հ.-ի առանձնատուն: Ի՞նչ եք կարծում՝ ի՞նչ եղավ. վարորդը, առանց հարցեր տալու, լրագրողին հասցրեց նախարարի առանձնատան մոտ: Լրագրողը տարածքը հսկող պահակի հետ զրույցի բռնվեց: Պահակը նրան ներս տարավ, ցույց տվեց արդեն կառուցված եւ կառուցվելիք շինությունները, սաունան եւ մոտ 10 հա տարածքը Սեւանի ափին: Արված լուսանկարներից երեւում էր, որ շինությունը լճից ընդամենը մի քանի մետր հեռավորության վրա է, եւ ակնառու էր, որ այն Սեւանի ափին կառուցվող շինությունների համար օրենքով սահմանված նիշից ցածր է:

Մենք նկարներով հրապարակեցինք նյութը՝ գրելով, որ այն պատկանում է նախարարին: Մի քանի օր հետո նախարարության հասարակայնության հետ կապերի բաժինը հերքեց փարածքի եւ առանձնատան՝ նախարարին պատկանելու փաստը: Մենք այդ նամակն էլ հրապարակեցինք: Բայց հետաքննությունը շարունակեցինք: Մենք պետք է հաստատեինք, որ տարածքն ու առանձնատունն իսկապես նրան են պատկանում, զուգահեռաբար պետք է ցույց տայինք, որ թույլ է տրվել օրենքի խախտում՝ այդտեղ հողատարածք վարձակալության տալով: Եւ բացահայտեցինք նորանոր ապօրինություններ՝ կապված ինչպես այդ, այնպես էլ Սեւանի ափի այլ հողահատկացումների հետ: Իհարկե, այդ հրապարակումից հետո մի շատ վատ բան տեղի ունեցավ. պահակին, որը այլ մանրամասներ էր պատմել նախարարի այցելությունների մասին (այդ մասին, սակայն, հոդվածում որեւէ բան չի նշվել), ազատեցին աշխատանքից: Իսկ նախարարի հետ որեւէ բան չպատահեց: Նախարարը հերքեց, որ դա իրեն է պատկանում, քանի որ իրականում այդ հողատարածքը վարձակալած ընկերությունը նրա մորաքրոջ տղայի անունով է[18] (Հոդվածը կարող եք կարդալ գրքի Հավելված բաժնում):

Թեման ընտրելիս պետք է հաշվի առնել մի շատ կարեւոր հանգամանք՝ ի վիճակի՞ է, արդյոք, խմբագրությունը հոգալ ծախսերը: Որովհետեւ, որպես կանոն, շատ թեմաներ այդ պատճառով անհասանելի են խմբագրությանը, հետեւաբար՝ լրագրողին: Աշխատանքային թրաֆիկինգի մի գործ մնաց անավարտ, որովհետեւ լրագրողը պետք է մեկներ Ռուսաստանի ծայրամասային մի բնակավայր, որտեղ ստրկական պայմաններում աշխատեցնում էին մի ընտանիքի երեք անդամների: Իսկ Ռուսաստանի այդ բնակավայր հասնելը արդեն բավականին մեծ ծախս էր:

Հնարավոր է, որ ընտրած թեմայի վրա միայնակ չկարողանաս աշխատել: Այսինքն՝ միշտ պետք է հաշվի առնել հնարավորությունները՝ ինչպես խմբագրության, այնպես էլ՝ քո:

18 Ապօրինի շինությունները օղակի մեջ են առել Սեւանը, Լենա Նազարյան, 16.02.2009 թ., www.hetq.am:

«Հետաքննության արժանի փաստերը միշտ ավելի շատ են, քան ժամանակն ու դրանով զբաղվելու հնարավորություն ունեցողները: Այդ պատճառով էլ պետք է միշտ ուշադիր ընտրեք հետաքննության թեման: Համեմատեք ձեր ցանկությունններն ու հնարավորությունները, հաշվի առեք եղած ժամանակը, անձնակազմը եւ տեղեկատվության աղբյուրները: Գործը սկսեք ուսումնասիրել միանգամից մի քանի կողմից, մինչեւ համոզվեք, որ տվյալ խնդիրը հնարավոր է լուծել եւ արժե դրա վրա ջանք թափել»[19],

- ասում է Ջոն Ուլմենը հետաքննության մեթոդներին նվիրված գրքում:

Նշածս օրինակում կար նաեւ մեկ այլ հանգամանք՝ լրագրողի անվտանգության հարցը: Ինչպե՞ս կարող է լրագրողն աշխատել մի միջավայրում, որտեղ կազմակերպված հանցավոր խմբեր են իշխում, եւ նրանք, որպես կանոն, իրենց գործունեությունը ծավալում են իշխանության որոշ օղակների հետ համագործակցելով: Ռուսաստանն այդ իմաստով վտանգավոր երկիր է, վերջին տարիների ընթացքում այդ երկրում սպանվել են տասնյակ լրագրողներ իրենց մասնագիտական գործունեության համար:

Ամփոփելով՝ ասենք, թե ի՞նչը կարող է խթան դառնալ հետաքննություն սկսելու համար.

- լրատվամիջոցներում եղած հրապարակումները (հետեւեք մամուլին, սա հետաքննության առաջնային աղբյուրն է),
- սեփական դիտարկումները,
- մարդիկ, սովորական մարդիկ՝ փողոցում քայլող, տրանսպորտում՝ կողքիդ նստած: Շփվիր նրանց հետ, զրուցիր, լսիր նրանց, եւ դու շատ բան կիմանաս: Դուրս եկ սենյակիցդ, հեռացիր համակարգչիդ մոտից, ոտքով քայլիր եւ ամենուր կհանդիպես թեմաների, որոնք արժանի են ուսումնասիրության,
- որեւէ իրադարձություն, պատահար, ասենք՝ հրդեհ գործարանում, որի ընթացքում այրվել են հիմնարկի փաստաթղթերը:
- որեւէ միջադեպ, որ պատահել է խմբագրություն այցելած մեկի, քո ընկերոջ, բարեկամի, հարեւանի հետ,

19 Джон Уллмен, Журналистские расследования: современные методы и техника, National Press Institute, 1999, стр. 10.

- պաշտոնյայի հայտարարությունը,
- կառավարության, քաղաքապետի որոշումները, գերատեսչական զանազան փաստաթղթերը, հրամանները, ծառայողական փաստաթղթերը,
- օրենքի ընդունումը, օրենսդրական փոփոխությունները (հիշենք, թե ինչպես էին այս կամ այն խմբավորման համար կատարում նման փոփոխություններ),
- որեւէ պաշտոնյայի պաշտոնանկ անելը կամ սեփական դիմումով աշխատանքից ազատվելը,
- պատին փակցված կամ թերթում տպագրված որեւէ հայտարարություն կամ գովազդային վահանակ,
- ինֆորմացիայի քո աղբյուրի տրամադրած տեղեկությունը,
- անանուն նամակները, զանազան ասեկոսեները եւ այլն...

Այս շարքը այժմ կարող եք առանց դժվարության ինքներդ շարունակել:

> «Եւ այսպես՝ մենք գիտենք, թե ինչ է մեզ պետք. լինենք ազնիվ, շատ աշխատենք եւ մարզենք մտածելու մեր խեղված ունակությունը: Բայց ինչպե՞ս եւ ինչի՞ մասին մտածել: Կարդալով հետաքննություն անցկացնելու մեթոդների մասին տասնյակ գրքեր եւ ունենալով լրագրողական հետաքննություն անցկացնելու ավելի քան տասը տարվա փորձ՝ այս հարցին կարող եմ մեկ նախադասությամբ պատասխանել: Մեզ անհրաժեշտ է անտառում տեսնել բոլոր ծառերը, իսկ հետո տեսնել յուրաքանչյուր առանձին ծառ, որպեսզի վերադառնանք անտառի կոնցեպցիային»[20],-ասում է Ջոն Ուլմենն իր գրքում:

20 Джон Уллмен, Журналистские расследования: современные методы и техника, National Press Institute, 1999, стр. 10.

# ՆԱԽՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔՈՒՄ ԵՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Միշտ պլանավորեք ձեր հետաքննությունը, հնարավորինս ճշգրիտ նախատեսեք ձեր քայլերի հաջորդականությունը: Կազմեք հետաքննության պլանը: Կախված թեմայից՝ դրանք երբեմն կարող են տարբերվել միմյանցից: Ինչու՞ է սա անհրաժեշտ, որովհետեւ եթե թեման դու ես ընտրել եւ ոչ թե խմբագրի հանձնարարությունն է, ապա առաջին հարցը, որ խմբագիրդ տալու է թեման քո կողմից ներկայացնելուց հետո, լինելու է այն, թե ի՞նչ ժամկետներում կավարտես հետաքննությունը: Դու որքան էլ խելամիտ ժամանակահատված նշես, միեւնույն է՝ խմբագիրդ հաստատ քո պահանջած ժամանակը կրճատելու եւ հասցնելու է նվազագույնի: Ահա թեկուզ միայն այդ բանի համար դու պետք է փորձես հստակ ժամանակացույց կազմել: Իսկ դա նպատակահարմար է անել նախնական տեղեկատվությունը հավաքելուց հետո միայն, որպեսզի կարողանաս պլանավորել մնացած քայլերդ:

Թեմայի ընտրությունից հետո որպես նախնական տեղեկատվության աղբյուր կարող են հանդիսանալ ինտերնետը եւ լրատվամիջոցները: Փնտրիր այնտեղ քո թեմային վերաբերող նյութեր: Հնարավոր է՝ դրանք բավականին շատ լինեն, հնարավոր է՝ չգտնես որեւէ էական տեղեկություն: Միայն սրանից հետո կարող ես իմանալ, թե որքան անելիք ունես դու: Դրանից հետո դու կարող ես նաեւ գնահատել այդ ոլորտում քո ունեցած տեղեկատվության աղբյուրների կարողությունները: Պետք է իմանաս՝ քանի՞ գերատեսչության հետ ես աշխատելու, նրանցից ի՞նչ ժամանակահատվածում կարող ես ստանալ պաշտոնական տեղեկատվությունը, քանի՞ մարդու հետ պետք է հարցազրույց անցկացնես, ի՞նչ փորձագետների անհրաժեշտություն ես ունենալու եւ այլն: Սրանք, իհարկե, նախնական են լինելու, որովհետեւ աշխատանքի ընթացքում միշտ էլ պլանը ենթարկվում է փոփոխությունների, բայց պետք է  հնարավորինս կարողանալ գնահատել դժվարությունները, խոչընդոտները, ռիսկերը, որոնց դու հանդիպելու ես քո աշխատանքի ընթացքում:

Ա. Կոնստանտինովը նախնական տեղեկատվության հավաքման փուլը բաժանում է երկու մասի. «Առաջին մասը հետաքննության օբյեկտի կամ իրադարձության մասին բաց տեղեկատվության հավա-

քումն է: Երկրորդ մասը փվյալների զանազան շփեմարաններում ամ-րագրված օբյեկփիվ փեղեկափվության որոնումն է»[21]:

Բաց փեղեկափվության հավաքումը գրադարաններում փարվող աշխափանք է, բոլոր լրափվամիջոցներում հրապարակված նյութերի համադրում: Հնարավոր է՝ հեփագայում դրանք օգփագործեք ձեր հեփաքննության մեջ: Սանկփ-Պեփերբուրգի Հեփաքննող լրագրողների գործակալությունն ունի այդպիսի առանձին բաժին: Համապափաս-խան աշխափակիցներն են կափարում այդ գործը, եւ նրանք արդեն մասնագիփացած են դրանում: Ամերիկյան խոշոր թերթերի հեփաքն-նական թիմերում նույնպես կան նման մասնագեփներ: Հայասփանում նման թիմեր չկան: Հարցրեք Հայասփանի ցանկացած թերթի խմբագ-րի՝ ունե՞ն նման մարդիկ խմբագրությունում, դուք պարզապես ձեզ ծի-ծաղելի վիճակում կդնեք: Հայկական թերթերը նույնիսկ լուսանկարիչ չեն պահում՝ ավելորդ ծախսերից խուսափելու համար: Այնպես որ, ամեն ինչ ձեր ուսերին է. պեփք է դրան էլ վարժվեք: Դա դժվար գործ չէ, բայց աշխափափար է:

Երկրորդը զանազան շփեմարաններում եղած փեղեկափվությունն է: Օրինակ՝ եթե դու զբաղվում ես պեփական պաշփոնյայի կամ քա-ղաքական գործչի բիզնեսով, ապա կարող ես դիմել Արդարադափութ-յան նախարարության պեփռեգիսփր եւ փեղեկության համար վճա-րելով հազար դրամ՝ սփանալ քեզ անհրաժեշփ ընկերության գրանց-ման հասցեն, գործունեության վայրը, փնօրենի հեռախոսը, հասցեն, երբեմն նաեւ՝ հիմնադիրների փվյալները: «Հեփքը» հենց այդ միջոցով էր պարզել, որ Բնապահպանության նախկին նախարար, ԱԺ պափ-գամավոր Վարդան Այվազյանին են պափկանում մեկ փասնյակից ավելի հանքավայրեր[22]:

Հեփաքննական աշխափանքի պլանավորումն անհրաժեշփ է նաեւ հոդվածը «սահմանված ժամկեփում» ավարփելու համար, որովհե-փեւ խմբագիրները միշփ շփապեցնում են լրագրողներին: Բացի այդ, փեղեկափվության արփահոսքի պափճառով մրցակից թերթերը կա-րող են ձեզանից առաջ ընկնել եւ ձեր հեփաքննած թեմայով նյութն ավելի շուփ պափրասփել: Աշխափանքի ընթացքում հնարավոր է նաեւ փեղեկափվության նպափակաուղղված արփահոսք թույլ փա-լու անհրաժեշփություն լինի, բայց այդ մասին անպայման պեփք է

21 А. Константинов, Журналистское расследование: История метода и современная практика /Под общ. ред. А. Д. Константинова. — СПБ.: Издательский Дом «Нева»; М.: «ОЛМА-ПРЕСС», 2003, стр. 187.
22 Վարդան Այվազյանի բիզնես-պրոյեկտը, Էդիկ Բաղդասարյան, 26 մարտ, 2007, www.hetq.am:

խորհրդակցել խմբագրի հետ: Նման աշխատաոճը չեն ընդունում մեր արեւմտյան գործընկերները: Բայց երբ նրանց ներկայացնում ես իրավիճակը, նրանք դժվարությամբ համաձայնում են: Օրինակ՝ այս փուլում, երբ մենք հետաքննում ենք Հայաստան մոլիբդենի խտանյութի ներմուծման պատմությունը, ստիպված եղանք հետաքննությունը դեռ չավարտած՝ գրել մի հոդված, որի նպատակը պետական մարմիններին խոսեցնելն է, որովհետեւ բոլոր գերատեսչությունները բառի բուն իմաստով միաժամանակ փակել են տեղեկատվության ստացման ճանապարհները:

«Գրավոր պլանն անհրաժեշտ է յուրաքանչյուր կոնկրետ հետաքննության համար: Գործողությունների պլանը հատկապես օգտակար է թիմային աշխատանքի դեպքում, երբ տարբեր լրագրողներ զբաղված են մի մեծ լրագրողական հետաքննության տարբեր ուղղություններով: Լրագրողական հետաքննության գործակալության հետաքննության բաժնում, օրինակ, նման պլան սովորաբար գրվում է բաժնի ղեկավարի սենյակի պատին փակցված հատուկ ցուցանակի վրա, ինչի շնորհիվ նա եւ նրա ենթակաները միշտ տեսնում են, թե այդ պահին ո՞ր փուլում է խոշոր հետաքննության յուրաքանչյուր ուղղությամբ ընթացող աշխատանքը»,- ասում է Ա.Կոնստանտինովը[23]:

23 А. Константинов, Журналистское расследование: История метода и современная практика/ Под общ. ред. А.Д.Константинова. — СПБ.: Издательский Дом «Нева»; М.: «ОЛМА-ПРЕСС», 2003, стр. 186.

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔՈՒՄ

Սա այն հիմնական աշխատանքն է, որից հետաքննող լրագրողները պարզապես հաճույք են ստանում: Այս փուլում է, որ լրագրողը կարողանում է ցույց տալ իր հմտությունը: Օգտագործելով զանազան հնարքներ, հաղթահարելով տարբեր անջրպետներ՝ կարողանում է ձեռք բերել անհրաժեշտ տեղեկատվությունը: Այս աշխատանքից է երեւում, թե ինչպիսի՛ն է ինքը՝ լրագրողը, ինչի՛ է ընդունակ, մինչեւ ու՛ր կարող է հասնել նրա երեւակայությունը: Սա միաժամանակ հետաքննության ամենադժվար մասն է: Եթե ի սկզբանե հայտնի է, որ տեղեկատվությունը տնօրինողները դա թաքցրել են, իսկ լրագրողն ուզում է այն հրապարակայնացնել, ապա այդ մարդիկ ամեն ինչ անելու են դրանք անհասանելի դարձնելու համար:

Եւ այսպես, սկսեք փորփրել տեղեկատվության բոլոր հնարավոր աղբյուրները, որոնք կարող են առնչվել ձեր ընտրած թեմային:

Հավաքեք այդ թեմայի վերաբերյալ մամուլում եղած բոլոր հրապարակումները: Թերթերն արխիվավորվում են Հանրային գրադարանում, խմբագրություններում, այսօր կան արդեն դրանց ինտերնետային արխիվները: Հնարավոր է՝ ձեզ անհրաժեշտ տեղեկությունների մի մասն արդեն հրապարակվել է: Բայց եղած հրապարակումները երբեք մի համարեք միանգամայն հավաստի տեղեկություններ: Դուք կունենաք որոշակի տեղեկություններ, որոնք էլ հետագայում կհուշեն, թե ինչ է եղել նախկինում:

Կա մի աղբյուր, որտեղ գրեթե ամեն ինչի մասին կարելի է տեղեկություններ գտնել: Դա համացանցն է: Հարյուրավոր, հազարավոր կայքեր կան, որտեղ կարելի է գտնել փնտրվող տեղեկությունները: Հայ լրագրողներին թվում է, թե Հայաստանի մասին տեղեկություններ քիչ կան համացանցում: Իրականում այդպես չէ, ամենատարբեր կայքերում կարելի է գտնել օգտակար տեղեկություններ Հայաստանի տնտեսության, առանձին ոլորտների, ՀԷԿ-երի, արտահանվող ապրանքների, գետերի աղտոտվածության եւ այլնի մասին: Յուրաքանչյուր լրագրող պետք է կարողանա աշխատել համացանցում, որոնել եւ գտնել: Որովհետեւ որոնելն էլ պահանջում է որոշակի գիտելիքների իմացություն: Եթե չգիտեք, մի՛ ամաչեք հարցնել գործընկերներին, մասնագետներին: Ամերիկացի լրագրողների համար համացանցը հիմնական աղբյուրներից մեկն է, նրանք կարող են հետաքննություն կատարել՝ համակարգչի առջեւ նստած: Ամերիկացի մի լրագրող պա-

րիներ առաջ ինտերնետով ուսումնասիրել էր ԱՄՆ պաշտպանության նախարարության փողերի շարժը եւ չարաշահումներ հայտնաբերել: Լրագրողական հետաքննության արդյունքում այդ նախարարության ֆինանսների գծով փոխնախարարը հրաժարական էր տվել: Ամերիկյան բոլոր գերատեսչություններն իրենց ֆինանսական հաշվետվությունները տեղադրում են պաշտոնական կայքերում: Լրագրողը միայն ուսումնասիրել էր այդ թվերը, համեմատել, կատարել հաշվարկներ եւ արել համապատասխան եզրահանգումներ:

Իհարկե, Հայաստանում սա դեռեւս երազանքի պես մի բան է, բայց հուսանք, որ շուտով նման հնարավորություն նաեւ հայ լրագրողները կունենան: Արդեն շատ գերատեսչություններ, ձեռնարկություններ ունեն իրենց կայքերը եւ դրանցից պետք է օգտվել, թեեւ ձեզ անհրաժեշտ տեղեկությունները դժվար թե գտնեք այդ կայքերում: Օրինակ՝ Բնապահպանության նախարարության կայքում դուք չեք գտնի գետերն աղտոտող ձեռնարկությունների ցանկը կամ Երեւանի օդի աղտոտվածության մասին պարբերաբար հրապարակվող տվյալներ, չնայած այդ տվյալները նրանք ունեն: Կամ՝ քաղաքաշինության նախարարության կայքում չես կարող գտնել տվյալներ Երեւանում իրականացվող ապօրինի շինարարությունների մասին: Առայսօր ընդհանրապես անհասանելի են շատ համայնքապետերի ընդունած որոշումները, չնայած օրենքով սահմանված կարգով դրանք պետք է հրապարակվեն: Առայժմ անհնար է հասնել նրան, որ  հրապարակվեն Երեւանի քաղաքապետի որոշումները. այդ հարցը իշխանությունները չեն ցանկանում լուծել, ոչ թե չեն կարողանում: Ինչու՞ չեն ուզում, որովհետեւ թաքցնելու բան ունեն: Եվ թաքցնում են հատկապես հողահատկացման որոշումները, որովհետեւ հողերն օտարվում են հիմնականում պաշտոնյաներին, նրանց հարազատներին, ընկերներին կամ նրանց ստեղծած ընկերություններին: «Հետքի» լրագրողը գնալով մի այդպիսի որոշման ետեւից՝ պարզել է, որ քաղաքապետարանի հայտարարած հողհատկացման մի մրցույթում հաղթել է մի ընկերություն, որի տնօրենը եւ հիմնադիրը քաղաքապետարանի աշխատակից է: Այդ մարդը մեր թղթակցի հետ հանդիպման ժամանակ ասում էր, որ ինքը ոչինչ չգիտի եւ տեղյակ չէ ոչնչից: Նա նաեւ ասաց, որ չգիտի, թե ովքեր են հիմնադիրները եւ որտեղ է գրանցված ընկերությունը: Եւ ահա, Պետռեգիստր կատարած մեր հարցումից պարզեցինք, որ նա ստում է, եւ ընկերության հիմնադիրն ու տնօրենը հենց ինքն է՝ քաղաքապետարանի նույն աշխատակիցը[24] :

24 Ես չեմ ուզում իմ սեփականությունը տամ իրենց, Արարատ Դավթյան, 3 նոյեմբեր, 2008 թ., www.hetq.am:

Ես իմ ուսանողներին ասում եմ.

«Միշտ հիշեք՝ պաշտոնյան նայում է դիմացինի աչքերին ու ստում: Դու գիտես, որ նա ստում է: Նա գիտի, որ դու գիտես, որ ինքը ստում է: Բայց նա դեռ չգիտի, թե դու ինչ գիտես իր ասած ստի մասին եւ չգիտի, թե ինչպիսի հարցեր կարող ես տալ իրեն»:

Եթե ձեր հետաքննությունը կապված է պաշտոնատար անձի հետ, ապա պետք է կազմեք նրա «անձնական թղթապանակը»: Նրա մասին տեղեկություններ պետք է հավաքել ամեն տեղից: Գտեք պաշտոնյայի ներկա եւ նախկին ընկերներին, աշխատակիցներին ու քարտուղարուհիներին, նաեւ՝ թշնամիներին: Նրանք տեղեկատվության լավ աղբյուրներ են եւ շատ բան կարող են պատմել: Լսեք նրանց, բայց անպայման այլ աղբյուրներից ստուգեք ձեր ստացած տեղեկությունները: Թերթերում կարդացեք նրա նախկին հարցազրույցները, նրա մասին եղած հրապարակումները: Իմացեք, թե որտեղ է նա հանգստանում, ում հետ է ճաշում, աշխատանքից հետո որտեղ է անցկացնում ազատ ժամանակը: Ամեն ինչ պետք է իմանալ, որովհետեւ կարեւոր տեղեկությունները հաճախ կարող են հայտնել մարդիկ, ում վրա դուք բոլորովին էլ հույս չէիք դրել:

Ազատ լրագրող Դեննիս Կինգը կարծում է, որ պետք է տեղեկատվություն հավաքել բոլոր տեսակի աղբյուրներից եւ ուշադիր լինել թե՛ մարդկային, թե՛ փաստաթղթային հետքերի նկատմամբ: Նա պնդում է, որ պետք է տեղեկատվությունը խաչաձեւ հավաքել եւ համակցել իրար. «Եթե դուք հետաքրքրված եք որեւէ ֆիրմայով կամ կազմակերպությամբ, բացի կառույցին առնչվող փաստաթղթերի ուսումնասիրությունից, կարող եք ավելիին հասնել՝ ուշադիր լինելով գործող անձնակազմի (հատկապես ղեկավարների) նկատմամբ. ովքե՞ր են, ի՞նչ անցյալ ունեն: Նույնը կարող եք անել հակառակ դեպքում. եթե հետաքրքրված եք անհատով, ուշադիր եղեք նաեւ այն կառույցի նկատմամբ, որը նրան աշխատանքի է ընդունել»[25]:

Երեւի շատերդ եք դիտել տեղեկատվության աղբյուրի եւ լրագրողի մասին հայտնի ֆիլմը: Խոսքը «The Insider» ֆիլմի մասին է, որտեղ

25 The Reporter's Handbook: an investigator's guide to documents and techniques.- 3rd edition/ Steve Weinberg: under the sponsorship of IRE/ 1996, p.5

գլխավոր դերում Ալ Պաչինոն է: Այս ֆիլմի հիմքում իրական պատմություն է: Ամերիկյան CBC ընկերության «60 րոպե» հաղորդման լրագրող Լոուել Բերգմանը (Lowell Bergman), հանդիպելով տեղեկատվության աղբյուրի հետ, իմանում է «Ֆիլիպ Մորիս» ծխախոտի ընկերության արտադրության մի քանի գաղտնիքների մասին: 2008 թ.-ի սեպտեմբերին Նորվեգիայում կայացած Global Investigative Journalism կոնֆերանսի ժամանակ, հանդես գալով սեմինարներից մեկում, որն անվանվում էր «Ինչպես գտնել տեղեկատվության աղբյուրներ եւ ստիպել նրանց խոսել», Լ. Բերգմանն ասաց.

> «Ամենակարեւոր բանը մարդկանց լսելն է: Դու պետք է քեզ պատկերացնես իրենց փոխարեն: Երկրորդ բանը ազնիվ լինելն է. չգիտեմ՝ կկարողանա՞ք»:

Նա պատմեց, որ ծխախոտի ընկերությունը սպառնում էր դատական գործ սկսել CBC-ի դեմ, եւ ցանցը որոշեց չտպագրել նյութը: Այս որոշումից հետո Բերգմանը հրապարակային դարձրեց CBC-ի հետ իր կոնֆլիկտը: «Ես նաեւ դարձա լրագրող-օրենքի պաշտպան: Ավարտելուց հետո ես զգացի, որ բոլոր կանոնները փոխվել են»,- ասաց Բերգմանը:

«Վաշինգտոն փոստ» թերթի հետաքննող լրագրող Ջեֆ Լինն իրենց խմբագրությունում 2004 թ. փետրվարին մի խումբ հայ լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց. «Մարդկային աղբյուրներ ունենալու համար դու պետք է ժամանակ անցկացնես մարդկանց հետ, սովորես նրանց դիմել անունով եւ խոսել իրենց լեզվով: Դու պետք է վստահելի հարաբերություններ ստեղծես: Այս ամենն անելու բանալին «առանց ձայնագրիչի» պարտականությունը հարգելն է: Փաստաթղթերը կարող են փայլուն պատմություններ տրամադրել, բայց հիմնականում դուք կունենաք մարդկային աղբյուրների կարիք՝ նպատակաուղղելու եւ ներկայացնելու: Համակարգչի օգնությամբ գրելն ապագայի անելիք է: Բայց համակարգիչը միայն լավ գործիքն է եւ սկզբնակետը: Լրագրողները նյութ ունենալու համար դեռ կարիք ունեն դուրս գալու եւ մարդկանց հետ խոսելու»:

Տեղեկատվության գերազանց աղբյուր են նաեւ նախկին պետական, քաղաքական գործիչները, պաշտոնյաները: Նրանք երբեմն այնպիսի բաներ են պատմում, ինչի մասին որեւէ տեղ երբեւէ չես կարող

կարդալ: Մի քանի տարի առաջ ես պարբերաբար հանդիպում էի հասարակական գործիչ, նախկինում տարբեր պաշտոններ զբաղեցրած Ալեքսան Կիրակոսյանի հետ: Ես երբեւէ չեմ հանդիպել մեկին, ով այդքան տեղեկատվության տիրապետեր, հատկապես մարդկանց մասին, նա շատ դիպուկ կարողանում էր բնութագրել մարդկանց: Գիտեր, թե Հայաստանի որ բնակավայրում ջրի ինչ ակունքներ կան, որ գործարանը ում ժամանակ են սարքել, ով է եղել շինարարը, նրա զավակներն այժմ ինչով են զբաղված: Նա գիտեր՝ որ գյուղում ով էր ամենահամով պանիրը պատրաստում, սահմանային այս կամ այն բնակավայրն ինչ խնդիր ունի եւ որոնք են դրա լուծման տարբերակները: Նա իր հուշերի մի չնչին մասը հրապարակել է գրքով[26]: Այդ գիրքն էլ իսկական տեղեկատվություն է պարունակում: Այնպես որ, կարդացեք մենագրություններ, հուշեր, այնտեղ փաստացի շատ նյութ կարող եք ձեռք բերել: Հանդիպեք նախկին պաշտոնյաների հետ, անձնական շփումներում նրանք վերհիշում են շատ մանրամասներ, որոնք իմանալու մասին դու երբեք նույնիսկ չես էլ մտածել:

Վերջերս ձեռքս ընկավ 1966-1974 թթ. Հայաստանի Կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանի «Անավարտ հուշեր» գիրքը[27]: Սա, իսկապես, շատ արժեքավոր նյութ է, մի մարդու հուշեր, ով, եթե կարելի է այսպես ասել, Հայաստանում տեւական ժամանակ եղել է տեղեկատվության թիվ մեկ աղբյուրը: Եւ ահա այդ նախկին պաշտոնյան հուշեր է գրել իր ղեկավարած տարիների մասին: Գրքից կարելի է իմանալ այս կամ այն բնակավայրի հիմնադրման պատմությունը, գործարանի կառուցման շարժառիթները՝ Արփա-Սեւան, Սոթքի ոսկու հանքավայր եւ այլն: Նման գրքերն անգնահատելի փաստական նյութ են պարունակում, եւ տեղակատվություն որոնելիս պետք է հաշվի առնել նաեւ նման աղբյուրների առկայությունը: Ասենք՝ Սեւանի ափին այսօր ուզում են ոսկու գործարան կառուցել Սոթքի հանքավայրի սեփականատերերը, նրանք կառավարությանը, հասարակությանը անընդհատ համոզում են, որ այն անվտանգ է Սեւանի համար: Այդ թեմայով հոդվածը կարելի էր սկսել հենց նրանով, որ նման ծրագիր եղել է նաեւ քառասուն տարի առաջ, երբ չկար, այսպես կոչված, քաղաքացիական հասարակություն, բնապահպանական կազմակերպություններ, բայց փոխարենը Խորհրդային Միությունում եղել են  պետական գործիչներ, ովքեր կարողացել են կանխել այդ ծրագիրը:

26 Ալեքսան Կիրակոսյան,«Մայրամուտի շեմին», Երեւան, 2002:
27  Անտոն Քոչինյան, Անավարտ հուշեր, Երեւան, 2008:

«Լավագույն աղբյուրները նախկին աշխատողներն են, բայց միեւնույն ժամանակ նրանք ամենատեղեկացված եւ ամենաստախոս աղբյուրն են ձեզ համար: Նախկին աշխատողը իրազեկ է, բայց ընդվզում է այն կառույցի եւ մարդու դեմ, ով չի գնահատել եւ ազատել է իրեն աշխատանքից: Առավելագույն տեղեկատվությունը քաղեք նրանից, բայց անպայման ստուգեք փաստերը իր ղեկավարի հետ հարցազրույցի ժամանակ. լավ հետաքննող լրագրողը կհասկանա՝ ով որքանով է ստում»[28]:

Եւ այսպես՝ արդեն ունեք բավականին տեղեկություններ, ժամանակն է դուրս գալ խմբագրությունից եւ շփվել մարդկանց հետ: Նախ հանդիպեք տեղեկատվության ձեր աղբյուրների հետ: Տարիների ընթացքում յուրաքանչյուր լրագրող զանազան ոլորտներում ստեղծում է կապեր եւ ունենում է վստահելի աղբյուրներ:

28 The Reporter's Handbook: an investigator's guide to documents and techniques.- 3rd edition/ Steve Weinberg: under the sponsorship of IRE/ 1996, p.67.

# ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Մի անգամ իմ ուսանողներին ասել եմ, որ եթե բազմասպվածության դարաշրջանում ապրեինք, լրագրողի ասպվածներից մեկը պետք է լիներ Ինֆորմապորը (տեղեկություններ տրամադրող): Լավ լրագրող չեք կարող համարվել, եթե չունեք տեղեկատվության սեփական աղբյուրներ բոլոր գերատեսչություններում: Լրագրողի աշխատանքի հաջողությունը հիմնականում կախված է նրանից, թե տեղեկատվության ի՞նչ աղբյուրներ ունի նա իր հետաքննության թեմային առնչվող պետական եւ մասնավոր հիմնարկներում:

Տեղեկատվության աղբյուրները սովորաբար բաժանվում են երկու խմբի՝ ակտիվ եւ պասիվ: Ակտիվ աղբյուրը պաշտոնական տեղեկատվությունը տրամադրողն է, երբ լրագրողը պաշտոնապես դիմում է տեղեկություն ստանալու համար: Պասիվը լրագրողի սեփական աղբյուրներն են, որոնց մասին նա երբեք չի խոսում:

Ամեն մի նոր թեմայի վրա աշխատելիս ի հայտ են գալիս տեղեկատվության նոր աղբյուրներ: Այս ճանապարհով տարիների ընթացքում ձեռք ես բերում տեղեկատվության աղբյուրների մի հսկա բանակ, իսկ քեզ մնում է միայն մտածել նրանց հետ կապերը պահպանելու մասին: Ի՞նչն է ստիպում մարդկանց տալ տեղեկություն, այսպես ասած՝ խոսել, որո՞նք են տեղեկություն տալու շարժառիթները: Իհարկե, նա ինչ-որ սպասելիք ունի այդ տեղեկատվությունը հրապարակելուց: Նրան կարող է դրան դրդել ինչ-որ վեհ գաղափար, երբեք մի թերագնահատեք մարդկանց, այդպիսիք շատ կան: Մարդն ուզում է ինչ-որ բան անել արդարությունը վերականգնելու համար, նա չի ուզում, որ իր երկրում զարգանա կաշառակերությունը, կամ պետության ունեցվածքը թալանեն, փոշիացնեն, կամ անմեղ մարդ դատապարտվի, աշխատանքից հեռացվի: Չնայած, որպես կանոն, տեղեկատվություն տվողի համար դա անձնական հաշիվների մաքրում է: Ասենք՝ նրան հեռացրել են աշխատանքից, կամ նրա փոխարեն մեկ ուրիշի պաշտոնն են բարձրացրել եւ հիմա ուզում է վրեժխնդիր լինել: Իսկ ընդհանրապես կա մարդու մի տեսակ, որ սիրում է տեղեկություններ տալ այս կամ այն մարդու մասին: Նա դրա մեջ առաքելություն է տեսնում: Ես այդպիսի մի նախկին պաշտոնյայի գիտեմ, ով այսօր նաեւ քաղաքականությամբ է զբաղվում: Նա օրվա ընթացքում մի քանի խմբագրություններ է այցելում եւ տեղեկություններ տալիս: Այդ պաշտոնյան ժամանակին փորձում էր

մեր թերթի միջոցով էլ ինչ-որ բաներ փարածել, բայց մի քանի անգամ նրա փված փաստերը սփուգելուց եւ կեղծիքը բացահայփելուց հետո ինքը հրաժարվեց նման «ծառայություններ մատուցելուց»: Մինչդեռ նա ուզում էր, որ անմիջապես տպագրենք այն, ինչ ինքն ասում էր, որովհետեւ մյուս թերթերն այդպես են անում: Սակայն չի բացառվում, որ հետաքննության համար նաեւ նման մարդկանց հաղորդած տեղեկատվությունը հիմք լինի:

Երբեմն դու գտնում ես տեղեկատվությունը տիրապետողին, սակայն նա չի ցանկանում խոսել: Դուք սկսում եք համոզել, թե ինչքան կարեւոր է նրա խոսելը կամ նրա ունեցած տեղեկատվությունը հանրությանը հասցնելը: Ընդհանրապես աղբյուրների հետ աշխատելիս միշտ պետք է զգուշանալ: Միշտ պետք է հաշվի առնել, որ աղբյուրը հնարավոր է ամբողջ տեղեկատվությունը չի ասում, ինչ-որ բան թաքցնում է ձեզանից կամ ուղղորդում է: Բոլոր դեպքերում նախաձեռնությունը պետք է ձեռքդ վերցնես, պետք է կարողանաս ավելի շատ խոսեցնել, քան ինքն էր պատրաստվում ասել: Օգտագործիր բոլոր հնարքները՝ նրանից իմանալու այն ամենը, ինչ գիտի:

Ուսանողներս միշտ հարցնում են՝ որտեղի՞ց գտնենք տեղեկատվության աղբյուրներ եւ ինչպե՞ս ունենանք սեփական աղբյուրներ տարբեր գերատեսչություններում: Նրանք սպասում են, որ ինչ-որ դեղատոմս ներկայացնեմ կամ, ասենք, լուրի բանաձեւի նման մի բան: Չկա կոնկրետ դեղատոմս, ամեն մի աղբյուրի հետ կապված է յուրահատուկ մի պատմություն: Ես ասում եմ՝ իմ աղբյուրները մարդիկ են, որոնք քայլում են փողոցներում, աշխատում տարբեր ձեռնարկություններում, գերատեսչություններում, ապրում մեր կողքին: Ես շփվում եմ նրանց հետ, ինչպես նրանք՝ ուրիշների հետ, ես լսում եմ նրանց պատմությունները եւ դրանցից վերցնում այն, ինչ պետք է վերցնի լրագրողը: Նրանցից շատերի հետ զրույցի բռնվելով՝ դու դառնում ես իրենցից մեկը, ու նրանք քեզ այդպես էլ ընկալում են:

Ես միշտ խուսափում եմ խոսել տեղեկատվության աղբյուրների մասին, բայց տարիներ շարունակ ուսանողների կողմից մշտապես հնչեցվող այդ հարցերին կփորձեմ մի օրինակով պատասխանել: Հուսով եմ՝ տեղեկատվության այս աղբյուրներին չեմ վիրավորի սրանով, մանավանդ այս մասին նրանց հետ տարբեր առիթներով խոսել եմ:

Տարիներ առաջ հոդվածաշար գրեցի բանկային համակարգի, սնանկացող, իրար միացվող, նոր ստեղծվող բանկերի, դրանց տերերի մասին: Ահա այդ ժամանակ ոստիկանության մի բարձրաստիճան

պաշտոնյա զանգահարում է ինձ եւ առաջարկում հանդիպել: Ես առաջին պահին անակնկալի եկա, որովհետեւ որեւէ կերպ չէի կարողանում կռահել, թե ինչու՞ է այդ պաշտոնյան ուզում հանդիպել: Համաձայնվեցի եւ գնացի հանդիպման: Մեր զրույցը սկսվեց միմյանց մասնագիտական հարցեր տալուց: Այնուհետեւ նա ասաց, որ մի հանդիպման ժամանակ, երբ խոսք է գնացել թերթերից մեկում տպված մի հոդվածի մասին, ինքն ասել է, որ լրագրողներին երբեք չի կարելի վստահել: Ներկա գտնվող մի մաթեմատիկոս ասել է, որ այդպես չէ եւ ինձ օրինակ է բերել: Ես, իհարկե, տարիներ հետո իմացա, թե ով է եղել այդ մարդը: Այդ մասին ինձ ասել է նույն պաշտոնյան: Բայց սա այդքան էլ էական չէր ինձ համար, որովհետեւ այդ պահին մտածում էի, որ հնարավոր է նա ինձ պարզապես խաբում է: Եւ այսպես՝ այդ պաշտոնյան արեց մի առաջարկություն՝ օգնել իրենց գտնել փախուստի մեջ գտնվող մի բանկիրի: Հոդվածներս գրելու ընթացքում ես իսկապես հանդիպել էի այդ բանկիրի հետ եւ այդ պահին մտածեցի, որ իրենք ինձ հետեւել են: Ուստի անմիջապես ասացի՝ բայց դուք դա կարող եք անել, եթե մի քանի օր հետեւեք ինձ: Հաջորդ պահին զգացի, որ շատ խիստ տոնով ասացի, որովհետեւ նա միանգամից լռջացավ: Ասես արդարանալու համար նա նշեց, որ պարզապես օգնության համար է դիմում, որովհետեւ կան մարդիկ, ովքեր լրագրողներին վստահում են: Պաշտոնյան փորձում էր մինչ այդ եղած մթնոլորտը վերականգնել եւ չգիտեր՝ ինչպես դա անել ու որ ուղղությամբ զրույցը տանել: Նա ասաց, որ դրա համար ինձ մի նոր մեքենա կնվիրի: Պաշտոնյան իսկապես հայտնվեց հիմար վիճակում, որովհետեւ ես սկսեցի բարձրաձայն ծիծաղել: Ասացի, որ մեքենա ունեմ եւ դրա կարիքն ամենեւին չունեմ, որ ինքը սխալ կարծիք ունի իմ մասին եւ իմ ծանոթ մաթեմատիկոսը, հավանաբար, սխալ է ներկայացրել ինձ: Առաջարկեցի խոսակցության թեման փոխել: Մի քիչ դեսից-դենից խոսելուց հետո ես ասացի՝ լավ, գնամ: Նա, իրեն կորցրած, խնդրեց մեր հանդիպման մասին ոչ մեկին չասել: Իհարկե՝ պատասխանեցի: Պատկերացնու՞մ եք, եթե հաջորդ օրը ես հրապարակեի մեր այս խոսակցությունը. սա գուցե լիներ սենսացիոն ինչ-որ նյութ, գուցե այդ պաշտոնյային աշխատանքից հանեին: Թեեւ մտածում էի, որ նման առաջարկ անելուց առաջ նա հաստատ խորհրդակցել էր իր վերադասների հետ: Հետագայում այդ պաշտոնյան խոստովանեց, որ հաջորդ եւ էլի մի քանի օրեր սարսափահար սպասել է, որ ես գրելու եմ մեր հանդիպման մասին: Բայց ես չգրեցի, ու դրա արդյունքում այդ պաշտոնյան դարձավ տեղեկատվության իմ վստահելի աղբյուրներից մեկը իրավապահ մարմիններում: Հետագայում

պարբերաբար հանդիպում էինք, եւ նա հայտնում էր տեղեկություններ ու զգուշացնում՝ ինչը կարելի է օգտագործել, ինչը՝ ոչ: Եւ ես երբեք չեմ խախտել մեր պայմանավորվածությունները:

Հետաքննող լրագրողը պետք է մի հայացքով տեսնի ավելի շատ բան, քան սովորական մարդը, քան քննություն իրականացնող ոստիկանը: Ես այսօր էլ վստահ եմ, որ մենք ավելիին կարող ենք հասնել, քան իրենք:

Գիտեք, որ ոստիկանները շատ արագ են կարողանում նկարագրել հանցագործին: Բայց սա ընդամենը մեկ բացատրություն ունի. դա նրանց մասնագիտությունն է: Նրանք անցնում են հատուկ դասընթաց, որի ընթացքում սովորում են դա: Իհարկե, վատ չէր լինի, որ լրագրողներն էլ նման դասընթաց անցնեն, որպեսզի ձեռք բերեն այդ հմտությունները: Այս օրինակը բերեցի նաեւ ասելու համար՝ վարժեք ձեր հիշողությունը: Նկատեք ամեն ինչ մի հայացքից: Հավատացեք՝ դա հնարավոր է անել: Դուք ինքներդ մի քանի փորձ արեք. հիմա նկարագրեք, թե ինչ է հագել ձեր կողքին նստածը, փորձեք հիշել, թե նախորդ օրը ինչ էր հագել, ինչ գույնի պայուսակ ուներ: Այս ամենը կարելի է նկատել, հետո դա դուք անելու եք ենթագիտակցորեն, հետո այդ ամենը ձեզ համար դառնալու է սովորական բան, որի համար ջանք չեք գործադրելու:

Հիշողության վարժանքը կարեւոր է, որովհետեւ հետաքննության ընթացքում յուրաքանչյուր մանրուք կարող է ինչ-որ բան քեզ հուշել, այդ մանրուքներից ամեն մեկը կարող է կապ ունենալ քո հետաքննության հետ: Դուք կարող եք հիմա նկարագրել ձեր կողքին նստածին, սակայն առանց նայելու նրա ուղղությամբ, մի նայեք, ուղղակի մի պահ մտածեք՝ կարո՞ղ եք նկարագրել: Պարզվում է՝ ոչ: Երբ իմ ուսանողներից մեկին խնդրեցի առանց նայելու իր կողքին նստած ընկերուհուն նկարագրել, նա չկարողացավ, որովհետեւ այդ մասին երբեք չէր մտածել: Բայց հիմա եւ այսուհետ, վստահ եմ, այդ  մասին էլ կսկսեք մտածել: Դա մասնագիտական որակ է, որը պետք է ունենա ցանկացած լրագրող:

Ինչու՞ պետք է մարզեք ձեր հիշողությունը: Կան պաշտոնյաներ կամ ինֆորմատորներ, ովքեր երբեք չեն ուզում, որ իրենց ձայնագրեն, նույնիսկ նշումներ անեն: Դու պետք է միտքդ եւ հիշողությունդ այնքան վարժեցրած լինես, որ կարողանաս վերարտադրել: Դա իսկապես դժվար չէ, փորձեք մի քանի անգամ եւ կտեսնեք, որ այդքան էլ դժվար չէ, իսկ տարիների ընթացքում դուք ձեռք եք բերում մի կարեւոր հատկություն՝ արդեն հիշում եք այն, ինչ կարեւոր է: Ես մինչեւ հիմա

չեմ կարողանում բացատրել այն երեւույթը, թե ինչպես է ուղեղը հսկայական տեղեկատվությունից ֆիլտրում քեզ անհրաժեշտը:

Չկան «պատրաստի» մարդիկ, ովքեր սպասում են, թե երբ է հետաքննող լրագրողը հայտնվելու, որպեսզի պատմեն ամեն ինչ: Ցավոք, նման լրագրողներ կան, որ խմբագրություններում նստած սպասում են, թե երբ է գալու այն մարդը, ով կպատմի «ամեն ինչ», ու ինքը կգրի իր «հետաքննական» հոդվածը: Նման նյութեր շատ հաճախ կարելի է տեսնել մեր թերթերում, հեռուստահաղորդումներում: Հայկական թերթերից մեկում տեսել եմ հարցազրույց՝ հրապարակված «Լրագրողական հետաքննություն» խորագրի ներքո, որը կոմպրոմատների շարան էր: Նման նյութերի առատությունը հատկապես զգացվում է նախընտրական շրջանում: Այսինքն՝ մեկը (դա հիմնականում որեւէ պաշտոնյա է լինում կամ նրա ուղարկած մարդը) կոմպրոմատների փաթեթ է բերում թեկնածուի մասին ու լրագրողը նստում գրում է՝ առանց որեւէ բան ստուգելու, պարզելու, պարզաբանելու: Երբեք չպետք է դառնալ գործիք ուրիշների ձեռքում:

Լուսինդա Ֆլիսոնը Լրագրողների միջազգային կենտրոնի (International Center for Journalists) նախաձեռնությամբ 2001 թ.-ին հրապարակած «10 քայլ դեպի լրագրողական հետաքննություն» գրքույկում գրում է, որ լրագրողը անընդհատ պետք է ընդլայնի օգտակար տեղեկություններ ունեցող մարդկանց շրջանակը. «Դա կարող է շատ ժամանակ խլել, նույնիսկ՝ տարիներ, նախքան կկարողանաք հաստատել վստահելի հարաբերություններ տեղեկատվության նոր աղբյուրների հետ: Բայց արդեն այսօր դուք կարող եք սկսել՝ տեսակավորելով ըստ խմբերի այն մարդկանց, որոնց հետ պետք է հաստատեք մշտական հարաբերություններ: Նրանցից մի քանիսի անունները երբեք չեն հայտնվի թերթում, բայց նրանք կարող են տրամադրել տեղեկություններ, որոնք կարող են վերածվել պատմությունների: Նրանց կարելի է օգտագործել մշտական ճշգրտումներ անելու համար: Այդ կապերը կարող են հաստատվել կառավարական չինովնիկների, պաշտոնական անձանց, տեղական առաջնորդների, դատախազների, ոստիկանության աշխատակիցների, գործարարների, հրշեջների, ընկերների, ցանկացած մարդու հետ: Ուրիշները երբեք չեն կարող ձեզ լավ թեմաներ տալ, բայց կարող են իրենց հարցազրույցներում ներկայացնել վերաբերմունք կոնկրետ թեմայի շուրջ: Այդ մարդիկ կարող են լինել պաշտոնական անձինք, դատախազներ, քաղաքական գործիչներ, հիվանդանոցների աշխատակիցներ, հասարակայնության հետ կապերի համար պատասխանատու աշխատակիցներ»[29]:

29 Лусинда С. Флисон, Десять шагов к репортерскому расследованию, 2001, International Center for Journalists, ст. 8.

Նա նշում է, որ օգտակար է նաեւ հարաբերություններ հաստատել անկախ դիտորդների եւ փորձագետների հետ: Այս շարքում կարող են լինել բարձրագույն ուսումնական հաստատությունների դասախոսներ, սոցիոլոգներ:

Լուսինդա Ֆլիսոնը նշում է, որ լրագրողի նպատակը պետք է լինի աղբյուրի հետ հարցազրույցի ձայնագրությունը, այսինքն՝ ամեն ինչ անել աղբյուրին ձայնագրելու համար:

Հետաքննությունների ընթացքում հազվադեպ է պատահում, որ տեղեկություն տվողը ցանկանա հրապարակել իր անունը: Դուք, ինչ էլ պատահի, պետք է պատրաստ լինեք չբացահայտել տեղեկատվության աղբյուրը, եթե նույնիսկ դրա համար ձեզ բանտարկություն է սպասում: Եթե խախտես այս պատգամը, ավելի լավ է ընդհանրապես չզբաղվես լրագրությամբ: Թեեւ Լուսինդա Ֆլիսոնն այս կապակցությամբ գրում է.

«Պետք է սահմանափակել գաղտնի կամ անանուն աղբյուրների օգտագործումը: Անանուն աղբյուրներից օգտվելու չարաշահումը կարող է վնասել թերթի նկատմամբ եղած վստահությունը, քանի որ այդպես ընթերցողները կարող են կարծել, թե աղբյուրները մտացածին են: Դա նաեւ վտանգավոր է, քանի որ բացասական տեղեկությունները շատերն ուզում են հաղորդել անանուն, բայց չեն ուզում դրանց տեր կանգնել, քանի որ հնարավոր չէ ապացուցել իսկությունը»[30]:

Իմ աշխատանքի ընթացքում հաճախ աղբյուրները չեն ուզում հրապարակել իրենց անունները: Եղել են դեպքեր, երբ նախապես համաձայնել են, բայց ինչ-որ փուլում կտրականապես հրաժարվել են: Հայաստանում հաճախ են լրագրողները առիթ-անառիթ անանուն աղբյուրներ օգտագործում: Հենց նման չարաշահումները հաշվի առնելով՝ արտերկրի մի շարք լրատվամիջոցներ, գործակալություններ արգելել են իրենց թղթակիցներին անանուն աղբյուրներ օգտագործել, մի մասն էլ անանուն աղբյուրներն օգտագործում է խիստ անհրաժեշտության դեպքում:

«Չբացահայտված աղբյուրների օգտագործումը թույլատրելի է միայն այն դեպքերում, երբ թերթն այլ կերպ չի կարող ձեռք բերել այն

30 Лусинда С. Флисон, Десять шагов к репортерскому расследованию, 2001, International Center for Journalists, ст. 9.

տեղեկությունները, որոնք համարում է վստահելի եւ հրապարակման արժանի: Երբ մենք օգտագործում ենք նմանատիպ աղբյուրներ, ոչ միայն պատասխանատվություն ենք ստանձնում՝ համոզելու ընթերցողին, որ դրանք վստահելի են, այլեւ հայտնում ենք նրանց, թե ինչ կարող ենք իմանալ նրանց դրդապատճառների մասին»: Այսպես է գրում «Նյու Յորք Թայմս» թերթը, որը վերջերս անանուն աղբյուրներ օգտագործելու պատճառով հայտնվել է մի շարք աղմկոտ իրավիճակներում, թեեւ հայտնի է իր էթիկական կանոնագրքով[31]:

Սակայն մի բան պետք է հստակ իմանա լրագրողը. եթե աղբյուրին խոստացել է գաղտնիությունը պահպանել, ապա, ինչպես Լուսինդա Ֆլիսոնն ասում է. «...նրա այդ խոստումը հավասարազոր է դառնում գրավոր պայմանագրի, ուստի պետք չէ տալ այդքան հեշտորեն նման խոստում: Եղել են դեպքեր, երբ թղթակիցները հայտնվել են բանտում, բայց չեն բացահայտել իրենց աղբյուրները»[32]:

Ես միշտ դեմ եմ արտահայտվում անանուն աղբյուրներ օգտագործելուն, բայց երբեմն իսկապես ստիպված ես գնալ այդ ճանապարհով: Պետք չէ թույլ տալ, որ այն դառնա վատ սովորություն:

Եթե տեղեկություն տվողը քո վստահելի աղբյուրներից է, իհարկե, դու ինչ-որ չափով ապահովագրված ես հավանական սխալներից, իսկ եթե աղբյուրի հետ առաջին անգամ ես աշխատում, ապա ամեն ինչ ենթակա է ստուգման ու ճշգրտման. ինչքանո՞վ են հիմնավոր նրա տրամադրած տեղեկությունները, ի՞նչ ապացույցներ է նա ներկայացնում, բացի պատմածից՝ կա՞ն հավաստիացումներ՝ փաստաթղթեր, ձայնագրություններ, ինչպե՞ս է հնարավոր ստուգել նրա տված տեղեկությունները: Դրա համար աղբյուրին միշտ պետք է ուղղել մի հարց՝ որտեղի՞ց իրեն այդ տեղեկությունը, թող ինքը հաստատի իր ասածները:

Ամերիկացի լրագրող Բրյուս Գելլերմանը, ով երկար տարիներ լրագրողական հետաքննությամբ էր զբաղվում, հարցին՝ եթե գիտեք, որ պաշտոնյան տեղեկատվություն ունի, որը Ձեզ պետք է, բայց չի ասում, ի՞նչ եք անում, պատասխանել է. «Օգնություն եմ խնդրում հենց իրենից: Ես ասում եմ, որ այսինչ թեման փորձում եմ լուսաբանել, ի՞նչ եք կարծում, էլ որտեղի՞ց կարող եմ տեղեկատվություն ստանալ, ո՞վ կարող է ինձ օգնել: Նրանք փափկում են եւ տալիս այդ տեղեկատվությունը: Եթե դուք բարեկամաբար եք տրամադրված մարդկանց նկատմամբ, նրանք կուզենան օգնել ձեզ: Եթե նրանք կտրականա-

31 Լրագրողներից լրագրողներին, Երեւան, 2007 թ., էջ 66:

32 Лусинда С. Флисон, Десять шагов к репортерскому расследованию, 2001, International Center for Journalists, ст. 9.

պես հրաժարվում են ինձ հետ խոսել, դա իրենց իրավունքն է, նրանք պարզապես դժվարացնում են իմ գործը: Այդ դեպքում ես ասում եմ, որ արդեն բոլորի հետ խոսել եմ: Նրանք չգիտեն, թե ես որքանով եմ տեղյակ գործից: Եթե պետևեն, որ ահագին բան գիտեմ, անորոշության մեջ կընկնեն, չեն իմանա՝ ինչ ասեն, ինչ թաքցնեն, և դա ինձ համար լավ է: Այս խաղի մեջ, իսկ սա խաղ-մրցակցություն է, կարևորն այն է, որ թույլ չտաս դիմացինդ չափազանց հավասարակշռված լինի»[33]:

Իսկ հարցին՝ թե ինչպե՞ս է հետաքննություն կատարում, ունի՞ սեփական մեթոդ, Բրյուս Գելլերմանը պատասխանել է.

> «Ես նման եմ փոշեկուլի. ողջ կրքոտությամբ փորձում եմ տեղեկատվություն ստանալ: Ես փորձում եմ մասնագետ դառնալ այն բոլոր բնագավառներում, որոնք ուսումնասիրում եմ: Եթե լուսաբանում եմ կենսաբանություն, գենետիկա, բանկային գործ, ես դրանց մասնագետն եմ դառնում»[34]:

33 Ես նման եմ մի շան, որն ամեն ինչ անում է, որպեսզի իր ոսկորը չխլեն, «Հետք», 19.10.2002, www.hetq.am
34 Նույն տեղում:

# ԱՆԱՆՈՒՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Իմ լրագրողական փորձառությունը ցույց է տվել, որ արժեքավոր տեղեկություններ տվող աղբյուրները հիմնականում ուզում են անանուն մնալ: Իսկ անանուն աղբյուրների վրա հղում կատարելն ընթերցողի մոտ անմիջապես անվստահություն է առաջացնում: Նման խնդրի առաջ միշտ կանգնում է հետաքննող լրագրողը: Աղբյուրներ կան, որոնք կարեւոր տեղեկություններ են տալիս միայն չբացահայտվելու պայմանով: Իսկ լրագրողն իր պայմանավորվածությունը երբեւէ չպիտի խախտի: Ես չեմ տեսնում որեւէ հանգամանք, որը կարող է պատճառ հանդիսանալ աղբյուրը բացահայտելու համար: Սակայն անանուն աղբյուրի օգտագործումը հոդվածում նույնպես պետք է արդարացված լինի: Ինչու՞ ես գնացել այդ քայլին, ո՞րն է պատճառը, որ օգտագործում ես անանուն աղբյուր: Այսինքն՝ նյութը պետք է այնքան կարեւոր լինի, որ արդարացնի անանուն աբյուր օգտագործելու հանգամանքը: Այդուհանդերձ, միշտ գերադասելի է գտնել մի վստահելի աղբյուր, որը կարող է հաստատել անանուն աղբյուրի հայտնած փաստը: Իհարկե, կարեւոր է ընթերցողին բացատրել նաեւ, թե ինչու ես նյութի մեջ օգտագործում անանուն աղբյուր: Իսկ եթե չես բացատրում, դա արդեն հարցեր կարող է առաջացնել ընթերցողի մոտ: Միաժամանակ, եթե չես նշում աղբյուրը, ինչո՞վ պետք է բացատրես, որ ներկայացված նյութը ճշգրիտ է, ամբողջական, արդար, եւ ամենակարեւորը՝ հավասարակշռված: Ի՞նչ է սպասվում լրագրողին, եթե աղբյուրը չի բացահայտում: Կարո՞ղ է, արդյոք, լրագրողը պահպանել աղբյուրի գաղտնիությունը:

«Հետքից» սփորեւ բերված օրինակը կարող է ձեզ հուշել՝ ինչպես վարվել կոնկրետ իրավիճակներում: Մենք բացահայտել էինք, որ Առողջապահության նախարարության պաշտոնյաների մեղքով ժամկետանց են դարձվել մոտ մեկ մլրդ դրամի մարդասիրական դեղեր[35]: Պաշտոնյան դիմել էր ոստիկանություն՝ հրապարակման հեղինակին պատասխանատվության ենթարկելու իր պատիվն ու արժանապատվությունը արատավորելու համար: Սակայն քննիչը մերժեց այդ դիմումը միայն այն ժամանակ, երբ արդեն ոստիկանությունում քրեական գործ հարուցվեց այդ պաշտոնյայի նկատմամբ՝ պաշտոնեական դիրքը չարաշահելու համար:

35 Էդիկ Բաղդասարյան, Մարդասիրական դեղերը միտումնավոր դարձրել են ժամկետանց, 31 մարտ, 2004 թ., www.hetq.am:

*2001-2002 թթ. մարդասիրական ճանապարհով Հայաստան մուտք գործած դեղերից ժամկետանց են դարձել մոտ 1 մլրդ դրամի դեղեր: Ի՞նչ էր իրականում տեղի ունեցել: Առողջապահության նախարարության Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոնում համապատասխան դեղերի առկայության պարագայում հանրապետության բուժհաստատություններին բաշխվել է ավելի քիչ քանակով, որպեսզի համանման դեղերի բիզնեսով զբաղվողները չտուժեն: Դրա հետեւանքով մարդասիրական օգնության կարգով ստացված եւ այդ կենտրոնում պահեստավորված դեղերը դարձել են ժամկետանց եւ օգտագործման համար ոչ պիտանի: Իսկ դեղերի առեւտրով զբաղվող անձանց մեծամասնությունը սերտ կապերի մեջ էր որոշ կառավարական պաշտոնյաների հետ: Մենք պարզեցինք, թե որ դեղերն են դարձել ժամկետանց:*

*«Զիտրոմաքս» դեղը լայն սպեկտրի անտիբիոտիկ է եւ մեծ պահանջարկ ունի: 200 մլն դրամի (‰ 396, 000) «Զիտրոմաքսը» 2001-2002 թթ.-ին դարձել է ժամկետանց: «Տրիկորը» նախատեսված է սրտային հիվանդությունների եւ խոլեստերինի իջեցման համար: 300 մլն դրամի (‰ 594, 000) «Տրիկորը» նույնպես դարձել է ժամկետանց: Այս դեղամիջոցը մեծ պահանջարկ ունի հատկապես մեծահասակների շրջանում, այսինքն՝ տասնյակ հազարավոր թոշակառուներ զրկվել են այն անվճար ստանալու հնարավորությունից: «Կեպրա» հոգեմետ դեղը, որը մեծ պահանջարկ ունի հոգեբուժարաններում, 54 մլն դրամի (‰ 107, 000) չափով դարձել է ժամկետանց: 55 մլն դրամ արժեքով (‰ 109, 000) ժամկետանց է դարձել «Զոֆրան» դեղը, որը համարվում է հակաուռուցքային դեղամիջոց եւ դարձյալ մեծ պահանջարկ ունի:*

*Առողջապահության նախարարության մարդասիրական օգնության կենտրոնը տնօրինում է ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամից եւ այլ դոնոր կազմակերպություններից նախարարություն առաքված հումանիտար օգնությունը, պահեստավորում է այն, տեսակավորում եւ բաշխում: Բոլոր դեղերը, բժշկական պարագաները հաշվառված են եւ քարտավորված, ինչն էլ հնարավորություն է տալիս ցանկացած պահի տեղեկություն ունենալ ցանկացած դեղատեսակի մնացորդի մասին:*

*Դոնոր կազմակերպությունը նախապես ուղարկել է առկա դեղերի եւ պարագաների ցուցակը, որոնք քննարկվել են նախարարության համապատասխան վարչություններում, ճշտվել է դրանց պահանջարկը եւ ուղարկվել դոնոր կազմակերպությանը: Այսինքն՝ մարդասիրական օգնության դեղերը եւ բժշկական պարագաները Հայաստան ներմուծվել են ըստ Առողջապահության նախարարության կազմած ցուցակների: Անել է թե՝ դրանք ավելցուկ չպետք է պայթեն:*

*Հետաքննության ընթացքում պարզվել է նաեւ, որ Առողջապահության նախարարությունը նոր շենք տեղափոխելու ժամանակ անհետացել է փաստաթղթերի մի կապոց: Կորած փաստաթղթերը վերաբերում են ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամից առաքվելիք դեղերի ցանկին: Այսինքն՝ թե հիմնադրամն ինչ դեղեր կարող է ուղարկել Հայաստան: Այդտեղ էր նաեւ Միացյալ հիմնադրամին Առողջապահության նախարարության կողմից ներկայացրած դեղերի ցանկը, այսինքն՝ թե ինչպիսի դեղերի կարիք կա Հայաստանում:*

*Մեզ հայտնի դարձավ, որ 12 բուժհիմնարկների ղեկավարներ դիմել են այդ կենտրոն՝ դեղեր ստանալու, բայց մերժվել են: Մենք հանդիպեցինք այդ մարդկանց հետ: Նրանք պատմել են, որ չնայած մարդասիրական կենտրոնում դեղերի առկայությանը՝ կենտրոնի ղեկավար Արտաշես Բիշարյանը, որը պատասխանատու էր դեղերի բաշխման համար, իրենց պահանջած դեղերը չի տվել: Սակայն այս մարդիկ հրաժարվեցին հրապարակավ խոսել: Մերժման պատճառը մեկն էր՝ այդ նույն դեղերը ներկրել էր Արտաշես Բիշարյանին պատկանող «Դեղաքաղա Երեւան» ՍՊԸ-ն կամ էլ նրա ընկերների պատկանող այլ ընկերություններ: Մենք պարզել էինք նաեւ, որ Մարդասիրական կենտրոնը փաստաթղթերով դեղ էր ներկայացրել Հրազդան քաղաքի թիվ 2 պոլիկլինիկային, որը վաղուց գոյություն չուներ: Լուծարված պոլիկլինիկային հատկացվել էր 26 մլն դրամի դեղորայք: «Եթե պոլիկլինիկայի գլխավորը կնիքով ու լիազորագրով գալիս է դեղորայք ստանալու, իսկ ինձ ո՛չ գրավոր, ո՛չ էլ բանավոր չեն տեղեկացրել, որ այդ պոլիկլինիկան լուծարվել է, ես ինչպե՞ս կարող եմ դեղ դուրս չգրել»,- ասել է Ա.Բիշարյանը: Սակայն Առողջապահության նախարարության այս պաշտոնյան շատ լավ գիտեր, որ*

*այս պոլիկլինիկան օպտիմալացված էր, նա իր սեղանին ունի օպտիմալացված բուժհիմնարկների ցանկը, ավելին՝ այս պոլիկլինիկայի դեղերը սպառցել է նրա մտերմուհին: Եւ այսպես, մենք պարզեցինք, թե ինչպես հազարավոր ընտանիքներ, որոնք դեղեր ձեռք բերելու դրամ չունեին, զրկվեցին անվճար դեղերից այն ժամանակ, երբ Առողջապահության նախարարության մարդասիրական կենտրոնում դեղերը դիտավորյալ դարձնում էին ժամկետանց:*

*Արդյունքում այդ պաշտոնյան աշխատանքից ազատման դիմում գրեց, փաստի առթիվ հարուցվեց քրեական գործ: Սակայն պաշտոնյան որեւէ պատիժ չկրեց, եւ ինչ-որ ծառայությունների դիմաց նրա քրեական գործը իրավապահները կարճեցին:*

Այս հետաքննությունն առանձնանում էր նաեւ մեկ այլ ուշագրավ հանգամանքով, երբ լրագրողը գիտակցորեն հրապարակել էր ծառայողական գաղտնիք համարվող փաստաթղթեր, նամակագրություն: Սակայն չէինք նշել այդ փաստաթղթերը տրամադրող աղբյուրը: Եւ հենց այդ փաստաթղթերն էին ապացուցում, որ դեղերը միտումնավոր են ժամկետանց դարձվել: Երբ այս դեպքի առիթով քրեական գործ հարուցվեց, դատախազության մի քննիչ հանդիպեց ինձ եւ խնդրեց տրամադրել այդ փաստաթղթերի մի մասը: Ես ասացի, որ ամեն ինչ հրապարակել եմ, իսկ իմ ունեցածը չեմ կարող տրամադրել: Բայց, ինչպես հետո պարզվեց մեր զրույցից, նրա հիմնական նպատակը տեղեկատվության մեր աղբյուրը բացահայտելն էր: Քննիչը զրույցի ժամանակ երկու անգամ ակնարկեց այդ մասին, բայց հետո հասկացավ, որ իր փորձերն անիմաստ են:

«Հետքի» պրակտիկայում եղել է մի դեպք, երբ իրավապահների կողմից առաջադրվել է տեղեկատվության աղբյուրի բացահայտման պահանջ: 2004 թ.-ին բռնության ենթարկվեց հասարակական գործիչ Աշոտ Մանուչարյանը: Որոշ ժամանակ անց «Հետքը» տպագրեց[36] մի սափրագլխի լուսանկար՝ նշելով, որ նա է բռնություն իրականացնողներից մեկը (այն արտատպեց «Առավոտ» օրաթերթը): Մինչ այդ նախաքննական մարմինը հայտարարել էր, որ հանցագործի անձը հայտնի չէ: Դեպքի վայրում գտնվողներից մեկը ճանաչել էր լու-

36 Էդիկ Բաղդասարյան, Աշոտ Մանուչարյանը ճանաչել է իր վրա հարձակվողներից մեկին, 15 սեպտեմբեր, 2004 թ., www.hetq.am:

սանկարում պատկերված սափրագլխին: Սակայն նա այդ մասին չէր ուզում հայտնել իրավապահներին՝ վախենալով, որ սափրագլուխների ընկերները կարող են հաշվեհարդար տեսնել իր հետ: Ինքը՝ Ա.Մանուչարյանը, հրաժարվում էր ցուցմունք տալ: Իրավապահները գնացին մի խորամանկ քայլի՝ Ա. Մանուչարյանի նկատմամբ բռնարարքի փաստի առթիվ հարուցված քրեական գործում «Հետքի» լրագրողին ընդգրկեցին որպես վկա: Եթե վկան հրաժարվում է ցուցմունք տալ, ենթարկվում է քրեական պատասխանատվության: Սակայն իրավապահները չգնացին այդ քայլին՝ ըստ երեւույթին խուսափելով ավելորդ աղմուկից: Ստորեւ ներկայացնում ենք լրագրողի՝ Երեւանի Կենտրոնի քննչական բաժանմունքի պետ Ա. Ղազարյանին ուղղված նամակը, որը պատկերացում կտա ձեզ, թե ինչպես կարելի է վարվել նման իրավիճակում հայտնվելիս:

*ՀՀ ոստիկանության Երեւանի Կենտրոնի քննչական*
*բաժանմունքի պետ Արտավազդ Ղազարյանին*

*Հարգելի պրն Ղազարյան,*

*Ս/թ սեպտեմբերի 15-ին Կենտրոնի ոստիկանության քննչական բաժանմունքի ավագ քննիչ Արսեն Այվազյանը, հրավիրելով ոստիկանություն, ինձ ներգրավել է որպես վկա Աշոտ Մանուչարյանի նկատմամբ իրականացված բռնարարքի փաստի առթիվ հարուցված քրեական գործում: Իմ հրապարակած յուրաքանչյուր հոդվածից հետո քննիչ Այվազյանն ինձ հրավիրում է բաժին՝ ցուցմունքներ տալու: Հայտնում եմ Ձեզ, որ ես լրագրող եմ եւ իրականացնում եմ մասնագիտական գործունեություն, եւ քննիչը չի կարող այդ փաստի առթիվ հարուցված քրեական գործում ինձ ներգրավել որպես վկա:*

*Ես բողոքարկում եմ քննիչի այդ որոշումը, միաժամանակ հայտնում եմ, որ հրաժարվում եմ որեւէ ցուցմունք տալ եւ ինֆորմացիայի աղբյուրները բացահայտել: Այդ մասին ես տեղեկացրել եմ նաեւ քննիչին՝ ասելով, որ ես որեւէ աղբյուր չեմ նշի՝ նախ եւ առաջ այդ մարդկանց անվտանգությունը հաշվի առնելով: Նշեմ, որ քննիչի բոլոր հարցերը վերաբերում են հենց տեղեկատվության աղբյուրների բացահայտմանը:*

*Միաժամանակ Ձեզ եմ ներկայացնում «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի այն դրույթը, որն ապահովում է լրագրողի տեղեկատվության աղբյուրների պաշտպանությունը.*

***«Հոդված 5. Տեղեկատվության աղբյուրների պաշտպանությունը[37]***

*1. Լրատվական գործունեություն իրականացնողները եւ լրագրողները պարտավոր չեն բացահայտել տեղեկատվության աղբյուրը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:*

*2. Տեղեկատվության աղբյուրի բացահայտումը լրատվական գործունեություն իրականացնողին, ինչպես նաեւ լրագրողին կարող է պարտադրվել դատարանի որոշմամբ՝ քրեական գործի առիթով՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման նպատակով, եթե հասարակության շահերի քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտությունն ավելի ծանրակշիռ է, քան տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու հասարակության շահագրգռվածությունը, եւ սպառված են հասարակական շահերի պաշտպանության մնացած բոլոր միջոցները: Այդ դեպքում, լրագրողի միջնորդությամբ, դատական քննությունն իրականացվում է դռնփակ»:*

*Ինչպես տեսնում եք, օրենքը հստակ սահմանում է, թե որ դեպքերում եւ ինչպես կարող է լրագրողին պարտադրվել տեղեկատվության աղբյուրը բացահայտել: Ուստի խնդրում եմ Ձեր միջնորդությունը՝ վերոհիշյալ քրեական գործով ինձ որպես վկա ներգրավելու՝ քննիչ Արսեն Այվազյանի որոշումը վերանայելու հարցում, քանի որ այն հակասում է լրագրողի իմ իրավունքներին:*

*Հարգանքներով՝ «Հետաքննող լրագրողներ» ՀԿ նախագահ, «Հետք» թերթի խմբագիր Էդիկ Բաղդասարյան*

37 «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք, 13.12.2003 թ.:

Չկան ավելորդ փաստեր կամ տեղեկություններ, երբեք դեն մի՛ նետեք ձեր գրառումները, որոնք ինչ-որ պահի ձեզ «անպետք» են թվում: Պատրաստե՛ք թղթապանակներ եւ ամեն ինչ պահե՛ք: Մի օր դրանք հաստատ պետք կգան, եւ դուք կվերադառնաք դրանց: Երբեք մի՛ ծուլացեք նշումներ անել: Յուրաքանչյուր հետաքննության համար անհրաժեշտ է առավելագույն տեղեկությունները ձեռք բերել: Լրագրողը պետք է ունենա այնքան տեղեկատվություն, որը բավարարի իր եզրակացությունը, տեսակետը հիմնավորելու համար: Եթե պատկերավոր արտահայտվենք, ապա «լրագրողի շարած պատի մեջ ազատ քարի տեղ չպետք է լինի»: Այսինքն՝ դուք ձեր ձեռքի տակ պետք է ունենաք ամբողջ շինանյութը, նոր շարեք պատը: Ավելորդ տեղեկություններ չկան՝ հավաքեք ամեն ինչ:

*2000 թ.-ին իր ծնողների բնակարանի մուտքի մոտ սպանվեց Հայաստանի Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ Տիգրան Նաղդալյանը: Մենք սկսեցինք հետաքննություն կատարել. ինչու՞ սպանվեց Տ. Նաղդալյանը: Հրապարակվեցին մի քանի հոդվածներ, որտեղ առաջ էին քաշվում զանազան վարկածներ, միաժամանակ շարունակում էինք աշխատել: Այդ ժամանակ հրապարակվեց դատախազության հաղորդագրությունը, որտեղ նշված էր, որ Տ. Նաղդալյանին սպանողներին ձերբակալել են: Մենք սկսեցինք փնտրել տեղեկություններ ձերբակալվածների մասին, տեղեկատվության բոլոր աղբյուրները «փակ» էին, ներքաղաքական անկայուն վիճակը վախեցրել էր բոլորին, եւ նույնիսկ վստահելի աղբյուրները հրաժարվում էին հանդիպումներից: Հետո պարզ դարձավ նաեւ վախի հիմնական պատճառը՝ սպանության մեջ մեղադրվում էր նախկին վարչապետ, 1999 թ. հոկտեմբերի 27-ին Խորհրդարանում տեղի ունեցած ահաբեկչության ժամանակ սպանված Վազգեն Սարգսյանի եղբայրը:*

*Եւ ահա Ղարաբաղի ծանոթներիցս մեկն այդ օրերին Երեւան հիվանդանոց էր եկել եւ զրույցի ժամանակ ասաց, որ վերջին օրերին Ղարաբաղում ինչ-որ մարդկանց են բռնել՝ նախկին կռվող տղաների: Ես այդ պահին այնքան էլ ուշադրություն չդարձրի այդ տեղեկության վրա, բայց օրվա ընթացքում հանկարծ որոշեցի զանգել Ստեփանակերտ եւ իմանալ՝ ու՞մ են բռնել: Ծանոթ պաշտոնյային, որ զանգել էի, հարցրի. «Էդ տղերքին ինչի՞ եք բռնել»: Նրան թվաց, թե ես ամեն ինչ*

գիտեմ: Ասաց, որ կասկածվում են Երեւանում կատարված սպանության մեջ: Փաստորեն, ձերբակալվածը ղարաբաղցի էր: Հարցրի՝ որտեղի՞ց է, ասաց՝ մարտունեցի: Այս տեղեկությունը բավական էր մեր աշխատանքն ուղղորդելու համար: Սպանությունը կատարելու մեջ մեղադրվում էր Ղարաբաղի Մարտունու շրջանի նախկին մի զինվոր: Հաջորդ զանգս Ղարաբաղի դատական ոլորտում աշխատող տեղեկատվության աղբյուրին էր: Նա մի քանի տարի դատավոր էր աշխատել Մարտունի քաղաքում, գրեթե բոլորին գիտեր, բայց վախենում էր խոսել: Ի վերջո, ինձ հաջողվեց իմանալ ձերբակալվածի անուն-ազգանունը: Անունն ինձ ծանոթ էր, թեեւ Ղարաբաղում դա տարածված անուն էր եւ պետք էր ճշտել՝ արդյո՞ք իմ իմացած տղան է: Ես զանգեցի պատերազմի տարիներից ծանոթ մի զինվորականի, որն արդեն գեներալ է եւ բարձրաստիճան պաշտոնյա պաշտպանության համակարգում: Հարցրի. «Էդ էն խմբի տղերքի՞ն են բռնել»: Նա միանգամից հասկացավ հարցս եւ ասաց. «Հա, դա Մարտունիում հայտնի խումբն է»:

Պատերազմի տարիներին, երբ բանակում էի, իսկ այնուհետեւ լուսաբանում էի ռազմական գործողությունները, միշտ նշումներ էի կատարում: Դրանց հիմնական մասը ժամանակին զանազան պատճառներով չէի օգտագործում, բայց գիտեի, որ մի օր պետք է անդրադառնամ: Ես բացեցի ինչպես թղթապանակներիս, այնպես էլ հիշողությանս արխիվները: Ու հիշեցի այդ տղային: Նրա անունը հայտնվել էր նաեւ իմ նշումների մեջ: Իսկ ի՞նչ կար իմ արխիվներում: 1992 թ. Ղարաբաղի Մարտունի քաղաքում կար մի խումբ, որն անհանգստացնում էր բնակիչներին իր լկտի պահվածքով: Խմբի տղաները հարբում, հաշիշ էին օգտագործում, վեճեր ու ծեծկռտուքներ սարքում: Նրանք նաեւ խնդիրներ ունեին Մարտունու ինքնապաշտպանական ուժերի հրամանատար Մոնթե Մելքոնյանի հետ: Ես բացեցի արխիվներս եւ տեսա, որ այդ խմբի մասին ամեն ինչ ունեի գրած. ով ինչ էր անում այն ժամանակ եւ հետո նրանցից յուրաքանչյուրի հետ ինչ էր պատահել, ով ինչ մարտերի է մասնակցել, վիրավորվել, զոհվել: Մի խոսքով՝ գրածս հոդվածում զետեղած տեղեկությունների մեծ մասը 1992 թ. նշումներիցս էր վերցված: Գրելուց հետո զանգահարում եմ գլխավոր դատախազություն եւ հայտնում, որ վաղը ես հրապարակում եմ սպանության մեջ մեղադրվողների անուն-ազգանունները,

*բայց ուզում եմ մեկ անգամ էլ իրենց հետ ճշտել տվյալները: Պատասխանն այսպիսին էր. «Մենք դեռ չգիտենք՝ ովքեր են, քեզ որտեղի՞ց պիտի ասենք կամ մի հատ էլ ճշտենք»:*

*Հաջորդ օրը հրապարակում եմ հոդվածը՝*[38] *անուն-ազգանուններով, մանրամասն կենսագրական տվյալներով, նրանց կատարած նախկին հանցանքների մասին այլ տեղեկություններով:*

*Դատախազությունում հաջորդ օրը քննարկվել էր այդ հրապարակումը, եւ հարցը հետեւյալն էր. որտեղի՞ց լրագրողին նման տվյալներ, երբ դրանք մենք չգիտենք: Իմ որոշ գործընկերներ նույնիսկ ասացին, որ Ազգային անվտանգության ծառայությունը կամ Ներքին գործերի նախարարությունն է իմ միջոցով այդ տեղեկատվությունը շրջանառության մեջ դրել: Եվ նման կարծիքի ձեւավորման միակ պատճառն այն էր, որ այդ տեղեկությունները իրականում ոչ մի տեղ հնարավոր չէր գտնել:*

Ահա թե ինչու եմ ասում՝ երբեք մի՛ ծուլացեք նշումներ անել կամ դեն նետել «ոչ պետքական» տեղեկատվությունը:

38 Ո՞վ է տվել կրակելու հրամանը, Էդիկ Բաղդասարյան, 10.03.2003, www.hetq.am:

# ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Լրագրողը պետք է կարողանա օգտագործել «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը: Հաճախ, երբ տեղեկությունը հրատապ է, լրագրողները չեն օգտագործում այդ օրենքը, որովհետեւ այն 5 օր է նախատեսում տեղեկություններ տրամադրելու համար: Եթե տեղեկատվությունը օրենքով պահպանվող գաղտնիք չէ՝ պետական, բանկային, առեւտրային կամ ծառայողական, ոչ ոք իրավունք չունի մերժել դրանք տրամադրել:

«Հետաքննող լրագրողներ» կազմակերպությունը 4 անգամ տեղեկատվության անհիմն մերժման համար դիմել է դատարան՝ ընդդեմ Մաքսային պետական կոմիտեի, Բնապահպանության նախարարության, Երեւանի եւ Իջեւանի քաղաքապետերի: Չորս դեպքերում էլ հասել ենք հաջողության:

Այս նախադեպերը, կարելի է ասել, որոշ չափով զգոնացրին պետական մարմիններին, գերատեսչություններին: Մեր փորձառությունը թույլ է տալիս ասելու, որ օրենքը շատ հազվադեպ է գործում, մանավանդ երբ նրանց տալիս ես այնպիսի հարցեր, որոնցով դու պիտի իրենց չարաշահումները բացահայտես: Բոլոր դեպքերում հարցում անելու հնարավորությունը «Հետքի» լրագրողները միշտ օգտագործում են, որովհետեւ հարցերին չպատասխանելը, խուսափողական պատասխանները միշտ էլ կարելի է օգտագործել հոդվածի մեջ որոշակի եզրահանգումներ կատարելու համար: Ահա թե ինչպիսի դիպուկ գնահատական է տվել հայ լրագրության մասին ամերիկացի փորձագետ Լուսինդա Ֆլիսոնը. «Իհարկե, Հայաստանում լրագրողների ցանկացած աշխատանքը կարելի է անվանել հետաքննական լրագրություն, քանի որ նրանք պետք է պայքարեն ամեն մի չնչին տեղեկություն ստանալու համար»[39]:

Ամեն ինչից առաջ լրագրողը պարտավոր է օգտագործել տեղեկություն ստանալու իրավունքը եւ օրենքով սահմանված բոլոր ձեւերով պաշտպանել այդ իրավունքը:

39 One The Right Track. Investigative Reporting in Armenia. 2004, p.7, International Center for Journalists, Washington, D.C

«Ունիվերսալ լրագրող» գրքում Դ. Ռենդալը գրում է.

«Ամենատխուր բանն այն է, երբ լրագրողն ասում է.«Չեմ կարողանում պարզել»: ...100-ից 99 դեպքում կարող եք համոզված լինել, որ ամենուրեք չէ, որ նա հետաքրքրվել, հարցրել է: Հավանաբար, առնվազն երկու տեղ կա, որտեղ կարելի է հարցնել: Ձեզ անհրաժեշտ տեղեկությունները, ամենայն հավանականությամբ, ինչ-որ տեղ սպասում են ձեզ: Ահա ոսկե կանոնը՝ մի՛ հուսահատվեք, հարցրեք: Եւ ինքներդ էլ կզարմանաք ինչ-որ տեղից հայտնված օգնությունից»[40]:

40 Рендалл Д. Универсальный журналист, СП 6, 1999. стр. 43.

## ՀՈԴՎԱԾԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒՑ ԱՌԱՋ ՍՏՈՒԳԻՐ ԲՈԼՈՐ ՓԱՍՏԵՐԸ

2004 թ.-ին Վաշինգտոնում հայ լրագրողների համար Լրագրողների միջազգային կենտրոնի կազմակերպած դասընթացին ներկայացվեց հետաքննության մեջ փաստերը ճշգրտելու, ստուգելու հարցերի ցանկ.[41]

1. Դուք լիովին համոզվա՞ծ եք, որ ձեր նյութում առկա փաստերը եւ դրանք տրամադրած աղբյուրները ճշգրիտ են: Եթե կասկածում եք ձեր աղբյուրներին, կարո՞ղ եք նրանց փոխարինել մեկ ուրիշով կամ պարզապես դուրս թողնել նյութից՝ այն ավելի վստահելի դարձնելու համար:
2. Բոլոր փաստերն ունե՞ն հղումներ:
3. Կրկնակի ստուգե՞լ եք կարեւոր փաստերը:
4. Կարո՞ղ եք ճշգրտորեն գրել վկայակոչված բոլոր աղբյուրների անուն, ազգանունները եւ հեռախոսահամարները:
5. Լիովին վստա՞հ եք, որ նյութի մեջ առկա բոլոր փաստական հանգամանքները ճշմարտությունն են արտացոլում:
6. Պատրա՞ստ եք նյութը ստուգելու համար հրապարակայնորեն պաշտպանել ձեր օգտագործած մեթոդները:
7. Մեջբերումներն արվա՞ծ են համապատեքստում եւ ճշգրի՞տ են ներկայացված:
8. Հղում կատարու՞մ եք անանուն աղբյուրի: Եթե այո, ապա ինչու՞ եք օգտագործում անանուն աղբյուր: Պատրա՞ստ եք հրապարակայնորեն պաշտպանել այդ աղբյուրների օգտագործումը:
9. Օգտագործու՞մ եք անանուն աղբյուրի տրամադրած նյութ, փաստաթուղթ կամ լուսանկար: Ինչու՞: Որքանո՞վ եք վստահում այդ նյութին: Պատրա՞ստ եք հրապարակայնորեն պաշտպանել այդ նյութի օգտագործումը:
10. Ձեր խորագրերը ճշգրտորեն արտացոլու՞մ են նյութի հիմնական գաղափարը:

41 Ս. Բիլման, Միջազգային հետաքննական լրագրություն, «Հետաքննական լրագրության բաղկացուցիչ տարրեր» դասընթացի նյութերից, 2004 թ., Վաշինգտոն:

«Ցանկացած փաստաթղթային տեղեկատվություն մի՛ ընդունեք որպես անհերքելի ճշմարտություն: Փաստաթղթերը, ձայնագրությունները հաճախ վերջնական ապացույցն են ինչ-որ բանի, բայց դրանք նույնպես կարող են սխալ լինել: Ցանկացած պարագայում աշխատեցրեք ձեր ուղեղն ու հոտառությունը, մտածեք այն մասին, թե ինչ են ասում փաստաթղթերը կամ ձայնագրությունները: Փորձեք մարդկանց գտնել, ովքեր ստեղծել են դրանք, փորձեք մարդկանց գտնել, ում ժամանակաշրջանի կամ կյանքի մասին են դրանք, տվեք նրանց հնարավորություն՝ ասելու, թե ինչ են նշանակում այդ փաստաթղթերը կամ ձայնագրությունները»,- ասում է Սթիվ Ուինբերգը՝ «Վաշինգտոն փոստ»-ի խմբագիրներից մեկը[42]:

Երբեմն հետաքննող լրագրողը տեղեկություն ստանալու համար դիմում է ոչ օրինական մեթոդների: «Որպեսզի արդարացնենք տեղեկություն ստանալու նպատակով գործադրված սուտը կամ կեղծիքը, անհրաժեշտ է պահպանել հետեւյալ սկզբունքները.

1. Երբ փնտրվող տեղեկատվությունը խիստ կարեւոր է: Պետք է առկա լինի հասարակական կենսական շահ, ինչպես, օրինակ, կառավարման բարձր մակարդակներում կատարված անօրինականության բացահայտում կամ հասարակությանը սպառնացող մեծ վտանգի կանխում:
2. Երբ այդ տեղեկությունը ստանալու բոլոր մյուս միջոցները սպառված են:
3. Երբ լրագրողները ցանկանում են հասարակության առջեւ ամբողջությամբ հրապարակայնորեն բացահայտել կեղծիքը եւ այն կիրառելու պատճառը:
4. Երբ կեղծիքի միջոցով ստացված տեղեկատվությամբ կանխվող վտանգը գերազանցում է բուն կեղծիքի գործողությունը:
5. Երբ լրագրողները որոշումը կայացնելիս հաշվի են առել հետեւյալը.

42 The Reporter's Handbook: an investigator's guide to documents and techniques.- 3rd edition/ Steve Weinberg: under the sponsorship of IRE/ 1996., p.66-67:

- խաբված մարդկանց վրա երկարաժամկետ եւ կարճաժամկետ հետեւանքները,
- գործողությունների շարժառիթները,
- ինչպե՞ս է կեղծիքը զուգակցվում իրենց լրագրողական առաքելության հետ,
- գործողության իրավական հետեւանքները[43]:

*«Էյ-բի-սի Նյուզ» հեռուստաընկերության եւ «Ֆուդ Լայն» սուպերմարկետների շղթայի գործը բավականին հայտնի է տեղեկություն ստանալու նպատակով լրագրողների կիրառած կեղծիքներին առնչվող որոշ խնդիրների առումով:*

*Այս սուպերմարկետի հակասանիտարական վիճակը հետաքննելու նպատակով «Էյ-բի-սի Նյուզ»-ի երկու լրագրող 1992 թ. գարնանը կարճ ժամկետով աշխատեցին Հյուսիսային եւ Հարավային Կարոլինայում գտնվող այս փիրմային պատկանող մի քանի սուպերմարկետներում: Թաքնված տեսախցիկներով նկարեցին, թե ինչպես են առնետներն ուտում պանիրը, հոտած միսը եւ հավը: «Էյ-բի-սի Նյուզ»-ի ուղիղ եթերում նյութը հեռարձակվելուց հետո «Ֆուդ Լայն»-ը բողոքեց, որ իր գործարար համբավը լրջորեն ոտնահարվել է, եւ ընկերությունը կորցրել է միլիարդավոր դոլարներ: Այդուհանդերձ, «Ֆուդ Լայն»-ը չդիմեց դատարան զրպարտության մեղադրանքով, որտեղ ճշմարտությունը բավարար պաշտպանություն կարող էր լինել լրագրողների համար: Փոխարենը, «Ֆուդ Լայն»-ը դատի տվեց կեղծիքի եւ ուրիշի ունեցվածքի նկատմամբ ոտնձգություն անելու հիմքերով՝ փորձելով հիմնավորել, որ «Էյ-բի-սի Նյուզ»-ի աշխատակիցները խանութում իրենց աշխատանքային պարտականությունները կատարելու փոխարեն աշխատանքի ժամերը ծախսել են իրենց լրագրողական գործը կատարելու վրա:*

*Դատարանը որոշեց բավարարել «Ֆուդ Լայն»-ի հայցը եւ հեռուստաընկերությանը տուգանել 5.5 միլիոն դոլար: 1997 թվականի օգոստոսին Վերաքննիչ դատարանը նվազեցրեց տուգանքը մինչեւ 335,000 դոլար:*

43 Ս. Բիլման, Միջազգային հետաքննական լրագրություն, «Հետաքննական լրագրության բաղկացուցիչ տարրեր» դասընթացի նյութերից, 2004 թ., Վաշինգտոն:

Այս օրինակը մի քանի կարեւոր հարց է առաջադրում. լրագրողի համար երբեւէ ընդունելի՞ է ստել՝ ճշմարտությունը բացահայտելու նպատակով: Կամ՝ կարո՞ղ է արդարացվել ազնվության սկզբունքի ոտնահարումը լրագրության հիմքը կազմող մեկ այլ սկզբունք պահպանելու նպատակով, որն է՝ կարեւոր խնդիրների մասին հասարակությանն էական, ճշգրիտ եւ բազմակողմանի տեղեկատվությամբ ապահովելը:

Սա լրագրության վիճելի թեմաներից մեկն է: Տեսաբաններից ու լրագրողներից շատերն են համոզված, որ ճշմարտությունը բացահայտելու համար արժե դիմել կեղծիքի, չասել, որ լրագրող ես:

*«Հետքի» երկու լրագրողներ տարիներ առաջ իրականությունն իմանալու համար որոշեցին ընդունվել աշխատանքի[44]: Վճարելով 25 դոլար՝ լրագրողները դարձան «Vision» ընկերության դիստրիբյուտորներ: Լրագրողները կարողացան պարզել, որ «Vision» ընկերության՝ Հայաստան ներկրվող ողջ արտադրանքը՝ սննդային հավելումները, իրացվում են ստվերում: Իսկ ներմուծվող մեկ տասնյակից ավել անուն սննդային հավելումներ ընդհանրապես գրանցված չեն դեղգործակալությունում: Լրագրողները Մաքսային ծառայությունից պարզել էին 2000, 2001 թվականներին եւ 2002 թվականի առաջին եռամսյակում հանրապետություն ներմուծված սննդային հավելումների քանակը: Դրանք աննախադեպ աճ էին ունեցել. 2000 թվականին այն կազմել էր 99 հազար 384 կգ, 2001-ին՝ 172 հազար 36 կգ, իսկ 2002 թվականի առաջին եռամսյակում՝ 8 հազար 236 կգ: Այս հավելումները հիմնականում բերվում էին երեք երկրներից՝ Ռուսաստանից, Գերմանիայից եւ Իտալիայից: Իսկ ովքե՞ր են ներմուծում Հայաստան, եւ ամենակարեւորը՝ որտե՞ղ են վաճառվում դրանք, անհայտ էր: Լրագրողները պարզել էին նաեւ, որ Հայաստան ներկրվող սննդային հավելումների զգալի մասը ոչ միայն գրանցված չէ դեղգործակալությունում, այլեւ չի անցել համապատասխան լաբորատոր ստուգումներ: Հետեւաբար, անհայտ է դրանց բաղադրությունը:*

*Այսպիսով, երկամսյա հետաքննության ընթացքում Երեւանում լրագրողները հայտնաբերեցին «Vision»-ի կամ դրա անվան տակ գործող տասնյակ գրասենյակներ: Հարյուրավոր մարդիկ ընդգրկված են մի բիզնեսում, որը ղեկավարվում է հայտնի մարդկանց կողմից:*

---

44 Աշխատանք փնտրելու ճանապարհին, 20 հունիս, 2002 թ., www.hetq.am:

Կարո՞ղ էին այդքան մանրուքներ իմանալ լրագրողները, եթե աշխատանքի չանցնեին այդ կազմակերպությունում, չմասնակցեին դասընթացներին, դժվար է ասել: Գուցե շատ ավելի երկար ժամանակում նրանք իմանային որոշ բաներ, բայց միանշանակ է, որ այս ճանապարհով նրանք հասել են առավելագույնին:

Շատ կարեւոր է նյութի մեջ սխալներ թույլ չտալը: Դրա համար ստուգեք բոլոր փաստերը, թվերը, անուններն ու ազգանունները, պաշտոնները: Որովհետեւ ամենաչնչին սխալը կարող է անվստահության պատճառ դառնալ:

*2007 թ. ես հետաքննություն էի կատարել այդ ժամանակ Բնապահպանության նախարար Վարդան Այվազյանի բիզնեսի մասին եւ բացահայտել էի պաշտոնեական դիրքի չարաշահման եւ կոռուպցիայի տասնյակ փաստեր[45]: Մասնավորապես հրապարակել էինք, թե իր հարազատներից ում անուններով է ձեռք բերել Հայաստանի բազմաթիվ հանքերի ուսումնասիրման եւ շահագործման լիցենզիաները: Մենք ներկայացրել էինք ընկերությունների շարքը եւ դրանցից մեկում ընկերության հիմնադիրների մեջ շփոթել էինք նախարարի որդու եւ եղբոր անուններով հիմնադրված ընկերությունները: «Ես այդ անունով եղբայր չունեմ»,- ասաց նախարարը իմ հրապարակումից հետո հեռուստալրագրողներից մեկի տված հարցին ի պատասխան: Այս վրիպումը պատրվակ դարձավ, որ նախարարը խուսափի հրապարակված փաստերին ու առաջադրված հարցերին պատասխանելուց եւ տպավորություն ստեղծի, թե այդ հրապարակման մեջ եղած փաստերը սխալ են:*

45 Վարդան Այվազյանի բիզնես նախագիծը, Էդիկ Բաղդասարյան, 26 մարտ, 2007թ. /http://old.hetq.am/arm/economy/237/:

# ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՒ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐ

Դժվար է հիշել մի հետաքննություն, որտեղ չես օգտվում փաստաթղթերից: Ընդհանրապես փաստաթղթերն այն աղբյուրներն են, որոնց կարող ես հղում կատարել: Հետաքննության ընթացքում, այդ իսկ պատճառով, ձգտում ես հնարավորինս շատ փաստաթղթեր ձեռք բերել: Մարդիկ փաստաթղթերին ավելի շատ են վստահում, հատկապես եթե դրանց վրա կա կնիք, ստորագրություն: Այդպես է, քանի որ դրանց կեղծումը քրեական պատասխանատվություն է նախատեսում: Չնայած՝ սա էլ երաշխիք չի կարելի համարել, քանի որ մեր աշխատանքի ընթացքում եղել են դեպքեր, երբ փաստաթղթերը կեղծվել են, իսկ ավելի հաճախ հանդիպել են փաստաթղթեր, որոնցում եղած տեղեկություններն էին կեղծ: Ընդ որում՝ սխալ կամ կեղծ տեղեկություններ լրագրողներին կարող են տրամադրել նաեւ գերատեսչությունները՝ ի պատասխան տեղեկատվություն ստանալու հարցումների: Ահա նման մի օրինակ մեր սեփական փորձից:

2008 թ. «Հետքի» մի հետաքննությամբ բացահայտվել էր, որ Հայաստանից արտահանվում է բանան[46]: Ընդ որում՝ արտահանվում է այնպիսի երկրներ, որոնք հայտնի են իբրեւ «բանանի երկրներ»: Այդ երկրներից մեկը Բահամյան կղզիներն են: Այս հետաքննությունը մեծ արձագանք ունեցավ. գործում ներքաշված էին պետական բարձրաստիճան պաշտոնյաներ[47]: Մեր տրամադրության տակ էին երկու տարբեր գերատեսչությունների՝ Մաքսային կոմիտեի եւ Վիճակագրության պետական ծառայության տեղեկանքները: Երկու տարբեր գերատեսչությունները Հայաստան բանանի ներկրումների եւ Հայաստանից բանանի արտահանումների մասին միեւնույն հարցերին պատասխանելով՝ ներկայացրել էին տարբեր եւ իրար հակասող տվյալներ: Մաքսային ծառայությանն արված մեր նոր հարցումը, ինչպես երեւում էր տրված պատասխանից, ավելի էր խճճել այդ գերատեսչության պաշտոնյաներին, եւ նրանք տվել էին ավելի անհեթեթ պատասխան, քան առաջին դեպքում: Մենք գնացինք տեղեկությունները ճշտելու այլ ճանապարհով: Որոշեցինք այդ երկրներում պարզել՝ Հայաստանից

46 Էդիկ Բաղդասարյան, Բանան արտահանող Հայաստանը, 21 հուլիս, 2008, www.hetq.am:
47 Էդիկ Բաղդասարյան, ԴԱՀԿ-ն հերքում է անհերքելին, 29 հոկտեմբեր, 2008, www.hetq.am:

իրենց երկիր բանան ներկրվե՞լ է, թե՞ ոչ: Եւ ինչքան էլ փարօրինակ թվա, մեզ դա հաջողվեց անել Համաշխարհային բանկի (ոչ Հայաստանի) մի բարձրաստիճան աշխատակցի միջոցով: Իսկ ինչպե՞ս դա հաջողվեց անել: Ծանոթ մի փնտեսագետ աշխատում է միջազգային ֆինանսական կառույցներից մեկում: Նա գտավ Բահամյան կղզիների տնտեսությամբ զբաղվող աշխատակցին եւ նրա տվյալներն ուղարկեց ինձ: Բայց Համաշխարհային բանկում հենց այնպես լրագրողի հարցին չեն պատասխանում: Պետք է նամակ գրել բանկի մամուլի բաժին եւ հիմնավորել տեղեկատվության հարցումը: (Տարիներ առաջ ես փորձել էի Համաշխարհային բանկից տեղեկություններ ստանալ մի մասնավոր ընկերության նրա տրամադրած վարկի մասին: Բանկից այնքան հարցեր ուղղվեցին, մինչեւ անգամ՝ ինչու՞ եմ նման հոդված գրում, որ ես դադարեցրի ուսումնասիրությունս եւ այդ հետաքննությունը դրեցի մի կողմ: Հուսով եմ՝ մի օր կվերադառնամ դրան): Միջազգային ֆինանսական կառույցներից մեկում աշխատող այդ ծանոթս առաջարկեց շրջանցել ընդունված կարգը եւ միանգամից գրել Միջազգային ֆինանսական այդ կառույցի՝ Բահամյան կղզիների տնտեսությամբ զբաղվող աշխատակցին, թեեւ պատասխան ստանալու հավանականությունը հավասար էր զրոյի: Մենք միասին ձեւակերպեցինք նամակը, որտեղ շեշտը դրեցինք իմ՝ ոչ մասնագետ լինելու հանգամանքի, ֆինանսներից չհասկանալու, այդ թվերից գլուխ չհանելու վրա, ուստի նրանից օգնություն եմ խնդրում՝ պարզելու այդ տեղեկությունը: Ընդ որում՝ չնշեցի, որ ես լրագրողական հետաքննություն եմ անցկացնում, այլ պարզապես ասացի, որ Հայաստանից ներկրումների ու արտահանումների մասին հոդված եմ գրում: Այստեղ ուզում եմ մի խորհուրդ տալ: Երբեք մի՛ ասեք, որ դուք հետաքննություն եք անում, ասեք՝ հոդված եք գրում կամ ուսումնասիրում եք այսինչ հարցը: «Հետաքննություն», «հետաքննող» բառերը մարդկանց վախեցնում են, ենթագիտակցորեն նրանք դա կապում են իրավապահների հետ: Մարդիկ այդ բառերից ավելի զգույշ են դառնում, այնպես որ, երբեք պետք չէ շեշտել «հետաքննություն» բառը:

Մեկ շաբաթ սպասեցի, լուր չկար, ես հույսս կորցրել էի արդեն, բայց չգիտես ինչու՝ որոշեցի հենց այնպես մի հատ էլ նամակ գրել՝ հիշեցնելով իմ խնդրանքի մասին: Հաջորդ օրը ստանում եմ նամակիս պատասխանը՝ Հայաստանից Բահամյան կղզիներ ոչ միայն բանան, այլեւ որեւէ բան չի ներմուծվել: Ահա այսպես. եթե դու համառ ես, եթե ականջ ես դնում փորձագետի խորհուրդներին (եթե նամակն այդքան պրոֆեսիոնալ գրված չլիներ, ճիշտ տերմիններով ձեւակերպված, գուցե պատասխան չլիներ), կհասնես արդյունքի: Համաշխարհային

բանկից ստացած պաշտոնական հավաստիացումից հետո ես հրապարակեցի իմ ունեցած փաստերը, որոնք մեծ արձագանք ունեցան:

Հրապարակումից որոշ ժամանակ անց ՀՀ գլխավոր դատախազը լրագրողների եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպեց՝ քննարկելու կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ հարցեր: Հանդիպման ժամանակ իմ խոսքում ասացի, որ դատախազությունը կոռուպցիայի դեմ պայքարում իրականում փոքր գործեր է բացահայտում, իսկ բոլոր մեծ գործերը փակվում են: Եվ որպես օրինակ բերեցի «Հետքի» կատարած լրագրողական հետաքննության արդյունքները, ըստ որի՝ Հայաստանից «Քեթրին» ՍՊԸ-ն մի քանի հազար տոննա բանան է արտահանել Բահամյան կղզիներ եւ Վրաստան: Այս գործը փակվել է, քանի որ ընկերության ետեւում կանգնած էր Ազգային անվտանգության ծառայության պետի ֆինանսական գծով նախկին տեղակալ Գրիշա Հարությունյանը: Այս օրինակը բացառիկ չէ, բոլոր մեծ գործերը, որոնց մասին բացահայտումներ են անում լրագրողները, իրավապահները դիտավորյալ «չեն նկատում», որովհետեւ դրանց հեղինակները բարձրաստիճան պաշտոնյաներ են: Դատախազի հետ հանդիպմանը անմիջապես հաջորդեց երկրորդ հոդվածը[48]:

Հանդիպմանը ներկա լրագրողներն այդ հանդիպումից վերցրին հենց «բանանի արտահանման» մասին փաստերը եւ այդ թեման քննարկեցին մի քանի օր շարունակ: Պետական եկամուտների մաքսային ծառայության հետաքննության եւ իրավաբանական վարչության պետ Գեւորգ Ներսիսյանը «սփիպված» բացեց քարտերը՝ «Քեթրին գրուպ» ընկերությունը կեղծել է փաստաթղթերը. ոչ մի արտահանում էլ չի եղել: Ահա այս ճանապարհով միայն կարողացանք իմանալ ճշմարտությունը, այսինքն՝ լրագրողները կարողացան բացահայտել պաշտոնյաների կատարած չարաշահումները: Ընդ որում չարաշահումներ կատարողները բարձրաստիճան պաշտոնյաներ էին՝ Ազգային անվտանգության ծառայության պետի տեղակալը եւ Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության պետը: Այս երկու պաշտոնյաներն էին «Քեթրին գրուպ» ընկերության բաժնետերը: Վերջինս այսօր էլ շարունակում է մնալ իր պաշտոնին: Մեր հրապարակումներից հետո այս պաշտոնյայի ղեկավարած ծառայության մամլո քարտուղարը հաղորդագրություն էր փարածել, որը հենց նույն օրը «Հետքը» հերքեց:[49]

48 Էդիկ Բաղդասարյան, Բանանային պատմություն բանանային Հայաստանում, 6 հոկտեմբեր, 2008, www.hetq.am:
49 Էդիկ Բաղդասարյան, ԴԱՀԿ-ն հերքում է անհերքելին, 29 հոկտեմբեր, 2008, www.hetq.am:




Իսկ առաջին պաշտոնյային՝ Ազգային անվտանգության ծառայության նախկին պետի տեղակալ Գրիշա Հարությունյանի բիզնեսն այսօր էլ շարունակում է ծաղկել. նա եւ՛ սննդամթերք ներկրող է, եւ՛ էլիտար շենքեր է կառուցում, եւ՛ փաքսի ծառայություն ունի, ճանապարհների կառուցման մրցույթներ է շահում... այս շարքը կարելի է շարունակել:

Բանանի «արփահանման» թեման ամիսներ շարունակ քննարկվում էր մամուլում, մենք նույնիսկ վարչապետի վերահսկողական ծառայությանն առաջարկեցինք ուսումնասիրել այս նյութը, բայց՝ անօգուտ. այդ պաշտոնյաների դիրքերը շատ ամուր են: Միակ հեփեւանքն այն էր, որ Հայաստան ներմուծվող բանանը, որի իրացումը ուղիղ կիսով չափ ստվերում էր (մեր ուսումնասիրած երեք փարիներին փարեկան 8-10 հազար փոննա բանան Հայաստանում իրացվում էր, բայց ոչ մի տեղ չէր երեւում), մտավ օրինական հարկային դաշտ, եւ ընկերությունն իր հարկային պարփավորություններն այդ մասով կափարեց: Սա, իհարկե, նույնպես արդյունք է, որին հասանք մեր հեփաքննության շնորհիվ:

Ինչպես արդեն նշեցի, այդ հեփաքննությունը եւս մեկ անգամ փասփեց, որ չի կարելի վսփահել գերափեսչական փասփաթղթերին եւ դրանցում առկա փեղեկություններին: Եթե արփահանման եւ ներմուծման թվերը կեղծ են, նշանակում է կառավարության վերլուծություններն երկրի փնփեսական ցուցանիշների վերաբերյալ նույնպես սխալ են, որովհեփեւ դրանք հենվում են այդ փվյալների վրա: Լիարժեք հավասփի չեն կարող լինել անգամ պաշփոնական գրություններն ու վերլուծությունները: Օգփվեք փասփաթղթերից, բայց դրանք բացարձակ ճշմարփություն մի՛ համարեք, սփուգեք նաեւ դրանք, որովհեփեւ դրանց վրա հիմնված եզրահանգումները, հնարավոր է, ճշմարփությունից շափ հեռու լինեն:

*2002 թ.-ին մի հեփաքննության ժամանակ պարզել էինք, որ կեղծիքներ կան նաեւ պեփռեգիսփրում առկա փասփաթղթերում[50]:*

---

50 Էդիկ Բաղդասարյան, Իտալացիների արկածները Հայաստանում, 08.11.2002, www.hetq.am:

*Իտալացի գործարար Մարկո Լինոնելլոյի կինը 2002-ին դիմել էր «Հետքին»՝ հայտնելով, որ մի հայ պաշտոնյա փորձել է Հայաստանում ամուսնու կատարած ներդրումներին, եւ իր վարձած փաստաբանը, որին վճարել են 25 հազար դոլար, աշխատում է այդ պաշտոնյայի օգտին*[51]*: Նրա նոր փաստաբանը մեզ տրամադրեց փաստաթղթերի մի տրցակ, եւ մենք սկսեցինք ուսումնասիրել փաստերը: Մաքսային ծառայության ներկայացրած տեղեկանքի մեջ գտանք քրեորեն պատժելի փաստեր. ներկրվող ապրանքի արժեքը թաքցվել էր մի քանի անգամ*[52]*:*

Այդուհանդերձ, շարունակեք փնտրել փաստաթղթեր: Եթե պաշտոնյաները հրաժարվում են տրամադրել դրանք, դիմեք գրավոր, նրանց ուղղեք հարցեր դրանց վերաբերյալ, թող այդ հարցերին պատասխանեն:

Երբ կանանց թրաֆիկինգի հետաքննությամբ էինք զբաղվում, մեր թիմը սկսեց դատարանների արխիվներում պատճենահանել գրեթե բոլոր դատական գործերից մեզ անհրաժեշտ հատվածները՝ դրանք հարցաքննությունների արձանագրություններ էին, վկայություններ, ցուցմունքներ, անձնագրերի, լուսանկարների պատճեններ: Մի գործի ուսումնասիրության ժամանակ, համադրելով հարցաքննությունները, պարզեցինք, որ Ինտերպոլով հետախուզվող կավատը մեր սահմանն անցել է, ու սահմանապահները նրան չեն «նկատել»: Հետագայում կարողացանք այն համադրել նույնատիպ եւս մեկ տեղեկատվության հետ եւ կատարել եզրահանգում, որ սահմանապահների հետ նրանք գործարքի մեջ են մտնում: Այս նյութերն օգնեցին հետագայում մեր մի հետաքննությանը[53], որի արդյունքում, ճիշտ է, չպատժվեցին հիմնական մեղավոր բարձրաստիճան պաշտոնյաները, սակայն ծառայողական քննություններ կատարվեցին երկու գերատեսչություններում՝ Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներից մեկում եւ Ազգային անվտանգության սահմանապահ զորքերում: Աշխատանքից ազատվեցին սահմանապահ ծառայության

51 Էդիկ Բաղդասարյան, Լենա Նազարյան, Իտալացիների արկածները Հայաստանում, 01.10.2002, www.hetq.am:
52 Էդիկ Բաղդասարյան, Իտալացիների արկածները Հայաստանում, 04.11.2002, www.hetq.am:
53 Էդիկ Բաղդասարյան, Թրաֆիկինգի հոդվածով դատապարտվածին օգնել են փախչել բանտից, 13 նոյեմբեր, 2006, www.hetq.am:

աշխատակիցներ: Հենց փաստաթղթերի ուսումնասիրությունը հանգեցրեց այս հոդվածին, որը, կարծում եմ, լավ օրինակ է:

### *Թրաֆիկինգի հոդվածով դատապարտվածին օգնել են փախչել բանտից*




*2006 թ.-ի փետրվարին Արդարադատության նախարարության եւ դատախազության համապեղ ջանքերով «Աբովյան» քրեակատարողական հիմնարկից (ՔՀԿ) «փախավ» թրաֆիկինգի հոդվածով դատապարտված Անուշ Զախարյանցը: Հայաստանը լքելուն Ա. Զախարյանցին օգնեցին սահմանապահները: Թե որքան փող է նա տվել սահմանը հատելու համար, էական չէ: Էականն այն է, որ մեր սահմանը փողով կարող է հատել նույնիսկ ժամկետանց անձնագրով դատապարտյալը:*

*Անուշի փախուստի գործողությունը բաղկացած էր երեք փուլից:*

*1-ին փուլի խնդիրն էր՝ Անուշին հանել ազատազրկման վայրից: Դա իրականացրել է Արդարադատության նախարարությունը:*

*2-րդ փուլի խնդիրն էր՝ դատախազությունից վերցնել նրա անձնագիրը: Իրականացրել են դատախազությունը եւ Արդարադատության նախարարությունը:*

*3-րդ փուլի խնդիրը՝ հատել ՀՀ սահմանը: Սա ապահովել է Ազգային անվտանգության ծառայությունը:*

*Յուրաքանչյուր փուլում այս գերատեսչություններից ամեն մեկը կատարել է իրենից կախված ամեն ինչ, որպեսզի Անուշը բարեհաջող լքի Հայաստանը:*

*Միմյանց հետ համագործակցե՞լ են, արդյոք, այս կառույցները, դժվար է ասել, բայց այս հարցը պարզելու համար Հայաստանում այլեւս չկա որեւէ իրավասու մարմին: Ինչպե՞ս կարող են իրենք իրենց դեմ գործ հարուցել Արդարադատությ-*

*յան նախարարությունը, դատախազությունը կամ Ազգային անվտանգության ծառայությունը, ում ենթակայության տակ են սահմանապահ ուժերը:*

***Տեղեկանք***

*2004 թ. մայիսի 28-ին Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ թրաֆիկինգի (մարդկանց առեւտուր) հոդվածով (ՀՀ Քր.օր.132 հոդված) 4 տարի 6 ամսով ազատազրկվեց Ուզբեկստանի քաղաքացի Անուշ Զախարյանցը: Նա Ուզբեկստանից 9 կանանց բերել էր Հայաստան եւ այստեղ նրանց ենթարկել սեռական շահագործման: Անուշն այդ կանանցից վերցրել էր անձնագրերը, նրանց ստիպել իրենց մարմինները վաճառելով փող աշխատել ու տալ իրեն: Դատարանում այս ամենն ապացուցվել է, Անուշը դատապարտվել է, իսկ զոհերը վերադարձել են իրենց հայրենիք՝ Ուզբեկստան:*

***Փուլ առաջին***
***Քրեակատարողական հիմնարկը դատապարտյալին ազատ է արձակում***

*Անուշն իր պատիժը կրում էր Արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում: Այս տարվա փետրվարին Անուշը հիմնարկից դուրս եկավ եւ այլեւս չվերադարձավ:*

*Արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանին ուղղված մեր հարցմանը պատասխանել է Քրեակատարողական վարչության պետ Աշոտ Մարտիրոսյանը.*

*«...ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 80 հոդվածի համաձայն՝ դատապարտյալ Ա. Զախարյանցին սոցիալական վերականգնման նպատակով «Աբովյան» ՔՀԿ-ի պետի որոշմամբ 01.02.06թ. մինչեւ 05.02.06թ. տրամադրվել է կարճաժամկետ մեկնում, սակայն դատապարտյալը նշված ժամկետում չի վերադարձել պատիժը կրելու վայր:*

*Նշված փաստի առթիվ «Աբովյան» ՔՀԿ-ի վարչակազմը դիմել է Կոտայքի մարզի դատախազություն, որը դատապարտյալ Ա. Զախարյանցի նկատմամբ հարուցել է քրեական գործ»:*

*Առաջին փուլում Քրեակատարողական հիմնարկը պատրաստեց համապատասխան փաստաթղթերը Ա. Զախարյանցին կարճաժամկետ մեկնում տալու համար: Քրեակատարողական վարչության մեր աղբյուրը հայտնեց, որ կնոջը մեկնում տալու հրահանգը տվել է Քրեակատարողական վարչության նախկին պետը՝ Սամվել Հովհաննիսյանը (չորս ամիս առաջ նրան ազատել են աշխատանքից, բայց, իհարկե, ոչ Անուշ Զախարյանցի փախուստը կազմակերպելու համար):*

*«2006 թ. հունվարի 31-ին դատապարտյալ Ա. Զախարյանցը դիմել է հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի պետ Հ. Մուրադյանին իր առողջական խնդիրների վերաբերյալ: Վերջինս խորհուրդ է տվել կատարել նեղ մասնագիտական բժշկական հետազոտում, որի մասին տեղեկանքը կցվել է դատապարտյալի անձնական գործին»,- Արդարադատության նախարարության մամլո քարտուղար Անահիտ Ռսկանյանի օգնությամբ մեր հարցին այսպիսի պարզաբանում է տվել «Աբովյան» ՔՀԿ-ի պետ Արսեն Աֆրիկյանը:*

*Դրանից հետո Ա. Զախարյանցին հիմնարկից հնգօրյա կարճաժամկետ մեկնում է տրվել: «Աբովյան» ՔՀԿ-ում Ա. Զախարյանցի անձնական գործում անձնագիրը բացակայում էր: Օրենքով այն դատարանի վճռի հետ պետք է ուղարկվեր Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկ:*

*«Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը մեր գրավոր հարցմանը պատասխանել է, որ քրեական գործում անձնագիրը նույնպես բացակայում է, հետեւաբար կարճաժամկետ մեկնում տրամադրելու ժամանակ դատապարտյալը անձնագիր չի ունեցել»,- հայտնել է Արսեն Աֆրիկյանը:*

*Ա. Աֆրիկյանը հայտնել է նաեւ, որ իրենց որոնողական աշխատանքները որեւէ արդյունք չեն տվել, եւ իրենք փետրվարի 28-ին դիմել են Կոտայքի մարզի դատախազություն՝ Ա. Զախարյանցի նկատմամբ հետախուզում հայտարարելու խնդրանքով: Անուշ Զախարյանցը ետ՝ հիմնարկ, պետք է վերադառնար փետրվարի 6-ին: «Աբովյան» ՔՀԿ-ի ղեկավարությունը 22 օր սպասել ու նոր է միայն դատախազությանը հայտնել Անուշի չվերադառնալու մասին: Ամենայն հավանականությամբ, սա էլ Սամվել Հովհաննիսյանի նախաձեռնութ-*

*յունն էր: Նա, ըստ երեւույթին, սպասում էր, որ Անուշը հասնի Ուզբեկստան եւ լուր տա իրեն այդ մասին:*

### ***Փուլ երկրորդ***
### ***Սամվել Հովհաննիսյանը անձնագիրը հանձնում է դատապարտյալին***

*Անուշը «Աբովյան» քրեակատարողական հիմնարկից դուրս է եկել առանց անձնագրի: Դեռեւս 2004 թ. հունվարին Անուշ Զախարյանցի անձնագիրը գտնվում էր դատախազությունում՝ քրեական գործի մեջ: Գործն ուղարկվել է դատարան առանց անձնագրի, ինչն օրենքի խախտում է: Անձնագիրը հանվել է գործից եւ պահվել դատախազությունում: Գլխավոր դատախազից փորձեցինք պարզել՝ անձնագիրը վերադարձվե՞լ է Անուշ Զախարյանցին, թե՞ առայսօր պահվում է դատախազությունում:*

*ՀՀ գլխավոր դատախազության մամլո քարտուղար Սոնա Տռուզյանը հայտնեց.*

*« ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության նախկին դեկավարի պաշտոնական հայտարարությունը հիմք ընդունելով՝ 2006 թ. հունվարի 12-ին քննիչը համապատասխան ստացականով Ա. Զախարյանցին է հանձնել անձնագիրը»:*

*Պաշտոնական հայտարարությունը, ինչպես պարզաբանեց մամլո քարտուղարը, բանավոր դիմելն է, ուրեմն Քրեակատարողական վարչության նախկին պետ Սամվել Հովհաննիսյանը դատախազության քննիչ Արիստակես Երեմյանից վերցրել է անձնագիրը: Սակայն անձնագիրը մուտք չի գործել Քրեակատարողական վարչություն, այն մնացել է Սամվել Հովհաննիսյանի «գրպանում» եւ փետրվարի սկզբին հանձնվել Անուշ Զախարյանցին, երբ վերջինս ստացել էր կարճաժամկետ մեկնում եւ դուրս եկել կալանավայրից: Թե ինչ վարձատրություն է ստացել Սամվել Հովհաննիսյանն անձնագրի դիմաց, հայտնի չէ:*

*Անձնագիրն ստանալուն պես Անուշ Զախարյանցը լքել է Հայաստանը:*

***Փուլ երրորդ***
***Հայ սահմանապահները ժամկետանց անձնագրով Անուշին ճանապարհել են Վրաստան***

*«Հետք»-ը երկու անգամ նամակով ՀՀ ազգային անվտանգության ծառայության պետ Գորիկ Հակոբյանից փորձել է պարզել՝ Անուշ Զախարյանցը հատե՞լ է, արդյոք, Հայաստանի սահմանը, եթե այո, ապա ինչպե՞ս եւ ի՞նչ անձնագրով: Պատասխան այդպես էլ չի ստացվել:*

*Անուշ Զախարյանցի՝ Ուզբեկստանի քաղաքացու անձնագրի ժամկետը վերջացել էր 2005 թ., իսկ դա նշանակում էր, որ նա չէր կարող հատել Հայաստանի սահմանը:*

*Սակայն դա չի խանգարել նրան կաշառել հայ սահմանապահներին եւ հատել սահմանը:*

*Սակայն սահմանի հակառակ կողմում վրացի սահմանապահները, տեսնելով անձնագրի ժամկետանց լինելը, Անուշ Զախարյանցին որոշ ժամանակ պահում են իրենց մոտ: Ա. Զախարյանցը Վրաստանի Ներքին գործերի նախարարության սահմանապահների դեպարտամենտի աշխատակիցներից քաղաքական ապաստան է խնդրել: Նրա դիմումն արձանագրվել է Վրաստանի փախստականների հարցերով նախարարությունում: Սահմանապահները Անուշին հանձնել են ՆԳՆ սահմանադրական անվտանգության պահպանության դեպարտամենտի աշխատակիցներին:*

*Վրաստանի իրավապահ մարմինների մեր աղբյուրը հայտնեց, որ Անուշ Զախարյանցը վրացի իրավապահների հետ գործարքի մեջ է մտել եւ տեղեկություններ է հայտնել մարդկանց վաճառքով զբաղվող վրացիների մասին, փոխարենը նրան հնարավորություն է տրվել դիմել Ուզբեկստանի դեսպանատուն եւ ստանալ վերադարձի վկայական: Թբիլիսիում Անուշին սահմանադրական անվտանգության պահպանության դեպարտամենտի աշխատակիցները, չգիտես ինչու, տեղավորել են ընտանեկան բռնությունների զոհ դարձած կանանցով զբաղվող մի հասարակական կազմակերպությունում: Մեկ շաբաթ անց Անուշը մեկնել է Ուզբեկստան:*

*Դատապարտյալ Անուշ Զախարյանցի փախուստը կազմակերպած կառույցների ղեկավարներին ստիպված եմ մեկ անգամ էլ հրապարակավ տալ այս հարցերը: Արդարադատութ-*

*յան նախարար Դավիթ Հարությունյանին նորից ուղղում ենք մեկ տարի առաջ տրված հարցը. «Ինչպե՞ս է պատահում, որ թրաֆիկինգի հոդվածով բոլոր ազատազրկվածները վաղաժամկետ ազատ են արձակվում: Ինչո՞ւ են նրա ենթակայության տակ գտնվող կառույցներն այդքան «հոգատար» ազատազրկվածների այս տեսակի նկատմամբ: Ինչո՞ւ են այս անգամ այդքան հոգատար գտնվել եւ կազմակերպել Անուշ Զախարյանցի փախուստը»:*

*Գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանին հարցնում ենք. «Ինչո՞ւ է դատապարտյալ Անուշ Զախարյանցի անձնագիրը երկու տարի շարունակ պահվել Գլխավոր դատախազությունում, ինչո՞ւ եւ ինչպե՞ս է այն տրվել Սամվել Հովհաննիսյանին:*

*Կա՞ն, արդյոք, այլ դատապարտյալների անձնագրեր ՀՀ գլխավոր դատախազությունում»:*

*Ազգային անվտանգության ծառայության պետ Գորիկ Հակոբյանից կցանկանայինք ստանալ հետեւյալ հարցի պատասխանը՝ ինչպե՞ս է պատահել, որ դատապարտյալը ժամկետանց անձնագրով հատել է Հայաստանի սահմանը:*

Երբեմն լրագրողների ձեռքի տակ հայտնվում են փաստաթղթեր, որոնցից գլուխ հանելը դժվար է: Դրանք միայն մասնագետները կարող են բացատրել, պարզաբանել: Այդպես պատահեց մեր մի հետաքննության ընթացքում:

***Դիտավորյալ ժամկետանց էին դարձվել մարդասիրական դեղերը[54]***

*Առողջապահության նախարարության համապատասխան վարչության բարձրաստիճան պաշտոնյան ուներ դեղ ներկրող եւ իրացնող ընկերություն, եւ սեփական ապրանքը իրացնելու համար մարդասիրական դեղերի մի զգալի մասը թողել էր պահեստներում: Մենք բացահայտել էինք, որ դեղերը ժամկետանց էին դարձվել եւ փորձում էինք նաեւ ապացուցել, որ պաշտոնյան դա արել է դիտավորյալ՝ իր ընկերության ներկրած դեղերն իրացնելու համար: Մենք կարողացանք մեծ դժվարությամբ ձեռք բերել նրա ընկերության կողմից վերջին*

54 Էդիկ Բաղդասարյան, Օգնության դեղերը միտումնավոր դարձրել են ժամկետանց, 12.03.2004, www.het.am:

*մեկ տարվա ընթացքում ներկրած դեղերի ցանկը[55]: Արդեն իսկ ունեինք մարդասիրական օգնության համար ներկրված դեղերի ցանկը: Դրանք համեմատելով՝ մենք շատ քիչ նմանություններ գտանք երկու ցուցակներում: Բայց երեւի լրագրողական հոտառությունը հուշեց, որ այդտեղ մի բան այն չէ: Նույն նախարարությունում աշխատող տեղեկատվության իմ աղբյուրին խնդրեցի ինձ ծանոթացնել դեղերի որեւէ մասնագետի հետ, ով կարող է բացատրել, թե որ դեղն ինչ հիվանդությունների եւ ինչ տարիքի մարդկանց համար է: Ինչու՞ գնացինք նման քայլի. որովհետեւ հակառակ դեպքում այդ ցուցակով պետք է մտնեինք դեղատուն եւ մեկ առ մեկ կարդայինք դեղի նշանակությունը: Մինչ աղբյուրս կգտներ մասնագետին, ես մի ծանոթ դեղատան տիրոջ հետ հանդիպեցի եւ այդ ցուցակից շատ դեղերի մասին տեղեկություններ կարողացա ստանալ: Հենց նա ասաց, որ հնարավոր է՝ Միացյալ Նահանգներից ստացված մարդասիրական դեղերն ունենան այլ անվանումներ:*

*Որոշ ժամանակ անց ինֆորմացիայի աղբյուրս տվեց մի դեղագործ գիտնականի տվյալներ: Նա աշխատում էր դեղերի փորձաքննության կենտրոնում: Հենց այս փորձագետի հետ երեք անգամ հանդիպելուց հետո կարողացա պարզել այդ ցուցակում եղած «գաղտնիքները»: Շատ դեղեր ունեին փոխարինողներ, մի մասը՝ այլ անվանումներ: Եվ այդպիսով ունեցա այն դեղերի ցուցակը, որ ներկրել էր այդ պաշտոնյայի ընկերությունը եւ որոնց համարժեքները ժամկետանց էին դարձել պահեստում:*

Այս օրինակները բերեցի՝ ասելու, որ պետք է ունենալ փորձագետների մի խումբ, որոնց հետ կարող եք խորհրդակցել տարբեր հարցերի շուրջ: Դրանք իրավաբաններ են, կենսաբաններ, քիմիկոսներ, բանկային գործի մասնագետներ, գյուղատնտեսներ: Ամենատարբեր ոլորտների մասնագետների հետ զրույցները, նրանցից խորհուրդ հարցնելը, պարզաբանումներ ստանալը անհրաժեշտ է եւ օգտակար: Նրանք, ի դեպ, միշտ նման դեպքերում պատրաստակամ են, լավ են զգում, երբ օգնության համար դիմում եք իրենց: Շատերն այնքան են երբեմն տարվում իրենց բացատրություններով, որ բազմաթիվ օրինակներ են բերում, հիշում են ինչ-որ պատմություններ, որոնք կարող են քեզ հուշել նոր հետաքննությունների թեմաներ:

---

55 Էդիկ Բաղդասարյան, Մարդասիրական դեղերը միտումնավոր դարձրել են ժամկետանց, 31.03.2004, 28.02.2004, www.hetq.am:

Երբեմն մասնագետների պատճառով հնարավոր է անավարտ մնա հետաքննությունը, կամ այդ մասով չկարողանաք որեւէ բան պարզել, ինչից հետաքննությունը մեծապես կտուժի: Ահա մի օրինակ:

*Տարիներ առաջ մենք սկսեցինք մի մեծ հետաքննական ծրագիր՝ պարզելու, թե ի՞նչ բնապահպանական խնդիրներ կան Հրազդանի կիրճում, ինչպե՞ս են զանազան ձեռնարկություններ աղտոտում կիրճը եւ գետի ջուրը: Անհրաժեշտ էր պարզել գետի ջրի աղտոտվածության աստիճանը, այսինքն՝ ջրի բաղադրության մեջ եղած զանազան նյութերի՝ այդ թվում՝ նաեւ քիմիական, պարունակությունը: Դրանք բավականին համոզիչ տվյալներ կարող էին լինել վտանգավորությունը ցույց տալու համար: Լրագրողների չորս հոգանոց թիմի հետ աշխատող կենսաբանը համապատասխան տարաներով գետի տարբեր հատվածներից ջրի նմուշ վերցրեց եւ, ինչպես նախապես պայմանավորվել էինք, դրանք հանձնեցինք փորձագիտական մի կենտրոնի: Սակայն այդ կենտրոնը ամիսներ շարունակ ձգձգելով՝ այդպես էլ մեզ ոչ մի պատասխան չտվեց: Իսկ Հայաստանում գործող բազմաթիվ լաբորատորիաները, որտեղ կարելի էր ջրի անալիզ անել, ասացին, որ պատրաստ են վճարի դիմաց անել անալիզ, սակայն իրենց տված արդյունքները պաշտոնական չեն լինի, այսինքն՝ չենք կարող դրանք օգտագործել՝ հղում անելով տվյալ կենտրոնին: Այդպես էլ չկարողացանք մեր հետաքննության այդ ուղղությունն ապահովել, եւ հոդվածները տպագրվեցին առանց ջրի աղտոտվածության մասին տվյալների:*

## ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Հարցազրույց անցկացնելու անհրաժեշտություն լրագրողը կարող է ունենալ ցանկացած նյութ պատրաստելու ընթացքում: Այդ իսկ պատճառով պետք է իմանալ հարցազրույց անցկացնելու մեթոդը, հնարքները, ընդունված կանոնները:

«Եթե լրագրողները չեն կարողանում ճիշտ ժամանակին ճիշտ հարցեր տալ, նրանք չեն կարող ապահովել ճշմարտացիությունը եւ արդարությունը, ներկայացնել ողջ բովանդակությունը»[56]:

Դրան հասնելու համար լրագրողները հարզացրույցին պետք է պատրաստվեն շատ մանրակրկիտ: Վերջերս մի փաստ արձանագրեցի, որը հիմա շատ եմ հիշատակում մասնագիտական քննարկումների ժամանակ: Առաջատար թերթերից մեկի լրագրողին հանդիպեցի շենքի մոտ, որտեղ մեր գրասենյակն է գտնվում: Այդ շենքում տեղակայված է մամուլի ակումբներից մեկը, որտեղ պարբերաբար ասուլիսներ կամ հարցազրույցներ են անցկացվում քաղաքական գործիչների, պաշտոնյաների հետ: Լրագրողին հարցրի, թե ուր է գնում, ասաց. «Ասուլիսի, գնամ մի հարց տամ, նյութ գրեմ»: Հարցրի, թե ով է ասուլիս տվողը: Ասաց՝ չգիտի, կգնա, կիմանա: Եվ նա այնքան հանգիստ, անտարբեր տոնով ասաց, որ ես զարմացա: Հնարավո՞ր է պատկերացնել. լրագրողը գնում է ասուլիսի մասնակցելու, որոշել է հարց տալ ու հոդված գրել, բայց չգիտի՝ ու՞մ պետք է հարց տա, հետեւաբար նաեւ՝ ի՞նչ հարց: Դժբախտաբար, այսպիսի իրավիճակներ հաճախ են լինում. մասնակցեք ասուլիսներից որեւէ մեկին եւ լսեք լրագրողների հարցերը: Իմաստ չունի զբաղվել լրագրությամբ, եթե դու պատրաստ ես, ընդունակ ես նման ձեւով նյութ պատրաստել: Ամենացավալին այն էր, որ այդ լրագրողը եղել է իմ լավ ուսանողներց մեկը եւ հայտնվել է մի միջավայրում, որտեղ մեկ տարի հետո սկսել է ահա այդպես նյութեր պատրաստել: Այստեղ ավելորդ է արդեն խոսել լրագրողի կողմից ճիշտ հարցեր տալու կամ ճշմարտությունը պարզելու մասին:

Շատ լրագրողների թվում է, թե հարցազրույցն ամենահեշտ լրագրողական ժանրն է, իմ համոզմամբ՝ ամենադժվարն է: Եթե լրագրողը

---

56 Լրագրողներից լրագրողներին /Ձեռնարկ լրագրողների համար/, Բրիտանական խորհուրդ, Երեւան, 2007, էջ 62:

չի կարողանում շփվել մարդկանց հետ, նշանակում է՝ հարցազրույցն էլ չի ստացվի: Այդ իսկ պատճառով պետք է պատրաստված լինել, տիրապետել հարցազրույցի թեմային առնչվող ամբողջ տեղեկատվությանը, հնարավորինս շատ բան իմանալ զրուցակցի մասին:

«Ոչ ոք լրիվ բացասական չէ, նա պետք է որեւէ դրական կողմ էլ ունենա: Հնարավոր է՝ նրա հետ ընդհանուր նախասիրություն կամ այլ հետաքրքրություններ ունենալ, ինչը երբեմն կարող եք օգտագործել ընկերական մթնոլորտ ստեղծելու համար: Միշտ ավելի արդյունավետ է դեմ առ դեմ հանդիպել զրուցակցի հետ եւ «սառույցը կոտրելու» համար հարցազրույցը սկսել լարվածությունը մեղմացնող հարցով, որը նրան կօգնի լիցքաթափվել եւ կնպաստի վստահելի ու անկեղծ մթնոլորտի ստեղծմանը»[57]:

Միշտ ուսանողներիս ասում եմ՝ մեջբերեք ճշգրտորեն: Աղմկահարույց մի սպանության դատավարությունը լուսաբանող երեք լրագրողներ միեւնույն ամբաստանյալի խոսքը մեջբերել էին տարբեր ձեւերով: Ես դատին չէի կարողացել մասնակցել եւ որոշել էի ամբաստանյալի խոսքը վերցնել այլ լրատվամիջոցների հրապարակումներից: Հետո նայեցի ամբաստանյալի խոսքի փեսագրությունը եւ պարզվեց, որ երեք լրագրողներն էլ ճշգրիտ չէին փոխանցել՝ իրենց կողմից ինչ-որ բաներ էին ավելացրել, խմբագրել, հորինել: Հիշեք՝ ձեր միջամտությունը կարող է փոխել միտքը, շեշտադրումը: Այդ լրագրողներից յուրաքանչյուրի կարծիքով՝ ամբաստանյալը հենց այն նկատի ուներ, ինչ իրենք ներկայացրել էին: Բայց ինչպե՞ս նրանք կարող էին համոզված լինել, թե ամբաստանյալը հատկապես ինչ նկատի ուներ այդ բառերը ասելով: Սա պարզապես ազնիվ չէ:

Կա մի ձեւ էլ, որին հաճախ են դիմում լրագրողները: Հարցը տալիս են, եւ դիմացինը պատասխանում է՝ այո կամ ոչ: Մի օրինակ բերեմ հայկական մամուլից.

*Լրագրողը հարցնում է քաղաքական գործչին. «Դուք համաձա՞յն եք, որ Հայաստանի ընդդիմությունը թույլ է, այդ պատճառով էլ իշխանափոխություն չեղավ»: Սրան հետեւում*

57 Լրագրողներից լրագրողներին /Ձեռնարկ լրագրողների համար/, Բրիտանական խորհուրդ, Երեւան, 2007, էջ 62-63:

*է քաղաքական գործչի երկիմաստ հարցն ու պատասխանը. «Ինչ-որ տեղ, այո»: Եվ լրագրողն իր հոդվածում նշում է՝ այսինչ քաղաքական գործիչը հայտարարեց, որ իշխանափոխություն չեղավ ընդդիմության թույլ լինելու պատճառով:*

Յուրաքանչյուր երկխոսություն պետք է փոխանցել այնպես, ինչպես որ կա: Նման դեպքում պետք է գրել հարցն ու պատասխանը, նկարագրել, թե ինչպես այդ հարցին պատասխանեց քաղաքական գործիչը: Ասենք՝ երկմտանքով, դադար տալով, քմծիծաղելով, այսինքն՝ երբեմն իրավիճակը ճշգրիտ ներկայացնելու համար պարտավոր ես նկարագրել մանրուքները, ասենք՝ դեմքի արտահայտությունը, հուզմունքը, ձայնը եւ այլն:

Տեսաբանները հարցազրույցը համարում են հետաքննության ամենակարեւոր եւ գլխավոր մասը եւ երբեմն օգտագործում են «հիմնական հարցազրույց» տերմինը: Մայքլ Բեռլինը հիմնական հարցազրույցի մասին գրում է.

> «Վերջին հարցազրույցն ամենակարեւոր եւ ամենանուրբ գործն է: Դուք արդեն հավաքել եք տեղեկությունները եւ հոդվածը գրելուց առաջ հնարավորություն եք տալիս հետաքննության օբյեկտին արձագանքել ներկայացված փաստերին»[58]:

Ա. Կոնստանտինովն այս հարցազույցն անվանում է «գլխավոր հարցազրույց», առանց որի, նրա կարծիքով, իսկական լրագրողական հետաքննությունը չի կարելի համարել ավարտված: «Գլխավոր հարցազրույցն անհրաժեշտ է ոչ միայն էթիկական նորմերը պահպանելու համար, հնարավոր է, որ ստիպված լինենք բոլորովին այլ շեշտադրումներ անել նյութի մեջ, քանի որ կպարզվեն այնպիսի նրբերանգներ, որոնց մասին դուք անգամ պատկերացում էլ չեք ունեցել: Պարտադիր չէ, եւ նույնիսկ ավելորդ՝ ձեր հետաքննության օբյեկտին առաջարկել ծանոթանալ ողջ նյութի հետ, ավելի լավ է միայն ցույց տալ այն մասը, որն անմիջապես վերաբերում է գործում նրա մասնակցությանը: Եվ դա այն բանի համար, որպեսզի նախքան հոդվածի տպագրությունը նա տեղյակ չլինի ձեր աշխատանքի բոլոր մանրամասներին: Իսկ եթե

58 Джон Уллмен, Журналистские расследования: современные методы и техника, National Press Institute 1999, стр. 20.

օբյեկտը չի ցանկանում զրուցել ձեզ հետ (իսկ դա նրա իրավունքն է), ապա հոդվածի վերջում կարող եք նշել, որ այս կամ այն անձնավորությունը հրաժարվել է մեկնաբանել ներկայացված փաստերը: Հավատացեք, դա միայն կամրապնդի ընթերցողների վստահությունը տպագրված նյութի նկատմամբ»: [59]

Դուք արդեն բացահայտել եք չարաշահումը եւ գնում եք պաշտոնյայի մոտ՝ այդ մասին նրան հայտնելու, նրանից պարզաբանումներ, մեկնաբանություններ ստանալու: Դա կարելի է նմանեցնել այն իրավիճակին, երբ ոստիկանները մեղադրականը ձեռքներին ներկայանում են եւ հայտնում այդ մասին: Ինքը՝ պաշտոնյան, սովորաբար արդեն գիտի, որ դուք հոդված եք պատրաստում: Ուստի, նա էլ է պատրաստված, եւ դուք հիմնականում կռահում եք, թե նա ինչ պատասխան պիտի տա: Տեսաբանների կարծիքով՝ լրագրողները հարցազրույցից առաջ պետք է իմանան իրենց հարցերի պատասխանների հիմնական մասը: Բայց միշտ չէ, որ այդպիսի շահեկան վիճակում եք լինում: Առաջին հայացքից դուք թշնամիներ եք: Դրա համար դուք նախ մտածում եք՝ ինչպե՞ս սկսել խոսակցությունը: Շատ կարեւոր է դրական տրամադրվածություն եւ մթնոլորտ ստեղծել հարցազրույցի համար, այնպես անել, որ պաշտոնյան հնարավորինս վստահի ձեզ: Այդ իսկ պատճառով երբեք մեղադրական տոնով հարցեր մի՛ տվեք, դուք պետք է հիշեք, որ մենամարտի չեք գնացել, չնայած հոգու խորքում մտածում եք, որ դրա համար եք հասնում այդ պաշտոնյայի գրասենյակ: Դուք պետք է տպավորություն ստեղծեք, թե եկել եք պարզապես զրուցելու որոշակի հարցերի շուրջ, ոչ թե մեղադրանք ներկայացնելու: Հենց սրանում է արտահայտվում լրագրողի՝ հարցազրույց անցկացնելու հմտությունը: Յուրաքանչյուր լրագրող ունի հարցազրույց անցկացնելու իր մեթոդը, իր հնարքները: Եւ իսկապես, պետք չէ հետեւել ինչ-որ կանոնների: Դուք այդ հմտությունները ձեռք եք բերում տարիների ընթացքում, եւ չկա ավելի լավ դպրոց, քան աշխատանքային փորձը: Իսկ դա ձեռք է բերվում մարդկանց հետ շփվելով, նրանց մարդկային տեսակները ճանաչելով, զանազանելով:

Ամերիկացի տեսաբան Մայքլ Բեռլինի կարծիքով՝ հետաքննության ընթացքում հարցազրույց վարելու խիստ կանոններ գոյություն չունեն, դրանք իր համար որոշում է լրագրողը:

Բազմաթիվ հայտնի լրագրողներ խոստովանում են, որ իրենք չեն կարողանում հարցազրույցներ անցկացնել: Ամերիկյան հետաքն-

59 А.Константинов, Журналистское расследование: История метода и современная практика/ Под общ. ред. А.Д.Константинова. — СПБ.: Издательский Дом «Нева»; М.: «ОЛМА-ПРЕСС», 2003, стр. 192.

նական թիմերում, որոնցում, որպես կանոն, մի քանի լրագրողներ են ընդգրկված, կան հատուկ հարցազրույց վարող լրագրողներ: Ես ինքս խուսափում եմ պաշտոնյաների հետ հարցազրույցներից: Երբեմն հարցերս գրավոր եմ ներկայացնում, կամ հարցազրույցի է գնում մեր թիմից որեւէ մեկը: Ամենաիդեալական փարբերակն այն է, երբ կարողանում ես համոզել դիմացինին՝ ձայնագրել հարցազրույցը: Բայց պաշտոնյաներ կան, ովքեր վախենում են ոչ միայն ձայնագրիչից, այլեւ լրագրողի նոթափեփրից:

*1999 թ.-ին ես հետաքննում էի «ԱրմենՏելի» վաճառքի գործարքը: Դա անկախ Հայաստանի ամենամեծ գործարքն էր, հավանաբար ամենամեծ կոռուպցիոն գործարքը: Հոդվածները տպագրվեցին «Առավոտ» օրաթերթի երկու համարներում, իսկ այդ գործարքի մասին պատմող հեռուստահաղորդումը, որը պետք է եթեր գնար Ազգային հեռուստատեսության «Սարդոստայն» հաղորդաշարով, նախապես պլանավորված հեռարձակման օրը հանվեց եթերից (Այդ հաղորդումը հետագայում եթեր գնաց «Ա1+» հեռուստաընկերությամբ): Պատճառը հետեւյալն էր. ֆիլմում նշվում էր, որ այդ կոռուպցիոն գործարքի մրցութային հանձնաժողովի նախագահը եղել է Արմեն Դարբինյանը, ով հաղորդման պլանավորված հեռարձակման ժամանակ արդեն Հայաստանի վարչապետն էր: Ես որոշել էի հարցազրույց անցկացնել մի նախարարի հետ, ով կապ ուներ սեփականաշնորհման գործընթացի հետ: Երկար «բանակցելուց» հետո նա համաձայնեց, բայց պայմանով, որ չեմ ձայնագրելու եւ չեմ հրապարակելու մեր հանդիպման մասին: Ես, բնականաբար, համաձայնեցի: Առաջին հանդիպումը տեւեց ուղիղ երեք ժամ: Երբ ես հանեցի ծոցատետրս եւ փորձեցի նշումներ անել, նա խնդրեց ոչինչ չգրել: Այդ ժամանակ ես առաջադրեցի իմ պայմանը. քանի որ խիստ մասնագիտական տվյալներ եւ հասկացություններ կարող են լինել, որոնք հնարավոր է հետո չհիշեմ, անհրաժեշտության դեպքում նորից պետք է հանդիպենք: Նրան այլ բան չէր մնում, քան համաձայնելը: Իհարկե, բավականին դժվար էր հիշել երեք ժամվա խոսակցությունը մի ոլորտի մասին, որը նոր է քեզ համար, թեեւ նախապես պատրաստվել, ուսումնասիրել էի:*

*Որոշ ժամանակ անց ես նորից զանգահարեցի եւ հանդիպում խնդրեցի: Այս անգամ ինձ համար ավելի հեշտ էր,*

*որովհետեւ ես արդեն իր պրամադրած տեղեկությունների պարզաբանումներն էի փորձում ստանալ: Նախարարի հետ դրանից հետո այդ նյութի համար հանդիպեցի եւս մեկ անգամ եւ ստացա իմ բոլոր հարցերի պատասխանները: Բայց իմ ոչ մի հոդվածում չհիշատակեցի նրան՝ հղում էի անում կառավարության անանուն աղբյուրի: Սա ինձ համար լավ փորձառություն էր այն իմաստով, որ շատ լավ պետք է պատրաստվել հարցազրույցից առաջ, քանի որ հնարավոր է նույնիսկ նախարարի հետ հարցազրույց անել առանց ձայնագրելու եւ նշումներ անելու: Նման դեպք դեռ չէր եղել իմ լրագրողական աշխատանքում:*

Հարցազրույցից առաջ պետք է անպայման նախապատրաստվել, գրել ամենակարեւոր հարցերը: Թեեւ պարտադիր չէ հարցազրույցի ժամանակ օգտվել գրառումներից, բայց դա էլ կախված է ստեղծված մթնոլորտից: Բոլոր դեպքերում, պետք չէ անմիջապես սկսել հարցեր տալ:

Երբեք առանց նախնական շփման հարցազրույց մի՛ սկսեք: Դուք պետք է պաշտոնյային նախապատրաստեք խոսելու: Դուք ավելին գիտեք, քան նա պատկերացնում է: Բայց երբեք սկզբից չպետք է ցույց տալ, որ դուք ավելին գիտեք: Նրան հնարավորություն տվեք խոսելու, համբերատար լսեք: Չնայած գիտեք, որ նա ըստ էության չի խոսում, փորձում է մոլորեցնել ձեզ: Դուք աստիճանաբար պետք է նրան «ստիպեք» խոսել ձեզ անհրաժեշտ բաների մասին:

*Տարիներ առաջ ես հետաքննում էի բանտում կատարված մի սպանություն: Այդ դեպքից անցել էին ամիսներ, եւ ոչ ոք դրա մասին արդեն չէր հիշում: Երկու ժամ տեւած հարցազրույցի ընթացքում ես ամենատարբեր հարցեր էի տալիս բանտի պետի տեղակալին: Խոսում էինք ամեն ինչի մասին՝ սննդից, աշխատավարձերից: Սպանության մասին առաջին հարցս եղավ հարցազրույցի քառասուներորդ րոպեին: Եւ դա ուղիղ հարց չէր, հենց այնպես տրված հարց, որը ձեւակերպել էի այսպես. «Բանտերից մեկում սպանություն էր եղել, հիմա չեմ հիշում որ, իսկ ձեզ մոտ բռնություններ լինու՞մ են բանտարկյալների նկատմամբ: Նա ասաց, որ այդ դեպքն իրենց բանտում էր եղել, եւ սկսեց դրա մասին պատմել: Երբ միտքն ավարտեց, ես անմիջապես այլ հարց տվեցի, շեղեցի նրան, եւ նա սկսեց*

*պատասխանել նոր հարցին: Երկրորդ հարցն այդ ապանության մասին թվեցի հարցազրույցի վերջում: Երկու ժամ տեւած նկարահանումից եւ վերցրի հենց այդ կտորները՝ մոտ երեք րոպե: Այդպես մեր հետաքննության հարցերի պատասխաններն էին:*

«Հարցազրույցի անցկացումն արվեստ է, ոչ թե գիտություն, եւ որոշ լրագրողներ այդ արվեստին տիրապետում են ավելի լավ, քան ուրիշները»[60]:

60 Джон Уллмен, Журналистские расследования: современные методы и техника, National Press Institut 1999, стр. 34.

# ՀՈԴՎԱԾԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Հետաքննող լրագրողը հոդվածը սկսում է գրել առաջին օրվանից: Հետաքննության ընթացքում դուք նշումներ եք կատարում, որոնք հետագայում կարող են հոդվածի մաս դառնալ: Ցանկացած նոր տեղեկություն հայթայթելիս գրեք այն: Ամեն գործողությունից, քայլից հետո նշումներ կատարեք, որովհետեւ հնարավոր է հետագայում հոդվածում նկարագրեք հենց այդ քայլերի հաջորդականությունը:

Եւ այսպես, եկել է ամենապատասխանատու պահը՝ պետք է բացահայտածը ներկայացնել ընթերցողին: Դուք ամեն ինչ գիտեք, բոլոր մանրամասները, իսկ հիմա այն պետք է փոխանցեք ընթերցողին:

Բոլոր տեղեկությունները ձեռք եք բերել, արել եք հարցազրույցները, եւ եկել է հիմնական՝ հաշվետվություն տալու փուլը: Ձեր գլխում իսկական խառնաշփոթ է: Դուք մի քանի թղթապանակում ամփոփված տեղեկություններ ունեք, բայց դրանք պետք է «մաղել», ընտրել ամենակարեւորները: Հիմա կարող եք կառուցել հոդվածի «պատը»: Հետաքննական հոդվածները հիմնականում բարդ են, երբեմն լի թվերով, բազմաթիվ մեջբերումներով, փորձագետների տեսակետներով: Ընթերցողները չեն սիրում բարդ հոդվածներ, նրանք պարզապես չեն կարդում: Դրա համար շատ կարեւոր է գրել պարզ եւ հասկանալի: Հոդվածը տպագրելուց առաջ ձեր շրջապատի մարդկանց՝ գործընկերներին, հարազատներին, ընկերներին, մարդկանց, ովքեր ոչ մի կապ չունեն լրագրության հետ, խնդրեք կարդալ այն: Նրանց հարցրեք՝ արդյոք ամեն ինչ հասկանալի՞ է: Եթե դրական պատասխան ստանաք, ուրեմն կարող եք տպագրել ձեր հետաքննությունը: Դուք գրում եք սովորական ընթերցողի համար, որը կարող է լինել ձեր տատը, թոշակառու հարեւանը, թերթի կրպակի աշխատողը, շենքի պահակը, խանութի գործակատարը: Լրագրողի գրածը պետք է հասկանալի լինի բոլորին: Առանց որեւէ դժվարության ընթերցողը պետք է հասկանա, թե ինչ եք դուք բացահայտել, եւ որքան կարեւոր հասարակական խնդիր է դա: Երբեք ամբիցիաներ մի՛ ունեցեք. լրագրողները հաճախ շատ ինքնագոհ են: Նրանցից յուրաքանչյուրին թվում է, թե իր գրած հոդվածը հանճարեղ է: Բայց դա այդպես չէ: Մի՛ զլացեք խորհուրդ հարցնել ձեր գործընկերներից:

Միշտ պետք է աչքի առաջ ունենալ, որ հոդվածը գրել եք ուրիշի համար, դուք այն գրել եք բոլորի համար, եւ եթե ձեզ հասկանալի է, դա դեռ չի նշանակում, որ  ուրիշներին էլ է այն հասկանալի: Երբ ավար-

պում եք ձեր «գլուխգործոցը», հարցրեք ինքներդ ձեզ՝ ինչի՞ մասին է այն: Եթե կարողանաք մեկ նախադասությամբ ձեւակերպել, ուրեմն ձեզ համար պարզել եք դա: Համոզված եղեք՝ առաջին հարցը, որ տալու է խմբագիրը, հենց դա է լինելու՝ ինչի՞ մասին է հոդվածը: Երկրորդ հարցն այն է, թե ի՞նչ եք բացահայտել: Երբ հետաքննությունն ավարտում եք, գալիս է ժամանակը ինքներդ ձեզ հարց տալու. «Ի՞նչ եմ ես հայտնաբերել, բացահայտել: Ո՞րն է իմ հոդվածի, իմ պատմության «մեխը»»:

Այդ իսկ պատճառով մինչեւ խմբագրին ներկայացնելը միշտ տվեք այն գործընկերին՝ կարդալու: Ձեր առաջին ընթերցողը, համոզված եղեք, ձեզ կտա հարցեր, որոնց մասին դուք չեք մտածել: Մի քանի մարդ պետք է ընթերցի հոդվածը: Եթե ձեր գրածը չեն հասկանում, ու դուք ստիպված եք տալ պարզաբանումներ, ուրեմն անպայման վերանայեք հոդվածը եւ այն դարձրեք հասկանալի:

Յուրաքանչյուր լրագրող ունի գրելու իր ոճը: Ամերիկյան մեծ թերթերում նման բան գոյություն չունի: Այն թիմային աշխատանք է, եւ հեղինակի գրածից գրեթե ոչինչ չի մնում: Արեւմուտքի մեր գործընկերներից հաճախ կարելի է լսել այդ տրտունջը, թե իրենց գրածից ոչինչ չի մնացել:

Հոդվածի հետ ճիշտ է օգտագործել լուսանկարներ, եթե այդպիսիք կան: Հոդվածը լավ եւ մատչելի ներկայացնելու համար շատ կարեւոր է ձեւավորումը: Օգտագործեք գրաֆիկներ, սխեմաներ, լուսանկարներ: Ձեւավորեք այնպես, որ դա նույնպես ուշագրավ դարձնի նյութը, հասկանալի ու տպավորիչ:

Ձեզ հետ աշխատող լուսանկարչին կամ օպերատորին երբեք մի ասեք՝ «Սա իմ լուսանկարիչն է կամ օպերատորն է, կամ էլ՝ վարորդը»: Հիշեք, որ հետաքննություն անելիս դուք թիմ եք, եւ յուրաքանչյուրը նույնքան կարեւոր է:

Ընդհանրապես, գրեթե ցանկացած հետաքննության ընթացքում դուք հայտնաբերում եք բազմաթիվ փաստեր, որոնք շատ լրագրողների համար ուղղակի կարող են հայտնագործություն լինել: Ասենք՝ պաշտոնյան, որի չարաշահումները ուսումնասիրում էիք, գնում է հասարակաց տներ կամ կազինոյում կորցնում է մեծ գումարներ, արվամոլ է կամ իր ստորադասի կնոջ հետ է ժամանակ անցկացնում: Սրանք քո հոդվածում չպետք է տեղ գտնեն, սա կապ չունի ձեր հետաքննության թեմայի հետ:

Հաջորդ փուլում լրագրողը պետք է այնպես կառուցի նյութը, որպեսզի ընթերցողին ցույց տա հարվածի ուղղությունը, թիրախը: Լրագրողը պետք է այդ ուղղությունը նյութի սկզբում ցույց տա:

*Ասենք՝ հետաքննության արդյունքում դուք բացահայտել եք, որ համայնքապետը համայնքի բյուջեից գումար է փոխանցել մի շինարարական կազմակերպության, որի բաժնետոմսերի 90 տոկոսի բաժնետերն իր տեղակալն է: Նա պարզապես փող է լվանում իր տեղակալի միջոցով: Ուրեմն, ճիշտ է նյութը սկսել այսպես. «2003 թ. Կենտրոնի թաղապետարանը համայնքում շինարարական աշխատանքներ կատարելու համար «Ալֆա գրուպ» ընկերությանն է փոխանցել 1 մլն դոլար: «Ալֆա գրուպի» բաժնեմասերի 90 տոկոսը Կենտրոնի թաղապետի տեղակալինն է»:*

Դրանից հետո դուք կարող եք ներկայացնել փաստական տվյալները, ասենք՝ 2009 թ. համար արդեն կնքված է 2 մլն դոլարի աշխատանքների պայմանագիր: Դուք պարզել եք, որ նախորդ տարիներին նման աշխատանքներ կատարել են 4 կազմակերպություններ: Նոր համայնքապետի ընտրությունից հետո միայն մեկ կազմակերպություն է իրականացրել շինարարությունը: Նույն աշխատանքների համար այդ ժամանակ ծախսվել է 250 հազար դոլար գումար, այժմ՝ 4 անգամ ավելի է նախատեսված ծախսել: Դուք ունեք այդ պայմանագրերի պատճենները կամ հարցազրույցներ ներկայումս եւ նախկինում աշխատանքներ իրականացրած շինարարների հետ: Դուք կարող եք համեմատել նրանց ասածները, որոնք հակասում են իրար: Կամ կարող եք գտնել մեկին, ով կարող է հաստատել, որ կատարված աշխատանքներն անորակ են կամ հրապարակեք լուսանկարներ, որտեղ երեւում է ասֆալտապատված անորակ ճանապարհը:

Ամեն դեպքում, միշտ պետք է պահել չեզոք տոնը, խուսափել սարկազմից, թույնից, հայհոյանքներից, որակումներից. պետք է ներկայացնել միմիայն փաստեր: Լրագրողի միակ ասպվածը պետք է լինի փաստը: Սա, իհարկե, դժվար է, բայց պետք է հասնել դրան: Մնացածն ընթերցողի գործն է: Նա պետք է որոշում կայացնի: Նա պետք է պահանջի պատժել այդ պաշտոնյային եւ հաջորդ անգամ չվերընտրի նրան:

## Հեպաքննական նյութի շարադրումը

Մինչ նյութը գրելը խոսեք խմբագրի հետ: Ի վերջո, միշտ նյութը հրապարակելու վերջնական որոշումը կայացնում է խմբագիրը: Նրա հետ նախապես քննարկեք շարադրանքի տարբերակները: Ինչքան էլ ասենք, որ լրագրողը պետք է ցույց չտա իր վերաբերմունքը, միեւնույն է, հարյուր տոկոսանոց չեզոքություն չի լինում, շարադրանքի մեջ կա զանազան տոնայնություն, կամ խմբագիրը հնարավոր է ասի՝ ավելի մեղադրական տոն ընտրիր, կամ էլ հակառակը՝ մեղադրական տոնը փոխարինիր ավելի չեզոք տոնի: Մի բան պարզ է՝ լրագրողը պետք է հստակ պատկերացնի, թե ինչի մասին է նյութը, այնքան հստակ, որ մի նախադասությամբ կարողանա ասել: Հաճախ է պատահում, երբ ես լրագրողներին հարցնում եմ՝ ինչի մասին է հոդվածը, նրանք չեն կարողանում պատասխանել եւ սկսում են պատմել հոդվածը: Սա, իրականում, նշանակում է, որ լրագրողի համար էլ հստակ չէ, չգիտի՝ ինչ մասին է հոդվածը:

Երբ հստակ գիտես, թե ինչի մասին է նյութը, արդեն անհրաժեշտ է որոշել կառուցվածքը: Լրագրությունը, ասում են արեւմտյան հրապարակիչները, նման է ճարտարապետությանը, եւ բառերի քմահաճ խաղն այստեղ չի փոխարինի ամուր կառուցվածքին:

Փորձառու լրագրողների մեծ մասը խորհուրդ է տալիս նյութը գրելուց առաջ կազմել դրա սխեման: Հոդվածը շարադրելիս գլխավորը՝ ինքներդ ձեզ համար որոշել՝ ի՞նչ կարգով «մատուցել փաստերը» եւ ինչպե՞ս խմբավորել ազգակից, միեւնույն իրադարձությանը կամ մարդուն առնչվող տեղեկատվությունը: Բազմաթիվ նյութերի թերությունը հենց այն է, որ միեւնույն իրադարձությունը կամ խնդիրը հիշատակվում են նյութի տարբեր հատվածներում:

Նյութը կարող է ցանկացած կառուցվածքն ունենալ, միակ պահանջը՝ որ այն տրամաբանական լինի: Նյութի ամենատարածված կառուցվածքը «շրջված բուրգն է», երբ ամենակարեւոր փաստերը կենտրոնացած են լիդում, իսկ մնացածները շարադրված են ըստ կարեւորության նվազման: Եթե նյութի մեջ 2-3 կարեւոր տարրեր են, ապա դժվար չէ այսպես կառուցել նյութը: Բարդությունները ծագում են, եթե նյութում շատ են գործող անձինք, փաստերը, կարծիքները:

Բացի այդ, ցանկացած նյութի առաջին պարբերությունը պետք է շարժի ընթերցողի հետաքրքրությունը եւ ստիպի կարդալ շարունակությունը: Այդ իսկ պատճառով ցանկալի է նյութն այնպես կառուցել, որ սկզբում լինի ընթերցողի հետաքրքրությունը շարժող եւ հրապուրող

ինչ-որ պարբերություն, ապա մի քանի պարբերությունում շարադրվի գործի էությունը, իսկ ապա հաղորդվեն մանրամասները: Բայց եթե բուրգային սկզբունքով շարադրանքը, որտեղ գլխավոր չափանիշը փաստերի կարեւորությունն է, հարմար է տեղեկատվական նյութերի համար, ապա հաճախ հետաքննական նյութերի դեպքում այն ամենահաջողված կառուցվածքը չէ, որովհետեւ այս դեպքում նյութի տարբեր հատվածների միջեւ փոխհարաբերությունները չեն պարզվի:

Որպես օրինակ կարող ենք բերել նյութի կառուցման հետեւյալ պարզագույն սխեման.



## Հարցեր, որոնք կօգնեն լավ լիդ գրել[61]

(Ցանկը կազմվել է կոնֆերանսների, սեմինարների ընթացքում, որտեղ լրագրողները եւ խմբագիրները քննարկել են լրագրության խնդիրները)

1. Ինչու՞ է ընթերցողի համար կարեւոր սա իմանալ:
2. Ի՞նչը կպիպի ընթերցողին շրջվել եւ ասել. «Դե հիմա սա լսի՛ր, Մարկո՛»:
3. Կարո՞ղ եմ գտնել նյութի բովանդակությանն առնչվող մի լավ անեկդոտ:
4. Ունե՞նք նյութի բովանդակությանն առնչվող լուսանկար:
5. Ո՞րն է կոնֆլիկտը:
6. Ինչպե՞ս այս նյութը կազդի իմ ընթերցողների վրա:
7. Ինչու՞ պետք է կարդան այս նյութը:
8. Նյութը գրավիչ դարձնելու համար կա՞ն փոխաբերություններ:
9. Որտե՞ղ է դեպքը տեղի ունեցել:
10. Ո՞րն է համապատասխան աղբյուրը:
11. Կարո՞ղ եմ ներկայացնել մեկ կոնկրետ մարդու օրինակ:
12. Որտե՞ղ է կուլմինացիան:
13. Կա՞ մեջբերում, որը նյութը լավագույնս է ներկայացնում:
14. Նյութի ո՞ր փարրերն են կապի դեր կատարում: Ինչպե՞ս:
15. Ինչու՞ է այս դեպքը տեղի ունեցել:
16. Ինչպիսի՞ ընդհանրացումներ կարող ենք անել (եթե կարող ենք):
17. Ո՞ր կարեւոր հարցերին պետք է պատասխանել:
18. Ո՞րն է նյութը ներկայացնելու ամենալավ ձեւը:
19. Ինչպե՞ս կարող եմ ամփոփել տեղեկատվությունը:
20. Ո՞ր կոնկրետ առանձնահատկություններն են ընդգծում նյութի կարեւորությունը:
21. Ո՞րն է նյութի պատմությունը:
22. Որո՞նք են այն առանցքային խնդիրները, որոնք այս նյութով լուծում կստանան:
23. Ո՞րն է այստեղ կոնկրետ խնդիրը:

---

61 Աղբյուրը՝ Հետաքննական լրագրության աշխատանքային նյութեր. գործիքներ եւ միջոցներ, Դեյվիդ Ե. Կապլան, «Հետաքննող լրագրողներ եւ խմբագիրներ»:

Նյութը փպագրելուց առաջ այն ցույց փվեք իրավաբանին, որպեսզի հեփո խմբագրությունը չհայփնվի դափական քաշքշուկի մեջ եւ նյութական մեծ վնասներ չկրի: Հոդվածը, եթե կարելի է այսպես արփահայփվել, պեփք է ենթարկվի «իրավաբանական փորձաքննության»:

Մեծ խնդիր է խմբագիրներին համոզելը, որ նյութը չպեփք է կրճափվի: Թերթերը միշփ «փեղի» պակաս ունեն, եւ խմբագիրները անխնա կրճափում են հոդվածները: Դուք պեփք է համոզեք խմբագրին, որ դա շափ ավելի կարեւոր է, քան քաղաքական գործիչների սկանդալային հայփարարությունները, որոնցով հեղեղված են մեր թերթերը:

## Հեփաքննական նյութի շարադրման այլ փիպական կառուցվածքներ.

Անդրեյ Կոնսփանփինովն իր «Հեփաքննական լրագրություն» գրքում ներկայացնում է հեփաքննական նյութի շարադրման այլ կառուցվածքներ.

- **Ժամանակագրական՝** լիդից հեփո նյութը շարադրվում է այն հաջորդականությամբ, ինչպես փեղի են ունեցել իրադարձությունները:
- Այսպես կոչված «**սերիալի**» փեսքով՝ լիդից հեփո նյութը բաժանվում է ենթաթեմաների, որոնցից յուրաքանչյուրն առանձին է դիփարկվում: Նյութի վերջում հեղինակը պեփք է ամբողջ շարադրանքը կապի մեկ ամբողջության մեջ:
- **Դեփեկփիվային՝** փեղի ունեցածը շարադրվում է ժամանակագրական կարգով, բայց արդյունքն ընթերցողի համար անհայփ է մնում մինչեւ վերջին պարբերությունը:
- **Ակնարկային՝** օգփագործվում է այն դեպքում, եթե հեղինակի նպափակը ոչ թե ընթերցողին փեղեկափվություն հաղորդելն է, այլ՝ նրա հեփ փպավորություններով կիսվելը: Անհրաժեշփ է առանձնացնել հիմնական ուղերձը, օրինակ՝ դափարաններն ի վիճակի չեն կափարել իրենց պարփականությունները: («Հեփքի» անօթեւաններին նվիրված ուսումնասիրությունը նաեւ ակնարկների շարք էր, որփեղ ընթերցողներին ներկայացվում էին անօթեւան դարձած մարդկանց ողբերգական ճակափագրերը: Եւ հենց այս ակնարկների միջոցով է ներկայացվել խնդիրը: Ընդ որում՝ զուգահեռաբար արվում էին նաեւ հարցազրույցներ այդ ոլորփի պափասխանափուների հեփ):
- **Վերլուծական՝** նյութի սկզբում փրվում է խնդրի նկարագրությունը, ապա՝ փորձագեփների եւ այն անձանց փեսակեփնե-

րը, ովքեր ուղղակի կամ անուղղակի կապ ունեն քննարկվող թեմայի հետ, ավարտին՝ հեղինակի դատողությունները իրադարձությունների հետագա զարգացման վերաբերյալ:

## Խորհուրդներ բարդ հետաքննական նյութերը պարզ մատուցելու համար

- Հավաքած տեղեկատվության մի մասը շարադրանքի ժամանակ պետք է մնա նոթատետրում: Ավելորդ մանրամասները ոչինչ չեն ավելացնի, բայց կբարդացնեն ընթերցանությունը:
- Պարտադիր չէ, որ հրապարակումը կազմված լինի միատեսակ մատուցված նյութից: Որոշ տարրեր կարելի է տեղադրել լուսանցքներում՝ որպես առանձին նշում կամ նոթագրություն: Լավ են ընկալվում նյութից առանձնացված տեղեկանքները, մեկնաբանությունները, դոսյեները:
- Վատ չէ հետաքննական նյութը շարադրելիս կիրառել ժանրային բազմազանություն: Օրինակ՝ հիմնական հետաքննական նյութը կարող է լրացվել գործող անձանցից մեկի կամ փորձագետի հետ հարցազրույցով, իրադարձության վայրից ռեպորտաժով կամ մի քանի տեղեկանքներով:
- A3 ֆորմատի մեկ էջի կեսից ավելին զբաղեցնող նյութի դեպքում խորհուրդ է տրվում այն բաժանել մասերի՝ իրենց ենթավերնագրերով:
- Մասնակցեք նյութի ձեւավորմանը եւ հույսը մի դրեք միայն թերթը ձեւավորողի կամ թողարկողի վրա: Լուսանկարները, արխիվային փաստաթղթերը, գրաֆիկները, նամակները, քարտեզները, գործող անձանց կամ իրադարձությունների ցանկերը, գլխավոր մտքերի դուրսբերումները հեշտացնում են նյութի ընկալումը:

## Հետաքննական նյութի ոճը

Նյութի ոճը պետք է համապատասխանի բովանդակությանը: Ողբերգական իրադարձությունների մասին հետաքննությունը երգիծական երանգով շարադրելը հակացուցված է: Աշխատեք խուսափել ձեր կարծիքը զետեղելուց, իսկ դրա առկայության դեպքում հստակ տարանջատեք փաստից: Հեղինակի կարծիքը ընթերցողի մոտ տպավո-

րություն է ստեղծում, որ նա այնքան էլ անաչառ չէ: Երբեմն լրագրողներին խորհուրդ են տալիս գրել խոսակցական լեզվով, բայց դա գրեթե անհնար է լուրջ հետաքննությունների դեպքում: Բանավոր խոսքը տեղին է գրական ստեղծագործության մեջ, ժուռնալիստիկայում այդ հնարքից պետք է զգուշորեն օգտվել:

Հետաքննական նյութը պետք է հստակ ու հնարավորինս կարճ լինի: Եթե առաջին ընթերցումից հետո ընթերցողը պետք է նորից վերադառնա տեքստին՝ հասկանալու համար, թե ինչի մասին էր խոսքը, եւ ինչ էր վերջիվերջո տեղի ունեցել, ուրեմն դա վատ գրված նյութ է: Եթե հեղինակն ինքը գլուխ չի հանել նյութի հերոսների փոխհարաբերություններից կամ իրադարձությունների փոխադարձ կապերից, կարելի է համոզված լինել, որ ընթերցողը հաստատ չի հասկանա:

Նյութը հրապարակման տալուց առաջ խնդրեք ձեր գործընկերներից կամ խմբագիրներից մեկին, ով ծանոթ չէ պատմությանը, կարդալ այն՝ համոզվելու համար, որ ամեն ինչ հասկանալի է ու պարզ:

## Հստակություն եւ կոմպետենտություն

Ոչինչ այնքան չի խարխլում նյութի նկատմամբ վստահությունը, որքան հեղինակի ոչ կոմպետենտությունը: Մեկ ազգանվան սխալ, եւ ընթերցողը կարող է ամբողջ նյութը համարել ոչ հավաստի:

Տեղեկատվության աղբյուրներին պետք է սկեպտիկորեն վերաբերվել: Մարդիկ կարող են մեկնաբանություններ տալ այն թեմաների մասին, որոնցից իրենք էլ լավ տեղյակ չեն: Իդեալական տարբերակում լրագրողը պետք է միշտ հաղորդի ընթերցողին տեղեկատվության աղբյուրի մասին, այդ դեպքում նա ինքը ինքնուրույն կդատի դրա հավաստիության մասին: Բայց եթե նյութում աղբյուրը նշված չէ, ապա դրա մասին անպայման պետք է տեղյակ լինի խմբագիրը:

Ի՞նչ անել, եթե նյութի հրապարակումից հետո պարզվել է, որ հեղինակը սխալ է թույլ տվել: Եթե սխալը նշանակալի չէ, կարելի է փոքրիկ ճշտում տպել, բայց եթե կոպիտ սխալներ են եղել, ապա արժե երկրորդ հոդվածը հրապարակել, որտեղ կխոստովանվեն առաջինի բացթողումները: Դեպքեր կան, որ նման «արդարացուցիչ» նյութերը դրական են ընկալվել լսարանի կողմից:

# ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մենք գրեթե չենք սպասում այն արդյունքները, որ ակնկալում ենք յուրաքանչյուր հետաքննություն սկսելիս: Լրագրողը մտածում է, որ իր հոդվածի հրապարակումից հետո կլինեն արմատական փոփոխություններ: Բայց Հայաստանում ամենասենսացիոն նյութերը շարունակում են մնալ քաղաքական ոլորտին վերաբերող հոդվածները:

Ի՞նչ կարող է անել լրագրողը, երբ որեւէ արդյունք չի լինում. ծավալել հասարակական գործունեություն եւ կատարել քայլեր, որոնք ամենեւին նրա պարտականությունների մեջ չեն մտնում: Այո, լրատվամիջոցը, լրագրողը երբեմն ստիպված են լինում այդ գործառույթը ստանձնել՝ որեւէ արդյունքի հասնելու համար:

*Որպես օրինակ ուզում եմ ներկայացնել 2005 թ. Երեւանի անօթեւանների վիճակին նվիրված մեր ուսումնասիրությունն ու դրա արդյունքում հրապարակված հոդվածաշարը եւ պեւասաֆիլմը: Դա մեր գործունեության ընթացքում ամենաշոշափելի արդյունքն արձանագրած աշխատանքն էր: Բայց մեր ամբողջ խմբագրակազմը ամիսներ շարունակ զբաղված էր միայն դրանով: Լրագրողները ստիպված էին ձմեռվա ամիսներին փողոցներից շտապ օգնության կամ իրենց մեքենաներով հիվանդանոցներ տեղափոխել ցրտահարված մարդկանց, նրանց համար փաք հագուստ, սնունդ հայթայթել, լուծել լողանալու խնդիրը, որովհետեւ նրանց հիվանդանոցներում չէին ուզում ընդունել, ոչ մի բաղնիք ներս չէին թողնում: Ընդ որում՝ խմբագրությունը սկզբում հիմնականում իր միջոցներով էր դա անում: Բայց ամիսներ շարունակ հրապարակվող հոդվածները բազմաթիվ մարդկանց ստիպեցին զբաղվել այս խնդրով: Հասարակական կազմակերպություններ հայտնվեցին, որոնք հագուստ եւ սնունդ էին հայթայթում, ընթերցողների անհատական նվիրատվությունների շնորհիվ չորս անօթեւանների համար երկու ամսով մի բնակարան վարձեցինք: Խորհրդարանում պատգամավորները սկսեցին բարձրաձայնել խնդիրը կառավարության հետ հարցուպատասխանի ժամանակ: Պաշտոնյաները չէին ուզում ընդունել, որ Երեւանում անօթեւանների խնդիր կա: Իսկ մենք պարզել էինք, որ վերջին հինգ տարիներին ամեն տարի ձմեռվա ամիսներին Երեւանի փողոցներում ցրտահարվում էր մոտ հիսուն անօթեւան:*

*Այդ ընթացքում «Հետքը» եւ «Երկիր մեդիա» հեռուստաընկերությունը պատրաստեցին «Անտունները» տեսաֆիլմը: Տեսաֆիլմը եթեր հեռարձակելու օրը Նարեկացի արվեստի միությունում կազմակերպվեց «Հետքի» լուսանկարիչ Օննիկ Գրիգորյանի լուսանկարների ցուցահանդեսը, եւ ցուցադրվեց տեսաֆիլմը: Սա, կարծես թե, քարոզարշավի վերածված այդ ակցիայի վերջին ակորդն էր: Կառավարությունը ստիպված որոշում ընդունեց Երեւանում անօթեւանների ձմեռային կացարան հատկացնելու մասին: Սակայն կար մի խնդիր. կառավարությունը ֆինանսավորումը հատկացրեց հաջորդ տարվա համար, իսկ հատկացված կացարանը վերանորոգման կարիք ուներ: Հրապարակումներին արձագանքած մի սփյուռքահայ կացարանը վերանորոգեց իր միջոցներով, եւ այդ տարի անօթեւանների կացարանում ձմեռն անցկացրեց երեսուն մարդ: Սա, իսկապես, մեծ հաղթանակ էր, ինչպես նաեւ՝ լրատվամիջոցների համագործակցության փայլուն օրինակ: «Երկիր մեդիան» այս, այսպես կոչված, քարոզարշավի ընթացքում միշտ մեր կողքին էր, եւ մենք համատեղ ուժերով հասանք արդյունքի:*

«Հետաքննող լրագրողներ» կազմակերպությունն իր առաջին հետաքննական հոդվածով[62] բացահայտել էր, որ Առողջապահության նախարարության Արյունաբանության կենտրոնից ՁԻԱՀ-ով հիվանդից վերցրել են դոնորական արյուն եւ հանձնել այլ հիվանդի: Հետաքննության արդյունքում կենտրոնի տնօրենը հեռացվեց աշխատանքից, համակարգում կատարվեցին արմատական փոփոխություններ: Առողջապահության նախարարությունում արյան անվտանգության համար ընդունվեցին կարեւոր որոշումներ:

Հրազդանի կիրճի մասին մեր հրապարակումներից որոշ ժամանակ հետո Երեւանի քաղաքապետարանում հայտնվեց ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի մակագրությամբ հանձնարարական՝ հոդվածներում բարձրացված հարցերն ուսումնասիրելու եւ համապատասխան աշխատանքներ կատարելու մասին: Քաղաքապետարանը կառուցվածքային փոփոխություններ կատարեց՝ «Հրազդանի կիրճ» ձեռնարկություն ՓԲԸ-ն վերափոխելով հիմնադրամի, որը, քաղաքապետարանի պաշտոնյաների հավաստմամբ, պետք է «բարձրացնի պատասխանատվությունը, նրան լիարժեք գործելու հնարավորություն տա»: Իհարկե, այդ ժամանակահատվածում շատ գերատես-

62 Էդիկ Բաղդասարյան, Սպիդը դուրս եկավ «խոցելի խմբերից», մարտի 1, 2001թ., www.hetq.am, արտատպվել է՝ «Առավոտ» օրաթերթ, 21.04.2001թ.:

չություններում հոդվածներում բարձրացված հարցերը քննարկեցին, սակայն արդյունքում շատ քիչ բան փոխվեց: Կիրճում գործող զվարճանքի վայրերում կառուցվեցին կոյուղագծեր, որտեղից կեղտաջրերը ժամանակ առ ժամանակ տեղափոխվում էին մեքենաներով: Սակայն այսօր՝ հետաքննությունից 7 տարի անց, նույն խնդիրները մնում են: Այն ժամանակ մեր հետաքննության ընթացքում ամենահաճախ հանդիպող օրինաչափությունն ապօրինի օբյեկտների անարգել շինարարությունն ու դրանց ոչ պակաս անարգել օրինականացումն էր: Այդ ընթացքում օրինականություն հաստատելու բազում «փորձեր» եղան: Բայց որոշ ժամանակ անց մոռացության մատնվեցին բարձրացված խնդիրները, եւ նոր ապօրինի շինություններ հայտնվեցին Հրազդանի կիրճում: Այս հետաքննությամբ բարձրացված ամենատագնապալից հարցը կիրճում կամ դրա հարեւանությամբ տեղակայված արտադրական ձեռնարկություններում մաքրման կայանների բացակայությունն էր: Ձեռնարկությունների ղեկավարներից եւ ոչ մեկը չցանկացավ պարզաբանումներ տալ: Այս առումով էլ որեւէ փոփոխություն չի փոխվել:[63]

Այս հետաքննությունը, սակայն, եւս մի դաս էր. միշտ պետք է վերադառնալ անցյալում բարձրացված հարցերին եւ պարզել՝ ինչ-որ բան փոխվե՞լ է, արդյոք, հրապարակումներից հետո, տարիներ անց:

2001 թ.-ին «Հետաքննող լրագրողներ» կազմակերպությունն իրականացրեց «Դրականը եւ բացասականը ՀՀ դատական պրակտիկայում» ծրագիրը: Սա մի արժեքավոր ուսումնասիրություն էր, որը ներառում էր նաեւ լրագրողական հետաքննություններ: Դատական կոնկրետ գործեր դարձան հետաքննության թեմաներ: Ընդ որում՝ ծրագրում ընդգրկված էին փաստաբաններ, որոնք էլ ապահովում էին օրենքների մեկնաբանությունները, մատնանշում դատավորների որոշումների եւ վճիռների մեջ առկա բացթողումները, հակասությունները, ապօրինությունները: Լրագրող Սառա Պետրոսյանը «Ներդրումային խճանկար Արմավիրի մարզում» հետաքննության մեջ բացահայտել էր, թե ինչպես Արամավիրի մարզպետի, մարզպետարանի աշխատակիցների, դատարանի ապօրինի որոշումների արդյունքում ֆերմերը զրկվել էր իր հողից: Սա ապօրինությունների մի շղթայի բացահայտում էր:[64]

Սառա Պետրոսյանը մեկ այլ հետաքննությամբ՝ «Կանացի գայթակղություններ»[65] վերնագրով, բացահայտել է, թե ինչպես դատա-

63 Հրազդանի կիրճը. լրագրողական հետաքննության մեկ տարին, Երեւան, 2002, էջ 33, «Հետաքննող լրագրողներ» ՀԿ:

64 Դրականը եւ բացասականը ՀՀ դատական պրակտիկայում, Երեւան, 2002 թ., էջ 7-17, «Հետաքննող լրագրողներ» ՀԿ:

65 Դրականը եւ բացասականը ՀՀ դատական պրակտիկայում, Երեւան, 2002թ., էջ 25-31, «Հետաքննող լրագրողներ» ՀԿ:

կան խարդավանքների արդյունքում Ալեֆտինա Տեր-Մանուելյանցի ընտանիքը զրկվել է տնից, որտեղ ապրում էր 18 տարի: Ինը տարի տեւած դատաքննությունների ընթացքում Տեր-Մանուելյանցի ընտանիքին տնից վտարել են երեք անգամ, որի հետեւանքով կորցրել են ողջ ունեցվածքը: Այս հետաքննությունները մեծ ջանքեր եւ ժամանակ խլեցին, բայց չունեցան համարժեք արձագանք:

Վերջին շրջանում կառավարությունը սկսել է ուշադիր հետեւել «Հետքի» հրապարակումներին: Լոռու մարզի մեր թղթակից Լարիսա Փարեմուզյանի «Անտառտնտեսության տնօրենը սեփական սղոցարան ունի» հոդվածից[66] հետո վարչապետի վերահսկողական ծառայությունը ուսումնասիրեց ներկայացված փաստերը անտառահատումների վերաբերյալ, մասնավորապես Կարմիր գրքում գրանցված ընկուզենիների հատման մասին: Անտառտնտեսության տնօրենն ազատվեց աշխատանքից, հարուցվեց քրեական գործ[67]:

Այս տարի կառավարությունը եւս մեկ հրապարակման[68] հետքերով գնալով՝ հաստատել է հրապարակված փաստերը եւ խմբագրությանը տեղեկացրել ձեռնարկված կանխարգելիչ միջոցառումների մասին[69]:

Արդյունքների մասին գրելով՝ նորից մեկ անգամ պիտի շեշտեմ, որ, ի վերջո, մեծ չարաշահումների փաստերը բացահայտելուց որեւէ բան չի փոխվում: Դրա վառ օրինակներն են Օպերայի այգում զանազան պաշտոնյաների իրականացրած ապօրինի շինությունների, Բնապահպանության նախկին նախարար Վարդան Այվազյանի կողմից ինքն իրեն հատկացրած հանքերի լիցենզիաների, Հայաստանից բանանի արտահանումների մասին եւ բազմաթիվ այլ հրապարակումներ, որոնց արդյունքը լրագրողներն ու հասարակությունը չեն տեսել:

Ցավոք, առայժմ միակ եզրակացությունն այն է, որ ինչքան ավելի խոշոր է չարաշահումը, այն թույլ տվողներն ավելի բարձր դիրքեր են զբաղեցնում իշխանության բուրգում, իսկ որքան բարձր է այդ դիրքը, նույնքան քիչ է նրանց պատժելու հավանականությունը: Միակ սփոփիչ հանգամանքն այն է, որ նման հոդվածներից հետո մեծանում է ընթերցողների վստահությունը լրատվամիջոցի նկատմամբ:

66 Լարիսա Փարեմուզյան, «Անտառտնտեսության տնօրենը սեփական սղոցարան ունի», 21 հուլիս, 2008, www.hetq.am:
67 Կառավարությունը գնացել է «Հետքի» հոդվածի հետքերով, 15 սեպտեմբեր, 2008, www.hetq.am:
68 Սառա Պետրոսյան, «Ազատվեք ձեզ խանգարող անուն-ազգանուններից», դեկտեմբեր 22, 2008, www.hetq.am:
69 Կառավարությունն արձագանքում է «Հետք»-ի հրապարակումներին, 19.02.2009 թ. www.hetq.am:

# ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ԷԹԻԿԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Վերջին տարիներին լրագրության տեսաբանները շատ են խոսում լրատվամիջոցների՝ էթիկայի կանոնագրեր ունենալու մասին: «Հետք» թերթն ունի կանոնագիր, բայց մի հետաքննության ժամանակ մենք ստիպված եղանք խախտել այդ կանոնագրի բազմաթիվ կետեր:

Ասածս պատվիրանները պահելու համար ամենեւին էլ պարտադիր չէ եկեղեցի գնալ: Իմ համոզմամբ՝ հակառակն ավելի շատ է լինում, եկեղեցի գնացողներն այդ պատվիրանները խախտողներն են հիմնականում: Համենայնդեպս, հեռուստատեսությամբ նայեք եկեղեցուն վերաբերող պաշտոնական լրատվությունը, դուք դրանում կհամոզվեք: Նախընտրական շրջանում տեսեք, թե թեկնածուներից քանիսին են տարել եկեղեցի՝ մոմ վառելու պահին նկարահանումներ կատարել ու այն մտցրել նախընտրական տեսահոլովակների մեջ: Մի՞թե իսկական հավատացյալը կաներ նման բան: Նույնը վերաբերում է նաեւ էթիկայի կանոններին, որոնք արդեն ունեն մի քանի հայկական թերթեր:

> Այնպես որ, պարտադիր չէ ունենալ կանոնագիրք, գերադասելի է այն չունենալ, եթե գիտես, որ նրա բոլոր կետերն ամեն օր մի քանի անգամ խախտելու ես: Մեր իրականության մեջ ամեն ինչ հարաբերական է: Մի լրագրողի համար գլխավոր դատախազի հետ ճաշի նստելը երազանք է, մյուսի համար՝անընդունելի արարք: Մեկի համար մամուլի ասուլիսում սուր հարց տալը բնական է, մյուսի համար այդ հարցը նախապես համաձայնեցված է հենց ասուլիս տվողի հետ:

Հայաստանի մի շարք լրատվամիջոցներ արդեն ունեն էթիկայի կանոնագրեր, բայց շատ քչերն են պահպանում իրենց իսկ ընդունած կանոնները: Ամեն օր կարող եք աչքի անցկացնել թերթերը եւ տեսնել, թե քանի անգամ է այս կամ այն լրագրողը խախտում այդ կանոնները: «Հետք» ինտերնետային թերթը առաջիններից մեկն ընդունեց էթիկայի կանոնագիր, մինչ այդ՝ 2002 թ., նույն կոդեքսն ընդունել էր «Հետաքննող լրագրողներ» կազմակերպությունը: Երբ սկսեցինք աշխատել, անմիջապես ծագեց էթիկայի կանոնագիր ունենալու խնդիրը:

Որովհետեւ մեր կազմակերպության անդամները ներկայացնում էին տարբեր լրատվամիջոցներ, որոնք հետապնդում էին տարբեր շահեր: Իսկ մենք իսկապես տարբերվում էինք մյուսներից մեր կատարած աշխատանքով: «Հետքը» տարվա ընթացքում մեկ-երկու մեծ եւ 10-12 փոքր հետաքննական նյութեր է հրապարակում:

Ինչու՞ էր անհրաժեշտ էթիկայի կանոնագիրը: Որպեսզի աշխատենք ավելի հանգիստ: Որպես կանոն՝ էթիկայի մասին սիրում են խոսել ոչ լրագրողները: Ինձ հանդիպած բոլոր այն մասնագետները, ովքեր մտահոգված են լրատվամիջոցների էթիկական կամ բարոյական հարցերով, լրագրողներ չեն: Այդ պատճառով էլ նրանք սկսում են քննադատել լրագրողներին, թե վերջիններս խախտում են լրագրողական էթիկան: Նման հանդիպումների ժամանակ միշտ ասում եմ՝ էթիկայի մասին պետք է խոսեն գործող լրագրողները:

Հիշում եմ մի դեպք. մի քանի ամիս էր, ինչ ընդունել էինք Էթիկայի կանոնագիրը, երբ մեր լրագրողներից մեկը զանգեց ու ասաց, որ իրեն կոկա-կոլա եւ սուրճ է հյուրասիրում նախկին քաղաքապետը, արդյոք կարո՞ղ է խմել: Ասացի՝ իհարկե: Սուրճ եւ կոկա-կոլա կարելի է:

Միշտ հրաժարվեք ճոխ հյուրասիրություններից, երբեք մի վերցրեք նվերներ, բավական է մի անգամ վերցնել, հետո դա կշարունակվի, եւ այդ մասին կիմանան բոլորը: Այսօր Հայաստանում չես գտնի մեկին, ով կասի, թե «Հետքի» լրագրողներից որեւէ մեկին փող կամ նվեր ենք տվել հոդված գրելու համար: Սա իսկապես հպարտությամբ եմ ասում:

Մենք՝ լրագրողներս, իրականում ունենք մեծ իշխանություն: Իսկ իշխանություն ունեցողը, որպես կանոն, միշտ այն չարաշահում է: Չարաշահում է ոչ միայն աշխատանքում, այլ նաեւ դրանից դուրս: Հիշեք, թե ինչպես ենք անձնական հարցերը լուծելիս մենք օգտագործում մեր լրագրող լինելու հանգամանքը:

Ռուս հայտնի լրագրող Անատոլի Ագրանովսկին մի առիթով գրել է. «Ժուռնալիստիկայում էթիկայի մասին գրվել եւ ասվել են շատ անհեթեթություններ, քան ուրիշ թեմաների մասին: Այն լրագրության տեսաբանների սիրած առարկան է, գլխավորապես այն պատճառով, որ տալիս է փայլուն հնարավորություն՝ հարձակվել գործող լրագրողների վրա»: Դա, իրոք, այդպես է: Մասնակցեք էթիկային նվիրված ցանկացած սեմինարի, քննարկման եւ դրանում կամոզվեք:

Կան կազմակերպություններ, որոնք փորձում են համոզել, որ Հայաստանի նման երկրում լրագրողներն առաջին հերթին կարիք ունեն էթիկայի մասին դասախոսությունների: Նրանց թվում է՝ եթե լրագրողները լսեն այդ դասախոսությունները, «Բի-բի-սի»-ի լրագրողների նման պրոֆեսիոնալ կդառնան: Ես համոզված եմ՝ էթիկայի կանոններ իմանալը կամ ունենալը դեռեւս ոչինչ չի նշանակում: Տվեք լրագրողներին բարձր աշխատավարձ եւ ասեք՝ սրանք սկզբունքներ են, որոնք չպետք է խախտես: Նրանք ամեն ինչ կանեն, որպեսզի հանկարծ չխախտեն այդ սկզբունքները եւ չկորցնեն իրենց աշխատատեղը: Նաեւ դա է էթիկան:

Լրագրողն այնքան անազնիվ կմնա, այնչափ կխախտի էթիկան, որքան թույլատրում է իր խմբագիրը: Էթիկայի նորմերի խախտման սահմանները գծում են խմբագիրը եւ լրագրողը՝ լուռ համաձայնությամբ: Լրագրողն ու խմբագիրն այդպիսի համաձայնության են եկել հայաստանյան թերթերում: Նրանք գիտեն՝ ում մասին ինչպես պետք է գրեն, ում մասին ինչպես չի կարելի գրել:

Լրատվամիջոցների, ըստ այդմ նաեւ՝ լրագրողների միջեւ եղած մրցակցությունը դրդում է կատարել քայլեր, որոնք այլ պայմաններում նրանք երբեք չէին անի: Կան լրագրողներ, ովքեր նման համաձայնության երբեք չեն գալիս, եւ խմբագիրներն ունեն այդպիսի լրագրողների կարիք: Ցանկացած լրատվամիջոցում էլ միակ բանը, որ պահանջվում է լրագրողից, անել այնպես, որ իր հեղինակությունը չարատավորվի: Բոլոր դեպքերում, յուրաքանչյուր լրագրողի հեղինակությունը միշտ իր ձեռքում է:

ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԳԻՐ

## *«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի եւ «Հետք» թերթի* (ընդունվել է 2002 թ. դեկտեմբերի 6-ին)[70]

«Հետաքննող լրագրողներ» կազմակերպության առաքելությունը ճշմարտությունը բացահայտելն է եւ հասարակությանը տեղեկացնելը:

Խոսքի ազատությունը բարձրագույն արժեք է, եւ այն պետք է պաշտպանել ամեն գնով:

Խոսքի ազատությունը ենթադրում է նաեւ պատասխանատվություն, որը մեզանից պահանջում է լինել արդար, օբյեկտիվ եւ ազնիվ:

«Հետաքննող լրագրողներ» կազմակերպության եւ «Հետք» թերթի լրագրողներս, ընդունելով այս կանոնները, պարտավորվում ենք ցանկացած պարագայում հարգել հետեւյալ սկզբունքները.

- Հրապարակել միայն հավաստի եւ ստուգված տեղեկատվություն:
- Սահմանազատել տեղեկատվությունը մեկնաբանությունից: Հրապարակումներում հստակ տարբերակել փաստերի շարադրանքն ու մեկնաբանությունը:
- Չխեղաթյուրել փաստերը: Հնարավորինս արագ ուղղել հրապարակած սխալները:
- Չհավաքել տեղեկություններ անօրինական եւ անազնիվ եղանակներով:
- Որեւէ մեկին անօրինական գործողության կամ անգործության մեջ մեղադրելուց առաջ լսել նրա կարծիքը եւ պատասխանի հնարավորություն ընձեռել:
- Պահպանել անմեղության կանխավարկածի սկզբունքը:
- Բոլոր հնարավոր դեպքերում նշել լրատվության աղբյուրը: Նկատի ունենալով, որ հետաքննական լրագրությունը չի կարող գոյություն ունենալ առանց գաղտնի աղբյուրների, եթե պայմանավորվածություն է եղել չբացահայտել լրատվության աղբյուրը, ապա խոստումը պետք է պահել:
- Հարգել հեղինակային իրավունքը:
- Պատվերով նյութեր չգրել:
- Չընդունել նվերներ, հրաժարվել անվճար ուղեւորություններից կամ այլ ծառայություններից, որոնք կասկածի տակ կա-

70 Էթիկայի կանոնագիր, 2002 թ., 6 դեկտեմբեր, www.hetq.am:

րող են դնել մեր անկախությունն ու անկողմնապահությունը եւ վտանգել հասարակության վստահությունը «Հետք» թերթի նկատմամբ: Եթե հնարավոր չէ խուսափել նվերից, ապա ընդունելով այն՝ ուղարկել մանկատներ, ծերանոցներ կամ նման այլ հաստատություններ:

- Հարգել մարդու անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը, հեղինակությունը, պատիվն ու արժանապատվությունը:
- Գրագողություն չանել:
- Չենթարկվել քաղաքական ու ֆինանսական ազդեցությունների ու ճնշումների:
- Չլինել որեւէ կուսակցության անդամ, քաղաքականության մեջ չներքաշվել, պետական պաշտոններ չզբաղեցնել:
- Խուսափել երկրորդ աշխատանքից, եթե դա կասկածի տակ է դնում լրագրողի անկախությունն ու օբյեկտիվությունը:
- Խուսափել պաշտոնյաների հետ խիստ մտերիմ կապեր ունենալուց: Մեր անձնական եւ մասնագիտական վարքագիծը չպետք է անվստահություն եւ կասկած ներշնչի մասնագիտության եւ թերթի նկատմամբ:

Մասնագիտական գործունեության ընթացքում վերոնշյալ սկզբունքներին պետք է հետեւի «Հետք» թերթի յուրաքանչյուր լրագրող:

## Համագործակցել փեղացի որեւէ լրագրողի հետ

Հաճախ հետաքննական թեմաները դուրս են գալիս մի երկրի սահմաններից: Կան այնպիսի թեմաներ, որոնք շոշափում են փողի լվացումը, զենքերի անօրինական տեղափոխումը կամ մարդկանց առեւտուրը, բնապահպանական խնդիրները եւ այլն: Նման դեպքերում անհրաժեշտություն է առաջանում կապ հաստատել փվյալ երկրի գործընկերների՝ փեղացի լրագրողների հետ: Ամենաարդյունավետ տարբերակը այս պարագայում համատեղ հետաքննությունն է: Եթե ձեզ հետաքրքրող թեմայի շուրջ աշխատել է նաեւ որեւէ տեղացի լրագրող, շատ հնարավոր է, որ այդ լրագրողը համաձայնի անել դա համատեղ: Դուք կարող եք լուրջ լրագրողներ գտնել ցանկացած երկրում՝ կապ հաստատելով տեղի լրագրողական կազմակերպություններից որեւէ մեկի հետ (նմանապիպ կազմակերպություններից

մի քանիսն ընդգրկված են ստորեւ ներկայացված ցուցակում): Կան նաեւ կազմակերպություններ, որոնք ստեղծված են հենց նման ծրագրեր իրականացնելու համար: Դրանցից մեկը Հետաքննող լրագրողների դանիական ասոցիացիան է՝ Scoop-ը: Կազմակերպությունն արդեն Հայաստանում ունի ներկայացուցիչ, ով կարող է օգնել ձեզ համատեղ հետաքննական նախագծերի իրականացման գործում (այցելեք կազմակերպության կայքէջը՝ www.i-scoop.org): Կայքում դուք կարող եք իմանալ, թե ինչպես գտնել գործընկերներ այլ երկրներում: Գործում է նաեւ գլոբալ հետաքննական լրագրության (Global Investigation Journalism, www.globalinvestigativejournalism.org) ցանց, որտեղ կարելի է գործընկերներ գտնել բազմաթիվ երկրներում: Այս ամենը, իհարկե, պահանջում է լավ կազմակերպվածություն եւ մեկը մյուսի նկատմամբ վստահություն:

ԱՄՆ-ում առկա կարեւորագույն լրագրողական կրթաթոշակները (տրվում են Հարվարդի, Ստենֆորդի եւ Միչիգանի համալսարանների կողմից) ամեն տարի հատկացվում են միջազգային լրագրողների: Կրթաթոշակի արժանացած լրագրողների ցուցակը նույնպես կարող է ձեզ օգնել, եթե դուք Ձեր երկրից դուրս աշխատակիցներ եք փնտրում: Այդ տեղեկությունները կարող եք գտնել գրքի վերջում ներկայացված կայքէջերում:

# ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍԱՆԻՏԱՐՆԵՐԸ. ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

## Հետաքննության ընթացքի խոչընդոտները եւ վտանգները

### Խոչընդոտներ

«Ի՞նչ է քո կամ ձեր ուզածը,- հաճախ եմ լսում այսպիսի հարցադրումներ ծանոթներից, բարեկամներից, ընկերներից,-ինչի՞ եք ուզում հասնել ձեր գրածներով»: Իմ պատասխանը հետեւյալն է՝ ուզում եմ այդ ամենի մասին իմանան նաեւ ընթերցողները: Մի հարցազրույցում, հիշում եմ, այսպիսի համեմատություն էի արել նույնատիպ հարցի պատասխանելիս. «Ակվարիումում, որտեղ ձկներ են պահում, մի ձկնատեսակ կա, որին ձուկ պահողները կոչում են «սանիտար»: Այդ ձուկն ունի մի գործառույթ՝ մաքրել ակվարիումի պատերը, եւ ընդհանրապես ամբողջ կեղտը: Հասարակության մեջ այդ գործառույթը կատարում ենք մենք՝ հետաքննող լրագրողներս: Փորձում ենք մաքրել կեղտը, եւ երբեմն ստացվում է: Իսկ եթե չի ստացվում, ուրեմն լավ «սանիտարներ» չենք, ուրեմն լավ չենք կատարում կեղտը մաքրելու մեր գործը: Ես մինչեւ հիմա էլ վստահ եմ, որ այնքան էլ լավ չենք անում մեր գործը, բայց համոզված եմ նաեւ, որ կարող ենք իրականացնել մաքրողի այդ առաքելությունը»:

Եւ ահա, այդ առաքելությունն իրականացնելու ճանապարհին հանդիպում ենք բազում խոչընդոտների, մեր առջեւ անջրպետներ են գոյանում, որոնք երբեմն դժվարհաղթահարելի են, որոնք կարող են լրագրողին հասցնել հուսահատության: Եւ կարող ես նմանվել փողոցում միայնակ թափառող քնձռոտ շան, երբ ամեն մի անցորդ փնթփնթում է կողքովդ անցնելիս, երբեմն քար են նետում, ոտքով խփում, հայհոյում: Իսկ նման վիճակում հայտնվելու առիթները շատ են, որովհետեւ երբ չես կարողանում որեւէ բան փոխել քո աշխատանքով, երբ զգում ես անզորությունդ, քեզ այլ բան չի մնում, քան թերագնահատել քո աշխատանքը, որին նվիրել ես կամ որոշել ես նվիրել ողջ կյանքդ:

Մեր փորձառությունը ցույց է տալիս, որ հետաքննությունների ընթացքում հիմնական խոչընդոտը պաշտոնական տեղեկատվություն ստանալն է: Երբ տալիս ես հարցեր, որոնք վերաբերում են զանազան

չարաշահումներ բացահայտելուն, ամիսներ շարունակ դրանց պատասխանները չես կարողանում ստանալ, կամ էլ ստանում ես շատ անհեթեթ պատասխան: Մինչդեռ այդ տեղեկատվությունը ոչ միայն հինգ օրվա ընթացքում պիտի տրամադրեին, այլ այն պետք է փվյալ գերատեսչության կայքում տեղադրված լիներ, որպեսզի ոչ միայն լրագրողը, այլեւ ցանկացած քաղաքացի հեշտորեն ձեռք բերեր:

Կարելի է անել այսպիսի հետեւություն՝ պաշտոնյաներն անպայման դժվարություններ են ստեղծում այն տեղեկատվությունը տրամադրելու հարցում, որն անհրաժեշտ է հասարակությանը:

Ընդ որում՝ հենց այդ ընթացքում էլ նրանք փորձում են կանխել հոդվածի հրապարակումը:

*2001 թ.-ին, երբ բացահայտել էինք, որ Առողջապահության նախարարության Արյունաբանության կենտրոնից ՁԻԱՀ-ով հիվանդից վերցրել են դոնորական արյուն եւ հանձնել այլ հիվանդի, Առողջապահության նախարարությունը «պատերազմ» հայտարարեց մեր կազմակերպության լրագրողին, նախարարը հրահանգել էր չշփվել լրագրողի հետ, տեղեկատվություն չտրամադրել, նրա որեւէ հարցի չպատասխանել: Տեղի ունեցավ նախարարության կոլեգիայի նիստ, որին կարող էին մասնակցել լրագրողները, սակայն նախարարը դահլիճից դուրս հրավիրեց մեր կազմակերպության լրագրողին, ով «համարձակվել» էր հրապարակել այդ փաստերը: Բայց այդ փաստերը հրապարակելուց հետո նույն թեմայով սկսեցին գրել այլ լրատվամիջոցներ, եւ որոշ ժամանակ անց նախարարությունն ընդունեց, որ նման բան եղել է իր կառույցում: Կարճ ժամանակ հետո Արյունաբանության կենտրոնի տնօրենը հեռացվեց աշխատանքից:*

Լինում են դեպքեր, երբ պաշտոնյաներն ընդհանրապես չեն պատասխանում: Այդպես վարվեց Բնապահպանության նախարարը:

*«Հետքի» լրագրող Լենա Նազարյանը պարզել էր, որ Բնապահպանության նախարար Արամ Հարությունյանը մեծ հո-*

*ղապարածք է ձեռք բերել Սեւանա լճի ափին (հոդվածն ամբողջությամբ՝ Հավելված 4-ում): Լճից մի քանի մետր հեռավորությամբ այդ պարածքում շինարարություն էր իրականացվում: Մի քանի աղբյուրներից ճշտելուց հետո հրապարակում ենք  տեղեկատվությունը լուսանկարով: Մենք գիտեինք, որ տարածքն իր անունով չէր, բայց կարողացանք պարզել, որ սեփականատեր հանդիսացող ընկերության հիմնադիրն ու տնօրենը նախարարի երկու մորաքրոջ որդիներն են, իսկ ընկերությունն էլ գրանցված էր նախարարի ծննդավայրում՝ Եղվարդում: Պարզել էինք նաեւ, որ մորաքրոջ տղաներից մեկի անունով էլ գրանցված է նախարարին պատկանող ոսկու հանքավայրը: Բայց սա այլ հետաքննության թեմա էր: Այդ հողատարածքը գտնվում էր «Սեւան ազգային պարկի» Արտանիշ արգելոցի սահմաններում եւ դրա հատկացումը կատարվել էր օրենքի խախտումներով: Իսկ շինությունները կառուցվում էին լճի մակարդակից ունեցած բարձրության՝ օրենքով սահմանված նիշի խախտումով: Ապօրինությունների այս շղթան բացահայտելուց հետո հասել էր հետաքննության մեջ ընդունված «գլխավոր հարցազրույցն» անցկացնելու ժամանակը: Հարցազրույց անելու մեր բանավոր խնդրանքն անտեսվեց: Ստիպված նամակ գրեցինք նախարարին՝ հայտնելով մեր բացահայտած խախտումների մասին, եւ խնդրեցինք պարզաբանումներ տալ: Սակայն այդ նամակն ուղիղ մեկ ամիս մնաց նախարարի սեղանին: Համենայնդեպս, այդպես էր ներկայացնում նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավարը: Մեզ այլ բան չէր մնում, քան հրապարակել հոդվածը եւ սպասել արձագանքի, որը հնարավոր է նաեւ չլինի:*

## Վտանգներ

Ինձ մշտապես տրվում են հարցեր ճնշումների մասին: Խուսափում եմ այդ մասին պատմել, որովհետեւ չեմ կարծում, թե լրագրողներիս վրա ճնշումներն ավելի շատ են, քան, ասենք, փաստաբանների, սովորական մարդկանց վրա: Ավելին, մենք ինչ-որ առումով ավելի լավ դիրքում ենք, քան մնացած բոլորը:

Ճնշումներ, իհարկե, լինում են, դրանք արտահայտվում են ամենատարբեր ձեւերով, բայց մեր խմբագրությունում մի լուռ պայմանավոր-

վածություն ունենք. դրանց մասին չենք խոսում: Եթե, իհարկե, դրանք կյանքի համար վտանգավոր չեն դառնում: Չխոսելը, ավելորդ տեղը ուշադրության կենտրոնում չհայտնվելը մեր սկզբունքներից մեկն է: Խնդիրներ միշտ ենք ունենում: Սկսած իրավապահ մարմիններից՝ մինչեւ զանազան պաշտոնյաների հետ ունեցած պարզաբանումները: Մեր խնդիրները պետք է մնան խմբագրության ներսում: Քանի որ հասարակությունը, մամուլը շատ քաղաքականացված են, եւ ցանկացած միջադեպ անմիջապես քաղաքականացվում է: Մենք որեւէ քաղաքական թիմում երբեք չենք եղել: Դա արդեն հսպակ գիտեն բոլոր կողմերը՝ թե՛ իշխանությունը, թե՛ ընդդիմությունը եւ թե՛ մեր ընթերցողները: Այդ պատճառով նաեւ մեզ չեն սիրում երկու կողմերն էլ, բայց երկու կողմերն էլ միաժամանակ վստահում են: Երբեմն մենք թիրախ ենք դառնում նաեւ բոլոր կողմերի համար:

Լրագրողական հետաքննությունը նաեւ վտանգավոր կարող է լինել լրատվամիջոցի, մասնավորապես հետաքննություն կատարած լրագրողի համար:

*Ինչպես արդեն նշել եմ, մենք մեկ տարի չէինք կարողանում եթեր տալ բանակում զինվորի սպանության մասին մեր հետաքննությունը: Դատարանը զինվորին դատապարտել է 14 տարվա ազատազրկման: Սակայն այդ սպանությունը նա չի կատարել: Յոթ ամիս տեւած մեր հետաքննությամբ ցույց էինք տվել, թե ինչու նա չէր կարող կատարել այդ սպանությունը, ի՞նչ հանգամանքներում է խուստովանական ցուցմունքներ տվել եւ թե ինչպես են նրան խոշտանգել քննիչները եւ զորամասի «հետդինակությունները»: Այս վերջինները կարողացել են անարգել լքել Հայաստանը: Իսկ ամենագլխավորը՝ ներկայացրել էինք զինվորական դատախազության թույլ տված խախտումները, իրար հակասող որոշումները: Այդ տղան այժմ բանտում է, երկու անգամ ինքնասպանության փորձ է կատարել, սակայն, բարեբախտաբար,երկու դեպքում էլ այն կանխվել է: Այժմ նրա գործը գտնվում է Եվրադատարանում: Երբ հանցագործ աշխարհի մասին եք գրում եւ ցույց տալիս, թե ինչ թելերով են նրանք կապված իշխանության բուրգում գտնվողների հետ, դա չի կարող վտանգավոր չլինել: Դա, բնականաբար, ավելի վտանգավոր է, քան, ասենք, էկոլոգիական թեմայով հետաքննությունը:*

*Կամ հոդված եք գրում կազմակերպված հանցագործությունների մասին, բացահայտում նրանց կապն այս կամ այն պաշտոնյայի հետ, պետք է հաշվի առնել հաշվեհարդար տեսնելու հավանականությունը: Այնպես որ, սկսելուց առաջ պետք է լավ մտածել:*

Այնպես որ, հիշեք՝ ձեր ճանապարհին ոչ միայն մասնագիտական խոչընդոտներ են լինելու, այլ նաեւ վտանգավոր պատնեշներ, անգամ՝ կյանքի սպառնալիք:

Միշտ պետք է հաշվի առնել մեկ այլ ռիսկ, որին կարող է ենթարկվել խմբագրությունը:

*Արդեն մի քանի ամիս է Իջեւանի քաղաքապետը դատական գործ է սկսել «Հետքի» դեմ: Նա իր արժանապատվությունը եւ գործարար համբավը արատավորելու համար խմբագրությունից պահանջում է 930 հազար դրամ (մոտ 3 հազար դոլար): Իհարկե, սա խմբագրության համար մեծ գումար է, մյուս կողմից՝ պարտության դեպքում մեր հեղինակության հարցն է դրվում: Եթե պարտվենք, նշանակում է սխալ ենք աշխատել, ունեցել ենք բացթողումներ, խախտել ենք օրենքը: Դա կորուշի դատարանը, բայց համոզված ենք, որ այդ նյութերի շարքը, որոնց համար դատարան է դիմել քաղաքապետը, նման բացթողում չունի: Լրագրողը կատարել է բոլոր անհրաժեշտ քայլերը՝ բացահայտելու խկությունը, եւ դիմել է նաեւ քաղաքապետին՝ պատասխանելու հոդվածում բարձրացված հարցերին: Սակայն վերջինս չի պատասխանել, այդ մասին նույնպես գրվել է հոդվածում: Քաղաքապետի լռությունը հոդվածագրին թույլ է տվել անել որոշակի եզրահանգումներ[71]:*

Բոլոր փաստաթղթերը պահեք մի քանի վայրերում, նախ՝ տպագիր վիճակում, հետո՝ համակարգիչներում, հիշողության կրիչում: Ավելորդ ինքնավստահություն պետք չէ, թե ձեզ ոչ ոք չի կարող խոչընդոտել: Ամենապարզական բանը համակարգչի վրա վիրուսային հարձակումն է: Նման դեպք եղավ, երբ մենք սեքս բիզնեսի մասին հետաքննություն էինք անում: Ինչպես նաեւ ամենաանմեղ բանը՝ համակարգչի շարքից դուրս գալը, կամ դժբախտ պատահարը, ասենք՝ հրդեհը, գողությունը, ջրհեղեղը եւ այլն: Դրանք պետք է պահպանեք, որովհետեւ հնարավոր է այդ փաստաթուղթը պետական մարմնի արխիվից անհետանա:

71 Ոսկան Սարգսյան, Ու՞մ գրպանն են մտնում ավազահանքի փողերը, http://old.hetq.am/arm/society/7993/:

Նման դեպքեր էլ են եղել «Հետքի» պրակտիկայում. խմբագրությունում փաստաթղթի պատճենը կար,  բայց քաղաքապետարանի արխիվում արդեն անհետացել էր մի պաշտոնյայի ստորագրությամբ նամակը: Տեղեկատվության պահպանման ապահով վայր է նաեւ համացանցը: Մենք Դուբայում կատարած նկարահանումները ամեն օր լցնում էինք համացանցում առանձնացրած տարածքում եւ տեսաժապավենների պատճենները փոստով ուղարկում ապահով հասցեով՝ երկրից դուրս:

Մի քանի խոսք հոդվածների հրապարակումը կանխելու՝ Հայաստանում ամենից տարածված մեթոդների մասին: Նախ՝ փողով «հարցերը լուծելու» տարբերակը. սա Հայաստանում ամենատարածված ձեւն է: Թերթեր կան, որոնց լրագրողները կամ խմբագիրն ասում է, թե այս հոդվածը գրելու կամ չտպագրելու համար ինչքան փող պետք է վճարի իր «հերոսը»: Այդ մասին գիտեն նաեւ պաշտոնյաները, եւ նրանց մունետիկներին շատ հաճախ կարելի է հանդիպել այս կամ այն լրագրողի, խմբագրի հետ կամ խմբագրության շենքում:

*Տարիներ առաջ, դեղերի մասին հետաքննություն կատարելիս, «Հետքի» խմբագրություն եկան երկու մարդ եւ առաջարկեցին մեծ չափի գումար հոդվածաշարի տպագրումը դադարեցնելու համար: Երբ նրանց ասացի, որ համապատասխան ծառայությունները մեր խմբագրությունում «ժուչոկ» (լսող սարք) են տեղադրել, նրանք գունատվեցին եւ անխոս հեռացան խմբագրությունից:*

Հոդվածի հրապարակումը կանխելու տարածված ձեւերից մեկն էլ այն է, երբ գտնում են լրագրողին կամ խմբագրին մտերիմ, ծանոթ մեկին եւ խնդրում միջնորդել: Բայց նման դեպքեր տեղի էին ունենում շատ վաղուց, այսօր նման փորձեր չեն արվում, որովհետեւ յուրաքանչյուր լրատվամիջոցի, լրագրողի մասին արդեն ստեղծված կարծիք կա, եւ ոչ ոք նման քայլի այլեւս չի գնում:

Տարածված ձեւերից մեկը մնում է սպառնալիքը: Նման մի քանի դեպքեր մեր լրագրողների հետ պատահել են: *Վերջին անգամ 2008-ին էր, երբ Կոտայքի մարզպետը մեր մարզային թղթակցին զգուշացրել էր, որ եթե նա գրի հետաքննվող նյութի մասին, մարզում այլեւս աշխատանք չի գտնի: Այդ նյութը դեռ անավարտ է, եւ մենք ստիպված այդ մարզ պետք է գործուղենք Երեւանի լրագրողներից մեկին:* Հատկապես մարզերի լրագրողներն են գտնվում ծանր վիճակում: Նրանց համար դժվար է բացա-

հայտող հոդվածներ գրել եւ շարունակել աշխատել ու ապրել իրենց բնակավայրերում:

*Հինգ տարի առաջ մենք նաեւ փողոցային պարզաբանման մի միջադեպ ունեցանք սափրագլուխների մի խմբի հետ: Սակայն այդ պարզաբանումը, որ տեղի ունեցավ հայտնի «Տեցի կռուգի» մոտ գտնվող մի պարածքում, խաղաղ ու համերաշխ ավարտ ունեցավ:*

Վտանգավոր իրավիճակներ կարող են լինել այլ երկրում աշխատելիս: Այս մասին մանրամասն պատմվում է Հավելված 1-ում:

Ահա այս դժվարություններն ու խոչընդոտները հաշվի առնելով՝ լրագրողական հետաքննությամբ պետք է զբաղվի մեկը, ով ունի լրագրողական որոշակի փորձ:

Հետաքննությամբ լրագրողը բացահայտում է, թե ովքեր ինչպիսի օրենքներ են խախտել, չարաշահումներ թույլ տվել: Առանց անուններ նշելու չեք կարող հետաքննություն անել: Այնպես որ, դուք նաեւ բացահայտում եք այն պաշտոնյաներին, ովքեր կատարել են այդ չարաշահումները: Պատրա՞ստ եք դուք անել այդպիսի գործ, վտանգավոր գործ: Պատրա՞ստ եք նշել, թե ովքեր են կանգնած այս կամ այն գործարքի ետեւում: Եթե ոչ, ուրեմն անիմաստ է առհասարակ զբաղվել լրագրությամբ, հատկապես հետաքննական լրագրությամբ: Սա դժվար գործ է, սա միայն լրագրություն չէ: Սա լրագրության ամենավտանգավոր հատվածն է, մանավանդ մեր երկրի նման երկրներում աշխատող լրագրողների համար: Բայց մենք ունենք նաեւ մի քանի առավելություններ՝ թեմաների առատությունը եւ հասարակության վստահությունը: Հասարակությունը հետաքննող լրագրողին ավելի է վստահում, քան մյուսներին, որովհետեւ այդ բացահայտումների մասին նրանք շատ ուշ են մոռանում: Ես գիտեմ դեպքեր, երբ քաղաքացիները գնում են խմբագրություններ եւ ասում, որ ուզում են կոնկրետ լրագրողը զբաղվի իրենց գործով: Մյուս առավելությունը, որի մասին ուզում եմ առանձնահատուկ նշել, հետեւյալն է՝ հետաքննական լրագրության դերն իսկապես մեծ է Հայաստանի նման երկրներում: Որովհետեւ հետաքննող լրագրողը բացահայտում է այն, ինչ թաքցնում են պաշտոնյաները, ստիպում են, որ նրանք թափանցիկ աշխատեն: Պաշտոնյաները պետք է իմանան, որ իրենց կայացրած

որոշումների, զանազան գործարքների մասին վաղ թե ուշ իմանալու են լրագրողները:

Ինչքանո՞վ է թեման հուզում հասարակությանը, ինչքանո՞վ այն ունի հասարակական հնչեղություն, որպեսզի այն հետաքննես: Ես կարծում եմ՝ չկա այդպիսի թեմա, որը չունենա հասարակական հնչեղություն: Դա կախված է նրանից, թե ինչ խորությամբ եք դուք կարողանում բացահայտել խնդիրը եւ ինչքանով եք կարողանում ձեւակերպել նրա հասարակական կարեւորությունը:

Մեր աշխատանքի գնահատականը ընթերցողը պետք է տա, այլ չափանիշ չի կարող լինել: Եթե մեզ չեն ընթերցում, ուրեմն վատ ենք գրում:

Լրագրողական հետաքննության ճանապարհն, իսկապես, դժվար է, որովհետեւ ընդհանրապես դժվար է ճշմարտությանը հասնելու ճանապարհը, եթե երբեւէ կարելի է հասնել բացարձակ ճշմարտության:

> Դուք պետք է լինեք համառ եւ երբեք չհուսահատվեք: Եթե նահանջեք, ոչնչի չեք հասնի: Հավատացած եղեք, երբ համառ եք, Աստված բարեհաճ է լինում, ձեր ներքին ձայնը հուշում է, թե ինչ է պետք անել:

Սովորաբար, ամեն ինչ շատ խճճված է լինում, շատ դժվար է պարզել՝ ով է չարաշահել իր պաշտոնեական դիրքը, խախտել օրենքը: Մեր աշխատանքը շատ բարդ հանելուկի լուծման է նման: Լրագրողի պարտականությունը հենց այդ դժվար լուծելի հանելուկների պատասխանները գտնելն է:

Լրագրողը պատասխանատու չէ այս կամ այն ոլորտում տիրող վիճակի համար, նա պատասխանատու է ընթերցողների առջեւ: Դրանց համար պատասխանատու են երկրի նախագահը, վարչապետը, ոստիկանապետը, քաղաքապետը, նախարարը: Նրանք նախ եւ առաջ ունեն մեկ խնդիր՝ մնալ իրենց պաշտոններում, իսկ իրենց պաշտոններում մնալու համար նրանք պետք է լավ աշխատեն: Լրագրողներն ունեն ավելի կարեւոր առաքելություն, նրանք տեղեկացնում են հասարակությանը, թե ինչպես են պաշտոնյաները կամ ընտրված ղեկավարները կատարում իրենց պարտականությունները:

Պարզել, թե ինչու ինչ-որ բան չի ստացվել, ինչու է այս կամ այն բանը տեղի ունեցել, ինչքանով է դա վատ եւ ինչպես կարելի է համակարգը կատարելագործել, որպեսզի քրեական տարրերը չսերտաճեն իշխանություններին, որպեսզի ավտոտեսուչները, ուսուցիչները, բժիշկները, նախարարները կաշառք չվերցնեն, մրցույթները լինեն ավելի թափանցիկ, տնտեսության մեջ չլինեն մենաշնորհներ: Ահա այս ամենի համար է նաեւ պատասխանատու լրագրողը:

Երբեմն ամիսներ ես անցկացնում թեման մանրամասն ուսումնասիրելու համար: Խորանում ես նյութի մեջ՝ սպառիչ պատասխաններ գտնելու համար, թե ինչու է այս կամ այն երեւույթը տեղի ունեցել: Բայց երբ հոդվածը հրապարակելուց հետո անմիջապես որեւէ արձագանք չես ստանում, որեւէ բան չես կարողանում փոխել, քեզ պարտված ես զգում: Մտածում ես՝ գուցե լրագրող-հասարակություն կա՞պը չի աշխատում: Ինչու՞ չեն արձագանքում ընթերցողները: Չէ՞ որ լրագրողի աշխատանքի գնահատականը պետք է տան ոչ թե պաշտոնյաները, այլ՝ հասարակությունը: Բայց ահա անցնում է որոշ ժամանակ, եւ զգում ես, որ կապ ես հաստատել ընթերցողների հետ: Հենց այդ կապն է հասարակության արձագանքը, նա վստահում է քեզ եւ ուզում է իր պատմությունը դու էլ իմանաս, ուզում է հենց քեզ պատմել, եւ ոչ մեկ ուրիշի: Սա ես ասում եմ մեր փորձից: Վերջին մեկ տարում չի եղել մի հետաքննություն, որ մեծ արձագանք չունենա: Ավելին, թրաֆիկինգի մասին մեր հետաքննությունը միջազգային արձագանք ունեցավ: Ամենատարբեր կազմակերպություններ մեզ նամակներ են հղում, համագործակցության առաջարկ անում, տեղեկություններ խնդրում կամ նոր հետաքննության համար թեմաներ տալիս: Այս պատմությունը դեռ շարունակվում է: Հարյուրավոր նամակներ ենք ստանում ընթերցողներից, արձագանքներ, որոնք մեզ շատ են ուրախացնում: Սա լրատվամիջոցի ամենամեծ հաղթանակն է, երբ արձագանքում են հոդվածներին: Դրանից հետո հայտնվում են մարդիկ, ովքեր պատրաստակամ են տեղեկություններ տրամադրել, որովհետեւ վստահում են: Վտանգավոր թեմաներ շոշափող նյութերի դեպքում ընթերցողներն անգամ հորդորում են մեզ զգույշ մնալ, վտանգի չենթարկել մեզ: Սա այն գնահատականն է, որի համար աշխատում է լրագրողը:

Միշտ պետք է հաշվի առնել, որ պետական մարմինները հնարավոր է չարձագանքեն, բայց դա չի նշանակում, թե լրագրությունը պետք է վերածել հայհոյախոսության եւ ամեն գնով արձագանք ստանալ: Դրանով դուք ձեր կոչմանն արժանի չեք լինի, դրանով կազդարարեք ձեր լրատվամիջոցի ազատության ավարտը: Ի վերջո, ազատություն

ձեռք բերելու համար ձեզանից առաջ մարդիկ պայքարել են, փասնամյակների ընթացքում մարդիկ սանտիմետր առ սանտիմետր նվաճել են այդ ազատության մի հատվածը, եւ չարժե այդքան հեշտությամբ զոհաբերել այն սեփական ամբիցիաները բավարարելու համար:

Իսկապես, դժվար է դիմակայել այսքան փորձությունների: Բայց այդ ամենն անում ես քո ընթերցողի համար, այն ընթերցողի, ով ամեն առավոտ բացում է թերթը՝ իմանալու, թե ինչ են այսօր պատմելու իրեն հուզող հարցերի մասին: Միայն այդ մեկի առաջ եք դուք պատասխանատու, միայն այդ մեկին եք պարտավոր հաշվետվություն տալ: Իսկ հաշվետվությունը ձեր արդար, ազնիվ, օբյեկտիվ, ճշգրիտ պատմություններն են: Դուք կստեղծեք այն լրագրությունը, որի ճշմարտացիությունը ապացուցել որեւէ մեկը չի պահանջի, որովհետեւ դուք վաղուց նվաճել եք այդ վստահությունը:

# ՀԱՎԵԼՎԱԾ 1

# «ԱՆԱՊԱՏԻ ԳԻՇԵՐՆԵՐՈՒՄ», ԿԱՄ ՄԻ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ




Այժմ ուզում եմ պատմել «Հետքի» ամենամեծ հետաքննական նախագծի մասին, որն ունեցավ եւ՛ լուրջ արձագանքներ, եւ՛ զգալի արդյունքներ: Հրապարակումից հետո Գլխավոր դատախազությունում ստեղծվեց միջգերատեսչական հանձնաժողով՝ ուսումնասիրելու հրապարակման մեջ եղած փաստերը[72]: Հանձնաժողովի մեջ ներգրավված էին Ազգային ժողովի եւ կառավարության ներկայացուցիչները: Այս հետաքննությունը տեւեց երկու տարի (2004-2006 թթ.) եւ, կարելի է ասել, այսօր էլ այն շարունակվում է:

Ուսումնասիրելով թրաֆիկինգի խնդիրները, ծանոթանալով զոհերին, մասնակցելով բազմաթիվ դատական պրոցեսների՝ որոշեցինք պարզել, թե ինչպես են հայ կանայք Հայաստանից՝ գյուղերից, փոքր քաղաքներից, առանց որեւէ օտար լեզվի իմացության հայտնվում Արաբական Միացյալ Էմիրություններում: Ուզում էինք պարզել՝ արդյոք դա կազմակերպվա՞ծ ցանց է, եթե այո, ապա ովքե՞ր են դրա հետեւում: Մեզ, իսկապես, հաջողվեց բացահայտել նման մի ցանց: Ահա թե ինչպես եղավ դա:

Այս թեմայով սկսեցին հոդվածներ գրել «Հետքի» երեք լրագրողներ: Դա, կարելի է ասել, դարձավ հետաքննության նախնական տեղեկատվության հավաքման փուլը: Մասնակցելով թրաֆիկինգի, մարմնավաճառների, կավատների դատաքննություններին՝ լրագրողները զուգահեռաբար դատարանների արխիվներում ուսումնասիրում էին դատական գործերի նյութերը, պատճենահանում այնտեղ եղած

72 Էդիկ Բաղդասարյան, Արա Մանուկյան, Անապատի գիշերներում, Երեւան, 2006 թ., էջ 80:

փաստաթղթերը, լուսանկարները: Այս ճանապարհով մենք ունեցանք տեղեկատվության հսկայական մի շտեմարան: Զգալի տեղեկություններ էին տալիս թրաֆիկինգի զոհերը, նրանք պատմում էին մանրամասներ, որոնք երբեք տեղ չեն գտնում քրեական եւ դատական գործերում:

Մինչեւ Արաբական Միացյալ Էմիրություններ մեկնելը մենք ունեինք մի քանի կավատների անուններ, գիտեինք, թե հայերը Դուբայի որ սրճարաններն են հաճախում: Գիտեինք Երեւանում հավաքագրողների անուններ, հասցեներ, հեռախոսներ[73]: Գիտեինք, թե հավաքագրողներն ինչպես են կանանց տեղափոխում Մոսկվա, որտեղ վերցնելով նրանց հայկական անձնագրերը՝ մի քանի օր անց տալիս էին ռուսական կեղծ անձնագրեր: Սա, կարծես թե, ամենահեշտ փուլն էր, որ մենք մի քանի ամսում ավարտեցինք: Մեր հիմնական խնդիրը հետաքննությունն իրականացնելու համար ֆինանսական միջոցների հայթայթումն էր:

Որտեղի՞ց գտնել միջոցներ Դուբայ մեկնելու, հյուրանոցում մնալու, այնտեղ ապրելու համար: Մենք կազմեցինք աշխատանքային պլանը, հաշվարկեցինք պահանջվող ծախսերը եւ սկսեցինք փնտրել ֆինանսավորման աղբյուրներ: Հայաստանում դա բավականին դժվար գործ է, որովհետեւ մեր երկրում հետաքննական լրագրությանն աջակցող հիմնադրամներ չկան: Սկսեցինք բանակցել զանազան միջազգային կազմակերպությունների հետ, որովհետեւ տեղեկություններ ունեինք, թե ինչ մեծ չափերի գումարներ են ծախսում այդ կազմակերպությունները թրաֆիկինգի դեմ պայքարելու համար: Դա, իմիջիայլոց, հետաքննության լավ թեմա էր, որովհետեւ հենց այդ ժամանակ պարզել էինք, որ նման ծրագրերի ֆինանսավորման համար այդ կազմակերպությունները ծախսել են 1 մլն դոլար: Սակայն ոչ ոք չցանկացավ աջակցել մեզ այդ ժամանակ: Ի վերջո, «Ինտերնյուս-Հայաստան» կազմակերպության մասնակի աջակցությամբ կազմակերպվեց մեր առաջին այցելությունը Դուբայ եւ նախնական հետազոտության իրականացումը, իսկ հետաքննությունն ավարտին հասցրինք սփյուռքահայ հայտնի մի գործարարի շնորհիվ, ով համաձայնեց ֆինանսավորել մեր ծրագիրը՝ իր անունը չհրապարակելու պայմանով:

73 Էդիկ Բաղդասարյան, Արա Մանուկյան, Հավաքագրող խմբերն ազատ գործում են Երեւանում, 9 մարտ, 2005, http://archive.hetq.am/arm/society/0503-dub-3.html:

Մենք հայտնվեցինք Դուբայում, իսկ երկու ժամ անց արդեն «Սուրբ Գեւորգ» անունը կրող հյուրանոցի բարում էինք[74]: Մեր կողքի սեղանի մոտ հայտնվեցին երկու հայ աղջիկներ: Ամերիկահայ գործընկերս անգլերեն էր խոսում, եւ աղջիկների համար մենք լավ «որս» էինք: Ու այդտեղ հասկացանք, թե ինչ ծանր վիճակում ենք հայտնվել: Մենք իսկական շոկ ապրեցինք, երբ «որսի» դուրս եկած երկու հայ աղջիկները գռեհիկ արտահայտություններով կարծիքներ փոխանակեցին մեր մասին, «իրար մեջ բաժանեցին» ինձ ու գործընկերոջս: Սփիպված շատ արագ, գլխիկոր հեռացանք գիշերային այդ բարից:

Ես, բնականաբար, գիտեի, որ ամենից դժվարը կանանց մոտ վստահություն ձեռք բերելն է լինելու: Հաջորդ օրերին դիսկոտեկներում, սրճարաններում մենք հանդիպեցինք այլ կանանց: Ջոհերին շատ արագ էինք զանազանում, ասենք՝ մեր հերոսներից մեկին մենք տեսնում էինք սրճարանի մի անկյունում կանգնած, ինչ-որ մեկին սպասելիս: Ուրիշներն ակտիվ էին, իրենք էին մոտենում տղամարդկանց եւ առեւտուր սկսում մեկ գիշերվա գնի կամ մեկ ժամվա համար: Այդ հասպատություններն փակելուց հետո փողոցում սկսվում էր տղամարդկանց եւ կանանց առքուվաճառքը: Մի հայ աղջկա միջոցով մենք իմացանք նաեւ բնակարանների հասցեներ, որտեղ ապրում են հայ կանայք, եւ հասցեներ, որտեղ մատուցում են իրենց ծառայությունները: Մենք  այցելեցինք բանվորական թաղամասում գտնող մի բնակարան, որտեղ կավատն աշխատեցնում էր վեց հայ աղջիկների: Դա հասարակաց տուն էր՝ էժանագին կանանցով: Այստեղ հինգ-տասը դոլարանոց կանայք էին, ովքեր ծառայություն էին մատուցում Դուբայում բանվորություն անող այլազգիներին: Վեց կանանցից միայն մեկն էր Եւեւանից, մյուսները Հայաստանի մարզերից էին: Մենք կանանց արագ հասկացրինք, որ հաճախորդներ չենք եւ փնտրում ենք մեր բարեկամի աղջկան, որը տնից փախել է: Եւ նրանց ցույց տալով մեզ մոտ եղած պատահական մի աղջկա լուսանկար՝ սկսեցինք հարցուփորձ անել՝ արդյոք տեսե՞լ են այդ աղջկան: Սա, իսկապես, լավ մտածված հնարք էր, որովհետեւ բոլորը միանգամից ցանկանում էին օգնել մեզ՝ գտնելու անչափահաս աղջնակին:

Կանայք հերթով նայում էին լուսանկարը, նրանցից մեկն ասաց, որ տեսել է մի տեղ, մյուսն ասաց՝ հա, հիշում եմ նրան: Եւ նրանք որոշեցին մեզ օգնել: Իսկ ամենապարօրինակն այն էր, որ մեր զրույցի ընթացքում հաճախորդներ էին գնում-գալիս, եւ կանանցից ոմանք դուրս էին գալիս եւ որոշ ժամանակ անց վերադառնում: Մենք թաքցրինք մեր

74 Էդիկ Բաղդասարյան, Արա Մանուկյան, Անապատի գիշերներում, Երեւան, 2006 թ., էջ 19:

լրագրող լինելը: Եւ հնարքն իսկապես աշխատեց: Դա նաեւ միջոց էր՝ նրանց կրկին այցելելու, որովհետեւ խոստացան անպայման հարցուփորձ անել Դուբայում աշխատող մնացած հայ կանանց: Ասացինք նաեւ, որ անկարող ենք Դուբայում գտնել հայերին, սրճարանները, կավատներին: Եւ նրանք իրենց ծառայություններն առաջարկեցին՝ ցույց տալ այդ վայրերը: Մեր հետագա հանդիպումների ընթացքում նրանք պատմում էին, թե հայերի ինչ խմբեր կան, ովքեր են բոսերը, որ սրճարաններում ու դիսկոտեկներում փնտրենք: Մենք սկսեցինք շարժվել աղջիկների գծած «քարտեզով»:

Մի քանի օրվա ընթացքում արդեն հսկայական տեղեկատվություն ունեինք: Գիտեինք՝ որ կավատը որտեղ է ապրում, ով է նրա տեղացի «տանիքը», ով է վերահսկում աղջիկներին, ով է ապահովում կավատի անվտանգությունը: Գրեթե բոլոր կավատներն իրենց կողքին մի տղամարդ էին պահում՝ որպես սիրեկան եւ անվտանգության երաշխավոր, նաեւ՝ մարմնավաճառ աղջիկներին հետեւող: Մենք սկսեցինք մտերմանալ հայ կանանց հետ՝ նրանց հրավիրում էինք սրճարաններ: Նրանց հետ անցկացրած ժամանակի դիմաց վճարում էինք, որպեսզի բոսերը չկասկածեն: Մի քանի հանդիպումից հետո կանայք ամեն ինչ պատմում էին՝ իրենց վիճակի, բոսերի, ընտանիքներին փող ուղարկելու ձեւերի մասին: Մի խոսքով, փնջալների մեր թղթապանակը օր-օրի հաստանում էր: Մեկ տարվա ընթացքում երեք անգամ լինելով Դուբայում, Շարժայում, Աբու Դաբիում՝ կարողացանք բացահայտել հայկական սեքս-բիզնեսի մի ցանց: Մենք հրապարակեցինք հոդվածները[75]՝ Դուբայում արաբ պարագլխի եւ նրա աշխատակիցների անուններով եւ լուսանկարներով: Դա ամենավտանգավոր գործն էր, որ երբեւէ մեր թիմը կատարել է: Մենք գիտակցում էինք, որ եթե բռնվենք, լավագույն դեպքում մեզ սպասվում էր ինը տարվա ազատազրկում:

Այս հետաքննությունն ավելի շատ նման էր իրավապահների աշխատանքին, քան լրագրողի, բայց մենք պետք է անեինք այդ գործը: Արդեն ունեինք հարցազրույցներ, որտեղ կանայք պատմում էին, թե ինչպես են իրենց խաբելով բերել ու ստիպում են զբաղվել մարմնավաճառությամբ: Նրանք տալիս էին անուններ, հասցեներ Երեւանում, իրենց հայրենի բնակավայրերում: Սկզբում մենք նկարահանումները կատարում էինք գաղտնի: Բայց եկավ մի պահ, որ կանանց մի մասին ասացինք, որ լրագրողներ ենք: Նրանք այն զոհերն էին, ում խաբելով էին բերել Էմիրություններ:

75 Էդիկ Բաղդասարյան, Արա Մանուկյան, Դուբայի սեքս-բիզնեսի հայկական ցանցը, 9 մարտ, 2005, www.hetq.am:

Այդ ընթացքում արեցինք մի բան, որն ամենեւին կապ չունի լրագրության հետ, եւ ինձ համար իսկապես մեծ խնդիր էր. կազմակերպեցինք Դուբայից թրաֆիկինգի մի զոհի՝ մի ուսանողուհու վերադարձը Հայաստան: Նա սովորում էր Երեւանի բուհերից մեկում, ընտանիքը սոցիալական ծանր վիճակում էր: Նրանք կորցրել էին իրենց տունը եւ հայտնվել փողոցում: Որպեսզի օգնի իր ընտանիքին, աղջիկը սկսել է աշխատանք փնտրել, եւ մեկը նրան առաջարկել է Դուբայում ամիսը 700 դոլարով գրասենյակային աշխատանք (լավ անգլերեն գիտեր): Աշխատանք առաջարկողը... իր դասախոսներից մեկն էր: Հենց այդ հանգամանքը հաշվի առնելով՝ ուսանողուհին անմիջապես համաձայնվել է: Հասցրել են Դուբայ, անձնագիրը վերցրել եւ ստիպել զբաղվել մարմնավաճառությամբ: Այս պատմության մասին մենք ընդհանրապես չենք գրել: Աղջիկն ասում էր՝ եթե ծնողները, եղբայրները, ընկերներն իմանան, ինքն ինքնասպան կլինի: Նա տանն ասել էր, որ Իսպանիայում է աշխատում եւ շուտով կվերադառնա: Մենք աղջկան ուղեկցեցինք մինչեւ իրենց տուն, իբրեւ ծանոթացել ենք Իսպանիայում, եւ նրա ծնողներն այդպես էլ չիմացան, թե իրականում որտեղ է եղել իրենց աղջիկը: Սակայն նա անձնագիր չուներ, եղածը ռուսական կեղծ անձնագիր էր, որտեղ 21-ամյա աղջկա տարիքը դարձրել էին 31: (Մինչեւ 31 տարեկան չամուսնացած կանանց մուտքը Էմիրություններ արգելված է, նրանք կարող են այցելել այս երկիր միայն ամուսինների կամ ծնողների հետ : Իհարկե, այս օրենքը բոլոր երկրների վրա չի տարածվում, բայց Հայաստանը հայտնվել էր տարիքային սահմանափակման երկրների այդ ցանկում): Ռուսական անձնագրով, բնականաբար, նա Հայաստան չէր կարող գալ՝ իրավապահները կբռնեին: Հայկական անձնագիրը նրանից վերցրել էին դեռեւս Կրասնոդարում, որտեղից նա մեկնել էր Դուբայ:

Այս հետաքննությունն առաջին դեպքն էր իմ լրագրողական գործունեության ընթացքում, երբ ես «գործարքի» մեջ մտա ոստիկանության մի բարձրաստիճան պաշտոնյայի հետ եւ կեղծ անձնագրով ուսանողուհուն կարողացանք հասցնել Երեւան:

Ինչպե՞ս հաջողվեց դա մեզ: Սա մի հետաքննություն էր, որի ընթացքում ես խախտեցի մեր էթիկայի կանոնագրի բազմաթիվ կետեր:

Նախ՝ մեր «կերպարանափոխումը», որը հետաքննական լրագրության մեջ հայտնի հնարք է: Այդ աջիկների մի մասն այդպես էլ չիմացան, որ մենք լրագրողներ ենք: Կատարեցինք գաղտնի տեսագրություններ, որը պրոֆեսիոնալ բարձր չափանիշների տեսանկյունից ընդունելի չէ: Երրորդ՝ կանանց վրա մենք ստիպված էինք ծախսել

փողեր: Սպացվում էր, որ մենք «վճարում էինք» պեղեկապվություն ձեռք բերելու համար: Հակառակ դեպքում մարմնավաճառներին վերահսկող բոսերը գլխի կընկնեին, եւ մենք մեզ բացահայպած կլինեինք: Սրանք էթիկական կարեւոր հարցեր են եւ պեպք է քննարկվեն, որովհեպեւ ես՝ որպես խմբագիր, լրագրողներին արգելում եմ վճարել պեղեկապվության աղբյուրին, ճաշել պաշպոնյայի հեպ, ում հեպ հարցազրույց պեպք է արվի, գաղպնի նկարահանումներ կապարել:

Էմիրություններում առաջին անգամ կապարեցինք գաղպնի նկարահանումներ. այլ կերպ չէինք կարող: Մենք մպնում էինք մասնավոր պարածքներ, վայրեր, որպեղ սպուգում էին «ոպքից գլուխ»՝ կանխելու լուսանկարչական ապարապների եւ պեսախցիկների ներթափանցումը, քանի որ դա արգելված էր: Իմանալով հանդերձ՝ ներս էինք պանում փոքր պեսախցիկ եւ այլ սարքավորումներ՝ հիմնականում այդ գիշերային ակումբների մշպական հաճախորդներ հանդիսացող հայ կանանց միջոցով: Նրանց պայուսակները գրեթե չէին սպուգում, քանի որ արաբական երկրներում չի կարելի շոշափել աղջկա մարմինը: Մենք նման դեպքերում վպանգում էինք ոչ միայն մեզ, այլեւ այդ կանանց, ինչի իրավունքն, իսկապես, չունեինք:

Գաղպնի նկարահանումների հարցը մեծ խնդիր է ոչ միայն Հայասպանում, այլեւ ամբողջ աշխարհում: Լրագրողական գրեթե բոլոր հանդիպումներում այս հարցը քննարկվում է: Ես, որ միշպ դեմ էի արպահայպվում այդ եղանակով պեղեկապվություն ձեռք բերելուն, Դուբայից հեպո փոխեցի իմ վերաբերմունքը: Իսկապես, լինում են իրավիճակներ, երբ անհնար է այլ եղանակով սպանալ իսկապես կարեւոր պեղեկապվությունը: Եթե ձեր բացահայպումը հանրային շահի պեսանկյունից մեծ նշանակություն ունի եւ հնարավոր է՝ լուրջ փոփոխությունների հանգեցնի, գաղպնի նկարահանումը կարող է արդարացվել:

Դուբայի մեր աղբյուրների հեպ մշպական կապ պահպանելու նպապակով նրանց համար գնել էինք բջջային հեռախոսների քարպեր, որոնցով միայն մեզ էին զանգում, երբ հաղորդելու բան էին ունենում: Նրանք զանգահարում եւ ասում էին, ասենք, որ հայերի նոր խումբ է եկել, կամ այս կամ այն կավաւպը եկել է Երեւան, կամ դապախազության աշխապակիցները Դուբայում հանդիպել են այսինչ կավապին:

Այդ աղբյուրներից երեքին, ովքեր թրաֆիկինգի զոհեր էին, խուսափացել էինք եւ կարողացանք տեղափոխել Երեւան՝ առանց այդ մասին որեւէ փող գրելու: Սա է եղել Դուբայի տեղեկատվության մեր մի քանի աղբյուրների հետ ունեցած պայմանավորվածությունը: Երբ դեռեւս նրանք Դուբայում էին, մենք այցելել էինք նրանց ընտանիքներին եւ կապ ունեինք նաեւ վերջիններիս հետ:

«Անապատի գիշերներում» հոդվածաշարը հրապարակելուց հետո (դրանք տպագրվում էին «Հետքում», այնուհետեւ արտատպվում «Առավոտ» օրաթերթում) կազմակերպեցինք համանուն ֆիլմի ցուցադրումը Նարեկացի արվեստի միության սրահում, իսկ նույն օրն այն հեռարձակեց «Երկիր մեդիա» հեռուստաընկերությունը: Ֆիլմն ունեցավ մեծ արձագանք, «Հետքի» էլեկտրոնային հասցեով ստանում էինք հարյուրավոր նամակներ սփյուռքահայերից, օտարներից, զանազան կազմակերպություններից: Քուվեյթից մեզ դիմեց միջազգային կազմակերպություններից մեկի մի աշխատակից՝ խնդրելով զբաղվել թրաֆիկինգի մոլդովացի մի զոհով, ով գտնվում էր Դուբայի ոստիկանությունում: Հենց այս հրապարակումներից հետո տեղի ունեցավ ՀՀ նախագահի եւ գլխավոր դատախազի հանդիպումը, որտեղ քննարկվեցին թրաֆիկինգի խնդիրները: Որոշ ժամանակ անց Հայաստանում սկսեցին ավելանալ թրաֆիկինգի հոդվածով քրեական եւ դատական գործերը: Սակայն մեր ունեցած փաստերը՝ թրաֆիկինգի հոդվածով դատապարտվածների պատժաչափերը, բանտում նրանց անցկացրած ժամանակը մեզ ստիպում էին անել հստակ եզրահանգումներ, որ իրավապահ մարմինները «հովանավորում են» կավատներին[76]:

Դատախազությունում ստեղծվեց հատուկ հանձնաժողով, որի անդամները հանդիպեցին ինձ հետ: «Հանձնաժողովը խնդրեց տրամադրել Դուբայում կատարած այն տեսագրությունները, որտեղ կավատները եւ թրաֆիկինգի զոհերը տալիս են դատախազության աշխատակիցների անունները: Ես հրաժարվեցի տրամադրել այդ ձայնագրությունները, որովհետեւ դա սպառնում է նրանց անվտանգությանը: Հանձնաժողովի անդամների հետ ստորագրեցի մի փաստաթուղթ, որ հրաժարվում եմ դրանք ներկայացնել: Դարձյալ պնդեցի, որ այդ կապը կա, եւ նորմալ քննության դեպքում հնարավոր կլինի արդյունքի հասնել»[77] :

76 Էդիկ Բաղդասարյան, Դատախազությունը լավ է աշխատում, բայց թրաֆիկինգը ծաղկում է, մարտ 23, 2005, www.hetq.am:
77 Հանձնաժողովը ուսումնասիրում է «Հետքի» հրապարակումները, փետրվար 27, 2006, www.hetq.am:




Իսկ հետաքննության առաջին արձագանքը եղավ Արաբական Միացյալ էմիրություններից: ԱՄԷ-ի կառավարությունը որոշեց արգելափակել մեր կայքը[78]: Կայքի հասցեն գրելիս էկրանին հայտնվում էր հետեւյալ գրությունը. «Մենք ներողություն ենք խնդրում, այն կայքը, որ դուք փորձում եք մտնել, արգելափակված է, քանի որ դրա բովանդակությունը հակասում է Արաբական Միացյալ էմիրությունների կրոնական, մշակութային, քաղաքական եւ բարոյական արժեքներին»:

Ինչո՞վ «Հետքը» չի համապատասխանում ԱՄԷ-ի վերոհիշյալ արժեքներին: «Հետքի» լրագրողները պարզել էին, որ սեքս-բիզնեսում ներգրավված են նաեւ Դուբայի ոստիկանության եւ միգրացիոն ծառայության աշխատակիցները: Հրապարակվել են նաեւ հատուկ ծառայության աշխատակցի, ոստիկանի լուսանկարներ, որոնք անմիջական կապ ունեին կանանց վաճառքի հետ: Նշենք, որ հոդվածների հրապարակումներից հետո արձագանքներ էին եղել նաեւ արաբական երկրների եւ ԱՄԷ-ի քաղաքացիներից, ովքեր դատապարտում են իրենց երկրի քաղաքականությունը եւ ստեղծված բարքերը: Հոդվածները արտատպել էին մի քանի արաբալեզու թերթեր: ԱՄԷ-ում հրատարակվող մի թերթ հարցազրույց հրապարակեց ինձ հետ: Կայքի արգելափակմանն անմիջապես արձագանքեց Լրագրողներ առանց սահմանների կազմակերպությունը: Նրանք տարածեցին հայտարարություն[79], որտեղ կոչ էին անում ԱՄԷ-ի իշխանություններին՝ հանել արգելափակումը:

Այս հետաքննությունը ամենամեծ դասերը տվեց «Հետքի» լրագրողներին:

78 ԱՄԷ-ում «Հետքը» արգելափակված է, նոյեմբեր 7, 2005, www.hetq.am:
79 Reporters Without Borders calls for end to blocking of news website,www.rsf.org, December 5, 2005, http://archive.hetq.am/eng/society/0512-rwb.html.

## ՀԱՎԵԼՎԱԾ 2

## ՄԵՆՔ ԳԻՏԵՆՔ՝ ՈՎՔԵՐ ԵՆ ՏԵՐԵՐԸ

Երեւանի քաղաքապետարանը պատերազմ հայտարարեց «Հետաքննող լրագրողներին». այսպես կարելի է բնութագրել վիճակը, որ ստեղծվել էր 2003 թ.-ին՝ պետական այդ մարմնին գրավոր նամակ ուղարկելուց հետո: Քաղաքապետարանի աշխատակիցները նախ հեռախոսով փորձում էին բացատրություններ տալ, որ չեն կարող տրամադրել իմ պահանջած տեղեկությունները, հետո ասացին, որ չունեն մեր պահանջած տեղեկությունները, ապա ասացին, որ պահանջած տեղեկությունների մասին նամակը հստակ չէ ձեւակերպված: Նրանց բոլոր բացատրություններին ի պատասխան՝ ասում էի՝ պատասխանեք գրավոր:

40 օր հետո ուղարկեցին մի անհեթեթ պատասխան՝ նշելով, թե հստակ չէ՝ ինչ տեղեկատվություն ենք «ակնկալում» իրենցից: Ես, իհարկե, նամակում նշել էի, թե կոնկրետ ինչ տեղեկատվություն եմ ուզում՝ տեղում ծանոթանալ 1997-2003 թթ. ընթացքում Երեւանի չորս քաղաքապետերի՝ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի թատրոնի հանրային այգում հողհատկացումներ կատարելու մասին որոշումներին:

Զուգահեռաբար, այդ 40 օրվա ընթացքում մենք ավելի քան 20 անգամ զանգել էինք քաղաքապետարանի արխիվի մի աշխատակցուհու, որին քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարը հանձնարարել էր պատրաստել տեղեկատվության այդ փաթեթը: Երբ նա ավարտեց եւ պատրաստեց այդ բոլոր որոշումները, նույն օրն իմացա դրա մասին: Սակայն երկու օր անց ինձ զանգահարեց քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարը եւ սկսեց նորից տարբեր հարցեր տալ՝ ձեր կազմակերպությունը հասարակակա՞ն է, թե՞ ոչ, կարո՞ղ է տեսնել Արդարադատության նախարարությունում մեր կազմակերպության գրանցման վկայականը եւ այլն, հարցեր, որոնք ոչ մի կապ չունեին նրանց ուղարկած իմ գրության հետ:

Պատասխանեցի, որ չեմ պատրաստվում ներկայացնել որեւէ փաստաթուղթ: «Ես նամակ եմ գրել, եւ դուք պարտավոր եք պատասխանել: Ես լրագրող եմ եւ հոդված եմ պատրաստում»,- ասացի ես:

Իսկ նա հարցրեց՝ կարո՞ղ եք թերթից նամակ բերել: Պատասխանեցի՝ ոչ: Որովհետեւ նամակը ստորագրել էի ես՝ որպես թերթի խմբա-

գիր, եւ այն կնքված էր: Իսկ կնիքի վրա կար նաեւ նրա պահանջած տեղեկությունների մի մասը: Դարձյալ ասացի, որ նրանք պատասխանեն գրավոր: Մի քանի օր անց ստացա այդ անհեթեթ պատասխանը. կոնկրետ ի՞նչ տեղեկատվություն ենք ակնկալում:

Բնականաբար, քաղաքապետարանում ես ունեի տեղեկատվության սեփական աղբյուրներ: Ավելին, այդ որոշումների մեծ մասն արդեն ձեռք էի բերել, մնացածն էլ կարող էի ձեռք բերել: Եվ որոշ հրապարակումներ Օպերայի այգում կատարված հողհատկացումների մասին արդեն եղել էին: Քաղաքապետարանում սկսել էին փնտրել, թե ինչ խողովակներով է տեղեկատվությունը դուրս եկել քաղաքապետարանից: Ստիպված՝ որոշ ժամանակով դադարեցրի աղբյուրի հետ շփումներս: Գիտե՞ք, թե նման դեպքերում ինչ կարող է պատահել այդ մարդու հետ. նրան անմիջապես կհեռացնեն աշխատանքից, ավելին՝ նա այլեւս պետական կառույցներում աշխատանք չի կարող գտնել: Նման մի դեպք արդեն պատահել էր, բայց այդ մասին չեմ ուզում գրել, որովհետեւ տեղեկատվության աղբյուրն ինքը խնդրել է չգրել:

Ի՞նչ կարող է անել նման դեպքում լրագրողը: Այն, ինչ որ միշտ անում է. գրել տեղեկատվության տրամադրումը մերժելու մասին: Այլ կերպ ասած՝ մենք վերցրինք քաղաքապետարանի նետած ձեռնոցը, ընդունեցինք մարտահրավերը: «Երվանդ Զախարյանը «փակեց» բաց փաստաթղթերը» վերնագրով մեր հոդվածն արտատպեց «Առավոտ» օրաթերթը[80], առաջին էջում նյութի մի մասն է եւ մի մեծադիր լուսանկար: Լուսանկարում պատկերված էին վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, նախկին քաղաքապետ Ռոբերտ Նազարյանը եւ գործող քաղաքապետ Երվանդ Զախարյանը: Երեքն էլ ժպտում էին: Ես վստահ էի, որ նրանց երեքին էլ դրեցի անելանելի վիճակում: Իսկ հոդվածս ավարտել էի այսպես. «Իսկ Երեւանի քաղաքապետից մեզ անհրաժեշտ տեղեկությունները ստիպված ենք ստանալ դատարանի օգնությամբ»: Սա մի տեսակ «շանտաժ էր», ծայրահեղ քայլ, բայց ստիպված էինք գնալ դրան, որովհետեւ չորս ամիս խմբագրությունը զբաղվում էր այդ նյութով:

Մինչ այդ մեկ ամսվա ընթացքում տպագրվում էր հոդվածաշարը՝ «Մենք գիտենք՝ ովքեր են տերերը» վերնագրով: Սա հեղինակային երգիչ Ռուբեն Հախվերդյանի հայտնի երգի տողերից է, եւ շատերն անգիր գիտեն այդ երգը: «Հետքը» սկսեց հրապարակել Օպերայի այգում սրճարան կառուցելու նպատակով տարածքներ տրամադրելու

80 Է. Բաղդասարյան, Երվանդ Զախարյանը «փակեց» բաց փաստաթղթերը, 12.11.2003, www.hetq.am:

որոշումների մանրամասները՝ սրճարանների իրական տերերի անուններով: Նյութերը նախ տպագրվում էին «Հետք»-ում, այնուհետեւ՝ «Առավոտ» օրաթերթի առաջին էջում՝ սրճարանի կամ շինարարության ընթացքում գտնվող կառույցի մեծ լուսանկարով: Դրանք փոքր ծավալի նյութեր էին: Ինչու եմ ծավալը շեշտում, որովհետեւ շատերի մոտ այն համոզմունքը կա, որ հետաքննական նյութերը մեծածավալ եւ բարդ նյութեր են: Մի առիթով ասել եմ՝ եթե որեւէ մեկն ուզենա կոռուպցիայի դիդակտիկ նյութեր ունենալ, Օպերայի այգու հողհատկացումները լավագույն օրինակները կարող են լինել. այդտեղ երեւում են կոռուպցիայի բոլոր դրսեւորումները: Ահա այս շարքի առաջին նյութն ամբողջությամբ՝

## Մենք գիտենք՝ ովքեր են տերերը

*Օպերայի շենքին հարող այս տարածքը ԱԺ պատգամավոր Լեւոն Խաչատրյանին հատկացրել է քաղաքապետ Ռոբերտ Նազարյանը: Իհարկե, ամեն ինչ օրինական ձեւակերպված է: Կառավարության 2001թ N 286 հանձարեղ որոշմամբ պաշտոնյաները (քաղաքի կենտրոնում սրճարաններ միայն նրանք են կառուցում) կարող են ստանալ 20 քմ, իսկ այնուհետեւ սրտների ուզածչափով ընդլայնել այն: Չկա մի սրճարան, որը նման ձեւով ընդլայնվածչլինի: Սա օրինական էր: 2002 թ. մայիսին ընդունվեց այլ որոշում, որով հատկացվում է 20 քմ, իսկ ընդլայնում կարող է արվել միայն 20 քմ-ով: Սակայն այս որոշումը պարզապես չի գործում:*

*ԱԺ պատգամավոր Լ. Խաչատրյանը նույն ձեւով ստացել 20 քմ եւ ընդլայնել է: Այս կառույցը Սայաթ-Նովա փողոցի կողմից փակում է Օպերայի շենքի մի հատվածը: Դեռ հնարավորություն կա կանխելու շինարարությունը: Երբ երկու ամիս առաջ քաղաքի գլխավոր ճարտարապետ Նարեկ Սարգսյանին հարցրինք.-«Օպերայի տարածքում կա՞ մի օբյեկտ, որտեղ պահպանված լինի քաղաքապետարանի ճարտարապետության վարչության կողմից հաստատված նախագիծը»,- պատասխանեց՝ ոչ: Պետությունը դրամաշնորհներ է ստանում հակակոռուպցիոն ծրագիր գրելու, Նախագահը խորհրդական է նշանակում կոռուպցիայի դեմ պայքարելու համար: Այստեղ գտնվող բոլոր կառույցները փաստորեն անօրինական են: Օպերայի շրջապատը կոռուպցիայի դեմ պայքարի լավագույն*

*դաշտն է, պարոնայք, դե իրականացրեք հակակոռուպցիոն ազգային ծրագիրը, արեք ձեր քայլը: Կարո՞ղ եք արդյոք պայքարել այս օբյեկտների տերերի դեմ: Իհարկե՝ ոչ: Որպեսզի հասկանանք, թե դա ինչու հնարավոր չէ, այսօրվանից կներկայացնենք այդ արձարանների տերերին: Մենք գիտենք ովքեր են իրական տերերը: Այս մեկը ԱԺ պատգամավոր Լեւոն Խաչատրյանինն է:*[81]

Մեծ հետաքննական նյութի վրա աշխատելիս մենք հաճախ օգտագործում ենք մի հնարք, որն իսկապես արդյունավետ է. հրապարակում ես մի փոքր հատված, բայց դա ընդամենը մի մասն է քո հետաքննության: Բայց այդ հատվածն ինքնին փոքր հետաքննություն է: Լրագրողական կոնֆերանսներից մեկի ժամանակ ես փորձեցի Արեւմուտքի իմ գործընկերներին բացատրել, թե ինչու ենք մենք այդ հնարքն օգտագործում, բայց նրանցից շատերը դա անընդունելի համարեցին հետաքննության մեջ: Նրանք նաեւ չէին հասկանում, թե ինչպե՞ս կարող է քաղաքապետը չտալ որոշումները, կամ ինչու՞ դրանք առանց նամակի չենք կարող վերցնել քաղաքապետարանի կայքից: Հենց այդ ժամանակ էլ ասացի, որ հետաքննություն անելու մեր եւ իրենց մեթոդները խիստ տարբեր են, քանի որ տարբեր են միջավայրերը, որտեղ մենք աշխատում ենք: Ինչու՞ ենք հետաքննական նյութը «կտրում» եւ մատուցում մաս-մաս՝ որպես փոքրիկ հետաքննություններ, ապա դրանք միավորելով՝ ամբողջացնում եւ դարձնում մեծ հետաքննություն: Որովհետեւ երբ մեկ-երկու փաստ ես հրապարակում հետաքննվող թեմայի մասին, դրանք ճանապարհ են բացում ավելի շատ եւ կարեւոր փաստերի համար, հայտնվում են տեղեկատվության նոր աղբյուրներ, պաշտոնյաները, որոնք չէին արձագանքում հարցումներին, ստիպված պատասխանում են արդեն այլ լրատվամիջոցների հարցումներին, որովհետեւ քո հրապարակած նյութն ունենում է հասարակական մեծ հնչեղություն, ու դա որսալով՝ այլ լրատվամիջոցներ էլ են միանում քեզ:

Իսկ ինչպե՞ս սկսվեց այս ամբողջ պատմությունը: Նախկին պետական, հասարակական գործիչ Ալեքսան Կիրակոսյանը մի օր զանգեց ինձ ու հանդիպեցինք: Մեր հանդիպումները մինչ այդ որոշակի պարբերականություն ունեին: Նա, իսկապես, քայլող հանրագիտարան էր: Երբեւէ չեմ հանդիպել մի մարդու, ով այդքան լավ ճանաչի Հայաստանը, նրա տնտեսությունը, մարդկանց: Նա այլայլված էր, երբ գնացի:

81 Է. Բաղդասարյան, Մենք գիտենք՝ ովքեր են տերերը, 25.09.2003, www.hetq.am

Ասաց՝ փեսե՞լ ես Օպերայի կողքին ինչ են կառուցում: Պափասխանեցի՝ այո, փեսել եմ: Հարցրեց՝ ու՞մն է: «Չգիփեմ, -պափասխանեցի,- բայց հասփափ որեւէ պաշփոնյայի կապփկանի: Ասաց՝ կարո՞ղ ես պարզել՝ ումն է: Ասացի՝ կպարզեմ, թե որն ումն է եւ կիրապարակեմ: Ահա այդպես էլ սկսվեց: Մենք որոշեցինք անուններով նշել, թե Երեւանի կանաչ փարածքներում կառուցվող սրճարանների փերերն ովքեր են եւ ինչպես են կարողանում այդ փարածքներում հող վերցնել, հափել ծառերը եւ, քաղաքապեփարանի հասփափած նախագիծը մի կողմ դնելով, իրենց «սրփի ուզածը» կառուցել:

Քաղաքապեփերի բոլոր որոշումներն էլ, կարծես, օրենքի շրջանակներում էին: Այդ նախագծերով ոչ մի հիմնական կառույց չպեփք է լիներ այգիներում, նախափեսված էին թեթեւ կոնսփրուկցիաներով փոքրիկ շինություններ, որոնք ցանկացած պահի կարելի էր քանդելհավաքել: Նախագծով նաեւ պեփք է լինեին խաղահրապարակներ: Սակայն շինարարության ընթացքում այդ նախագծից ոչինչ չէր մնում: Քաղաքապեփարանն էլ ոչինչ չէր ձեռնարկում՝ չնայած ուներ համապափասխան լծակներ: Ահա այդ շարքի երկրորդ հրապարակումը.

## Մենք գիփենք՝ ովքեր են փերերը - 2

*Երեւանի կենփրոնում կառուցվող սրճարանափերերի մեջ ոչ մի պափահական մարդ չկա: Եթե նույնիսկ անունները որեւէ բան չեն ասում, միեւնույն է՝ նրանց եփեւում կանգնած են հանրապեփությունում ազդեցիկ դիրք ունեցող պաշփոնյաներ: Շարունակում ենք ներկայացնել Օպերայի հանրային այգին «զավթածներին»:*

*«Օնլի միրիմենթ» ՍՊԸ-ն Ազափության հրապարակին հարող փարածքում (Թումանյան փողոցի կողմից) կոմպյուփերային խաղերի սրահ կառուցելու նպափակով հողափարածք էր խնդրել քաղաքապեփ Ռոբերփ Նազարյանից:*

*Քաղաքապեփի 2002 թ. հունվարի 11-ի թիվ 24 որոշմամբ 10 փարի ժամկեփով 20 քմ փարածք է փրամադրվել վերոհիշյալ ընկերությանը: Սրահի սահմանները որոշված էր Երեւանի քաղաքապեփարանի ճարփարապեփության եւ քաղաքաշինության վարչության կողմից փրված հափակագծով:*

*Մոփ մեկ ամիս անց՝ փեփրվարի 22-ին, Ռ. Նազարյանի թիվ 273 որոշմամբ «Օնլի միրիմենթ» ՍՊԸ-ին կոմպյուփերային խաղերի սրահին կից* ***բացօթյա*** *(ընդգծումը մերն է) սրճարան կազմակերպելու նպափակով լրացուցիչ 312,0 քմ մակերեսով*

*հողամաս է տրամադրվում: Այս անգամ՝ արդեն 25 տարով: Սակայն սա դեռ վերջը չէ: Մեկ ամիս անց Ռոբերտ Նազարյանի մեկ այլ որոշմամբ փոփոխություններ են կատարվում նախորդ որոշման մեջ: Ահա որոշման 2 կետը. «Որոշման 1-ին կետում «**բացօթյա** (ընդգծումը մերն է) սրճարանի կազմակերպման» բառերը փոխարինել «կոմպյուտերային խաղերի կենտրոնի եւ սրճարանի կառուցման բառերով»: Կարծում եմ՝ հասկանալի է այս բանաձեւը, որեւէ գաղտնիք չկա այստեղ: Այս փոփոխությամբ, փաստորեն, սեփականատերերը հնարավորություն ստացան կառուցելու այս հսկան: Ավելին, շինությունը կառուցվել է կոպիտ խախտումներով: Քաղաքապետարանի ճարտարապետության եւ քաղաքաշինության վարչությունը նման նախագիծ չի հաստատել: Այդ ընթացքում «Օնլի մերիմենթը» վերագրանցվել է իբրեւ «Ատլանտիկ Գարդեն» ՍՊԸ: Փաստաթղթերով նրա զբաղեցրած տարածքը պետք է կազմեր 312+20=332 քմ: Իսկ թե իրականում որքան է զբաղեցրել «Ատլանտիկ Գարդեն» ընկերությունը Օպերայի այս հատվածում, այսօր ոչ ոք ճշգրիտ չգիտի: Շինարարության ընթացքում ընդլայնումներ են եղել 4 ուղղություններով: Ինչու՞ էր այսքան «հոգատար» նախկին քաղաքապետ Ռոբերտ Նազարյանը այս կառույցի տիրոջ նկատմամբ: Բացատրությունը մեկն է. սրճարանի տիրոջ՝ Անուշ Ղազարյանի (հասարակության մեջ առավել հայտնի է «Կամվոլնի», «Սիրուն» Անուշ) տանիքը ԱԱ նախարար Կառլոս Պետրոսյանն է: Հենց սրանով էր բացատրվում նախկին քաղաքապետ Ռոբերտ Նազարյանի՝ իրար ետեւից ընդունած որոշումները:*

*Այս կառույցը նույնպես ենթակա է քանդման: Սակայն ո՞վ կհամարձակվի նման քայլի դիմել:*[82]

Հրապարակումների ընթացքում նախկին քաղաքապետ Ռ.Նազարյանը մամուլի ասուլիս է տալիս եւ սփիւված հաստատում իմ գրածները. «Օպերայի հանրային այգում կառուցված սրճարանների 99 տոկոսը ապօրինի է»: Քաղաքապետարանից տեղեկատվության տրամադրման մերժում ստանալուց հետո մենք նամակով դիմեցինք երկրի նախագահին, քանի որ քաղաքապետին նա էր նշանակում, եւ քաղաքապետը նրան էր հաշվետու: Նախագահին խնդրեցինք միջնորդել՝ մեզ անհրաժեշտ տեղեկատվությունը ստանալու հարցում:

82 Է. Բաղդասարյան, Մենք գիտենք՝ ովքեր են տերերը, 27.09.2003, www.hetq.am:

## Մենք գիտենք՝ ովքեր են տերերը - 3

*«Մագնոլիա» ՍՊԸ-ին քաղաքապետ Ռոբերտ Նազարյանի որոշմամբ 2002 թ. սկզբին հատկացվել է 20 քմ տարածք: 2002-ի նոյեմբերին քաղաքապետի մեկ այլ որոշմամբ «Մագնոլիա» ընկերությանը Օպերայի եւ բալետի պետական ակադեմիական թատրոնի ծառայողական մուտքի դիմաց տոմսերի վաճառքի եւ սպասարկման սրահի ընդլայնման նպատակով լրացուցիչ տրամադրվել է եւս 20 քմ: Իսկ 2002 թ. դեկտեմբերին քաղաքապետարանի ճարտարապետության եւ քաղաքաշինության վարչության պետ Ս. Կոտոլիկյանի մեր հարցմանը պատասխանած գրությամբ «Մագնոլիա» տարածքը կազմում էր 2615 քմ: Օպերայի հանրային այգին զավթած սրճարանների մեջ ամենամեծ տարածքն ունի հենց այս սրճարանը: Իսկ ո՞վ է «Մագնոլիայի» տերը, որ կարողացել է «համոզել» քաղաքապետ Ռ.Նազարյանին այդչափ ընդլայնել տարածքները: Նույն ինքը՝ ԱԺ պատգամավոր, «Օրինաց երկիր» կուսակցության ներկայացուցիչ Գրիգոր Մարգարյանը (մականունը՝ Բելաջիո Գրիշ):*[83]

Հրապարակումներին զուգահեռ՝ որոշեցինք դիմել դատարան՝ պահանջելով քաղաքապետերի որոշումները[84]: Այս հետաքննությունը լայնամասշտաբ քարոզարշավ էր նաեւ եւ հրաշալի օրինակ, որից արել եմ առանցքային մի հետեւություն՝ Հայաստանի նման երկրներում հետաքննական լրագրության թիվ մեկ խնդիրը արդյունքի չհասնելն է, ազդեցության բացակայությունը: Հետո՞ ինչ, որ բացահայտել եք բազում չարաշահումներ, դրանից հետո ի՞նչ է փոխվել: Դուք գրել եք պաշտոնական դիրքի չարաշահումների, օրենքի խախտումների, ապօրինի շինությունների մասին, բայց դրանից հետո ոչինչ չի փոխվել: Ավելի վատ՝ ձեզ համակել է անզորության զգացումը: Բայց պետք չէ հուսահատվել, կրկնում եմ՝ արդարության կարելի է հասնել միայն պայքարով, եւ այդ պայքարը ազնիվ լրագրությունն է:

Այստեղ ուզում եմ նաեւ հիշել մի պատմություն. 2005 թ. ապրիլի 6-7-ը Ալմա-Աթայում լրագրողական հետաքննությանը նվիրված սեմինար էր, որին հրավիրվել էի որպես փորձագետ եւ հետաքննության մեր փորձի մասին պետք է պատմեի:

83 Է. Բաղդասարյան, Մենք գիտենք՝ ովքեր են տերերը, 07.10.2003, www.hetq.am:
84 Քրիստինե Բարսեղյան,Դատական հայց ընդդեմ Երեւանի քաղաքապետարանի, 15.04.2004, www.hetq.am:

Ես մի քիչ ծանոթ էի Ղազախստանում տիրող իրավիճակին եւ ելույթս սկսեցի հարցով՝ կա՞, արդյոք, Ղազախստանում անկախ լրատվամիջոց, որեւէ մեկը կարո՞ղ է ասել, որ իր լրատվամիջոցն ազատ ու անկախ է: Մոտ հիսուն լրագրողներից ոչ մեկը չարձագանքեց, եւ հարցս մնաց առկախ, որովհետեւ նրանք դրական պատասխան չէին կարող տալ: Ես գիտեի, որ այն ժամանակ Ղազախստանում մամուլը վերահսկվում էր Նախագահ Ն. Նազարբաեւի եւ մասնավորապես նրա աղջկա՝ Դարիգայի կողմից: Ասացի՝ ուրեմն իմաստ չունի սովորել հետաքննության մեթոդները, որովհետեւ դա նույնպես ծառայելու է մամուլն օգտագործող իշխանության նպատակներին: Ես նշեցի, որ նախ մարդկանց մեջ պետք է սերմանել ազատություն, ըմբոստություն եւ պայքարի միջոցով հասնել ազատ լրատվամիջոց ունենալուն: Եթե դու ինչ-որ մեկի խոսափողն ես՝ լինի դա քաղաքական ուժ, պաշտոնյա, ուրեմն իմաստ չունի զբաղվել հետաքննությամբ, որովհետեւ այն դարձյալ ծառայելու է նրանց շահերին: Նման բազում փաստեր կարելի է բերել:

Օպերայի հարակից այգու վերացման պատմության մեջ կար մի փխուր փաստ, որին այդպես էլ մինչեւ հիմա չկարողացա անդրադառնալ: Օպերայի հանրային այգում սրճարան կառուցելու համար տարածք էր վերցրել իմ գործընկեր, Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ Տիգրան Նաղդալյանը: Նրան 2002 թ. դեկտեմբերի 28-ին սպանել էին ծնողների տան շքամուտքից դուրս գալիս: Պարզել էի, թե ինչպես էր Տիգրան Նաղդալյանը վերցրել այդ տարածքը: Քաղաքապետին հայտնել էին, որ այնտեղ պետք է կառուցվի մի հրապարակ, որտեղից  նախագահ Ռոբերտ Քոչարյանի նախընտրական քարոզարշավի ժամանակ ուղիղ հաղորդումներ պետք է հեռարձակվեն: Այդ տարածքը միակն էր, որի մասին չգրեցի, որովհետեւ Տիգրանն արդեն չկար:

Այս հետաքննությունը մեզ նաեւ ուղղորդեց զբաղվել քաղաքապետի այլ որոշումներով: Մենք հսկայական տեղեկություններ էինք հավաքել, որոնք նույնպես հաստատում էին, որ ոչ մի պատահական մարդ Երեւանի կենտրոնում հող չի ստացել: Սա հետաքննության մեջ հաճախ է պատահում, երբ աշխատելու ընթացքում գտնում ես նոր թեմաներ, նոր ուղղություններ եւ զուգահեռաբար դրանք ներառում ես քո արդեն ընդլայնվող հետաքննության մեջ: Ահա այդ օրինակներից մեկը.

### *Երեք որոշում՝ ի պատիվ Արմեն Խաչատրյանի*[85]

*Մեր ջանքերը՝ գտնել մի սովորական քաղաքացու, ում Երևանի քաղաքապետարանը հողհատկացում է կատարել, զուր են: Եւ եթե որեւէ մեկը նման մարդ գտնի, ապա պատրաստ ենք մրցանակ տալ թե՛ գտնողին, թե՛ այդ քաղաքացուն: «Հյուսիսային ճառագայթ»-ն անցնելու է Բաքվյան փողոցին հարող պուրակով: Դրա մասին պարբերաբար ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի այցելությունների ժամանակ տեղեկացնում է «Հայլուրը»: Այստեղ լինելու են գրասենյակներ, այստեղով անցնելու են ճանապարհներ: Այգում շինարարություն իրականացրած պաշտոնյաները, գեներալները, քաղաքական գործիչները եւ գործարարները, իրենց սովորության համաձայն, հաստատված նախագծերը խախտելով՝ ընդլայնվել են տարբեր ուղղություններով:*

*Արդեն գոյություն ունեցող եւ կառուցվող շինությունների մի քանի մետր բարձրություն ունեցող պարիսպներն անցնում են ճիշտ այնտեղով, որտեղով պետք է անցնեն ճանապարհները: Եւ քաղաքի գլխավոր ճարտարապետը ստիպված է լինելու իր հաստատած նախագծերը փոփոխության ենթարկել, որովհետեւ այնտեղ գտնվողներից ոչ մեկի դեմ «խաղ չկա»: Բաքվյան փողոցին հարող պուրակը «զավթած» «կալվածատերերից» մեկին՝ Ավագ Խաչատրյանին, կատարված հողհատկացումների մասին որոշումներն ամենաուշագրավն են: «Հրաչյա Աճառյան» համալսարանի ռեկտոր Ավագ Խաչատրյանին հողհատկացումներ արել են այն ժամանակ, երբ նրա որդին՝ Արմեն Խաչատրյանը, Ազգային ժողովի նախագահն էր: Ինչպե՞ս է նա ձեռք բերել մեր հաշվարկներով 10 հազար քմ-ի հասնող այդ տարածքը:*

*2002 թ. փետրվարի 5-ի թիվ 164 որոշմամբ քաղաքապետ Ռոբերտ Նազարյանը հաստատեց Բաքվյան փողոցին հարող տարածքում վարձակալության մրցույթով հաղթող ճանաչված «Հրաչյա Աճառյան» համալսարանին 70 տարով 5600 քմ հողատարածքը վարձակալության տալու մասին որոշումը: Ինչպես նշված է մրցութային փաստաթղթերում, «Հրաչյա Աճառյան» համալսարանն այստեղ պետք է կառուցի գրասենյակ եւ հյու-*

85 Է. Բաղդասարյան, Երեք որոշում՝ ի պատիվ Արմեն Խաչատրյանի, 10.12.2003, www.hetq.am:

*բարում: Համալսարանը պարտավորվել է կատարել 500 մլն դրամի ներդրում եւ շինարարությունն ավարտել մինչեւ 2005 թ. նոյեմբերը: 2002 թ. նոյեմբերի 19-ին քաղաքապետը մեկ այլ որոշմամբ Ավագ խաչատրյանին տրամադրել է լրացուցիչ հողամաս: Այդ որոշման համաձայն՝ նախկինում կնքված պայմանագրում կատարվել է փոփոխություն, եւ 50 տարի ժամկետով նրան տրամադրվել է եւս 1230 քմ:*

*Մինչ այդ, այս տարածքում այգիներ ունեցող բնակիչները՝ ուսուցիչներ, դասախոսներ, դիմել են քաղաքապետարան, որպեսզի իրենց մշակած այգիները վարձակալության տրվեն իրենց: Բայց քանի որ նրանք պաշտոնյաներ չեն, մերժվել են, իսկ մի քանիսի դիմումներին առ այսօր չեն էլ պատասխանել: Չնայած քաղաքապետ Երվանդ Զախարյանը լրագրողների համար փակել է քաղաքապետի որոշումները, մեզ հաջողվեց պարզել, որ Ավագ Խաչատրյանի հետ կապված եւս մեկ որոշում է եղել: Դրանով Ավագ Խաչատրյանին տվել են եւս 1560 քմ հողատարածք: Մեր տրամադրության տակ կա մի փաստաթուղթ, որը նախորդել էր վերջին որոշման կայացմանը: Բնույթով բացառիկ այդ փաստաթղթով հաստատվում է, որ քաղաքապետարանում անում են՝ ինչ ուզում են, ինչը որ շահավետ է: Նման դեպքերում օրենքի մասին խոսելն ավելորդ է: Գրության հեղինակը Հ. Սարգսյանն է՝ քաղաքապետարանի ճարտարապետության եւ քաղաքաշինության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատարը: Գրությունն ուղղված է Երեւանի քաղաքապետի տեղակալ, քաղաքի գլխավոր ճարտարապետ Նարեկ Սարգսյանին:*

*Ամբողջությամբ մեջ ենք բերում այն. ««Հրաչյա Աճառյան» համալսարանին Բաքվյան փողոցին հարող տարածքից գրասենյակ եւ հյուրատուն կառուցելու համար վարձակալությամբ տրամադրված ընդհանուր 6830 քմ մակերեսով հողամասին կից լրացուցիչ հողամաս տրամադրելու վերաբերյալ հայտնում ենք, որ քննարկվող հողամասը համալսարանին տրամադրված հողատարածքով, նախագծային եւ գոյություն ունեցող ճանապարհներով պարփակված 1560 քմ մակերեսով տարածք է, որտեղ գոյություն ունեին կարգավիճակը չպարզված շինություններ: Հաշվի առնելով համալսարանի կողմից սեփական միջոցների հաշվին քննարկվող տարածքում առկա կարգավիճակը չպարզված շինությունների իրաց-*

*ման հանգամանքը եւ քանի որ վերը նշված հողատարածքը այլ հողօգտագործողի տրամադրվելու դեպքում կխախտվի «Հրաչյա Աճառյան» համալսարանի կողմից իրականացվող կառուցապատման ծրագրի ամբողջականությունը, վարչությունը նպատակահարմար է գտնում առանց հրապարակային սակարկությունների այն ամբողջությամբ տրամադրել «Հրաչյա Աճառյան» համալսարանին: Կից ներկայացնում եմ քաղաքապետի որոշման նախագիծը եւ խնդրում եմ հարցը հանել լսկողությունից»: Ահա այսչափ հստակ:*

*Մեկ տարվա ընթացքում երեք որոշումներով քաղաքապետարանի բոլոր կառույցները զբաղված էին ԱԺ նախագահի հոր համար նախատեսված տարածքների փաստաթղթերի օրինականացմամբ: Քաղաքապետարանի աշխատակիցները Ավագ Խաչատրյանի բիզնեսի ծաղկման համար արել են ամեն ինչ՝ խախտելով ՀՀ բազմաթիվ օրենքներ, կառավարության որոշումներ, որոնք հիշատակվում են քաղաքապետի՝ հողհատկացման վերաբերյալ կայացրած բոլոր որոշումներում: Իսկ գրության մեջ նշված «կարգավիճակը չպարզված շինությունների» ընդամենը «ֆիկցիա» են: Իսկ դուք, պարոնա՛յք, դեռ շարունակում եք խոսել հակակոռուպցիոն ազգային ծրագրից: Ճիշտը դա է, շարունակե՛ք խոսել:*

Նախագահին ուղղած մեր նամակն ուղարկվում է քաղաքապետարան եւ մեկ ամիս անց ստանում ենք դրա պատասխանը: Մենք հասկացանք, որ նախագահին դիմելն անիմաստ էր եւ նորից անցանք մեր միակ զենքին՝ գրչին: Եւ հրապարակեցինք հոդված, որը նույնպես արտատպեց «Առավոտ» օրաթերթը:

### ՀՀ Նախագահն էլ «փակեց» բաց փաստաթղթերը[86]

*«Մենք գիտենք՝ ովքեր են տերերը» հոդվածաշարը ներկայացնում էր Օպերայի այգու, Օղակաձեւ զբոսայգու եւ Բաքայան փողոցի հարեւանությամբ գտնվող այգու տարածքների իրական տերերին: Նախկին քաղաքապետ Ռոբերտ Նազարյանը երկու ամիս առաջ իր ասուլիսում նշել էր, որ Օպերայի այգու սրճարանների 99 տոկոսը ապօրինի կառույցներ են: Թե այսօրվա քաղաքապետ Երվանդ Զախարյանը ինչու*

86 Է. Բաղդասարյան, ՀՀ Նախագահն էլ «փակեց» բաց փաստաթղթերը, 25.12.2003, www.hetq.am:

*«ձեռք չի տալիս» այդ շինություններին, կարծում եմ՝ բոլորի
համար պարզ է. այդ կառույցների տերերը հանրապետութ-
յունում հայտնի դեմքեր են: Որոշ տեղեկություններ ճշտելու
նպատակով 2003 թ. հոկտեմբերի 2-ին նամակով դիմեցինք
քաղաքապետ Ե. Զախարյանին՝ խնդրելով թույլ տալ տեղում
ծանոթանալ Ազգային օպերայի եւ բալետի պետական թատ-
րոնի մերձակա տարածքում սրճարաններ կառուցելու նպա-
տակով արված հողհատկացումների վերաբերյալ նախկին
քաղաքապետեր Վանո Սիրադեղյանի, Սուրեն Աբրահամյա-
նի, Ալբերտ Բազեյանի եւ Ռոբերտ Նազարյանի 1997-2003 թթ.
կայացրած որոշումներին: Քաղաքապետի որոշումները ՀՀ
օրենսդրությամբ բաց փաստաթղթեր են եւ հասանելի պետք
է լինեն յուրաքանչյուր քաղաքացու: Մեր նամակին 40 օր անց
քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավար Սամվել Կո-
շեցյանը տվել է հետեւյալ պատասխանը. «Երեւանի քաղաքա-
պետարան հասցեագրված Ձեր գրության կապակցությամբ
հայտնում եմ, որ Ձեզ անհրաժեշտ է ճշտել ինչ կոնկրետ տե-
ղեկություններ եք ակնկալում ստանալ Երեւանի քաղաքապե-
տարանից»: Ի՞նչ էր մեզ մնում անել նման պատասխան ստա-
նալուց հետո. բողոքարկել այս պատասխանը Երեւանի քաղա-
քապետի վերադասին՝ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին:*

*«Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները եւ
բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքով քաղաքա-
ցին, որը համաձայն չէ իր դիմումի կամ բողոքի վերաբերյալ
ընդունված որոշմանը, կարող է այդ որոշումը բողոքարկել
այն մարմնին կամ պաշտոնատար անձին, որին անմիջակա-
նորեն ենթակա են այդ որոշումն ընդունած պետական մար-
մինը կամ պաշտոնատար անձը: ՀՀ նախագահին ուղղված դի-
մում-բողոքում խնդրել ենք, որպեսզի Նախագահն իր ստորա-
դասին պարտավորեցնի թույլատրել ծանոթանալ քաղաքա-
պետերի վերոհիշյալ որոշումներին: Մեր նամակին դարձյալ
պատասխանել է քաղաքապետարանի աշխատակազմի ղեկա-
վար Ս. Կոշեցյանը: Այս անգամ պատասխանն այսպիսին էր.
«Ի պատասխան Ձեր 21.11.03 թ. 39հ-4 գրության ՝ հասցեագր-
ված ՀՀ նախագահին, հայտնվում է. «Ընկերակցության կող-
մից մատնանշված «Մամուլի եւ զանգվածային լրատվության
այլ միջոցների մասին» ՀՀ օրենքի 4-րդ եւ 27-րդ հոդվածնե-
րը սահմանում են լրագրողի իրավունքները, բայց չեն սահ-
մանում պաշտոնատար անձի պարտականությունները:*

*Պետք է նշել նաեւ, որ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը նույնպես պարտադիր պայմաններ՝ տեղեկություններ տրամադրելու, չի սահմանում: Միեւնույն ժամանակ անհրաժեշտ եմ համարում նշել, որ Երեւանի քաղաքապետարանը երբեւիցե չի առարկել լրատվության տրամադրմանը, իսկ ընկերակցության կողմից բարձրացված հարցերի ոչ կոնկրետության պարագայում Երեւանի քաղաքապետարանը հնարավոր չի համարում նման տվյալների տրամադրումը»: Սա պատասխան է պետական մի պաշտոնյայի, ով, միանշանակ, չի կարդացել ՀՀ Սահմանադրությունը: Պարոն Կոշեցյանին թվում է, թե ինքը որպես պաշտոնյա տեղեկություն տալու ոչ մի պարտավորություն չունի: Նա նույնիսկ չգիտի, որ օրենքով ինքն արդեն իրավունք չուներ մեզ պատասխանելու, որովհետեւ մենք բողոքարկել ենք հենց իր գործողությունները: Նախագահի աշխատակազմից մեզ այդպես էլ չպատասխանեցին: Ստացվում է, որ Ռ. Քոչարյանին խնդրել ենք, որպեսզի միջնորդի Ս.Կոշեցյանին երկրորդ անգամ մեզ պատասխանել: Նման խնդրանքով չէինք ՀՀ Նախագահին դիմել: Ինչու՞ ՀՀ Նախագահի աշխատակազմից որեւէ պաշտոնյա չի պատասխանել մեր հարցմանը: Հնարավոր տարբերակները սրանք են. 1. Նախագահի աշխատակազմում կան մարդիկ, ովքեր փայատեր են որեւէ սրճարանի (նման փաստեր մենք ունենք), 2. Նախագահի աշխատակազմում կան մարդիկ, ովքեր քաղաքապետին միջնորդել են հողհատկացում կատարելու համար (նման փաստեր նույնպես ունենք), եւ որպեսզի այս ամենի մասին չխոսվի, աշխատակազմում որոշում են «հանձնարարել» Ս. Կոշեցյանին նորից «ցրել» լրագրողին: Կա մի տարբերակ էլ՝ նախագահականում բանի տեղ չեն դնում օրենքը եւ, որպեսզի ցույց տան, թե աշխատում են, նամակն ուղարկում են քաղաքապետարան: Սակայն սա սակավ հավանական տարբերակն է:*

Հոդվածները[87], սակայն, շարունակվում են տպագրվել. մենք այդպես էինք պատրաստվում դատական գործընթացին: Հոդվածներ ենք հրապարակում Հրազդանի կիրճի, Օղակաձեւ զբոսայգու հողհատկացումների մասին:

87 Էդիկ Բաղդասարյան,Պաշտոնյաները գրավում են Երեւանի կենտրոնը, 28.04.2004, www.hetq.am:

Ահա դրանցից մեկը.

***Երվանդ Զախարյանը շարունակում է հողերի վաճառքը***[88]

*Քաղաքապետ Երվանդ Զախարյանի՝ 2003 թ. դեկտեմբերի 26-ի որոշմամբ «Ակումբ համալիր» ՍՊԸ-ի՝ Հրազդանի կիրճում ունեցած 2050 քմ տարածքին 25 տարի ժամկետով հատկացվել է եւս 2050 քմ հավելյալ հողամաս:*

*Նշենք, որ Հրազդանի կիրճում կառուցված են 11 օբյեկտներ (ռեստորաններ, սրճարաններ, մոթելներ): Այս օբյեկտներից երեքն ընդհանրապես չունեն հողհատկացման փաստաթղթեր, իսկ մյուս օբյեկտների տարածքները հատկացրել են քաղաքապետեր Սուրեն Աբրահամյանը (1), Ալբերտ Բազեյանը (2), Ռոբերտ Նազարյանը (4), Երվանդ Զախարյանը (1): Այս տարածքում չկա կոյուղագիծ, եւ բոլոր օբյեկտների կեղտաջրերը լցվում են Հրազդան գետ, որի ջրերով էլ ոռոգում են Երեւանի մերձակա գյուղերից շուկաներում վաճառվող բանջարեղենը:*

*Ի՞նչն է ստիպել քաղաքապետ Երվանդ Զախարյանին Նոր տարվա նախօրեին քաղաքի համար այդքան «կենսական» որոշում կայացնել:*

*Պարզապես նշենք, որ «Ակումբ համալիր» ՍՊԸ-ի հիմնադիրը ոստիկանության նախկին աշխատակից, Երեւանի քաղաքապետարանի նախկին պաշտոնյա, Արաբկիր համայնքի թաղապետ Լեւոն Հարությունյանն է, նույն ինքը՝ «Մոնտե Քրիստոյի» տերը:*

Սկսվում է դատական գործընթացը: Դատական երկու ատյանները, բնականաբար, պաշտոնյայի կողմն էին[89] եւ չբավարարեցին քաղաքապետի անգործությունը ճանաչելու եւ որոշումները տրամադրելու մեր պահանջները: Հայաստանի դատարաններն այլ գործառույթ չեն իրականացնում, քան իշխանության «իրավունքների պաշտպանությունը»: Բայց դատարանը հաշվի չէր առել, որ մենք էլ ունենք իշխանություն: Երբ գալիս է հակահարվածի ժամանակը, եւ դու չես կարողանում ապավինել օրենքին, քեզ այլ բան չի մնում, քան օգտագործել

88 Էդիկ Բաղդասարյան, Երվանդ Զախարյանը շարունակում է հողերի վաճառքը, 3 հունիս, 2004, www.hetq.am:
89 Լիանա Սայադյան, Դատարանը աջակցեց Երեւանի քաղաքապետարանին՝ մերժելու բաց փաստաթղթերի տրամադրումը, 21 հունիս, 2004, www.hetq.am:

քո միակ զենքը: Դատարանի վճիռը ստիպում է ինձ գրել կոռուպցիայի բանաձեւի մասին հոդվածը: Այն արժե ներկայացնել նաեւ այստեղ, մանավանդ, գրեթե ոչինչ չի փոխվել:

***Կոռուպցիայի բանաձեւը***

*Երեւանի քաղաքապետի կայացրած որոշումները բաց փաստաթղթեր են:*

*Լրագրողը դիմում է քաղաքապետին՝ այդ բաց փաստաթղթերին ծանոթանալու համար, սակայն նա հրաժարվում է տալ որոշումները:*

*Լրագրողը դիմում է քաղաքապետի վերադասին՝ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին: Երեւանի քաղաքապետի պաշտոնն ընտրովի չէ, նրան նշանակում է Հայաստանի Հանրապետության նախագահը: Նախագահական ապարատից լրագրողի դիմում-բողոքն ուղարկում են նույն քաղաքապետին, որպեսզի նա պատասխանի իր իսկ դեմ բերված բողոքին (արձանագրենք՝ սա օրենքի խախտում է, որովհետեւ լրագրողը բողոքարկել էր հենց քաղաքապետի «պատասխանը»): Քաղաքապետարանը դարձյալ հրաժարվում է տրամադրել պահանջվող որոշումները:*

*Լրագրողը ստիպված դիմում է առաջին ատյանի դատարան: Դատավոր Գայանե Կարախանյանը մերժում է լրագրողի հայցը՝ այդպիսով սատարելով քաղաքապետին, ինչպես նաեւ՝ ՀՀ նախագահին:*

*Լրագրողը դիմում է Արդարադատության նախարարին՝ խնդրելով կարգապահական վարույթ հարուցել դատական քննության ժամանակ բազմաթիվ օրենքներ խախտած դատավորի նկատմամբ: Նախարար Դավիթ Հարությունյանը մերժում է լրագրողի խնդրանքը՝ դրանով սատարելով դատավորին, Երեւանի քաղաքապետին, նաեւ՝ ՀՀ նախագահին:*

*Լրագրողը դիմում է ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի նախագահին՝ ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանին: Վերջինս նույնպես մերժում է լրագրողին: Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի նախագահն էլ սատարում է արդարադատության նախարարին, դատավորին, քաղաքապետին, նաեւ՝ ՀՀ նախագահին:*

*Լրագրողը դիմում է Վերաքննիչ դատարան: Երեք դատավորներ՝ Նոյեմ Հովսեփյանի նախագահությամբ, առանց որեւէ մեկնաբանության մերժում են լրագրողի հայցը՝ սատարելով իրենց գործընկերոջը, իրենց նախարարին, քաղաքապետին, վարչապետին, նաեւ՝ ՀՀ նախագահին: Այս շղթան գործում է բոլոր ոլորտներում: Ուստի, իզուր ենք կոռուպցիայի դեմ պայքարը դարձրել ազգային ծրագիր: Այս շղթայի մեջ ընդգրկվածների դեմ ոչ ոք Հայաստանում չի կարող եւ չի ուզում պայքարել, որովհետեւ այս շղթայի մի օղակը մյուսի շարունակությունն է: Այս շղթայում գտնվողներից ոչ ոք չի ուզում, որ Հայաստանում գործի օրենքը:*

*Ինչու՞ քաղաքապետ Երվանդ Զախարյանը լրագրողներին չի տալիս իր եւ իր նախորդների որոշումները: Այլ բան չի մնում, քան կարծել, որ այդ որոշումներում անօրինականություններ կան: Իրոք, քաղաքապետ Երվանդ Զախարյանը բազմաթիվ անօրինական որոշումներ է կայացրել: Դրանցից յուրաքանչյուրը կարող է կոռուպցիայի դասական օրինակ դառնալ: Մենք գրել ենք այդ մասին եւ շարունակելու ենք գրել:*

***Կոռուպցիայի սխեման***



*Գործող անձինք, կամ՝ գլխավոր դերերում.*

**Երվանդ Զախարյան** - *Երեւանի քաղաքապետ*
**Ռոբերտ Քոչարյան** - *ՀՀ նախագահ, արդարադատության խորհրդի նախագահ*
**Անդրանիկ Մարգարյան** - *ՀՀ վարչապետ, կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի նախագահ*
**Դավիթ Հարությունյան** - *ՀՀ արդարադատության նախարար*
**Գայանե Կարախանյան** - *Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի դատավոր*
**Նոյեմ Հովսեփյան** - *ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի դատավոր:*
*Երկրորդական դերում՝ լրագրող **Էդիկ Բաղդասարյան***

Այս հոդվածը շրջադարձային եղավ մեր դատական ոդիսականում: Հոդվածը քննարկվեց ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդում, որի նիստին ներկա էին երկրի նախագահը, վարչապետը, արդարադատության նախարարը: Հարցն այսպես էր դրվել՝ ճի՞շտ է լրագրողը, թե՞ սխալ: Մեր աղբյուրի ներկայացմամբ՝ Արդարադատության նախարարն ասել է, որ լրագրողն օրենքի դաշտում միանգամայն ճիշտ է: Նախագահն ասել է՝ այդ դեպքում ինչու՞ են դատարանները մերժել լրագրողի պահանջը: Դրանից հետո ՀՀ Վճռաբեկ դատարանը բեկանեց վերաքննիչ դատարանի վճիռը՝ հայցը ետ ուղարկելով նոր կազմով քննության: Եւ, ի զարմանս մեզ, Վերաքննիչ դատարանը որոշեց լրագրողների հայցն ամբողջությամբ բավարարել[90]: Այս դատարանը երկու ամիս առաջ ճիշտ հակառակ որոշումն էր կայացրել: Մեզ մնում էր ետ ստանալ մեր կատարած դատական ծախսերը[91]: Միայն 2006 թ. հունիսին՝ դատարան դիմելուց երկու տարի անց, կարողացանք ստանալ այդ ծախսերը՝ 300.000 դրամ:

Մեր այս պատմությունն, իհարկե, պայքարի գերազանց օրինակ է չինովնիկական ապարատի դեմ, բայց սա նաեւ օրինակ է, թե ինչքան ուժ, միջոցներ, ժամանակ եւ նյարդեր պետք է ծախսեն լրատվամիջոցն ու լրագրողը այս ճանապարհով արդյունքի հասնելու համար: Բայց Երեւանի քաղաքապետերի որոշումներն այսօր էլ փակ փաս-

90 Լիանա Սայադյան, Լրագրողները հաղթեցին. առայժմ, 1 դեկտեմբերի, 2004, www.hetq.am:
91 Պետությունը փոխհատուցեց լրագրողների կրած վնասը, 19 հունիսի, 2006, www.hetq.am:

փաթղթեր են: Ու մենք գրեթե ամեն ամիս հայտնվում ենք նման իրավիճակում՝ պետական կառույցները, համայնքապետերը հրաժարվում են տեղեկություններ տալ: Եթե դատական կարգով փորձենք դրանք ձեռք բերել, ապա ամբողջ անձնակազմով մեր ժամանակը միայն դատարաններում պիտի անցկացնենք: Հիմա էլ մի դատական գործընթացի մեջ ենք: 2008 թ. ՀՀ վարչական դատարանը հօգուտ մեզ որոշում է կայացրել, սակայն, միեւնույն է, Իջեւանի քաղաքապետը չի տրամադրում մեր պահանջած որոշումները:

Օպերայի հանրային այգում կառուցված սրճարանների մասին այս հետաքննությունից բավականին մեծ դասեր քաղեցինք: Ամենակարեւոր հետեւությունն այն էր, որ լրագրողը պետք է ապավինի միայն ու միայն իր ուժերին, իր գրչին, երբեմն ո՛չ դատարանը, ո՛չ օրենքները չեն օգնում, որովհետեւ դատարաններն անկախ չեն, իսկ օրենքները չեն գործում:

# ՀԱՎԵԼՎԱԾ 3



## «ՎԱՅԵԼԵՔ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ»,- ԱՍՈՒՄ Է ՊՈՒԼԻՑԵՐՅԱՆ ԵՌԱԿԻ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ ՍԹԻՎ ՔՅՈՒՐՔՉՅԱՆԸ[92]

Սթիվ Քյուրքչյանը 30 տարվա լրագրող է, հիմնականում կատարում է լրագրողական հետաքննություններ: Աշխատում է ԱՄՆ-ի Բոստոն քաղաքի «Բոստոն Գլոբ» օրաթերթում: 2002 թ. հուլիսին տասնօրյա այցով Սթիվը գտնվում էր Հայաստանում: Մեր մի քանի հանդիպումների ընթացքում նա պատմեց իր հետաքննությունների, լրագրության խնդիրների, Հայաստանի լրագրողների հետ հանդիպումներից ունեցած տպավորությունների մասին: Ըստ Սթիվի՝ ինչպես Հայաստանում, Միացյալ Նահանգներում եւս հետաքննող լրագրողը հիմնականում աշխատում է նույն ուղղություններով: Լրագրողները հետաքննում են պետական եւ մասնավոր ոլորտի ծառայությունների աշխատանքը, որոնց դիմաց մարդիկ վճարում են: Սթիվը գրել է կոռուպցիայի, վատնման, շորթման, չարաշահման, ոստիկանության լիազորությունների գերազանցման, հանրային կրթության բնագավառի, մասնավոր ապահովագրական ընկերությունների, հիվանդանոցների խնդիրների մասին: Վերջին հայտնի հետաքննությունը նվիրված էր կաթոլիկ եկեղեցում սեռական բռնությունների դեպքերին, որի համար էլ «Բոստոն Գլոբ»-ի հետաքննական թիմը ստացավ Պուլիցերյան մրցանակ: Սթիվի հետ մեր ծանոթությունը վերածվեց բարեկամության: 2004-ին նրա շնորհիվ երկշաբաթյա վերապատրաստում անցա «Բոստոն Գլոբում», որտեղ ծանոթացա թերթի հետաքննական թիմի աշխատանքներին: Հինգ հոգանոց թիմը զբաղված էր Միացյալ Նահանգների բարեգործական ֆոնդերի միջոցների ծախսերով: Ամեն ոք ուներ աշխատանքի իր բաժինը: Եւ նրանք պարբերաբար հավաքվում էին՝ ի մի բերելու կատարած աշխատանքը, յուրաքանչյուրը հայտնում էր, թե ինչ է

92 «Վայելեք ճակատամարտը»,- ասում է Պուլիցերյան եռակի մրցանակակիր Սթիվ Քյուրքչյանը, 22 հուլիս, 2002թ., www.hetq.am:

արել, ինչի է հասել եւ ինչ է նախապեսում անել հաջորդ փուլում: Ինձ, իհարկե, զարմացրել էր թերթի հզորությունը, խմբագրության հարեւանությամբ փպարանի հսկա շենքն է: Կարծում եմ՝ Հայասփանում նման հիմնարկ, ձեռնարկություն չկա: Եւ ես շափ խեղճացած էի այդ հզորության առջեւ: Սթիվն, իհարկե, ամեն ինչ անում էր այդ փխրությունը փարափելու համար: Նա ինձ ամեն օր փանում էր զանազան բաժինների հավաքներին եւ յուրաքանչյուրին ներկայացնում էր հայասփանցի լրագրողին ու, առիթից օգտվելով, մի քանի րոպե ներկայացնում նաեւ Հայասփանը: Նրա շնորհիվ՝ որպես «Բոսփոն Գլոբ»-ի թղթակից, ես կարողացա մասնակցել Հարվարդի համալսարանում կայացած Ռ. Թ. Էրդողանի մամուլի ասուլիսին: Սթիվն ինձ համոզել էր, որ անպայման հարց փամ Թուրքիայի վարչապեփին: Երբ ներկայացա, Էրդողանը եւ նրա կողքին կանգնածները անակնկալի եկան, որովհեփեւ կրծքիս «Բոսփոն Գլոբի» լրագրողի վկայականն էր, իսկ ես ներկայացա որպես հայասփանցի լրագրող: Հեփո մփածեցի, որ միայն հեփաքննող լրագրող Սթիվ Քյուրքչյանի մփքով կանցներ ինձ կանգնեցնել Էրդողանի դեմ-դիմաց: Ես այս գրքում անպայման ցանկացա ներկայացնել մեր մի քանի զրույցները: Թեեւ դրանք անավարփ են: Բոսփոնում գփնվելու օրերին ապրում էի Սթիվի փանը, եւ չնայած անգլերենի իմ վափ իմացությանը՝ այդ ժամանակ էլ շփվում էինք: Արագախոս եւ արագաշարժ Սթիվից մեծ ջանքեր էին պահանջվում դանդաղ եւ ինձ հասկանալի անգլերենով խոսելու համար: Նա անընդհափ շարժման մեջ էր, մարդկանց էր հանդիպում: Ես զգում էի, որ այդ մարդիկ փեղեկափվության աղբյուրներ են, որոնց հեփ հանդիպել է հենց այնպես՝ մի բաժակ սուրճ խմելու: Նա դա անում էր կապերը «թարմ» պահելու համար: Ես դա շափ լավ հասկանում էի, քանի որ նույն կերպ վարվում եմ Հայասփանում:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՌԱՋԻՆ

## ՄԵՆՔ ՍՈՒՐԲ ԳՈՐԾՈՎ ԵՆՔ ԶԲԱՂՎԱԾ

Ցանկացած երկրում, ցանկացած ձեռնարկությունում այն մարդիկ, ովքեր պատասխանատու են կազմակերպությունների համար, ովքեր հսկում են ծառայությունների մատուցումը, հիմնականում մտածում են իրենց եւ իրենց մերձավորների մասին: Լրագրողը պատասխանատու չէ այս կամ այն գործի համար, նա պատասխանատու է մարդկանց առջեւ: Գործի համար պատասխանատու են երկրի նախագահը, ոստիկանության ղեկավարը, կառավարության պատասխանատուները, որոնք ուզում են պարզապես մնալ իրենց պաշտոններում: Լրագրողների դերն այլ է, նրանք իրենց դերը կատարելու են դարեր շարունակ: Համարում եմ, որ մենք սուրբ գործով ենք զբաղված: Սուրբ բառն ինձ համար շատ կարեւոր բառ է: Ինչպես հետաքննական լրագրության տարիների փորձի ընթացքում եմ հասկացել, որքան պատմությունները շատանում են, ավելի են բարդանում: Մարդիկ չեն գա եւ ձեզ չեն ներկայացնի փաստերի հստակ շարադրանք: Առհասարակ ամեն ինչ շատ խճճված է, շատ դժվար է պարզել: Նման է հանելուկի, իսկ լրագրողի պարտականությունն այդ հանելուկը լուծելն է: Պարզել, թե ինչու ինչ-որ բան չի ստացվել, ինչու է այս կամ այն բանը եղել, ինչքանով է դա վատ, եւ ինչպես կարելի է համակարգը կատարելագործել, որպեսզի հիվանդանոցները ավելի լավ բուժօգնություն կազմակերպեն, ոստիկանությունն ավելի արդյունավետ կատարի իր աշխատանքը, դպրոցները երեխաներին ավելի լավ կրթեն: Եվ պատասխանատվությունը լրագրողների վրա է: Այն թերթերը, որոնք լրագրողին տալիս են անհրաժեշտ ժամանակ եւ միջոցներ իրենց գործը լավ կատարելու համար, կապ են պահպանում հասարակության՝ ընթերցողների, ունկնդիրների, հեռուստադիտողների հետ շատ ավելի սերտորեն, քան այն թերթերը, որոնք ներկայացնում են կողմնակալ լրատվություն: Հասարակությունը ժամանակ չունի պարզելու, թե ինչու հիվանդանոցները լավ չեն իրականացնում բուժումը, իրենց ծառայությունը, դպրոցները լավ չեն իրականացնում կրթությունը: Իրենք ժամանակ չունեն, եւ պետությունն էլ ժամանակ ու միջոցներ չունի այն ինքնուրույն պարզելու համար: Քաղաքական կուսակցությունն այս ամենը փեսնելով՝ պարզապես քննադատում է փիրող վիճակը: Մամուլը, միայն մամուլն է, որ արձանագրում է, պարզում, թե ինչպես կարելի է փոխել իրավիճակը: Ժողովրդավարական հասարակարգում հասարակությունը կախված

է արդարացի եւ ճշմարիտ լրատվությունից: Ինչո՞ւ: Որովհետեւ հասարակությունը վճարում է այդ ծառայությունների դիմաց: Եթե հասարակությունը չի ստանում այն ծառայությունները, որոնց դիմաց այդքան թանկ է վճարում, որոնցից կախված է, ապա կարող է զզվել կառավարությունից, կառավարությանը լուրջ չմոտենալ:

***Մորաքույրս այնպիսի մարդ է, ումից կախված է ժողովրդավարությունը:***

Ժողովրդավարությունը շատ խոցելի, զգայուն օրգանիզմ է: Եւ միայն ու միայն պայմանավորված ու կախված է փաստարկված ու ճշմարիտ լրատվությունից: Միայն դրանով հասարակությունը կիմանա՝ գալիք ընտրություններում ում օգտին քվեարկել եւ ում պատասխանատու դարձնել ընտրություններից հետո: Գիտեք, երբ աշխատում եմ, ինձ համար դժվար է պատկերացնել, թե ով է հանրությունը, որի համար սովորաբար գրում եմ: Մորաքրոջս՝ Իզաբելին եմ աչքիս առաջ պատկերացնում: Մորաքույրս շատ խելացի կին է: Երբեք բուհում չի սովորել, բայց այնպիսի մարդ է, ումից կախված է ժողովրդավարությունը: Նա մեղմ չի արտահայտվում, իր կարծիքները շարադրում է շատ հստակ եւ ճիշտը սխալից տարբերում է: Նա հարցեր է տալիս, լավ հարցեր է տալիս: Երբ գրում եմ, աչքիս առաջ պատկերացնում եմ մորաքրոջս: Եվ գրում եմ այնպես, ինչպես կպատմեի մորաքույր Իզաբելին, որպեսզի պատմությունն ազդեցիկ եւ հասկանալի դարձնեմ, որպեսզի մորաքույրս հասկանա պատմությունը: Բոլոր դեպքերում, երբ պատմություն եմ գրում եւ տպագրում միանգամից, մորաքույրս զանգում եւ ասում է՝ ա՜յ, հասկացա: Եւ եթե մորաքույր Իզաբելը հասկացել է եւ ազդվել, ապա բոլորը կկսեն զանգահարել: Եթե զանգում-ասում է՝ ապրե՛ս, տղա՛ս, լավ ես գրել, երեխաներն ինչպե՞ս են: Հասկանում եմ, որ այնքան էլ լավ չեմ գրել:

Ես մի այլ պատմություն եմ ուզում պատմել: Մայրս շատ հպարտ է իր որդով: Գրադարանավարուհի է եղել «Բոստոն Հարոլդում»՝ իմ թերթի հետ մրցող թերթում: Թոշակի անցնելուց մեկ տարի անց զանգեց եւ ասաց՝ քեզ համար պատմություն ունեմ: Ասաց՝ ընկերուհիներիցս մեկի որդին շատ լավ բժիշկ է, աշխատում է հիվանդանոցում, որտեղ մի քանի տղամարդ հիվանդ են քաղցկեղով: Լավ, ասաց, զանգիր, ինքը կպատմի ամբողջ պատմությունը: Զանգեցի երիտասարդին, ասաց, որ իրեն վերջերս այցելել են երկու տղամարդ, ովքեր աշխատում են նավահանգստում, վերանորոգում են միջուկային սուզանավեր: Սուզանավի վրա աշխատում են կողք-կողքի: Այդ սուզանավերը մեր երկրի անվտանգության բաղադրիչ մասերն են: Վեց ամսվա ընթացքում

իրենց մոտ առաջացել է արյան ծանր հիվանդություն: Նրանք դիմել են բժշկի: Բժիշկը նրանց ախտորոշել է եւ շատ մտահոգված է արյան այս հազվադեպ հիվանդությունը հայտնաբերելով: Բժշկի առաջին արձագանքն այն էր, որ պետք է ինչ-որ բան պատահեր, որպեսզի այս մարդիկ հիվանդանային նման հիվանդությամբ: Աշխատանքի վայրում նրանք շփվել են ինչ-որ բանի հետ, որից առաջացել է այդ հիվանդությունը: Բժիշկը զանգել է Ամերիկյան նավապորմի սուզանավերի ղեկավարներին եւ հայտնել, որ հարցեր ունեն ու սուզանավերում ցանկանում են կատարել որոշ ուսումնասիրություններ: Ի՞նչ կապ կա սուզանավերի վերանորոգման եւ աշխատողների արյան մեջ քաղցկեղի առաջացման միջեւ: Նավապորմից իրենց երկու բան են ասել: Առաջինը, որ իրենք երբեւէ չեն ուսումնասիրել պատճառահետեւանքային կապը, որ իրենք վստահ են, որ այդ մարդիկ բարձր ճառագայթման չեն ենթարկվում, անվտանգությունն ապահովված է, ունեն ճառագայթումը չափող գործիքներ եւ պաշտպանիչ համազգեստներ: Երկրորդ՝ բժշկին ասել են, որ եթե շարունակես հարցեր տալ, քեզանով կհետաքրքրվեն իշխանությունները: Եթե պետության ներկայացուցիչը երկու անգամ ասի՝ քեզ էլ կհետաքննեն, դու էլ կսկսես երկու անգամ մտածել քո հետագա քայլերի մասին: Բժիշկը երկու անգամ մտածելուց հետո ասել էր իր մորը: Նրա մայրը պատմել էր իմ մորը: Մայրս էլ՝ ինձ: Մայրս շատ ուրախացավ՝ իմանալով, որ զանգել եմ բժշկին: Նա զգացել էր, որ հետաքննության կարիք կա, որ պետք է ուսումնասիրել, պարզել՝ արդյո՞ք սուզանավեր վերանորոգողները արյան հիվանդությունը բարձր ճառագայթումից չեն ստանում: Զրուցեցինք իրար հետ, եւ մի ձյունոտ օր ես դիմեցի նավապորմի աշխատողների արհմիության ղեկավարությանը: Հարցրի՝ կարո՞ղ եք ինձ ասել, թե ինչպիսին է ձեր աշխատողների մոտ արյան քաղցկեղի մակարդակը, միջին ցուցանիշից բա՞րձր է: Ասացին՝ այո, շատ բարձր է: Ոչ ոք իրենց մոտ երբեք արյան քաղցկեղից մահացության մակարդակի ուսումնասիրություն չի կատարել: Մենք ասացինք՝ ինչպե՞ս կարող ենք անել, պետությունը պատրաստ չէ հետաքննել: Արհմիությունը գրառումներ չի վարել, որոնցով հնարավոր կլիներ ուսումնասիրությունը կատարել՝ ինչպե՞ս մենք կարող ենք անել: Հետո մենք մեզ հարց տվեցինք՝ արժե՞ զբաղվել նավապորմով: Ինչպես արդեն պատմեցի, եթե հասարակայնությունը թերթերից կախված չլիներ, ապա ուրիշ տեղ դիմել չէր կարող: Ահա ձեզ գերազանց օրինակ: Կառավարությանը չէր հետաքրքրում սա, կառավարությունը պատրաստ չէր հետաքննելու սա: Զգացինք, որ մենք ենք պարտավոր ուսումնասիրել այս խնդիրը:

Մեզանից երեք ամիս պահանջվեց երեք լրագրողով հետազոտելու համար: Ինչպե՞ս աշխատեցինք: Բացեցինք մահվան վկայականները, Ամերիկայում ինչպես եւ շատ տեղերում, կան մահվան գրանցման մատյաններ, որոնք բաց, հրապարակային են: Գրվում են մահացած անձանց անունները եւ այլ տվյալներ՝ որտեղ է աշխատել, ինչից է մահացել: Նավահանգիստը գտնվում էր երեք նահանգների սահմանագծին: Մահվան մատյանները պահպանվում են այդ երեք նահանգների մայրաքաղաքների համապատասխան մարմիններում: Մենք այդ երեք նահանգներում ուսումնասիրեցինք անցած տասնհինգ տարվա մահվան գրանցումների մատյանները: 40 հազար մարդ էր մահացել երեք նահանգներում 15 տարվա ընթացքում: 40 հազար անգամ բոլոր էջերը թերթեցինք եւ գտանք մոտ հազար հոգու անուն, ովքեր աշխատել էին այդ նավահանգստում եւ պարզեցինք, որ նրանք մահացել են արյան քաղցկեղից: Եվ այդ ցուցանիշը երկու անգամ ավելի բարձր էր միջինից: Սուզանավերի նորոգմամբ զբաղվող մարդկանց մահացությունը քաղցկեղից կամ լեյկեմեյայից երկուսից չորս անգամ բարձր էր: Մեզ թվաց, որ սա զգոնացնող փաստ է, եւ պետք է ավելի զգույշ լինենք հասարակությանը ներկայացնելիս: Ի՞նչ կարող էինք անել: Մեր փաստաթղթերով, վերլուծություններով դիմեցինք կառավարությանը: Երեք շաբաթ սպասեցինք: Կոնգրեսն արդեն գիտեր մեր աշխատանքի մասին, չնայած դեռ չէինք հրապարակել տվյալները: Կառավարությունն ընդդիմադիր մամուլի միջոցով ներկայացրեց, որ մենք հակասական տեսակետներ ենք հայտնում: Իրենք տվյալներին, ըստ էության, չանդրադարձան: Մի խոսքով, ընդդիմադիր մամուլում քննադատեցին մեզ այդ տվյալները բացահայտելու համար: Զայրացանք: Մի օր սպասեցինք, որ զայրույթը անցնի, հանգստանանք: Հանգստացանք: Պատմությունը գրեցինք, հոդվածը տպագրեցինք «Բոստոն Գլոբ»-ում, եւ արդեն 20 տարի է անցել այդ ժամանակվանից: Առաջին բանը, որ եղավ, Կոնգրեսը շատ զգոնացավ: Երկու պատճառով՝ նախ, որ տվյալներն էին զգոնացնող, երկրորդ՝ որ կառավարությունը երբեւէ չէր ուսումնասիրել նման տվյալներ: Կոնգրեսը կազմակերպեց լսումներ, հրավիրեցին նավատորմի ներկայացուցիչներին: Ոչ միայն ամոթալի է, այլ նաեւ կարեւոր Կոնգրեսի կողմից հրավիրվելը: Եվ եթե Կոնգրեսն է դժգոհ, ապա նման դեպքում վարչակազմը դրա մասին անպայման կիմանա: Ներկայացավ ԱՄՆ միջուկային ծրագրի գլխավոր պատասխանատուն: Այդ զինվորականին ԱՄՆ կառավարությունը համարում է ազգային պաշտպանության հերոս: Միջուկային ծրագրի հայրն էր: Նա սովոր չէ ինչ-որ մեկից ներողություն

խնդրել: Բայց նա դա արեց: Ներողություն խնդրեց Կոնգրեսից, հասարակությունից, որ չի ուսումնասիրել վիճակագրական փվյալները, որ չի բացահայտել այս խնդիրը: Իսկ ինչու՝ ոչ թե որովհետեւ «Բոսփոն Գլոբ»-ն իրեն ամոթալի վիճակում է դրել, ոչ թե որ Կոնգրեսն է իրեն մարփահրավեր նեփել, այլ ամենակարեւորը այն պափճառով, որ այդ միջուկային նյութերից վփանգվել էր մարդկանց առողջությունը, մարդկանց կյանքը: Մարդիկ թերթից էին իմացել այդ ռիսկի մասին: Թերթի հրապարակումներից հեփո արձագանքել էր Կոնգրեսը, երբ Կոնգրեսն էր արձագանքել, գործադիր մարմինը սփիպված էր պափասխաններ փալ: Այսպիսով, նավափորմը հարկադրված եղավ ինքը ուսումնասիրել խնդրի էությունը, որի համար պահանջվեց ավելի քան մեկ միլիոն դոլար, ավելի քան մեկ փարի փեւեց այդ ուսումնասիրությունը, եւ սփացվեցին այն արդյունքները, ինչը մենք էինք սփացել: Ասացին, որ նվազագույնի կիասցնեն ճառագայթման մակարդակը: Մի թերթի հոդված առաջացրեց մասշփաբային հեփեւանքներ: Բայց այդ պափմությունը շափ արագ անցավ, ինչպես քարը կսուզվեր ջրի մեջ: Եթե կապը չլիներ հասարակության եւ թերթերի միջեւ, ամեն ինչ այդքան արագ չէր ընթանա: Այս կապի միջոցով է կայանում եւ ամրապնդվում ժողովրդավարությունը:

***Ես կցանկանայի Հայասփանի կառավարությունը այնքան լավը լիներ, որքան Հայասփանի ժողովուրդն է:***

Այս պափմությունից կարելի է դասեր քաղել: Դասեր քաղեց կառավարությունը, որն իր ժողովրդի համար ըսփ արժանվույն չէր աշխափել: Այս պափմությունից այլ դասեր նույնպես կարելի է քաղել: Եվ այդ դասերը պեփք է քաղեն նաեւ լրագրողները: Երեք ամիս ենք անցկացրել, մանրամասն ուսումնասիրել, համապարփակ, լիարժեք հաշվեփվություն ենք պափրասփել: Բացի այդ, ավարփելուց հեփո վերադարձել ենք պեփական ափյանների մոփ եւ նրանց հարցրել իրենց փեսակեփները մեր բացահայփածի մասին: Հնարավորինս հեռուն ենք գնացել ամբողջական պափասխանները գփնելու համար, թե ինչու է այս կամ այն երեւույթը փեղի ունեցել: Մամուլի ուժը հսկայական է ժողովրդավարության մեջ, բայց մեծ են նաեւ պարփականությունները: Ես չեմ եկել այսփեղ կառավարությանը դասախոսություններ կարդալու: Ես կցանկանայի Հայասփանի կառավարությունը այնքան լավը լիներ, որքան Հայասփանի ժողովուրդն է: Կցանկանայի Միացյալ Նահանգների կառավարությունն էլ այնքան լավը լիներ, որքան Ամերիկայի ժողովուրդն է:

***Հիսուն տարի անց գրասայգիներում կտեսնենք արձաններ՝ նվիրված լրագրողների հիշատակին:***

Այստեղ եմ, որպեսզի փորձեմ ազդեցություն թողնել լրագրողների, խմբագիրների վրա, եւ հուսով եմ՝ նաեւ հրապարակիչների վրա: Փաստորեն, մենք արտառոց պարտականություն ունենք՝ կապ ստեղծել հասարակության հետ: Հասարակությունը կարիք ունի իմանալու տեղեկություններ, ճշմարտացի տեղեկություններ: Մի՛ չարաշահեք ձեր այդ պարտականությունը, ազնիվ եղեք, լիարժեք ներկայացրեք ձեր նյութերը, ձեր լրագրությունը: Եւ որոշ ժամանակ անց կզգաք, որ կապ եք հաստատել ընթերցողների հետ: Երբ արդեն այդ կապը հաստատվի, մի՛ անհանգստացեք, քանի որ հասարակությունը կարձագանքի, իրենք կիմանան, որ կենդանի մնալու միակ ուղին արձագանքելն է ոչ թե մեզ՝ ԶԼՄ-ներին, այլ՝ նրանց, ում մենք ներկայացնում ենք: Դրանք ընթերցողներն են: Տասը տարի անց, երբ թոռներիս հետ կգամ Հայաստան, հուսով եմ՝ կտեսնեմ պատասխանատու, արձագանքող կառավարություն: Արձագանքող այն հարցերին, որոնք անդրադառնում են մարդկանց վրա: Խորհրդարանը պետք է լինի իշխանության ամենաhպարտ դրսեւորումը: Հիսուն տարի անց կանաչ այգիներում կտեսնենք ոչ միայն պետական պաշտոնյաների, այլ նաեւ լրագրողների արձաններ: Այն լրագրողների, ովքեր դիմակայել են ժամանակի փորձությանը, մաքառել են ծանր դժվարությունների դեմ՝ չունենալով արձագանքող կառավարություն, մնացել են հավատարիմ իրենց արհեստի կոչմանը, մնացել են հավատարիմ այն գաղափարին, որին ձգտում են հասնել բոլոր ազատ լրատվամիջոցները:

Ոչ մի դեղատոմս չեմ կարող ասել Հայաստանում ազատ մամուլի կայացման համար: Կախարդական լուծում չկա, որ ասեմ՝ արեք այս քայլը եւ լավ կլինի: Սակայն մի բան կցանկանայի ասել՝ վայելեք ճակատամարտը, որին հիմա մասնակից եք: Շատ մի՛ հուսալքվեք: Դուք եք այստեղ հայրենիքի մարտիկները, հպարտ եղեք ձեր դերով: Եթե հուսահատվեք, ապա տեղի կտաք, եթե տեղի տաք, ապա կվատնվի այն ուժը, որը փոխանցվել է մեզ սերնդեսերունդ եւ մեզ դարձրել այսօրվա հայը: Եթե հետաքննական լրագրությունը հեշտ լիներ, ապա մեկ ուրիշը դա արդեն արած կլիներ: Այսօր պետք է պատրաստակամ լինենք՝ կրելու բեռը, ծանր աշխատանքի բեռը, հուսալքման, ձախողման բեռը: Ներկայացրեք ճշմարիտ եւ ճշգրիտ լրատվություն, որպեսզի հաջողության հասնեք:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐԿՐՈՐԴ

## ԵՍ ՉԵՄ ՈՒԶՈՒՄ, ՈՐ ՈՐԵՒԷ ՄԵԿԸ ԵՐԲԵՒԷ ԱՍԻ՝ ԻՆՁ ԶԱՐՄԱՑՐԵՑ ՍԹԻՎ ՔՅՈՒՐՔՉՅԱՆԻ ԳՐԱԾԸ

*Ըստ «Բոստոն Գլոբ»-ի լրագրող Սթիվ Քյուրքչյանի՝ Միացյալ Նահանգներում լրագրողները նույնպես հանդիպում են դժվարությունների: Դրանք նույնն են, ինչ Հայաստանում: Սակայն այնտեղ հազվադեպ են դեպքերը, երբ լրագրողը հետապնդվում է կամ նրան մեղադրանք է ներկայացվում: Ամենուր մամուլին պակասում է կառավարության լիարժեք տեղեկատվությունը: Ասենք, թե ինչու է կառավարությունը կայացնում կոնկրետ այս կամ այն որոշումը:*

«Բոստոն Գլոբ»-ն ունի իրավաբաններ, որոնց միջոցով մենք հայց ենք ներկայացնում դատարան: Եթե տեղեկություններ ստանալը խնդիր է դառնում, նրանք դիմում են դատարան: Վերջին դեպքը կապված էր Ամերիկայի կաթոլիկ եկեղեցու Բոստոնի թեմի հետ: Դատի ենք տվել նախկին մի քահանայի, որը մեղադրվում էր բազմաթիվ երեխաների նկատմամբ սեռական ոտնձգություններ կատարելու մեջ: Երեխաներն արդեն մեծացել են, այսօր նրանք դիմել են իրավաբանի, իսկ վերջինս դատի է տվել եկեղեցուն եւ քահանային: Բոստոնի թեմը դատարանից պահանջել է փակել նյութերը՝ նշելով, որ կրոնի ազատությունը պաշտպանում է եկեղեցուն: Ասացինք՝ այո, գաղտնի կպահենք նյութերը: «Բոստոն Գլոբ»-ը նոր խմբագիր ուներ: Ասաց՝ չէ, դա մեզ համար կարծես կարեւոր գործ է, գուցե էլի քահանաներ կան, որոնք նմանատիպ բաներով են զբաղվել: Եկեք թույլ չտանք եկեղեցուն այս տեղեկությունները գաղտնի պահի: Եթե ընդամենը մի քահանա է, այդ տեղեկությունները չենք հրապարակի, բայց միգուցե փակված դռների ետեւում էլի ինչ-որ բաներ կան թաքնված: Դիմեցինք դատարան: Դատավորը եկեղեցու ներկայացուցիչներին ասաց, որ թերթը ճիշտ է, թող պարզի, թե փաստաթղթերում ինչ է գրված: Երբ մրցակից թերթն իմացավ այս դատի մասին, իրենք ուզեցին առաջինը վերցնել այդ նյութերը եւ տպել: Դա ինձ արդար չթվաց, ես համաձայնության եկա մեկի հետ, որը ներկայացնում էր տուժողներին, կարողացանք գրառումները մեկ-երկու օր ավելի շուտ ստանալ եւ հրապարակել: Այսինքն՝ պատմությունն առաջինը մեզ հասավ: Կարեւորը՝ ինչ գտանք այդ նյութերի մեջ: Իմացանք, որ ոչ թե մեկ քահանա, այլ տասնյակ քահանաներ երեխաներին սեռական բռնության են ենթարկում: Եկե-

ղեցու վերնախավը գիտեր այդ չարաշահումների մասին, սակայն չեն դիմել ոստիկանություն, վախեցել են սկանդալից: Հասարակությունից գաղտնի են պահել: Քահանային մի թեմից տեղափոխել են մեկ այլ թեմ: Եվ նա, տեղափոխվելով, շարունակել է իր գործելակերպը: Պարզեցինք, որ կառույցը գործել է լուռ ու մունջ, մթության մեջ՝ հասարակությանը հաշվետու չլինելով: Դա էլ նպաստել էր ոտնձգությունների իրականացմանը: Պատմությունը այնպիսի թափ հավաքեց, որ երբեւէ նման բան չէր եղել: Հետեւանքները մինչ օրս դեռ փորձում են ծավալի առումով գնահատել: Ո՛չ լրագրողները, ո՛չ էլ լրատվամիջոցը չեն ուրախանում կամ ոգեւորվում, որ նման բաներ է լինում եկեղեցու հետ: Կաթոլիկ եկեղեցին Բոստոնում շատ լավ բաներ է անում աղքատների, ծերերի, հիվանդների համար: Բայց միաժամանակ կան նման վատ երեւույթներ: Կարծում եմ, որ կաթոլիկ եկեղեցու համակարգում բարեփոխումներ կիրականացվեն, եւ կկանխվեն նման երեւույթները:

**- Ե՞րբ հասկացաք, որ պետք է զբաղվեք լրագրողական հետաքննությամբ:**

1970-ականների սկզբներին առաջին անգամ սկսեցի հետաքննություններ անել: Մեր խումբը դարձավ Պուլիցերյան մրցանակակիր, եւ հայտնի դարձանք: Բոլորը գիտեին, թե մենք ինչով ենք զբաղվում: 50-60-ականներին Ամերիկայում կարծես մոռացել էին հետաքննական լրագրության մասին, եւ մենք կարծես վերակենդանացրինք այդ ժանրը: Մենք այդ մեծ շարժման վերածննդի սկզբի մի մասն էինք զգում մեզ: Գիտակցում էինք, որ կարեւոր գործ ենք անում, եւ մարդիկ մեզ արդեն շատ լուրջ են վերաբերվում: Հետո, երբ ստիպված գնացի Վաշինգտոն 86-ից մինչեւ 91 թթ., հետաքննություն չէի անում, այլ զբաղվում էի քաղաքական լրատվությամբ: Այդ ժամանակ գիտակցեցի, թե ինչքան մեծ նշանակություն ունի ինձ համար հետաքննական լրագրությունը: Ոչ թե փառքի, ճանաչման, չնայած դա նույնպես հաճելի է, այլ ինձ համար կարեւոր էր հասկանալ, որ իսկապես մարդկանց կյանքում փոփոխություններ եմ մտցնում: Ես, փաստորեն, նրանց անունից դրական տեղաշարժեր էի իրականացնում: 5-6 տարի դրանից հեռացա, չնայած Վաշինգտոնում էի, նախագահական ընդունելություններին էի մասնակցում, նույնիսկ նախագահի հետ եմ հարցազրույց արել: Բայց այդ նյութերը երկարատեւ ազդեցություն չէին ունենում: Իսկ այն, ինչ անում էի մինչ այդ, եւ այն, ինչ անում եմ հիմա, այլ է, դրական նոր բան եմ ստեղծում:

**- Իսկ ինչ-որ հատուկ կրթություն ստացա՞ք, թե միայն Ձեր աշխատանքային փորձն էր:**

Միակ հետաքննական դասընթացը անցել եմ ո՛չ որպես լրագրող, այլ՝ որպես իրավաբան: Իրավաբանական համալսարան գնալն ինձ սովորեցրեց աշխատել խճճված փաստերի հետ, պարզել, թե ինչու է ինչ-որ բան տեղի ունենում եւ հասկանալ այն, ինչը ես չգիտեի: Ձգտել հասնել նրան, որ տեղեկատվության առումով ամեն ինչ անթերի լինի: Երբ երիտասարդ էի, Մասաչուսեթս նահանգի կառավարության մասին նյութեր էի անում: Դա ինձ օգնեց հասկանալ, թե ինչպիսին է կառավարության քաղաքականությունը, ինչպես են աշխատում պետական մարմինները:

**- Սովորական լրագրողն ինչո՞վ է տարբերվում հետաքննողից:**

Հիմնականում երկու բան կարող եմ ասել: Ժամանակն է կարեւոր: Սովորական լրագրողը աշխատում է վաղվա կամ վաղը չէ մյուս օրվա համար: Հետաքննող լրագրողը շատ ավելի երկար ժամանակ է ծախսում եւ բացատրում է, թե ինչու է ինչ-որ բան տեղի ունենում: Ոչ թե արձանագրում է, որ այսինչ բանը տեղի է ունեցել, այլ բացատրում է, թե ինչու է այդպես եղել:

**- Ինչպիսի՞ հնարքներ եք օգտագործում հետաքննության ժամանակ:**

Ես գիտեմ ինչպես կարդալ փաստաթղթերը, գլուխ եմ հանում բարդ, խճճված փաստերից: Խճճված իրավաբանական մանրամասներն ինձ չեն վախեցնում: Երբեմն բավականին ժամանակ եմ ծախսում փաստաթղթեր կարդալու վրա: Միանգամից հասկանում եմ, թե ում հետ պետք է խոսեմ, ինչպիսի հարց պետք է տամ: Իսկ լավ հետաքննական լրագրությունը հիմնված է փաստաթղթերի վրա եւ մարդկանց մասին է: Ով է սխալ արել եւ ով՝ փուժել: Հսկայական ժամանակ եմ ծախսում մարդկանց համոզելու, որ ինձ հետ խոսեն: Եվ հիմնականում հաջողվում է: Ես ավելին եմ ձեռք բերել, քան սպասել եմ: Դա հետաքննական լրագրության շատ կարեւոր մասն է կազմում: Պետական ծառայողների մեծ մասը չեն էլ ուզում խոսել լրագրողների հետ: Վախենում են, որ պաշտոնից կհեռացվեն: Վախենում են, որ իրենց անունը սկանդալի հետ կկապվի եւ կկորցնեն իրենց աշխատանքը: Ես ջանքեր չեմ խնայում նրանց համոզելու համար: Ես ապացուցում եմ նրանց, որ այդ ամենն ի շահ հասարակության է: Ասում եմ՝ միեւնույն է, ձեր անունը նշվելու է նյութի մեջ, եթե դուք նույնիսկ բան չեք ասում, այդ դեպքում շատ ավելի վատ կլինի ձեզ համար: Շատ պարզ, հասկանալի եւ համոզիչ ձեւով եմ նրանց հետ խոսում, բացատրում, թե ինչու իրենք պետք է խոսեն ինձ հետ: Դա ասում եմ նաեւ ի պաշտպա-

նություն իրենց: Ասում եմ՝ ավելի լավ է խոսեք, լռություն պահպանելով սկանդալը ավելի շատ կկապվի ձեզ հետ, քան եթե խոսեք: Եւ, ի վերջո, նրանք հասկանում են, որ Քյուրքչյանը արդար է վարվում իրենց հետ, որ պետք է վստահեն իմ աշխատանքին, որ ինձ հետ դժվար է գործ ունենալը: Բայց եթե Քյուրքչյանը ինչ-որ բան խոստանում է, անպայման կատարում է, իր խոստումը երբեք չի դրժում:

**- Սովորաբար հավաքած նյութի քանի՞ տոկոսն եք օգտագործում:**

Հավանաբար փասը տոկոսը, առավելագույնը՝ փասը տոկոսը: Տարիների ընթացքում, երբ քո աշխատանքում պրոֆեսիոնալ ես դառնում, հասկանում ես, թե հատկապես ինչ է քեզ պետք այդ նյութը գրելու համար: Արդեն ունես բավարար տեղեկատվություն նյութը պատմելու համար, այնքան, որ եթե ինչ-որ մեկը քեզ դատի տա, կարողանաս ապացուցել քո ճշմարտացիությունը: Ես մեքենա չեմ, պարզապես սիրում եմ հետաքննական աշխատանքը: Սիրում եմ մարդկանց հետ աշխատել, սիրում եմ մարդկանց գրավել, ընկերություն անել նրանց հետ: Ինձ շատ է դուր գալիս, երբ դժվար մարդկանց եմ հանդիպում, որովհետեւ ես ի վիճակի եմ լինում նրանց համոզել: Ասել, որ իրենց հետ համագործակցությունը, նույնիսկ եթե նրանց անունը սկանդալի մեջ է ներքաշված, կկանխի ինչ-որ մեկին պատճառվող վնասը, ցավը: Հիմնականում չեն էլ համաձայնվում, ասում են՝ ոչ մի մեկնաբանություն չենք տալիս: Բայց ես նրանց ասում եմ, թե իրենք ինչ կկարդան թերթում իրենց մասին: Ես չեմ ուզում, որ որեւէ մեկը երբեւէ ասի՝ ինձ զարմացրեց Սթիվ Քյուրքչյանի գրածը:

**- Նյութը միանգամի՞ց եք սարքում, տպում, թե՞ մաս-մաս, մի քանի համարներում:**

Երբ հետաքննական խմբով ենք աշխատում, հիմնականում հետաքննական նյութերի շարք ենք պատրաստում, որովհետեւ աշխատանքները երեքից մինչեւ վեց ամիս են տեւում: Շատ եմ սիրում կարճ հետաքննություններ անել: Սիրում եմ տարբեր նյութեր անել նույն թեմայի շուրջ: Ասենք՝ երկու շաբաթից մինչեւ մեկ ամիս եմ աշխատում դրանց վրա: Այս նյութերը, հիմնականում հավաքվելով, դառնում են մեկ նյութ, որը զբաղեցնում է թերթի երկու էջը: Հիմնականում նրանք բարդ են, դրա համար ամեն ինչ պետք է անես, որ հասկանալի լինի ընթերցողին: Լուսանկարները եւ գրաֆիկները նյութի կարեւոր մասն են կազմում: Աշխատանքիս կարիերիայի կեսում արդեն ինձ հետ լուսանկարիչներ ունեի: Նրանք պրոֆեսիոնալ են, քան ես եւ գիտեն՝ ինչպես անել այդ գործը:

**- Առավոտյան առաջին էջում, մեծ տառերով տեսնում եք Ձեր նյութի վերնագիրը, ի՞նչ եք զգում:**

Վախ:

**- Ինչու՞:**

Նման օրերին սովորաբար գիշերվա 2-ին արթնանում եմ լրիվ քրտնած: Մտածում եմ՝ ախր ինչու՞ տպեցի այդ հատվածը: Միշտ դա առնչվում է ինչ-որ փոքր հատվածի, փաստի հետ, ինձ միշտ թվում է, թե ենթադրել եմ, որ փաստեր ունեմ: Հենց այդ ժամին վեր եմ կենում, գնում խմբագրություն: Կարդում եմ, ասում՝ չէ, ճիշտ եմ արել, ահա փաստերն էլ ունեմ: Աշխատանքի եմ գալիս 8-ն անց կես, 9-ին: Եւ եթե հեռախոսիս կարմիր լույսը վառվում է, ինձ հաղորդագրություն են թողել: Եթե զանգը մինչեւ ժամը ութն է լինում, ուրեմն հոդվածիս մեջ հաստատ սխալ է եղել: Իսկ եթե իննից հետո է, ուրեմն ամեն ինչ կարգին է: Նշանակում է՝ մարդիկ կարդացել են, ուղղակի ինչ-որ մեկնաբանություններ են ուզում անել: Առավոտյան յոթից ութը սովորաբար զանգում են այն մարդիկ, ում մասին սխալ փաստեր եմ տպել: Շատ հաճախ դրանք պարզապես հիմար սխալներ են լինում: Ինչ-որ մեկի անունն եմ սխալ գրել, ասենք՝ պաշտոնը, հասցեն եմ սխալ գրել: Բայց եթե նման սխալներ եմ արած լինում, ստամոքսս սկսում է վատանալ, ֆիզիկապես վատ եմ զգում: Գիտեմ, որ շատ մարդիկ իմ եզրահանգումների հետ չեն համաձայնում: Միշտ տեղ եմ տալիս նրանց իրենց անհամաձայնությունը արտահայտելու: Պրոֆեսիոնալ եզրահանգումները միշտ անում եմ իմ փորձի հիման վրա: Նորմալ է, երբ ինչ-որ մեկը համաձայն չէ ինձ հետ: Բայց ես չեմ ուզում երբեւէ փաստական սխալներ անել: «Բոստոն Գլոբ»-ն ինձ չի վճարում փաստական սխալներ անելու համար: Սակայն «Բոստոն Գլոբ»-ն ինձ այնքան փող չի վճարում, որ ես չանեմ փաստական սխալներ: Ու եթե շատ փաստական սխալներ եմ անում, գրեթե երկու օր ստամոքսիցս բողոքներ եմ ունենում: Բայց պատահում է, ի՞նչ կարող ենք անել:

**- Արդեն մեկ շաբաթից ավելի է՝ շփվում եք հայ լրագրողների հետ: Եթե Ամերիկայում Հայաստանի լրագրությունը նկարագրելու լինեք, ինչպե՞ս եք դա անելու:**

Կարծում եմ՝ երկու բան կնշեմ: Առաջինը՝ բոլորը գիտակցում են, թե ինչքան կարեւոր է լրագրությունը հանրապետության ապագայի համար: Խնդիրները, ինչի մասին այստեղ խոսում են, նույնն են, ինչի մասին մենք խոսում ենք Միացյալ Նահանգներում: Հետաքրքրությունը եւ այն հասկացությունը, թե ինչքան կարեւոր է լրագրությունը, այստեղ առկա է: Բայց նաեւ կխոսեմ այն մասին, որ զգացվում է լրագրող-

ների առաջընթացի պակաս: Մենք միշտ սովոր ենք ասել՝ հայ լրագրողներին ժամանակ է պետք, ամեն ինչ էլ կլինի: Բայց հայ լրագրողները պատասխանում են՝ ո՛չ, դուք մեզ չեք հասկանում: Մենք ասում ենք՝ հենց որ անկախ լրատվամիջոցներ ստեղծվեն, բոլոր դժգոհությունները կանհետանան: Հոգուս խորքում չեմ կարծում, որ դա ճիշտ է: Բոլորն էլ ասում են, որ այդ է պատասխանը, բայց ես, այնուամենայնիվ, մտածում եմ՝ դա չէ խնդիրը: Սա այն դեպքն է, երբ մենք գործ ունենք Սովետական Միության նախկին հանրապետության հետ, այն մի փակ տարածք է եղել: Ես կարծում եմ, որ հենց սա է խնդրի մեծ մասը: Այսինքն՝ այսօրվա լրագրության նմանատիպ խնդիրների հիմքը նախորդ տարիներն են: Կարծում եմ՝ սովետական պետական պաշտոնյաներն էլ նույնպիսին են եղել, նրանք էլ չեն սիրել խոսել, սովորաբար լռություն են պաշտպանել, երբ կարեւոր խնդիրներ են բարձրացվել: Կարծում եմ՝ 20 տարի, լավ, 50 տարի հետո արդեն կղեկավարեն այն մարդիկ, ովքեր ընդհանրապես Սովետական Միության ժամանակներում չեն ապրել, չեն կազմել նրա մի մասը: Եւ գուցե թե այդ ժամանակ կլինի անկախ մամուլ, եւ բիզնեսմենները կտեսնեն, որ ԶԼՄ-ներում ներդնելով՝ կարող են լավ շահույթ ունենալ:

## *ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐՐՈՐԴ*

## ՄԵՆՔ ՍԿՍԵԼ ԵՆՔ ԱՅՆ ՆՈՒՅՆ ՏԵՂԻՑ, ՈՐՏԵՂԻՑ ԴՈՒՔ ԵՔ ՍԿՍԵԼ[93]

*«Բոսթոն Գլոբ»-ի հետաքննող լրագրող Սթիվ Քյուրքչյանը հուզվում էր Երեւանի փողոցներում այդքան հայ տեսնելիս: Նա զմայլվում էր Սեւանի ափերին, տեսանկարում էր ամեն ինչ, որպեսզի տանի իր ծնողներին, ընկերներին ցույց տա, թե ինչ հրաշք երկիր է հայերի հայրենիքը: Հետաքննող լրագրողների ընկերակցության լրագրողների հետ հանդիպման ընթացքում նա պատմում էր իր նախնիների մասին, բայց, իհարկե, հիմնական նյութը լրագրությունն էր:*

**- Դու կարող ես ազնիվ չլինել քո խմբագրի հետ, բայց ընթերցողի հետ պարտավոր ես լինել ազնիվ:**

Հետաքննությունը գլուխկոտրուկ լուծելու նման է: Սեղանի վրա լցված են բազում տեղեկություններ, եւ լրագրողի խնդիրն է՝ համադրել այդ փաստերը, կողք-կողքի դնել, ճիշտ դասավորել: Հաճախ ոչ բոլոր մասերն են առկա, ինչ-որ բաներ բացակայում են: Եթե, ասենք, 20 մասից բաղկացած գլուխկոտրուկի 17 մասն ունեք եւ դասավորել եք ճիշտ հաջորդականությամբ, արդեն հստակ գիտեք, թե որ երեք մասերն են պակասում: Նաեւ, որպես լրագրող, արդեն գիտեք՝ որտեղ փնտրել այդ պակասող մասերը: Եթե դրանք չեք գտնում, պետք է ազնիվ լինել ընթերցողի հետ եւ ասել, թե ինչու չունեք այդ փաստերը, ինչու չեք կարող բացատրել այդ պակասող հատվածը: Սա շատ-շատ կարեւոր է՝ ազնիվ լինել ընթերցողի հետ: Դուք կարող եք ազնիվ, անկեղծ չլինել ձեր խմբագրի հետ, իհարկե, դուք ընդհանրապես չպետք է ազնիվ լինեք ձեր հրապարակչի հետ: Դրա կարիքը չունեք: Բայց պարտավոր եք ազնիվ լինել ընթերցողի հետ: Երբ նյութ եք գրում, պետք է մտածեք, որ գրում եք ձեր տատիկի կամ սիրելի հորեղբոր տղայի, բարեկամի համար: Դուք չպետք է ստեք, նրանց համար պատմություն հորինեք: Կարեւոր է նրանց ասելը միայն այն ամենը, ինչում համոզված եք, եւ այնքանը, ինչքան գիտեք: Քանի որ ընթերցողի վստահությունն եք կերտում, ամբողջ կյանքի ընթացքում դուք փորձում եք ձեռք բերել այդ վստահությունը եւ դա անում եք ձեր ամբողջ կյանքի համար: Այդ գործընթացը շարունակական է: Այսինքն՝ երբ նրանք տեսնում են ձեր ազգանունը թերթում, ասում են՝ես վստահում եմ այս լրագրողին:

93 Մենք սկսել ենք այն նույն տեղից, որտեղից դուք եք սկսել, 9 օգոստոսի, 2002 թ., www.hetq.am:

Ո՞ր նյութերն են կարեւոր ընթերցողի համար: Ես այնքան էլ հետաքրքրված չեմ քաղաքականությամբ, ինձ չի հետաքրքրում, թե որ քաղաքական կուսակցությանն է իշխանությունը, քանի դեռ մենք ապրում ենք ժողովրդավարական հասարակությունում: Ժողովրդավարական հասարակությունը կախված է մամուլից, քանի որ նրա շնորհիվ է, որ ընթերցողը տեսնում է, թե ինչ է կատարվում կառավարությունում: Ցանկացած պետությունում կան կուսակցութուններ, որոնք գալիս են իշխանության, հետո հեռանում են: Գնում-գալիս են: Բայց կան հիմնական պահանջներ, երաշխիքներ, որ անկախ այն բանից, թե ումն է իշխանությունը, մշտական են: Դրանք նույնն են Միացյալ Նահանգներում, Հայաստանում, Իտալիայում, աշխարհի ցանկացած պետությունում, դրանք մարդկանց պահանջմունքներն են. անվտանգության երաշխիքը (անձի եւ երկրի անվտանգության մասին է խոսքը), առողջապահության երաշխիքը, որն ապահովում են հիվանդանոցները եւ հանրային բժշկական ծառայությունները, տնտեսության երաշխիքը, որն ապահովում են բանկերը եւ մեծ կորպորացիաները, կրթության երաշխիքը: Այս ամենն էական նշանակություն ունի հասարակության համար եւ պետք է դառնա մեր լուսաբանման ոլորտը: Քանի որ այդ ծառայությունների համար վճարում ենք եւ շատ հաճախ փոխարենը ոչինչ չենք ստանում, կամ շատ քիչ ենք ստանում: Քանի որ կա կոռուպցիա, կան անիմաստ վատնումներ եւ, իհարկե, հիմար պետական պաշտոնյաներ: Ընդհանրապես այդ ծառայությունների անբավարար որակը պայմանավորված է բազմաթիվ պատճառներով: Այդ խնդիրները կարեւոր նշանակություն ունեն հասարակության բարգավաճման համար: Որոշ մարդիկ, այդ թվում նաեւ մեր խմբագիրները, ասում են, թե այդ խնդիրները շատ են լուսաբանվում, շատ ձանձրալի են, նրանց վրա շատ ժամանակ եւ փող է ծախսվում: Բայց ես այստեղ եմ, որպեսզի ձեզ ասեմ, որ դրանք այն կարեւոր խնդիրներն են, որոնք պետք է լուսաբանի լավագույն լրագրողը: Դուք հասարակությանը տեղեկացնում եք, թե որտեղ է, որ ժողովրդավարությունը չի աշխատում, չի գործում: Բնականաբար, կառավարությանը դուր չեն գա ձեր լուսաբանումները. կա՛մ ձեր վրա կզայրանան, կա՛մ ձեզ ուղղակի կփորձեն գնել: Բայց դուք չեք աշխատում կառավարության համար, իշխանությունների համար: Դուք աշխատում եք հասարակության համար:

Իմ կարիերայի ընթացքում, «Բոստոն Գլոբ»-ում լուսաբանումներիս առանցքը հենց այս խնդիրներն էին: Մեր ժողովրդավարությունը

սկսել ենք կառուցել 1776 թվականից: 240 տարի է մենք շարունակում ենք այդ գործը: 230 տարի առաջ ենք ձեզանից: Դուք միայն տասը տարեկան հանրապետություն եք: Մեկ բան պետք է լավ հիշեք՝ պետք է համբերատար լինել: 200 տարի հետո մարդիկ կհիշեն, թե ինչ էին անում լրագրողները 200 տարի առաջ: Նրանք ձեզ կհիշեն, որպես հայրենասերների: Դուք պետք է շատ համբերատար լինեք, եւ ձեր առջեւ միշտ պետք է լինի նպատակ՝ գրել այն խնդիրների մասին, որոնք կարեւոր են հասարակության համար:

Ինչո՞ւ եմ եկել այստեղ: Օգնելու, որ լրագրողներն իրենց վարպետությունը կատարելագործեն: Ողջունում ենք այն գործը, որ դուք անում եք: Ձեր աշխատանքի համեմատ մեր՝ Միացյալ Նահանգների լրագրողներիս գործը հիմա շատ հեշտ է: Բայց այն ժամանակ, երբ Միացյալ Նահանգները դարձան հանրապետություն, մենք չունեինք անկախ թերթեր: Դրանց մեծ մասը կախված էին այս կամ այն քաղաքական կուսակցությունից: Մենք սկսել ենք այն նույն տեղից, որտեղից դուք եք սկսել: Եվ դուք կարող եք այնպիսի լրագրություն զարգացնել, ինչպիսին կա, ասենք, այժմ Միացյալ Նահանգներում: Երբ աշխատանքի ընդունվեք, ձեր խմբագիրը ձեզանից կխնդրի թեթեւ նյութեր գրել: Կուզենա, որ դուք զայրանաք քաղաքապետի վրա կամ յոլա գնաք նրա հետ: Ինչը պայմանավորված կլինի ձեր խմբագրի եւ քաղաքապետի հարաբերություններով: Դուք եք տերը: Եվ դուք պետք է ասեք, որ պետք է քաղաքապետի գուծունեությունը լուսաբանեք ազնվորեն: Խմբագիրը մի պահ ձեզ կնայի՝ տեսնենք, թե ոնց կստացվի: Բայց երբ քաղաքապետը որեւէ սխալ գործի, եւ դուք գրեք այդ մասին, մարդիկ ձեր նյութերից բան կսովորեն: Շատերը կսկսեն գնել արդեն ձեր թերթը: Ե՛վ խմբագիրը, ե՛ւ հրապարակիչը կգնահատեն այն լավ աշխատանքը, որ դուք արեցիք: Սա այնքան էլ հեշտ գործ չէ: Բայց սրանով դուք հաջողության կհասնեք:

Այստեղ լրագրողներն իսկապես հմուտ են, բայց թերթերն անկախ չեն: Ես ուզում եմ օգնել լրագրողներին իրենց գործը լավ անելու, իրենց խմբագիրներին համոզելու, որ տպագրեն այնպիսի նյութեր, որոնք օգնում են մարդկանց, այլ ոչ թե այնպիսիները, որտեղ ցույց է տրվում, թե ինչպես է մի կուսակցությունը կռվում մյուս կուսակցության դեմ: Թերթն ամեն օր է լույս տեսնում: Եթե ամեն օր դուք չեք անում հրապարակումներ մարդկանց համար, նշանակում է հնարավորություն եք կորցնում: Ես չեմ կարող թերթերին անկախ դարձնել: Բայց կարող եմ օգնել լրագրողներին, որ իրենց խմբագիրներին համոզեն, որ այսպի-

սի նյութեր գրելը կօգնի մարդկանց եւ ավելի շատ ընթերցող կբերի: Խմբագիրների եւ հրապարակիչների ուզածը լավ բիզնեսն է, թերթի բարգավաճումը: Եվ նրանք հաջողության կհասնեն այդպիսի նյութերի միջոցով:

***- Թերթերը, փաստորեն, վերջին որոշումը կայացնող դատարանի դերում են:***

Ես կարծում եմ՝ Միացյալ Նահանգների լրագրությունն իմ իդեալին չի համապատասխանում: Թերթերի 75 տոկոսը տպագրում է այն, ինչ ասել է կառավարությունը: Բոլոր թերթերը կառավարամետ են, վստահում են կառավարությանը: Եթե կառավարությունը ստում է (մեր կառավարությունը նույն ձեւով է ստում, ինչպես ձեր կառավարությունը), մենք տպում ենք նրանց ստերը: Մենք չենք «կռվում» տեղեկատվության համար: Մենք չենք ուզում ծայրահեղական երեւալ, բայց հետաքննական լրագրություն անելու համար պարտադիր չէ, որ ծայրահեղական լինենք: Ինչպես նաեւ լավ թերթ լինելու համար պարտադիր չէ, որ դուք մեծ թերթ լինեք: Հետաքննություն անելու համար դուք պետք է համառ լինեք, պետք է կարողանաք ջղայնացնել կառավարությանը, բայց այնքան համառ պետք է լինեք, որ ձեր բոլոր հարցերին պատասխանի: Երբ դուք իրականացնեք այդպիսի լրագրություն, մարդիկ անընդհատ կզանգեն ձեզ:

Թերթերը, փաստորեն, վերջին որոշումը կայացնող դատարանի դերում են: Իսկական ժողովրդավարությունը կարիք ունի նման լրատվության: Մենք կառավարության մասը չենք կազմում: Մենք կարեւոր ծառայություն ենք մատուցում հասարակությանը: Ունենք երեք իշխանություն՝ օրենսդիր, գործադիր, դատական, եւ դրանք բոլորն էլ կոռումպացվելու հակում ունեն եւ մեկը մյուսի դեմ «գործ չեն տա»: Լրագրողի խնդիրը հենց հաղորդելն է, թե ինչ է կատարվում այդ իշխանություններում:

***- Կա՞ն հետաքննություն կատարելու չափանիշներ:***

Առաջին՝ տեղեկատվության համար երբեք չենք վճարում: Երկրորդ՝ չպետք է մեզ այլ մարդ ներկայացնենք: Ես չեմ կարող հագնվել, ասենք, ոստիկանի պես, մտնել ոստիկանություն՝ տեսնելու՝ այնտեղ որեւէ կասկածյալի ծեծո՞ւմ են, թե՞ ոչ: Երրորդ՝ չեմ կարող, ընդհանրապես, չափազանցված ներկայացնել փաստերը: Ում մասին էլ որ գրելիս լինեմ, տեղեկատվությունը ձեռքիս պետք է գնամ նրա մոտ: Գնում եմ, թակում դուռը եւ ասում՝ եկել եմ: Ես նրան տեղեկացնում եմ, թե ինչ եմ պատրաստվում գրել նրա մասին եւ տալիս եմ նրան պատասխանելու հնարավորություն:

*Սթիվ Քյուրքչյանին Հայաստանը պատկերվում էր միայն Երևանի տեսքով: Նրան դուր էին գալիս բազում սրճարանները, Երևանի փողոցներով քայլելիս նա ուրախանում էր: Եղել էր Անիում, հուզված պատմում էր ավերակների, պտտվող ոգիների մասին: Նրան առաջարկեցի տեսնել նաև Հայաստանի մյուս երեսը: Մեկնեցինք Շիրակի մարզ՝ Հայկաձոր գյուղ: Անին տեսավ սահմանի այս կողմից: Գյուղում նրա աչքերը թաց էին: Ամերիկյան ոչ մի լրագրություն չէր կարող նկարագրել այդ պահին Սթիվ Քյուրքչյանի վիճակը: Գյումրիում հանդիպեց տնակներում ապրող մի քանի ընտանիքների հետ: Սթիվը չէր հավատում, որ մարդիկ, իր հայրենակիցները տարիներ շարունակ ապրում են նման պայմաններում: Գյումրի-Երևան ճանապարհին ոչ մի բառ չարտասանեց: Ես վստահ էի, որ հասկացել էր, թե ինչու են այդքան հուսալքված հայ լրագրողները: Մինչ այդ նա անընդհատ տալիս էր այդ հարցը:*

## ՀԱՎԵԼՎԱԾ 4

Լենա Նազարյան

# ԱՊՕՐԻՆԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՂԱԿԻ ՄԵՋ ԵՆ ԱՌԵԼ ՍԵՎԱՆԱ ԼԻՃԸ

## ՆԱԽԱՐԱՐԻ ՕՐԵՆՔԸ ԽԱԽՏՈՂՆԵՐԻՑ ՄԵԿՆ Է



Սեւանա լճի ափին 1990 - ական թթ.- ից մինչեւ այսօր շարունակում են կառուցվել բազմաթիվ շինություններ՝ առանձնատներ, հյուրանոցներ, սրճարաններ: Շատ հաճախ դրանք կառուցվում են հենց ափին՝ 1905.0 մ նիշից ցածր տարածքում՝ զբաղեցնելով այն գոտին, որը լճի մակարդակի բարձրացման դեպքում պետք է անցնի ջրի տակ:

ՀՀ նախագահի վերահսկողական ծառայությունն անցած տարվա ընթացքում ուսումնասիրել է Սեւանա լճի խնդիրը: Ծառայության՝ մեզ տրամադրած տվյալներով՝ 1900 մ - 1903 մ բացարձակ նիշերի վրա կառուցված է մոտ 150 շինություն:

«Էկոլուր» տեղեկատվական բնապահպանական հ/կ-ի նախագահ Ինգա Զարաֆյանը տարիներ շարունակ զբաղվում է Սեւանա լճի հիմնահարցով: «Սեւանա լճի եւ ապօրինի շինությունների խնդիրը բարդ է նրանով, որ երկրի գրեթե բոլոր խոշոր հարստություն ունեցողները կապված են այդ խնդրի հետ. մեծահարուստներից եւ պաշտոնյաներից շատ քչերն են, որ Սեւանա լճի ափին առանձնատուն կամ բիզնես չունեն»,- ասում է տիկին Զարաֆյանը:

2008 թ.-ի հոկտեմբերի 27- ին «Հետք» շաբաթաթերթը հրապարակել էր տեղեկություն Սեւանա լճի ափին՝ Շորժա գյուղից դեպի Արտանիշ արգելոցը տանող ճանապարհին, ափից մի քանի մետր հեռավո-

րության վրա, կառուցված առանձնատան մասին (Բնապահպանության նախարարի առանձնատունը՝ Սեւանի ափին, http://old.hetq.am/arm/ecology/8488/):



Լուսանկարում երեւում է շինություններից միայն մեկը, որի ետեւում կան այլ կառույցներ: Այսօր տարածքն արդեն շրջապատված է ցանկապատով եւ պահակներին տրված են համապատասխան ցուցումներ՝ «չասել տարածքի տիրոջ անունը»: Երկաթյա ցանկապատը ձգվում է ժայռից մինչեւ ջրի սահմանը: Թե որքան տարածք է մնում ցանկապատի ետեւում, դժվար է գուշակել, քանի որ, ինչպես պատմում են տեղացիները, հակառակ կողմից դեպի այդ տարածք տանող ճանապարհը լճի բարձրացման հետեւանքով անցել է ջրի տակ:

2008 թ. մայիսին կայացած մրցույթում նշված շինությունների տարածքը (9.6 հա) մինչեւ 2033 թվականը կառուցապատման իրավունքով տրամադրվել է «Փորիկ» ՍՊԸ- ին: Վարձակալության պայմանագիրը կնքվել է «Սեւան ազգային պարկ» ՊՈԱԿ- ի եւ ընկերության տնօրեն Արմենակ Տիգրանյանի միջեւ: Այս տեղեկատվությունը մեզ տրամադրել է Բնապահպանության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժինը:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետության բաժնի վարիչ Բագրատ Կրոյանն ասում է, որ նշված շինություններն այդ տարածքում հայտնվել են վերջին մեկ տարվա ընթացքում: «Ընկերության կառուցած շինությունները հիմնավոր են՝ կառուցված են բետոնե հիմքի վրա: Շինություններից մեկը կառուցված է 1901.0 մ բացարձակ նիշի վրա, իսկ երկրորդը՝ 1902.0 մ»,- ասում է պրն Կրոյանը:

Լճի ջրային սահմանից մինչեւ 1905.0 մ բացարձակ նիշն ընկած տարածքը Սեւանա լճի կենտրոնական էկոլոգիական գոտու առաջին ենթագոտին է, որտեղ, կառավարության որոշմամբ, արգելված է հիմնական (կապիտալ) օբյեկտների կառուցումը: Այս պահանջը սահ-

մանված է ««Սեւան» ազգային պարկի եւ դրան հարող տարածքներում հողամասերի վարձակալության, կառուցապատման իրավունքի տրամադրման եւ քաղաքաշինական գործունեության իրականացման մասին» ՀՀ կառավարության 2008 թ. դեկտեմբերի 18-ին ընդունած N 1563-Ն որոշմամբ:

Նիշի խախտումը միակ խնդիրը չէ՝ կապված այդ շինությունների հետ: Նույն որոշման 5-րդ կետի 2-րդ մասում սահմանված է, որ Սեւանա լճի առաջին ենթագոտում քաղաքաշինական գործունեություն իրականացնելու նպատակով կառուցապատման իրավունքի տրամադրման ժամկետը չի կարող գերազանցել 3 տարին, մինչդեռ վարձակալության պայմանագիրը կնքված է մինչեւ 2033 թվականը:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետության բաժնի վարիչ Բագրատ Կրոյանի տեղեկացմամբ՝ խախտումների վերաբերյալ Գեղարքունիքի մարզպետի որոշմամբ կազմվել է արձանագրություն եւ հարուցվել է վարչական վարույթ (08.10.2008 թ.): Նշանակվել է տուգանք 200 հազար դրամի չափով (ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1- ին մաս), մարզպետարանը դիմել է ոստիկանություն՝ շինարարությունը կասեցնելու համար եւ «Սեւան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի տնօրինությանը՝ «Ֆորիկ» ՍՊԸ-ի հետ վարձակալության պայմանագիրը լուծարելու համար: «Մինչեւ այժմ (24.12.2008) մարզպետի որոշման ոչ մի պահանջ չի կատարվել»,- ասում է պրն Կրոյանը:

«Հետքի» տեղեկություններով՝ նշված տարածքի եւ առանձնատների հետ կապ ունի 2007 թ. հունիսին ՀՀ Բնապահպանության նախարար նշանակված Արամ Հարությունյանը, ով մինչ այդ քաղաքաշինության նախարարն էր: Բնապահպանության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժինը պատասխանել է, որ նախարարը որեւէ առնչություն չունի այդ տան հետ: Մինչդեռ Շորժա գյուղում առաջին իսկ պատահած բնակիչը կարող է ցույց տալ «նախարարի տունը»: Ցանկացած ոք կարող է գնալ այդ բնակավայր եւ փաքսու վարորդին խնդրել տանել նախարար Արամ Հարությունյանի հանգստյան գոտին, եւ վարորդը, առանց որեւէ հարց տալու, մի քանի րոպեից մեքենան կկանգնեցնի այդ շինության դարպասների մոտ:

ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տվյալներով՝ «Ֆորիկ» ՍՊԸ-ն գրանցված է Եղվարդում, որը նախարարի ծննդավայրն է: Իսկ ընկերության հիմնադիրն ու տնօրենը նախարարի երկու մորաքրոջ

որդիներն են: Մենք այս մասին նախարարից փորձեցինք պարզաբանումներ եւ բացատրություններ ստանալ: Սակայն մեր գրավոր հարցումն ու բազմաթիվ հեռախոսազանգերը որեւէ արդյունք չտվեցին: Մեր վեց հարցերին, որոնք կապված են ինչպես նախարարի նախաձեռնած ապօրինի շինարարության, հողհատկացման, այնպես էլ լճի, «Սեւան» ազգային պարկի մի շարք խնդիրների հետ, ո՛չ գրավոր, ո՛չ էլ բանավոր պատասխաններ չտրվեցին, թեեւ սպառվել են տեղեկատվություն ստանալու հարցմանը պատասխանելու՝ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված բոլոր ժամկետները:



Կա եւս մեկ կարեւոր հանգամանք՝ կապված այդ տարածքի հետ, որը Բնապահպանության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժինը դարձյալ ժխտում է. «Ֆորիկ» ընկերությանը վարձակալության տրված հողամասը նախկինում եղել է արգելոցային գոտում: Բնապահպանության նախարարության բնական ռեսուրսների կառավարման եւ չքավորության նվազեցման ծրագրերի իրականացման գրասենյակի տնօրեն Վ. Մարտիրոսյանը գրավոր նամակով մեզ տեղեկացրել է, որ մինչեւ «Սեւան» ազգային պարկի 2007- 2011 թթ.-ի կառավարման պլանի հաստատումը «Արտանիշ» արգելոցային գոտու ցամաքային տարածքը կազմել է 2220 հա: Ներկայումս արգելոցի ցամաքային տարածքը 2142 հա է, 78 հա վարելահողերը կրճատվել են, որից 9.6 հա հետո տրվել է վարձակալության «Ֆորիկ» ՍՊԸ-ին: Ի դեպ, նրանք արդեն ունեն հարեւաններ. կողքի ափը նույնպես ցանկապատվել է:

Այն, որ «Ֆորիկ» ՍՊԸ- ի վարձակալած տարածքը գտնվում է Արտանիշ արգելոցից կրճատված հատվածում, հաստատեց նաեւ «Սեւան» ազգային պարկ ՊՈԱԿ- ի նախկին տնօրեն (1980-1991 թթ.) Գագիկ Սուխուդյանը՝ ծանոթ լինելով տեղանքին եւ «Սեւան» ազգային պարկի արգելոցային գոտիների սահմաններին: «Այսօր իշխանավորներն ավելի շատ սիրում են շահույթ բերող տարածքներ, ազատ տարածքներ նրանց պետք չեն»,- ասում է պրն Սուխուդյանը:

Այս մի դեպքը մյուս՝ նիշից ցածր 150 շինություններից չէր առանձնանա, եթե կասկածներ չլինեին, որ բնապահպանական եւ քաղաքաշինական խախտումներն առնչություն ունեն բնապահպանության ներկայիս եւ քաղաքաշինության նախկին նախարարի հետ: Ի դեպ, ՀՀ բնապահպանության նախարարությունը կառավարությանը ներկայացրել է առաջարկություն՝ «Սեւանա լճի մինչեւ 1905 մ բացարձակ նիշ գոտում գտնվող բոլոր ինքնակամ շինությունները համարել պետական սեփականություն եւ ապամոնտաժել կառուցապատողի միջոցների հաշվին»:

Նմանատիպ քաղաքաշինական եւ բնապահպանական խախտումներ ՀՀ Վերահսկիչ պալատն անցած տարեվերջին հայտնաբերել եւ հրապարակել է գործարար Արայիկ Հայրապետյանին պատկանող «Լավանդա Սիթի շին» ՍՊԸ-ի վարձակալած տարածքում, որտեղ տեղակայված է մոտ 400 քոթեջ: Ըստ Վերահսկիչ պալատի հաշվետվության՝ Սեւանի քաղաքապետարանը 47 հա տարածքը 50 տարով վարձակալության է տվել «Լավանդա Սիթի շին» ՍՊԸ- ին՝ 1քմ- ը տարեկան 14 դրամով (ամսական 1.2 դրամ): Բնապահպանական խախտումներից նշենք միայն մեկը. գործարարը, կառույցները լճի բարձրացող մակարդակից փրկելու համար, մեծ քանակությամբ հող էր ավելացրել ափին՝ փոխելով լճի այդ տարածքի ռելիեֆը:

1960-70 ական թթ.- ին ճարտարապետները Սեւանա լճի հանգստյան տներն ու սրճարանները՝ «Ախթամար», «Սպիտակ տուն», կառուցում էին ոչ թե լճի ափին, այլ ափից շատ հեռու՝ Սեւանի հին ճանապարհի մոտ. նրանք հավատում էին, որ մի օր Սեւանա լճի ջրի մակարդակն այնքան կբարձրանա, որ լճի ցամաքած ափերը նորից կանցնեն ջրի տակ: Այդ հավատը կապված էր լճի փրկության հետ, քանի որ ջրի մակարդակի բարձրացումն անհրաժեշտ է, որպեսզի լիճը չճահճանա:

***Տեղեկանք***

*Սեւանա լիճն ունի հանրապետական եւ տարածաշրջանային բացառիկ տնտեսական եւ բնապահպանական նշանակություն, քանի որ այն իր բոլոր ցուցանիշներով բարձրորակ քաղցրահամ խմելու ջրի բնական ջրամբար է:*

*1930 - ական թթ.- ից սկսած՝ լճի ջրի անխնա օգտագործման արդյունքում (էներգիայի արտադրություն եւ ոռոգում) խախտվեց լճի էկոլոգիական հավասարակշռությունը. Սեւանա լճի*

*մակարդակը 1933 - 2000 թթ. արդյունաբերական շահագործման հետեւանքով իջավ 19.6 մետրով, իսկ ծավալը նախկին 58.5 մլրդ խմ-ից կրճատվեց մինչեւ 32.5 մլրդ խմ: (Տեղեկությունը վերցված է «Սեւանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման եւ օգտագործման միջոցառումների տարեկան եւ համալիր ծրագիրը հաստատելու մասին» օրենքի նախաբանից):*

*Ջրի օգտագործված 26.0 մլրդ խմ-ի 65 տոկոսը ծախսվել է էներգիայի արտադրության, իսկ 35 տոկոսը՝ ոռոգման նպատակներով: Լճի հատակից ազատվել է 25 հազ. հա տարածք:*

**Լճի ճահճացումը**

ՀՀ ԳԱԱ Հիդրոէկոլոգիայի եւ ձկնաբանության ինստիտուտի գիտական հետազոտությունները բացահայտել են լճի ճահճակալման հիմնական պատճառները: Ուսումնասիրությունների արդյունքների մասին պատմում է ՀՀ ԳԱԱ Հիդրոէկոլոգիայի եւ ձկնաբանության ինստիտուտի գիտական քարտուղար, կ.գ.թ. Էվելինա Ղուկասյանը. «Լճի ծերացման (ճահճացման) դանդաղեցման գործընթացում պաշտպանիչ դեր ունի լճի հատակի մոտ գտնվող 4C հաստատուն ջերմաստիճան ունեցող ջրային շերտը: Այն թույլ չի տալիս, որ հատակի տիղմը խառնվի լճին: Եթե լճի ծավալը քչանում է, կրճատվում է նաեւ այդ պաշտպանիչ շերտը, ինչի հետեւանքով լիճը սկսում է ճահճանալ: Ջրի մակարդակի բարձրացման միջոցով մենք նպատակ ունենք վերականգնել այդ շերտը:

Մեծ Սեւանում շերտը լիովին բացակայում է, Փոքր Սեւանում այն կա աննշան չափով, սակայն ճահճացման երեւույթներն արդեն տարածվում են նաեւ Փոքր Սեւանի վրա. ջուրը կանաչում է եւ ծաղկում ջրիմուռներով»: Մասնագետները հաշվարկել են, որ Սեւանա լճի էկոհամակարգի կայունացման միակ նախապայմանը լճի ծավալի մեծացումն է եւ ջրի մակարդակի բարձրացումը մինչեւ Բալթյան ծովի մակերեւույթից (բ.մ.ծ.) 1903.5 մ նիշը: Այս նիշին գումարվում է նաեւ ալիքի առավելագույն բարձրության չափը՝ 1.5 մ (1903.5 +1.5 =1905.0):

1905.0 մ-ն այն նիշն է ցամաքի վրա, որից դեպի ջուրը տանող տարածքը պետք է լինի ազատ՝ ջրի տակ անցնելու համար: Այս պահանջը սահմանված է «Սեւանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման եւ օգտագործման միջոցառումների

փարեկան եւ համալիր ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքով: (Նման սահմանափակում գործում էր նաեւ Խորհրդային Հայաստանի օրենսդրությամբ):

ՀՀ Բնապահպանության նախարարության «Հայաստանի հիդրոօդերեւութաբանության եւ մոնիտորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի տվյալներով՝ Սեւանա լճի մակարդակը (2008 թ. նոյեմբեր) եղել է բ.ծ.մ 1898.89 մ:

Այսինքն՝ դեռ 6.11 մետրով լճի մակարդակը պետք է բարձրանա: («Սեւանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման եւ օգտագործման միջոցառումների փարեկան եւ համալիր ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդված):

Սեւանա լճի փրկության համար պետությունը իսկայական միջոցներ է ներդնում: Սակայն այդ միջոցները որեւէ արդյունք չեն տա, եթե ափամերձ տարածքներում պաշտոնյաների կառուցած ապօրինի շինությունները չքանդվեն: Իսկ դրա համար բոլոր հիմքերը կան՝ դրանք կառուցվել են օրենքների բազմաթիվ խախտումներով:

**Բնապահպանները կարծում են, որ Սեւանա լճից կրկնակի ջրառը կապ ունի շինությունների հետ**

«Սեւանա լճի խնդիրը հասավ իր գագաթնակետին եւ պայթեց, երբ կառավարությունը որոշեց կրկնակի շատ ջուր բաց թողնել Սեւանա լճից,- ասում է «Էկոլուր» հ/կ-ի նախագահ Ինգա Զարաֆյանը,- եթե մինչ այժմ ապօրինի շինությունների խնդիրը կարգավորված լիներ, ապա երբեք նման որոշման անհրաժեշտություն չէր լինի: Նրանք չկարողացան լուծել ապօրինությունների խնդիրը եւ այժմ ավելի բարդացրին»:

2008 թ. մայիսին, հղում անելով արտակարգ երաշտային իրավիճակին, Ազգային ժողովը համաձայնեց կառավարության առաջարկի հետ, եւ Սեւանա լճից ջրառը «Սեւանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման եւ օգտագործման միջոցառումների փարեկան եւ համալիր ծրագիրը հաստատելու մասին» օրենքով թույլատրված 170 մլն խմ-ից ավելացվեց մինչեւ 360 մլն խմ: Փաստացի բաց թողնվեց 302.28 մլն խմ ջուր: ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Անդրանիկ Անդրեասյանն ասում էր, որ ոռոգման սեզոնն աննախադեպ շուտ է սկսվել, պեղումները չեն բավարարում, ջրամբարները դատարկ են, եւ ջուր չկա:

«Հանուն կայուն մարդկային զարգացման» ասոցիացիայի, UNEP ազգային կոմիտեի նախագահ, աշխ. գիտ. դոկտոր, բնապահպանության նախկին նախարար (1991-94 թթ.) Կարինե Դանիելյանը կարծում է, որ ավելի քան կրկնակի ջրի բացթողումների անհրաժեշտության վերաբերյալ նշված փաստարկներն անհիմն են: «Անցած տարին իսկապես սակավաջուր է եղել, սակայն, ինչպես ցույց տվեցին մեր ուսումնասիրությունները, մայիսից հետո եղանակային պայմանները բարելավվել են, եւ կրկնակի ջրառի կարիք չկար: Եկեք համեմատենք փաստերը. վերջին տասնամյակում ամենավառ արտահայտված երաշտ տարի եղել է 2000-ին, 2008-ին երաշտ եղել է հունվարից մինչեւ մայիսի երկրորդ տասնօրյակն ընկած ժամանակահատվածում:

2000 թ. Ապարանի եւ Ազատի ջրամբարներում կար 69.4 մլն խմ ջուր, իսկ 2008-ին՝ 77.4 մլն խմ ջուր:

2000 թ. միջին ամսական ջերմաստիճանը Արարատի մարզում (ապրիլ, մայիս, հունիս, հուլիս, օգոստոս ամիսներին) նորման գերազանցել է 1.68 աստիճանով, իսկ Արմավիրի մարզում՝ 0.98 աստիճանով:

2008 թ. նույն ամիսներին Արարատի մարզում նորմայից գերազանցում եղել է ընդամենը 0.52 աստիճանով, իսկ Արմավիրի մարզում՝ 0.14 աստիճանով:

2000 թ. (ապրիլ - օգոստոս) տեղումներն Արարատի մարզում նորմայից պակաս են եղել 81.12 տոկոսով, իսկ Արամավիրի մարզում՝ 40.9 տոկոսով:

2008 թ. նույն ամիսներին տեղումներն Արարատի մարզում նորմայից պակաս են եղել 52.94 տոկոսով, իսկ Արմավիրի մարզում՝ 25.52 տոկոսով:

Ջրամբարները 2000 թ. ավելի սակավաջուր էին, եղանակն ավելի չոր էր, իսկ տեղումներն ավելի քիչ էին, քան 2008-ին: Մինչդեռ 2000 թ. Սեւանից բաց թողեցին 189,97 մլն խմ, իսկ 2008-ին՝ 302.28 մլն խմ: Այս փաստերի հիման վրա մենք կարծում ենք, որ այդ քանակի ջրառն անհիմն էր»,- ասում է նախկին նախարար Կարինե Դանիելյանը:

Նշենք նաեւ, որ գյուղատնտեսության համար օգտագործվող տարածքներն էապես չեն ընդարձակվել. Սեւանից ջրի բացթողման հաշվին ոռոգվող տարածքների մակերեսը 2008 թ. կազմել է 43.2 հազ. հա, 2007 թ.՝ 43.4 հազ. հա, 2006 թ.՝ 45.5 հազար հա:

Համաձայն ՀՀ ԳԱԱ Հիդրոէկոլոգիայի եւ ձկնաբանության ինստիտուտի գիտական հաշվարկների՝ յուրաքանչյուր 12.5 մլն խմ բացթողումը լճի մակարդակը կիջեցնի 1սմ-ով: Լճերի բնական ծերացման

ժամանակ լճի հապակը փարեկան բարձրանում է ընդամենը 1մմ- ով: Այս փարվա ջրառի չափը լճի ծերացման ընթացքը միայն 2008 թ. արագացրեց մոտ 300 փարով:

Իսկ 2008 թ. սեպտեմբերի 17-ին ՀՀ գյուղատնտեսության նախարար Արամայիս Գրիգորյանը լրագրողների հետ հանդիպման ժամանակ հայտարարել է, որ փարին (2008 թվականը) բերքառատ է եղել, ընդ որում՝ շնորհիվ բարենպաստ եղանակային պայմանների:

Հ.Գ.

2008 թ. դեկտեմբերի 25-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի կարգադրությամբ ստեղծվեց Սեւանա լճի հիմնահարցերի հանձնաժողով: Դրա ստեղծման պատճառն էլ հենց այն էր, որ հարցերի լուծման մինչ այժմ եղած միջոցները չեն ապահովում Սեւանա լճի խնդրի վերջնական լուծում:

Ջրի բարձրացման տեմպերը բավարար չեն ճահճացման գործընթացը կանգնեցնելու համար. Սեւանա լճի բացարձակ նիշը 2007 թ. նոյեմբերին եղել է 1898.81մ, 2008 թ. նոյեմբերին՝ 1898.89. լճի մակարդակը մեկ փարվա ընթացքում բարձրացել է ընդամենը 8 սմ-ով, ինչը շատ քիչ է լճի վերականգնման համար:

Բնապահպանության նախարարության 2008 թ. տվյալներով՝ «Սեւան» ազգային պարկի տարածքում կա 1062 ապօրինի շինություն: Քիչ չեն նաեւ խախտումներ հայտնաբերողները՝ «Սեւան» ազգային պարկ ՊՈԱԿ, ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչություն, Գեղարքունիքի մարզպետարան, ՀՀ քաղաքաշինության նախարարություն: Ակնհայտ է, որ այս մարմինները պատշաճ չեն գործել:

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՕԳՏԱԿԱՐ ԿԱՅՔԷՋԵՐ

1. Լրագրողներից լրագրողներին /Ձեռնարկ լրագրողների համար/, Բրիտանական խորհուրդ, Երեւան, 2007:

2. Brant Houston. Computer-Assisted Reporting: A Practical Guide, 3rd edition, 2004.

3. Bruce Shapiro, Shaking the Foundations: 200 Years of Investigative Journalism in America, 2005.

4. Tom Rosenstiel and Bill Kovach, The Elements of Journalism: What News people Should Know and The Public Should Expect, 2001.

5. Brant Houston, Len Bruzzese and Steve Weinberg, The Investigative Reporter's Handbook, 4th Edition, 2005.

6. Steve Weinberg, The Reporter's Handbook: an investigator's guide to documents and techniques, 3rd edition/ under the sponsorship of IRE/, 1996.

7. One The Right Track. Investigative Reporting in Armenia. International Center for Journalists, Washington, D.C. 2004.

8. Джон Уллмен, Журналистские расследования: современные методы и техника, National Press Institute, 1999.

9. А. Константинов, Журналистское расследование: История метода и современная практика/ Под общ. ред. А.Д.Константинова. – СПБ.: Издательский Дом «Нева»; М.: «ОЛМА-ПРЕСС», 2003.

10. Лусинда С. Флисон, Десять шагов к репортерскому расследованию, 2001, International Center for Journalists.

11. Шум Ю.А., Журналистское расследование - от теории к практике, М.: “Галерия”, 2002.

### Հետաքննող լրագրողների կազմակերպություններ

1. Investigative Reporters and Editors, www.ire.org.

With 5,000 members from 27 countries, IRE is the world's largest association of investigative journalists. IRE holds conferences, workshops and seminars; holds an annual awards program; offers access to reporting resources and government databases; and publishes helpful books and periodicals.

2. Association of Investigative Journalism, Brazil

Newly formed professional organization of investigative journalists in Brazil.

3. Canadian Association of Journalists, www.caj.ca.

Promotes excellence in journalism, is the national voice of Canadian journalists and upholds the public's right to know.

4. Center for Investigative Reporting, www.muckraker.org .

Based in San Francisco, it is a reporting organization dedicated to independent, in-depth coverage of social issues.

5. Center for Journalism in Extreme Situations in Russia, www.cjes.ru.

Monitors abuse of journalist rights, creates investigation groups and researches legislation.

6. Center for Public Integrity, www.publicintegrity.org and www.icij.org.

Based in Washington, D.C., it specializes in "public service journalism," working with news organizations worldwide. Its program, the International Consortium of Investigative Journalists, is a network of over 80 reporters in 40 countries.

7. Centro de Periodistas de Investigacign investigacion.org.mx.

Founded with IRE's help in 1996, Periodistas de Investigacign now has members across Latin America. The Mexico City-based group offers workshops in investigative and computer-assisted reporting and Spanish-language resources that include databases, story archives and Web links.

8. Committee to Protect Journalists, www.cpj.org.

Monitors abuses against the press and promotes press freedom around the world.

9. Danish Association for Investigative Journalism and the Danish Institute for Computer-Assisted Reporting, www.fuj.dk and www.dicar.org.

These Copenhagen-based groups sponsor conferences and offers resources on investigative and computer-assisted reporting. The groups also serve as key partners with IRE in hosting the Global Conference on Investigative Journalism.

10. European Journalism Centre, www.ejc.nl .

From Maastricht, Netherlands, it serves as a networking mechanism for journalists from Western and Eastern Europe and provides strategic support for European media.

11. Fund for Investigative Journalism, www. fij.org.

Gives grants to reporters working outside the protection and backing of major news organizations.

12. GrᥢvᥢInde Journalister, Sweden, www.fgj.se.

This association of investigative journalists is based in Stockholm runs conferences and seminars, and publishes guidebooks and reprints of investigative reports.

13. International Center for Journalists, www.icfj.org .

The Washington, D.C.-based center deploys U.S. journalists overseas to train and consult and brings overseas professionals to the states for training and internships.

14. International Federation of Journalists, www.ifj.org .

Based in Brussels, Belgium, it serves as an umbrella group for more than 100 national journalist associations around the world. It promotes action to defend press freedom and social justice through strong, free and independent trade unions of journalists.

15. Investigative Journalism Center (IJC), www.investigativejournalism.org .

The Investigative Journalism Center, based in Zagreb, Croatia, is strictly nonpartisan and independent. Its aim is to promote independent investigative journalism and the professionalisation of the media, believing that these are pillars of a strong civil society and, consequently, a modern democratic state.

16. International Journalists′ Network. www.IJNet.org .

The International Journalists′ Network (IJNet) is an online service for journalists, media managers, media assistance professionals, journalism trainers and educators and anyone else with an interest in the state of the media around the world.

17. Institute for War and Peace Reporting, www.iwpr.net/home_index_new.html.

The London-based organization strengthens local journalism in areas of conflict through training.

18. Investigative Journalism Association, Bulgaria, bmc.bulmedia.com/EN/profiles/ija.htm.

The association contributes to the development of investigative journalism in Bulgaria and assists with investigative projects.

19. Media Institute of Southern Africa, www.misanet.org .

Supports independent media on the continent. It has members in 11 of the Southern Africa Development Community countries.

20. NetMedia, Great Britain, www.net-media.co.uk.

NetMedia, in partnership with other journalism organizations, hosts an annual Internet conference and European Online Journalism Awards.

21. Netzwerk Recherche, Germany, www.netzwerkrecherche.de .

This network of reporters seeks to foster the culture of investigation and research in German journalism. The network also seeks to improve access to information in governmental institutions.

22. Philippine Center for Investigative Journalism, www.pcij.org.

An independent agency that specializes in investigative reporting. Based in Manila, PCIJ funds investigative projects, publishes books and a magazine and runs training seminars.

23. Romanian Center for Investigative Journalism, www.iwpr.net.

Works against the stifling of investigative journalism in Romania. (Third-party information)

24. Southeast Asian Press Alliance, www.seapa.org.

An umbrella group for several journalism organizations in the region.

25. Southeastern European Network for Professionalization of the Media, www.seenpm.org/ and http://icej.hnd.hr/seecar/about_us.htm .

Based in Bulgaria, SEENPM was created by 17 media centers and institutes in Southeastern Europe to raise journalism standards, improve the media environment and encourage cooperation among media professionals. It has a subgroup on computer-assisted reporting (SEENCAR).

26. Stiftelsen for en Kritisk og UnderØkende Presse, Norway, www.ij.no/skup.

S.K.U.P is an association promoting a critical and investigative press in Norway.

27. SwissInvestigation.net, www.swissinvestigation.net.

The Swiss investigative network is an independent organisation promoting the exchange of contacts and competences between the Swiss investigative reporters and their foreign colleagues.

28. Vereniging van Onderzoeksjournalisten, www.vvoj.nl

An organization of Dutch-speaking journalists in Belgium and the Netherlands.

29. ACCESS Association, Bulgaria, www.access.online.bg.
30. Association of Independent Broadcasters ANEM, Serbia and Montenegro www.anem.org.yu.
34. Center for Independent Journalism, Bulgaria, www.bmc.galaxite.net.
35. Center for Independent Journalism, Hungary, www.ijf-cij.org/budapest.html.
36. Center for Independent Journalism, Romania, www.cji.ro.
37. Forum of Media Initiatives, Belgrade, Serbia, Montenegro, www.fomin.org.yu.
38. Independent Journalism Center, Moldova, http://ijc.iatp.md.
39. International Center for Education of Journalists, Croatia, http://icej.hnd.hr.
40. Macedonian Institute for the Media, www.mim.org.mk.
41. Media Development Center, Bulgaria, www.mediacenterbg.org.
42. Media Center Belgrade, Serbia and Montenegro, www.mediacenter.org.yu.
43. Media Center Sarajevo, Bosnia and Herzegovina, www.media.ba.
44. Media Plan Institute Sarajevo, Bosnia and Herzegovina, www.mediaplan.ba.
45. Montenegro Media Institute, Serbia and Montenegro, www.mminstitute.org.
46. Peace Institute, Slovenia, www.mirovni-institut.si.
47. Search for Common Ground, Macedonia, www.sfcg.org.
48. The Philippine Center for Investigative Journalism. www.pcij.org.

## Միջազգային լրագրության ռեսուրսները

1. Եվրոպական լրագրության կենտրոն, The European Journalism Center, http://www.ejc.nl:

2. Հարավարեւելյան Ասիայի մամլո միություն, The Southeast Asian Press Alliance, http://www.seapa.org:

3. Հարավային Աֆրիկայի լրատվական միջոցների ինստիտուտ, The Media Institute of Southern Africa, http://www.misanet.org:

4. Լրագրողների միջազգային ֆեդերացիա, The International Federation of Journalists, www.ifj.org:

4. Միջազգային լրագրողների ցանց, The International Journalists՛ Network, http://www.ijnet.org:

5. Լրագրողների միջազգային կենտրոն, International Center for Journalists, www.icfj.org.

6. Խաղաղության եւ պատերազմի լուսաբանման ինստիտուտ, Institute for War և Peace Reporting, http://www.iwpr.net:

7. Եվրոպացի լրագրողների ասոցիացիա, Association of Euroepan Journalists, www.aej.org.

## ԶԼՄ-ների մասին կայքէջեր

1. AJR-ը՝ աշխարհի թերթերի մասին, http://www.ajr.org/Newspapers.asp?MediaType=1:
2. Ինտերնետային օրաթերթեր (Online Newspapers.Com) http://www.onlinenewspapers.com:
3. Համաշխարհային նորություններ (World News.Com) http://www.wn.com:

4. Համաշխարհային նորությունների կապ (World News Connection (http://wnc.fedworld.gov), ԱՄՆ-ի կառավարության արտասահմանյան նորությունների ծառայությունն ունի վճարովի տվյալների բազա, որը բավական մատչելի գներով եւ արագ ներկայացնում է աշխարհով մեկ տարածված թերթերից թարգմանված նորությունները:
5. Նորությունների ցանցերը (Newsgroups), http://groups.yahoo.com/ նույնպես կարող են օգնել լրագրողին՝ նյութերի աղբյուրներ որոնելիս կամ միշտ ամենաթարմ նորություններին տեղյակ լինելու համար:
6. Համաշխարհային նորությունների դասակարգում (The Global News Index), http://www.mediachannel.org:

## Բիզնեսի եւ տնտեսության մասին տեղեկություններ պարունակող էջեր եւ տվյալների բազաներ

1. ՀՀ կառավարություն՝ www.gov.am:
2. ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ www.mineconomy.am:
3. ՀՀ ֆինանսների նախարարություն՝ www.minfin.am:
4. ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարություն՝ www. minenergy.am
5. ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ www.customs.am
6. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն՝ www.armstat.am
7. ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական կոմիտե՝ www.competition.am:
8. Հայաստանի փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն՝ www.smednc.am:
9. Զարգացման հայկական գործակալություն՝ www.ada.am:
10. Համաշխարհային բանկի էջում (http://www.worldbank.org) կարելի է գտնել զարգացող երկրների վերաբերյալ վիճակագրական տվյալներ: (http://www.worldbank.org/data/). Այս էջն ունի հատուկ բաժին, որտեղ կարող են գրանցվել լրագրողները, եւ որը պարունակում է այլ վիճակագրական տվյալներ (http://media.worldbank.org/):
11. Բանկային տեղեկությունների կենտրոն (Bank Information Center http://www.bicusa.org), ոչ շահութաբեր կազմակերպություն է, որը հակիրճ եւ ճշգրիտ բացատրություններ է տալիս, թե ինչպես են գործում միջազգային բանկային հաստատությունները:
12. Միջազգային զարգացման բանկերի վերաբերյալ լրացուցիչ տվյալներ կարելի է ստանալ նաեւ ԱՄՆ-ի Առեւտրի եւ Զարգացման գործակալության էջից (U.S. Trade and Development Agency), http:// www.tda.gov/online/banks.html:
13. Արտասահմանում մասնավոր ներդրումների կորպորացիա (The Overseas Private Investment Corporation): Ֆինանսական օգնություն է տրամադրում ամերիկյան ձեռնարկություններին՝ արտասահմանյան ծրագրեր իրացնելու համար: Նրանց ինտերնետային էջը (www.opic.gov) պարունակում է ֆինանսական ծրագրերի մամլո հաղորդագրություններ, ինչպես նաեւ տարեկան զեկույցներ, որտեղ խոսվում է տվյալ տարվա

մեջ ֆինանսավորված բոլոր ծրագրերի մասին:

14. ԱՄՆ-ի առեւտրի եւ տնտեսական վերլուծությունների գրասենյակ (U.S. Office of Trade and Economic Analysis): Պատրաստել է բազմազան ինտերնետային, մեկը մյուսի հետ կապված էջեր՝ առեւտրի եւ այլ ընդհանուր տնտեսական գործունեության վերաբերյալ: Ցուցակը բաժանված է ըստ երկրների եւ ըստ թեմաների, որն այն դարձնում է հարմարավետ եւ օգտակար առաջին քայլ, երբ պետք է որեւէ տնտեսական հետազոտություն կատարել, http://infoserv2.ita.doc.gov/otea/wdl.nsf?OpenDatabase:
15. Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության (Organization for Economic Cooperation and Development) ինտերնետային էջում կարելի է գտնել վիճակագրական տվյալներ բազմազան թեմաներով, (http://www.oecd.org/): Այստեղ կա նաեւ քննարկումների հատուկ էջ, որը շատ օգտակար է եւ պարունակում է նաեւ տեղեկություններ կաշառակերության վերաբերյալ ամբողջ աշխարհով մեկ, http://www1.oecd.org/daf/nocorruptionweb/:
16. Էներգետիկ հետախուզության խմբի կայքէջը (Energy Intelligence Group) (http://www.energyintel.com/) վճարովի է, բայց այստեղ կարելի է կարդալ մի քանի տնտեսական էլեկտրոնային ամսագրեր նավթի եւ գազի արդյունաբերության վերաբերյալ, ինչպես նաեւ ամենակարեւոր նավթային ձեռնարկությունների, նավթային սանկցիաների եւ միջազգային նավթուղիների ուղեցույցի մասին: Այստեղ կարելի է գտնել շուկաների մանրամասն վելուծություններ:
17. ԱՄՆ-ի գանձարանի արտասահմանյան ունեցվածքների վերահսկման գրասենյակը (Office of Foreign Assets Control) պատասխանատու է որոշ արտասահմանյան երկրների եւ ձեռնարկությունների դեմ տնտեսական եւ առեւտրային սանկցիաների վարչական վարույթների համար: Կազմակերպության ինտերնետային էջը՝ (http://www.treas.gov/offices/enforcement/ofac/) պարունակում է տեղեկություններ այդ սանկցիաների եւ գրասենյակի գործունեության վերաբերյալ:
18. Համաշխարհային առեւտրի կազմակերպության (The World Trade Organization) էջը (www.wto.org) ընդգրկում է տնտեսական վիճակագրական եւ վերլուծական տվյալներ՝ համաշխարհային առեւտրի վերաբերյալ:
19. «Ֆայնենշլ թայմս» օրաթերթի հատուկ զեկույցների բաժինն ինտերնետում (www.ft.com), http://surveys.ft.com պարունակում է շուկաների ընդհանուր նկարագրություններ ամբողջ աշխարհով մեկ:
20. ԱՄՆ-ի Արժեթղթերի եւ փոխանակումների հանձնաժողովի (Securities and Exchange Commision, SEC) EDGAR տվյալների բազան գտնվում է www.sec.gov հասցեում: Բաց արժեթղթային ձեռնարկությունները պարտավոր են ամեն տարի ներկայացնել 10-K ձեւի զեկույցներ եւ ամեն եռամսյակ՝ 10-Q ձեւի զեկույցներ: Այս զեկույցներում նրանք պարտավոր են նշել ԱՄՆ-ում կամ երկրից դուրս նրանց դեմ հարուցված որեւէ դատական գործ: Դուք կարող եք փնտրել նաեւ 20-F ձեւի զեկույցներ, որոնք որոշ ձեռնարկություններ ներկայացնում են 10-Kի փոխարեն:

Edgar-ով կարելի է փնտրել ըստ ձեռնարկության անվան կամ էլ ըստ զեկույցի ձևի համարի: SEC-ը ձեռնարկություններին չի պարտադրում նշել իրենց արտասահմանյան մասնաճյուղերը: Այսպես կոչված «10K Wizard»-ը (www.tenkwizard.com) հնարավորություն է տալիս փնտրել SEC-ի բոլոր փաստաթղթերի լրիվ տեքստերը՝ տարեկան վարձ վճարելու պայմանով:

21. Կանադայի էլեկտրոնային արժեթղթերի գրանցման կարգավորման համակարգը www.sedar.com նման է SEC-ի EDGAR տվյալների բազային:
22. Շատ երկրներ ինտերնետային էջեր ունեն իրենց Առեւտրի գրասենյակների վերաբերյալ: «Uniworld Business Publications»-ը (www.uniworldbp.com) լրացնում է Առեւտրի գրասենյակների պակասը՝ վաճառելով օգտակար տվյալների ցանկեր, ինչպիսին է «Հարավային Ամերիկայում գործող ամերիկյան ձեռնարկություններ»-ի ցանկը: Այս կազմակերպությունը նաեւ տեղեկություններ է վաճառում CD ROM-ով:
23. Կարելի է ձեռք բերել մի շարք միջազգային ձեռնարկությունների անվճար տարեկան զեկույցներ www.carol.co.uk կամ http://www.reportgallery.com էջերում:
24. ԱՄՆ-ի Առեւտրի նախարարության կողմից պատրաստված (www.fedworld.gov) էջն ունի նաեւ «արգելված հաստատությունների տվյալների բազա», որտեղ նշվում են բոլոր այն հաստատությունները, որոնց դեմ հարուցված են տարբեր տնտեսական սանկցիաներ, որոնց արգելվում է արտահանման արտոնություն տալը, որոնք զանգվածային բնաջնջման զենքեր են արտադրում, հայտնի ահաբեկիչներ են կամ թմրանյութերի առեւտրով են զբաղվում եւ այլն: Տվյալների բազայի հասցեն է. http://chaos.fedworld.gov/bxa/prohib.html:
25. «Hoovers.com»-ը տալիս է տեղեկություններ եւ ընդհանուր առմամբ նկարագրում է աշխարհի տարբեր ձեռնակություններ: Ավելի մանրամասն տեղեկությունները վճարովի են. (www.hoovers.com): Այցելեք նաեւ http://home.sprintmail.com/~debflanagan/international.html, որտեղ կապեր կան ավելի շատ արտասահմանյան ձեռնարկությունների վերաբերյալ ինտերնետային տվյալներ պարունակող էջերի հետ:
26. www.kompass.com-ը մասնավոր ձեռնարկությունների տեղեկությունների ցանց է, որը հնարավորություն է տալիս ըստ մայրցամաքների փնտրել արդյունաբերության տվյալ ճյուղի որեւէ ձեռնարկություն: Հիմնականում տեղեկություններն անվճար են, բայց կան որոշ տվյալների բազաներ, որտեղ փնտրելու համար պահանջվում է բաժանորդավճար:
27. Եվրոպայի արտադրողների Թոմաս գրանցման ցանցն (Thomas Register of European Manufacturers (www.tipcoeurope.com) ընդրկում է ավելի քան 200,000 արտադրող եւ բաժանող ձեռնարկություններ՝ դասավորված ըստ արտադրած իրի կամ ծառայության տիպի:
28. Դրամական տեղեկությունների ինտերնետային ցանկը (Financial Information Net Directory www.find.co.uk) հանդիսանում է փնտրելու մի այլ սարք՝ Անգլիայում գտնվող հարյուրավոր այլ դրամական ինտերնետային էջերի հետ կապերով:

29. The Economist, www.economist.com:
30. Միացյալ թագավորության փվյալների գաղտնիության պահպանման փվյալների բազա (U.K. Data Protection Privacy database www.dataprotection.gov.uk):
31. Ձեռնարկությունների տունը (Companies House)՝ www.companieshouse.com, տեղեկություններ է տալիս բրիտանական ձեռնարկությունների մասին:

## Ռազմական ոլորտ

1. Հայաստանի պաշտպանության նախարարություն՝ www.mil.am:

2. Ամերիկյան գիտնականների միությունը (Federation of American Scientists) (www.fas.org) տրամադրում է տեղեկություններ, ներառյալ փնտրելու հնարավորություն տվող տվյալների բազաներ, ամբողջ աշխարհով մեկ զենքերի առեւտրի վերաբերյալ: Այս էջում կա նաեւ ահաբեկչությանը նվիրված մի հատուկ բաժին, http://www.fas.org/terrorism/index.html:

3. Համաշխարհային անվտանգություն (Global Security): Այստեղ կարելի է գտնել ահաբեկչության, զենքերի, հետախուզության, տիեզերքի, արբանյակային պատկերների մասին տեղեկատվություն, http://www.globalsecurity.org:

4. Պենտագոնը նույնպես ունի տվյալների բազա, որտեղ լրագրողը կարող է պարզել՝ արդյոք տվյալ տեղական ձեռնարկությունը կապեր ունի՞ արտասահմանում, http://www.defenselink.mil:

## Շրջակա միջավայր/առողջապահություն

1. ՀՀ բնապահպանության նախարարություն՝ www.mnp.am:

2. Բնապահպանական տեղեկատվության հասարակական (Օրհուս) կենտրոններ՝ www.aarhus.am:

3. «Էկոլուր» բնապահպանական տեղեկատվական հ/կ՝ www.ecolur.org:

4.ՀՀ առողջապահության նախարարություն՝ www.moh.am:

5. ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագիրը (www.unep.org) պարունակում է տվյալներ ամբողջ աշխարհից: Հատկապես օգտակար է վերջերս ավելացված GEO-3 բաժինը, որտեղ տրվում են վերջին 30 տարվա շրջակա միջավայրի վերաբերյալ քաղաքականության մանրամասն վերլուծություններ, ինչպես նաեւ շրջակա միջավայրի ապագա հեռանկարը:

6. Համաշխարհային առողջապահական կազմակերպության (World Health Organization) (www.who.int) էջը օգտվողներին տրամադրում է համաշխարհային առողջապահության հարցերի մասին նյութեր, ինչպես նաեւ այս կազմակերպության՝ աշխարհի տարբեր երկրներում կատարած աշխատանքի վերաբերյալ զեկույցներ եւ մամլո թողարկումներ:

## Ընդհանուր

- ՀՀ արդարադատության նախարարություն՝ www.moj.am:
- ՀՀ գլխավոր դատախազություն՝ www.genproc.am:
- ՀՀ ոստիկանություն՝ www.police.am:
- ԱՄՆ արդարադատության նախարարության (Department of Justice) Արտասահմանյան գործակալների գրանցման ակտ (Foreign Agents Registration Act) (http://www.usdoj.gov/criminal/fara/index.html): Այս գրասենյակը ներկայացնում է կիսամյակային զեկույցներ 1997թ.-ից ի վեր: Այստեղ կարելի է գտնել այն բոլոր լոբբիստական խմբերի ցուցակները, որոնք գործում էին արտասահմանյան երկրների կամ ձեռնարկությունների շահերը պաշտպանելու համար:
- Համաշխարհային քաղաքականությունը http://www.globalpolicy.org վերահսկում է քաղաքականության ձեւակերպումը ՄԱԿ-ում եւ ներկայացնում նորությունների շաբաթաթերթ, որտեղ տրվում են հոդվածների համառոտ ամփոփումներ:
- Ազատ մամուլը (Free Print) հանդիսանում է աշխարհով մեկ 49,623 տեղեկատվական հետազոտողներից բաղկացած մի ոչ պաշտոնական միություն, որը երկու շաբաթը մեկ լույս է ընծայում նորությունների թերթ՝ www.freeprint.com:
- Եվրոպական Միության հետազոտման եւ զարգացման տեղեկատվական ծառայությունը (The Community Research and Development Information Service) (http://www.cordis.lu/en/home.html) անվճար տեղեկություններ է տրամադրում Եվրոպական Միության գիտահետազոտական եւ զարգացման գործունեության վերաբերյալ:
- «Ալֆագալիլեո»-ն (Alphagalileo www.alphagalileo.org) բաժանորդագրությամբ մատչելի տվյալների բազա է լրագրողների համար, որտեղ կարելի է տեղեկություններ ստանալ եվրոպական արվեստի եւ գիտության վերաբերյալ, ներառյալ նորություններ, պատկերներ եւ մասնագետների ցուցակներ, որոնց հետ կարելի է կապ հաստատել:
- «Փերրի-Կաստանեդա» գրադարանի քարտեզների ինտերնետային հավաքածուն (http://www.lib.utexas.edu/maps/index.html) պարունակում է քարտեզներ աշխարհի բոլոր մասերից, ինչպես նաեւ հատուկ հետաքրքրություն ներկայացնող վայրերի քարտեզներ, օրինակ՝ թե որտեղից է սկսվել մի որեւէ համաճարակ:
- Միջազգային ինտերնետային հեռախոսահամարների ցանկեր՝ http://www.infobel.com/, http://www.teldir.com and http://global.wpz.com/:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՆԱԽԱԲԱՆ 3

ՀԵՏԱՔՆՆԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.
ՀԱՅԱՑՔ ՆԵՐՍԻՑ 7

ԹԵՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ 24

ՆԱԽՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՎԱՔՈՒՄ ԵՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ 32

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔՈՒՄ 35

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ 41

ԱՆԱՆՈՒՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ 49

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ 58

ՀՈԴՎԱԾԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒՑ ԱՌԱՋ
ՍՏՈՒԳԻՐ ԲՈԼՈՐ ՓԱՍՏԵՐԸ 60

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՒ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐ 65

ՀՈԴՎԱԾԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ 85

ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 94

ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ԷԹԻԿԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ 98

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍԱՆԻՏԱՐՆԵՐԸ.
ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ 104

ՀԱՎԵԼՎԱԾ 1 114

ՀԱՎԵԼՎԱԾ 2 122

ՀԱՎԵԼՎԱԾ 3 140

ՀԱՎԵԼՎԱԾ 4 159

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԵՒ ՕԳՏԱԿԱՐ ԿԱՅՔԷՋԵՐ 168

ԷԴԻԿ ՍԱՐՈՅԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

# ՀԵՏԱՔՆՆԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ. ՀԱՅԿԱԿԱՆ ՓՈՐՁԸ

Խմբագիր՝ **Լիանա Սայադյան**
Սրբագրիչ՝ **Արմենակ Ղազինյան**
Շապիկի ձեւավորումը եւ էջադրումը՝ **Նարա Մենդելյանի**

Ստորագրված է փպագրության՝ 11.03.2009թ.:
Չափսը՝ : Թուղթ՝ օֆսեթ:
Ծավալը՝ մամուլ: Տպաքանակը՝ 600:

«ԳԱՍՊՐԻՆՏ»
փպագրատուն